



Ս. Դ. ԱՎԱԳՅԱՆ

# ԱՐՅԱՆՔ

Հ Ա Յ Մ Ն Ա Կ Ո Ւ Յ Ռ Ի  
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՕՋԱԽ



Յուրա Յարսաբան  
Գրքարան

Գրք. Յիւլի  
1932թ.

Ս. Դ. ԱՎԱԳՅԱՆ

ԱՐՅԱԻԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅՐԻ  
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՕՋԱԻ



Ս. Ավագյան  
Ս770 Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ — «Գի-  
տելիք» 1991. — 198 էջ:  
Գիրքը համառոտակի, ճեղքվածքի մանրամասնություններով ներ-  
կայացնում է Արցախի մշակույթի տարբեր ոլորտները, ցույց է տալիս  
արցախցու հոգևոր հարստությունը, անհագուրդ սերը դեպի արվեստը,  
գրականությունը, թատրոնը, դպրությունը, պարբերական մամուլը:

Ս 503020913  
Ս 711(01)91

ԳՄԴ 63.3(2Հ)

Ա.Ռ.Ա.ԶԱՐԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Լեռնային Ղարաբաղը (տարբեր ժամանակներում՝ Արցախ,  
Փոքր Սյունիք, Խաչեն և այլն) թեև փոքր երկրամաս է (4,363  
քառակուսի կիլոմետր), բայց միշտ էլ աչքի է ընկել և՛ իր  
մարդկային առաքինություններով և՛ իր բնության աշխար-  
հագրական դիմանկարով:

Արցախը (այժմ հայերը շատ քիչ են օգտագործում «Ղա-  
րաբաղ» անունը) լեռնային երկիր է, որի միջին բարձրու-  
թյունը ծովի մակերևույթից հասնում է 1100 մետրի, հայտնի  
է իր լեռնաշղթաներով (Մոսվ, Գյումրի և այլն), որոնք ու-  
նեն անտառապատ ճյուղեր: Կան մի շարք դետեր և գետակ-  
ներ (դետերից Խաչենն ու Կարկառը), որոնք բարբերաբ ազ-  
դեցություն են ունենում երկրամասի գյուղատնտեսության և,  
ընդհանրապես, ժողովրդական տնտեսության զարգացման  
վրա:

ՄԶԵՅԻՄ

Արցախի ժողովրդական տնտեսության մեջ կարևոր տեղ  
ունի արդյունաբերությունը, հիմնականում մետաքսի արտա-  
դրությունը: Հրապարակի վրա եղած <sup>90 103863</sup> 192 Գ. Ստեփանյանի «1856—  
1912 թթ. հայկական Ղարաբաղը ունեցել է մետաքսա-  
գործարան, 1514 շարխով և 2735 բանվորով: Բնակչո-  
ւթյանը միասին մշակել են 86 հազար հողի թաղ կամ 28  
հազար 375 փուխ շոր բոժոժ: Ստացված թիվը արտահանվել  
է Մոսկվա և Մարսել»<sup>1</sup>:

Այժմ մետաքսարդյունաբերության հզարտությունը Ղար-  
մետաքսկամբինատն է, որը հիմնականում սկիզբ է առել 1928  
ժողովրդական տնտեսության օրենսդրությամբ:

«Университет Месроп Маштоц»  
Հայաստանի Հանրապետության Գրականության և Գեղարվեստի նախարարություն

<sup>1</sup> «Գրական թերթ», 1989 թ., դեկտեմբերի 22 (Դ. Աճառյան «Ղա-  
րաբաղ»):

«Mesrop Mashtoc University»  
Col.LFD

№ 10782  
11  
2018



թվականին: Նոր հիմնադրված գործարանը շափածո խոսքով  
գրվածով է մեր անվանի պոետ Հակոբ Հակոբյանը:

Արցախում հարգի է գինեգործությունը: Վերամշակման է  
ենթարկվում խաղողը: Հիմնականում զբաղվում է Մարտունիի  
և Ասկերանի գյուղական բնակչությունը:

Արցախը հայտնի է նաև հանքային հանածոներով (իսլան-  
դական սպաթը, մարմարը, մերգելների պաշարները, վիմա-  
քարը, բարիտը, գիպսը, գաջը, կավիճը, ծծմբահրաքարը և  
այլն):

Արցախցիները զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ մաս-  
նավորապես դաշտավարությամբ, անասնապահությամբ. զար-  
գացած են այգեգործությունը և խաղողագործությունը, մեղ-  
վաբուծությունը:

Հացահատիկային կուլտուրաներից ցանում են աշնանա-  
ցան ցորեն, գարի, եգիպտացորեն:

Բանջարեղեն կուլտուրաներից մշակում են կարտոֆիլ, լո-  
բի, վարունգ, կաղամբ, սոխ և այլն:

Պտղատու այգիներ կան հատկապես Մարտունու և Հադ-  
րութի շրջաններում:

Արցախի բնությունը ամբողջությամբ վերցրած կենսաբեր  
է. ջուրը, օդը մի առանձին ներդաշնակություն են հաղոր-  
դում բնակլիմայական պայմանների բարօրությունը: Այստեղ  
տարվա եղանակները արտասովոր չեն. ամառը հով է, ձմեռը  
շատ ժամանակ ոչ սառնամանիքային: Աշունը և գարունը՝  
հաճելի:

Մարզի բնակչությունը հիմնականում հայեր են: Կենտրո-  
նը Ստեփանակերտն է, որի բնակչությունն անցնում է 65  
հազարից: ԼՂԻՄ-ն ունի հինգ շրջան (Ասկերանի, Մարտա-  
կերտի, Մարտունու, Հադրութի և Շուշիի), 220-ից ավելի բնա-  
կավայրերով:

Արցախցիները բազմաշնորհ մարդիկ են: Նրանց հիմնա-  
կան զբաղմունքներից մեկը եղել և մնում է մշակութային  
գանձերի արարումը: Դրա կենդանի վկաներն են Ամարասը,  
Գանձասարը, Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին, որոնք  
աչքի են ընկնում հրաշագործ գեղաբանդակներով, ճարտա-  
րապետական հնարքներով և կառուցվածքային վեհություններով:

Մշակութային շատ կոթողներ՝ սրբատաշ քարերով, պա-

րիսպներով և ստորգետնյա անցուղիներով, կաղնու դարպաս-  
ներով բերդեր են, տուն-ամրոցներ, որոնք պիտոլին հիացնում  
են իրենց նրբաբանդակ նախշերով:

Ոչինչ ասել չես կարող, արարող մարդու ձեռքի արգա-  
սիքներ են՝ այն էլ ինչպիսի դժվարին պայմաններում:

Հայտնի է, որ 5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցը Արցախ  
աշխարհում հիմնել է դպրանոցներ, որտեղ ուսում են առել  
տասնյակ, հարյուրավոր բազմաշնորհ պատանիներ ու աղ-  
ջիկներ, որոնցից շատերը հետագայում դարձել են համաշ-  
խարհային հռչակ վայելող գիտնականներ, գրողներ, բժիշկ-  
ներ, ճարտարապետներ...:

Արցախցու համար գիրն ու գրականությունը եղել և մը-  
նում է կենսական պահանջ: Այդ պատճառով էլ այստեղ տը-  
պագրական գործը ավելի վաղ է սկսվել, քան անդրկովկաս-  
յան մի շարք խոշոր քաղաքներում (Երևանում կամ Բաք-  
վում):

1827 թվականից հիմնադրված և հետագա տարիներին գոր-  
ծող մի շարք տպարաններում լույս են տեսնում ոչ միայն  
հայ հեղինակների, այլև թարգմանական գրքեր (Ջ. Բայրոնի  
«Շիրիոնի կալանավորը», Գոգոլի «Տարաս Բուլբան», Ֆիր-  
գուսու «Շահնամեն» և այլն):

Արցախի տպարաններում լույս են տեսել 21 անուն թերթ  
և ամսագիր, որոնք արտահայտում էին աշխատավոր մարդու  
սրտի խոսքն ու ոգու արիությունը, նրա ակնկալումներն ու  
ձգտումները: Եռանդուն էին գործում մասնավորապես «Հայ-  
կական աշխարհը», «Գործը», «Ազգագրական հանգեսը», «Ղա-  
րաբաղը», «Փայլակը» և ուրիշներ: Բոլոր պարբերականների  
խմբագիրները արցախցիներ էին և խորապես գիտակցում էին  
տպագիր խոսքի դերն ու նշանակությունը կյանքի բոլոր  
բնագավառներում:

Արցախն աչքի է ընկնում իր թատերական կյանքով: Գրե-  
թե բոլոր դպրոցներին կից գործում էին թատերական խմբեր,  
որոնք սիրողական իրավունքով բեմադրում էին հատկապես  
հայրենասիրական պիեսներ: Իսկ երբ 1891 թվականին հիմ-  
նադրվում է Մ. Խանդամիրյանի պրոֆեսիոնալ թատրոնը,  
հատկապես ամառային ամիսներին Շուշի էին գալիս մեր  
փառաբանված դերասանները, երգիչները, երգահանները,



պոետները... Նշենք հատկապես Պետրոս Ադամյանին, Սիրանուշին, Հովհաննես Աբելյանին և ուրիշներին, որոնք հանդես էին գալիս նաև գյուղական բեմերում:

Արցախը ուներ իր ամառային ափումբը, գրադարան-ընթերցարանը և մշակութային այլ օջախներ:

Արցախը հայտնի է իր պատմաճարտարապետական հուշարձաններով, որոնց թիվը հասնում է 3000-ի, որոնցից յուրաքանչյուրով կարող է հպարտանալ ամեն մի ժողովուրդ-հիշենք Գանձասարը, Գաղիի կամ Խուժավանքը, Գտշավանքը, Ս. Գրիգորի եկեղեցին և այլն: Միայն Շուշիում, (այն ժամանակվա Ղարաբաղի կենտրոնում) որտեղ գործում էին մշակութային շատ կոթողներ, վեր էին խոյացել Ղազանչեցոց ս. Ամենափրկիչ եկեղեցին, Ազուլեցոց, Մեղրեցոց եկեղեցիները, Կուսանաց վանքը, Կանաչ ժամը և այլն: Իսկ այժմ ոչ միայն դրանց հետքը չկա, այլև տեղի բնակիչները՝ ազդեցությանցիների վայրագությունների հետևանքով հողին նե հավասարեցրել շուշեցիներ Հովհաննես Թևոսյանի, Նելսոն Ստեփանյանի և ուրիշ հայ անվանի գործիչների, հերոսների հուշարձանները:

Ավելին, Շուշիի առանձին հուշարձաններ, որոնց հեղինակները հայեր են և մակագրություններն էլ մեսրոպատառ դրություններ են, ազդեցությանցիները դարձրել են «ազդեցա-նական»: Միայն մեկ փաստ: Շուշիից երկու-երեք կիլոմետրի վրա կա մի հիասքանչ տեղ, որտեղ իրենց ամառային հանգիստն են անցկացնում շատ մտավորականներ: Այդ գեղատեսիլ վայրում տասնյակ տարիներ առաջ շուշեցի Ասծատուրը աղբյուր է կառուցել և գրել այդ մասին քարի վրա: Աղբյուր-բեջանցիները փորձել են լրիվ մաքրել գրածը և անունն էլ կոչել «Իսա բուլաղ» («Իսայի աղբյուր»): Մի՞թե նույն բանը չի կարելի ասել Թադևոս Թամիրյանի մասին, ազնվական մի հայ, որը նախախորհրդային շրջանում Շուշիի բնակիչների համար մեծ տանջանքով և մեծ գումարի ծախսումով ջուր է տեղափոխել: Երախտավոր հայի համար Ղազանչեցոց հոյակապ եկեղեցու բակում մարմարից արձան է դրվել, սակայն նրա հիշատակը ևս պղծվել է:

Կարելի է շատ անվանի մարդկանց անուններ նշել, որոնք մեծ ավանդ ունեն Արցախի հատկապես մշակութային կյան-

քի առաջընթացի գործում: Եվ մեր այս աշխատանքի նպատակն է ընթերցողներին բավարար տեղեկություններ հաղորդել այն մասին, որ Արցախը հայկական երկրամաս է, այնտեղ գործել, արարել է հայ մարդը, մշակույթի կոթողներ ստեղծել, որոնք ավելի լավ են բնորոշում արցախյան ռեալ իրականությունը:



ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԻԿ ԱՐՅԱԽԻ ԵՎ ԱՐՅԱԽՅԻՆԵՐԻ ՄՍՍԻՆ

Հնագույն ժամանակներից սկսած Արցախը գրավել է ոչ միայն հայ, այլև հույն, հռոմեացի, ռուս և այլազգի անվանի մարդկանց, մեծ մտածողների, գիտնականների, գրողների, ճանապարհորդների, զորավարների, հրապարակախոսների ու շաղրությունը: Նրանցից ոմանք եղել են հայոց զեղատեպիլ երկրամասում, խորապես հրապուրվել նրա բնաշխարհով, մարդկանց բարեմասնություններով, նիստուկացով, մտածողութեամբ, մեծ ծառայութեաններով:

Արցախցիների ուրույն հատկութեանները՝ համարձակութեանը, արդարութեան հաղթանակի համար մինչև վերջ պայքարելու անհողողոզ կամքը, ազնվութեանը, մարդասիրութեանը, գթասրտութեանը չէին կարող ստվերում մնալ և չզգրավել հետազոտողների ուշադրութեանը:

Դեռևս մեր թվարկութեանից 60 տարի առաջ հույն հայտնի աշխարհագրագետ Ստրաբոնը քաջ ծանոթ լինելով արցախցիներին, նրանց մասին հիշատակում է իր աշխատութեաններում:

Առանձին համակրութեամբ է խոսում արցախցիների քաջագործութեանների մասին ռազմական պատմաբան Վ. Պոտտոն իր «Ղարաբաղի առաջին կամավորները ռուսական իշխանութեան բնակեցման էպոխայում», «Շուշիի բերդի հերոսական պաշտպանութեանը» և ուրիշ աշխատութեաններում: Նա խորութեամբ ուսումնասիրել է 18-րդ դարի երկրամասին ու դարձը, առանձին մարդկանց քաջագործութեանները, որ ակամա մեծ համակրանք են առաջացնում հազարավոր ընթերցողների մոտ: Վ. Պոտտոն իր հետազոտութեաններում մեծ գրվատանքով է խոսում Արցախի Կուսապատ գյուղից

սերված պարտիզան վանու և առհասարակ Աթաբեկյանների սխրանքների մասին պարսկական զավթիչների դեմ մղած պայքարում:

Հեղինակը պատմում է, որ Արցախի շատ գյուղերում ապրում են Աթաբեկյան ազգանունով բազմաթիվ ընտանիքներ: Նրանցից ոմանք տարբեր ժամանակներում ուսում ստանալուց անկութեամբ, անցել են արտասահմանյան խոշոր քաղաքներ՝ Հոտմ, Փարիզ, Բեռլին, Յյուրիխ, ինչպես նաև Մոսկվա, Պետերբուրգ, Թիֆլիս, Երևան և այլուր: Աթաբեկյան ընտանիքը ծագումով հայկական հնագույն Մելիք-Խարայեկյանների սոհմից է: Ամեն անգամ, երբ Արցախին որևէ վտանգ է սպառնում, Մելիք-Խարայեկյանները անձուրաց կերպով ոտքի էին ելնում և զլխավորում զինված ջոկատների պայքարը նվաճողների դեմ: Հերոսական ընդգծված ձևով են ներկայացվում հատկապես Մելիք-Վանին և Հակոբ-Յուզբաշին:

Պատմաբան Վ. Պոտտոն հերոսների երկրամաս է անվանում Արցախը: Իր «Շուշի բերդի հերոսական պաշտպանութեանը» գրքում Շուշի գյուղացիներ Սաֆար և Ռոստոմ Թարխանյանների քաջագործութեաններին հեղինակը նվիրում է պատշաճ տեղ: Այն փաստորեն հերոսապատում է երկու եղբայրների մասին, որոնք անուրանալի դործ են կատարում պարսկական զավթիչ Աբաս-Միրզայի զորքերին ջախջախելու պայքարում:

Ռուս ականավոր պատմաբան Պլատոն Զուբովը շրջադայել է Անդրկովկասում, ուսումնասիրել է կովկասցիների նիստուկացը, սովորութեանները, նրանց պատմական անցյալը, հատկապես Արցախի մելիքների պատմութեանը և այդ ամենն ամփոփել է «Ղարաբաղի աստղագետը» աշխատութեան մեջ: Նկարագրված են Արցախի «քաջ, խստաբարո, շափազանց վեհանձն» մելիքները, որոնք քիչ բան չեն արել Կովկասը անարգ թշնամիներից զերծ պահելու համար:

Հեղինակը Արցախի մելիքներին դրվատում է ոչ միայն ռազմական, այլև մարդկային վեհանձն բարեմասնութեանների, իրենց հայրենի եզերքը անսահման սիրելու համար:

Գերմանացի հայագետ Մադա Նեյմանը իր «Հայերը»<sup>1</sup>

<sup>1</sup> Магда Нейман «Армяне» С. Петербург, 1899, с. 144.



գործում հիացմունքով է խոսում արցախցիների ընդունակութ-  
յունների, գիտական և ռազմական օժտվածության, արտա-  
քին բարեմասնությունների և հոգևոր առանձնահատկություն-  
ների մասին: Նա գրել է. «Ղարաբաղի հերոսական որդի-  
ները (խոսքը միայն հայերի մասին է— Ա. Ա.) վաղուց  
փառավորված են խիզախությամբ, քաջությամբ և վճռակա-  
նությամբ», ապա զարգացնում է այն միտքը, որ արցախցի-  
ներն աչքի են ընկնում անմիջականությամբ և որ նրանք հա-  
վասարակշռված են, խելացի, եռանդուն ու խոհեմ...

«Զինվորական բնագավառում ևս ղարաբաղցիները մեծ  
փառքի են հասել: Գեներալներ Մաղաթովը, Բեհբուժովը, Լո-  
րիս Մելիքովը, Լաղարեը, Տեր-Ղուկասովը և Գելկովնիկովը  
եղել են կամ Ղարաբաղի բնակիչներ, կամ էլ այնտեղի ծը-  
նունդ»<sup>1</sup>:

Ուստի հայտնի բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակա-  
խոս և հասարակական ակտիվ գործիչ Սերգեյ Գորոդեցկին  
(1884—1967 թթ.) «Կավկասական սլովո» թերթի 1919 թ.  
մարտի 13-ի համարում տպագրել է «Ղարաբաղ» վերնագրով  
մի հոդված, ուր բարձր է գնահատում լեռնային այդ երկ-  
րամասը՝ համարելով նրան Հայաստանի միջնաբերդը, մյուս  
կողմից՝ արցախցիների մարդկային վսեմ առաքինություն-  
ները:

Ներկայացնելով Ղարաբաղը իբրև անառիկ ամրոց հեղի-  
նակը գրում է. «Այնտեղ, Ղարաբաղի անառիկ բարձունքնե-  
րում, որ Կարսի և Սևանի բարձրավանդակների շարունակու-  
թյունն են, ավելի քան երկու հազար տարի առաջ հայ ժո-  
ղովուրդը տոկացել է քոչվոր ցեղերի հարձակումներին՝ պահ-  
պանելով իր մշակույթը, պահպանելով իր ազգային դեմքը»:

Սերգեյ Գորոդեցկին արցախահայերին այսպես է բնու-  
թագրել. «Գործունեության լայն թափ, անձնուրաց քաջու-  
թյուն, կյանքը վտանգելու պատրաստակամություն, ինքնա-  
վստահություն, ինքնատիպ համառություն, կենցաղի նահա-  
պետականություն՝ ահա ղարաբաղցու համակրելի հատկանիշ-  
ները, որոնք ասես հայի հին առաքինությունների համա-  
կենտրոնացում են, առաքինություններ, որ խամրել են պատ-

մություն դաժանություններից և զուտ տեսքով պահպանվել  
Ղարաբաղում: ... Չկա այնպիսի մի բնագավառ, որտեղ նը-  
րանք դրսևորած չլինեն իրենց ձեռներեցությունն ու տաղան-  
դը: Քաղաքականություն, գրականություն, հասարակական  
գործունեություն... Այդ ամենը աշխատանքի ասպարեզ է  
ծառայել նրանց համար... Իր մշակույթով ու կենցաղով դար-  
բընված Ղարաբաղը մեր օրերում ևս սուվեր չի գցել իր վա-  
ղեմի փառքի վրա»:

Սերգեյ Գորոդեցկին 1920 թվականի նախօրյակին ձիշտ  
է նկատել, որ «եթե Հայաստանը կորցնեք Ղարաբաղը, ապա  
աղբերի ինքնորոշման գաղափարը հարկավ խիստ կոտնահար-  
վեք»:

Ոչ միայն Արցախի ժողովրդի պատմության, այլև երկրա-  
բանական ուսումնասիրության բնագավառում ակտիվություն  
են հանդես բերել այլազգի գիտնականները: Ակնառու դեր  
են ունեցել Կ. Ռադեկինի և Գ. Վալենտինի արշավախմբերը:  
Այդ նրանց ջանքերով են հայտնաբերվել պարզունակ ձևով  
օգտագործվող բազմամետաղ հանքերը Մարտակերտի և Հադ-  
րութի շրջաններում (պղինձ, ցինկ, կապար, ներկեր, օքսա,  
գաղ, քարածուխ, գիպս և այլն):

Արցախի ամեն մի քար իր հերոսական պատմությունն  
ունի: Երկրամասի աշխատավոր ժողովրդի հազարամյա հո-  
գևոր մշակույթի տարեգրությունն անջնջելի հետք է դրոշմել:  
Այդ կարևոր բնագավառը եղել է բազմաթիվ հնէաբանների  
ուսումնասիրության առարկան: Հայտնի են Յու. Գումելի, Կ.  
Կուշկարևի և ուրիշների կողմից Հադրութի շրջանի Ազոխ  
գյուղի տարածքում կատարած ուսումնասիրությունները:  
Հայտնաբերված 200 մետր երկարությամբ վիթխարի քա-  
րանձավում գտնվել են մի քանի տասնյակ հազար տարի ա-  
ռաջ հնանդերթալյան մարդու պատրաստած աշխատանքի  
քարե գործիքներ:

Ուստի բանաստեղծները ևս իրենց ստեղծագործություն-  
ներում ուղղակի և անուղղակի կերպով անդրադարձել են  
արցախցիներին: 1829 թվականին մասնակցելով ռուս-թուր-  
քական պատերազմին, Արզրումի տեղամասում կայացած  
ռազմական գործողությունների ժամանակ Ա. Ս. Պուշկինը  
ակնառու է դառնում արցախցիների անօրինակ սխրագոր-

<sup>1</sup> Магда Нейман «Армяне» С. Петербург, 1899. стр. 150—151.



ծովթյուններին: Ահա թե ինչ է գրում մեծ բանաստեղծը «Ճանապարհորդութուն դեպի Արցրում» գրքում. «Հունիսի 17-ի առավոտյան մենք նորից լսեցինք հրաձգության ձայներ և երկու ժամ հետո տեսանք Ղարաբաղյան դունդը, որը վերադառնում էր ութ թուրքական դրոշակներով: Գնդապետ Ֆրիդերիկսը գործ էր ունեցել քար-կապանների հետևը դարան մտած թշնամու հետ, դուրս էր մղել նրան և քշել: Հեծելազորի պետ Օսման-փաշան հաղիվ էր կարողացել փրկվել»<sup>1</sup>: Բացառված չէ, որ հռչակավոր բանաստեղծը համեստած լինի Արցախի անուշահամ դիմին: Պատահական չէ նրա հետևյալ արտահայտությունը. «Կախեթի և Ղարաբաղի գինիները արժեն մի քանի բուրգունդյան գինիներ: Գինին պահում են մառաններում, հողում թաղված ահաբի կարասներում: Դրանք բացում են հանդիսավոր ծեսերին»<sup>2</sup>:

Ռուս ժողովրդի մյուս տաղանդավոր բանաստեղծը՝ Մ. Յու. Լերմոնտովը, իր բարեկամ Ս. Ա. Ռաևսկուն 1837 թվականին գրած մի նամակում հիշատակում է Շուշի և Անդրկովկասի մի շարք այլ քաղաքներ կատարած իր ճամփորդության մանրամասները. «Այն օրվանից, ինչ դուրս եկա Ռուսաստանից, Կիզլյարից մինչև Թաման անցել եմ լեռներով, եղել Շուշի, Ղուբա, Շամախի, Կախեթ քաղաքներում... գիշերել եմ բաց դաշտում, աղվեսների ոռնոցների տակ, կերել հյուրակ, խմել Կախեթի գինի»<sup>3</sup>:

1883 թվականի հոկտեմբերին ռուս մեծանուն դրամատուրգ Ալ. Օստրովսկին մի շարք ուղեկիցների հետ միասին շրջագայել է Կովկասում, Թիֆլիսից անցել դեպի Արցախ, հիացել գեղատեսիլ երկրամասի բնության հրաշալիքներով, բարձրագահ լեռներով, մարդկային ստեղծագործություններով, հուշարձաններով...: Բայց ամենից առաջ նա հիացած էր արցախցիների ազնվագույն բարեմասնություններով:

Հռչակավոր դորավար Ա. Վ. Սուվորովը, որի մայրը ծագումով արցախցի Հռիփսիմե Մանուկյանն էր, միշտ էլ

<sup>1</sup> Ս. Ա. Պուշկին, Երկեր, Ռատ. 5, Երևան, Հայպետհրատ, 1960 թ., էջ 43:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 29:

<sup>3</sup> Մ. Յու. Լերմոնտով, Երկերի ժողովածու, Ռատ. 4, Երևան, Հայպետհրատ, 1958 թ., էջ 450:

պաշտպանել է հայերի կողմից բարձրացված մի շարք հարցեր, նամակագրական կապի մեջ մտնելով Արցախի մեկիքների հետ, համոզված էր, որ նրանք էական դեր են խաղում Անդրկովկասում և ունեն ռազմական լուրջ ուժեր: Սուվորովը թարգմանաբար կարգացել և բարձր է գնահատել արցախցի, հայ աղգային-ազատագրական շարժման գաղափարախոս Սովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի Հորդորակ» հայտնի աշխատությունը:

Անդրկովկասի աղգային-ազատագրական պայքարի պատմության մեջ հաստատուն տեղ է գրավում Իսրայել Օրին, որը երաշխավորված լինելով Արցախի մեկիքների կողմից, Մինաս Վարդապետի հետ միասին շրջելով Եվրոպան, հասնում է Պետրոս Առաջինի մոտ: Վերջինս սիրալիր է ընդունում Արցախի պատվիրակներին: Լսելով նրանց պահանջը, խոստանում է Անդրկովկասն ազատել օտարերկրյա հարրստահարիչներից:

Պետրոս Մեծի և Արցախի մեկիքների ջերմ կապերի մասին ընդարձակ տեղեկություններ է տալիս Բաֆֆին: «Մեկիքները հրեհեցին դիմել դեպի ռուսաց արքունիքը: Նրանց պատվիրակները, որպես էին՝ Հովհաննես երեցը, Տեր-Անտոնը, Տեր-Պետրոսը, Զելեբի-քյոխվան, Միմոն Պուպովը, անդադար դիմում էին դեպի Ռուսաստան և Մինաս Վարդապետի միջնորդությամբ հայոց մեկիքների, Եսայի և Ներսես կաթողիկոսների խնդիրները ներկայացնում էին կայսրին: Պետրոս Մեծը միշտ պատասխանում էր ամենաողորմած խոստմունքներով, խորհուրդ էր տալիս սպասել, հուսադրելով, թե նրանց բոլոր բաղձանքները կատարված կլինեն»<sup>1</sup>:

Պետրոս Մեծի մահը (1725) խոր վիշտ պատճառեց արցախցիներին, որոնք իրենց ցավակցությունն արտահայտելու համար Պետրոգրադ՝ կայսրուհի Եկատերինա Առաջինի մոտ պատգամավորներ ուղարկեցին: Հետագայում էլ արցախցիների կապը ռուսաց կառավարության հետ չի թուլանում:

«Մեկիք-Ավան-խանը հարզված էր և ռուսաց կառավար-

<sup>1</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, Ռատ. 10, Երևան, Հայպետհրատ, 1964 թ., էջ 170:



րությունից: Աննա Իվանովնա կայսրուհու թագավորության ժամանակ (1734) նա իր աստիճանավորներով գնաց Ռուսաստան, փառավոր ընդունելություն գտավ և արժանացավ կայսրուհու առանձին ուշադրությանը: Պետրոս Մեծի պարսկական արշավանքների ժամանակ, իր ցույց տված նշանավոր ծառայությունների համար Մելիք-Ավան-խանը ստացավ գեներալ-մայորի աստիճան և զանազան շքանշաններ: Նրա ամբողջ սվիտային նույնպես աստիճաններ, շքանշաններ շքանշաններ և թողակ նշանակեցին»<sup>1</sup>:

Մելիք-Ավան-խանը ծերության հասակում կրկին լինում է Ս. Պետերբուրգում, այս անգամ արդեն Ելիզավետա Պետրովնա կայսրուհու թագավորության օրոք: Վերջինս կազմակերպում է շքեղ ընդունելություն, տալիս թանկարժեք նվերներ: Մելիք-Ավան-խանն իր հետ տարել էր նաև թոռնուհուն: Կայսրուհին տարվեց մանկահաս աղջկա գեղեցկությունը ու խնդրեց Մելիք-Ավան խանից թողնել նրան իր արքունիքում: Սակայն ծերունու խնդրանքով օրիորդը շմնաց Ս. Պետերբուրգում: Նրանք մեծ ընծաներով վերադարձան Դիզակ (այժմ Հազրութ՝ Արցախի շրջաններից մեկը— Ս. Ա.), իրենց հետ բերելով ռուս ժողովրդի սիրալիր վերաբերմունքը:

Մեր մեծանուն գրողներից շատերը ըստ արժանվույն են գնահատել արցախցիների բազմաշնորհ առաքինությունները: Հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը ջերմագին սիրով է ներկայացնում Ավետարանոցի (այժմ՝ Չանախչի) Մելիք-Շահնազարի զավակ գեներալ Վալերիան Մադաթովի ծառայությունները հայրենիքի հանդեպ: Վերջինիս քաջագործությունների մասին իր «Վերջ Հայաստանի» պատմավեպում նա գրել է. «Շահախ տեղը չի նրա անունը հայի, թուրքի, զղբաշի բերնումը մնացել: Աշխարհ տակ ու վեր կրլի, բայց նրա հիշատակը անջնջելի կմնա մեր ազգի միջին ու մեր աշխարհումը»<sup>2</sup>:

Հայ մեծ վիպասան Բաֆֆու համար Արցախը հանդիսացել է ստեղծագործական ներշնչանքի աղբյուր: Սկսած 1881

թվականի հուլիսից, նա շրջագայել է երկրամասի գյուղերում, ուսումնասիրել պատմաճարտարապետական կոթողները, զբոսեցել արցախցիների հետ, հավաքել արժեքավոր փաստաթղթեր և այդ ամենը ներկայացրել «Դավիթ բեկ» վեպում, «Սամսայի մելիքությունները», «Ջրաբերդ» և այլ աշխատություններում: «Սամսայի մելիքությունները» փաստորեն Արցախի աշխատավորության 17—18-րդ դարերի պատմության հանրագիտարանն է: Այստեղ շարադրված են արցախահայության ձգտումները, անասան հավատը ապագայի նկատմամբ: «Ջրաբերդ» պատմավեպում գովերգվում է արցախցի աղջկա աշխատասիրությունը, «հայոց մեծ գետերի կրտսեր եղբայր» Թարթառ գետը՝ իր վայրի հմայքով ու գեղեցկությամբ: Պատմական Ջրաբերդը ոչ մի ստեղծագործող այնչափ գեղեցիկ, այնքան բնական չի պատկերել, որքան Բաֆֆին:

Նշանավոր պատմաբան, գրող, հրապարակախոս Լեոն (Առաքել Բաբախանյան) բարձր է գնահատել 17—18-րդ դարերի ընթացքում հայ ազգային-ազատագրական շարժման պատմության մեջ իր համերկրացիների խաղացած դերը. «Այսպիսով, առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երևակայել Հայաստանի սրտի, այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը հյուսիսային և արևելյան տափաստաններից: Ղարաբաղն անմիջապես շարունակությունն է այն հզոր պաշտպանողական պատվարի, որ ներկայացնում է Գուգարքը (այժմ Լոռին և հարակից գավառները): Եվ այս է պատճառը, որ հայկական պետության հիմնադիրները հանդիսացած Արտաշեսն ու Տիգրանը Գուգարքի հետ միասին Հայաստանի սահմանների մեջ են մտցրել և Ուտին, Արցախն ու Սյունիքը»<sup>1</sup>:

Այնուհետև, վերլուծելով արցախցու կերպարի առանձնահատկությունները, Լեոն գրում է. «Լեռնաստանը միշտ անաղարտ է պահել ազգագրական հարազատ կերպարանքը: Այստեղ միշտ ապրում էր հոծ և միապաղաղ հայ ազգաբնակչություն, որ բնիկ էր, շուններ բոլորովին կամ շատ քիչ ուներ

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 190:

<sup>2</sup> Խաչատուր Աբովյան, «Վերջ Հայաստանի», Երևան, Հայպետհրատ, 1955 թ., էջ 204:

<sup>1</sup> Լեո, «Հայոց պատմություն», հ. 3, Երևան, Հայպետհրատ, 1946, էջ 498:



իր մեջ եկվոր այլատարրութուն: Մի ժողովուրդ, որ անհիշելի ժամանակներից կառչում է հողին ու բնության, նրանց աշխատակցությամբ իր համար բնավորություն և խառնըվածք է մշակում, իր ինքնուրույն հոգեբանությունն է ուժեղացնում և տիրական դարձնում»<sup>1</sup>:

Արցախի նախկին վարչական կենտրոնը՝ Շուշին, դարերի վեր հիացմունք է պատճառել այցելուներին: Քաղաքն աշխարհին տվել է արվեստի, գրականության, գիտության, հեղափոխական ակնառու դործիչներ:

Կովկասի ժողովուրդների երաժշտության ճանաչված մասնագետ Վ. Ղորղանյանն իր «Կովկասյան երաժշտություն» աշխատության մեջ բարձր է գնահատել շուշեցի արվեստագետների վաստակը: Այստեղ թեմական, ինչպես նաև Մարիամյան օրիորդաց և ռեալական դպրոցներում երգ ու երաժշտություն են ավանդել հայ ականավոր երգահաններ Ստեփան Դեմուրջյանն ու Կարա-Մուրզան, Սպիրիդոն Մելիքյանն ու շատ ուրիշներ:

Սպիրիդոն Մելիքյանը 1908 թվականին Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի երաժշտության ուսուցիչն էր և խմբավարը: Իսկ 1911 թվականին Ստեփան Դեմուրջյանի նախաձեռնությամբ Շուշիի թեմական և Մարիամյան օրիորդաց դպրոցների սաներից կազմվեց 60 հոգուց բաղկացած առաջին քառաձայն երգեցիկ խումբը, որը ելույթ էր ունենում քաղաքի, ինչպես նաև գավառի աշխատավորության առաջ՝ մեծ հաճույք պատճառելով ունկնդիրներին:

Ժամանակին Շուշի քաղաքում գործող տարբեր դպրոցներում և ուսումնական մյուս հաստատություններում դասավանդած մեր գրականության ու մշակույթի ականավոր գործիչներ Պերճ Պոռչյանը, Ղազարոս Աղայանը, Վրթանես Փափազյանը, Պետրոս Շանշյանը և ուրիշներ, բարձր գնահատելով Արցախի աշխարհը, երկար տարիներ չեն խզել իրենց կապերը ոչ միայն ուսումնական օջախներից, այլև մշակույթի մարդկանցից՝ շարունակելով օգնություն ցույց տալ նրանց:

Հովհաննես Քումանյանը մշտական նամակագրական կապ ուներ արցախցիների հետ: Նա անձամբ ճանաչում էր

բանաստեղծ, Մեծ Քաղլարի ուսուցիչ Հակոբ Խանլարյանին: Վերջինիս արխիվում պահպանվել են հանձարեղ լռուցու նամակները: Հ. Քումանյանը խրախուսում է սկսնակ բանաստեղծին, արժեքավոր խորհուրդներ տալիս:

Արցախի հետ կապեր ուներ նաև Մարիետա Շահինյանը: Նա տարբեր առիթներով այցելում էր հերոսների երկրամասը, հիանում նրա մարդկանցով, բնությամբ: Շրջագայության տպավորությունները նա ամփոփել է իր «Լեռնային Ղարաբաղ» աշխատության էջերում: Մեծ մտածողը կաթոգին ջերմությամբ է նկարագրում այն վայրերը, ուր եղել է ինքը, հանդիպել լեռնցիների հետ, շնչել կուսական բնության անարատ օդը, դմայվել շրջապատի ծաղիկների բուրմունքով:

Հայ մեծատաղանդ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը 1948 թ. հուլիսին եղել է Արցախում: Նրա այցելությունները պատմական Ամարաս, Մարտունի, Ճարտար, Սոս, Ղզղլա, Ստեփանակերտ և այլուր ուղղակի տոնախմբություն էին տեղի բնակիչների համար: Ամենուրեք նրան դիմավորում էին ցնծությամբ: Հատկապես հուզիչ էր հանդիպումը Ստեփանակերտի հայկական դրամատիկական թատրոնի դահլիճում: Իր շնորհակալական խոսքում Վարպետն ասաց. — Արցախցու օրորոցը երգով ու բանաստեղծությամբ է օժիված: Բանաստեղծների ու երգիչների, ռազմական գործիչների ու հեղափոխականների այս անմրցակից երկրի ժողովրդին ուղում էի տեսնել վաղուց: Այսօր ես հպարտ եմ, գտնվելով Ձեր շրջապատում: Սիրում եմ Ձեզ, ինչպես 20070385 1948 թ. հունիսի 12-ին Մարտունի քաղաքում ժողովուրդից մի մասնականը ինչպես կվարվի ինձ՝ ծերուկին հետ, բայց մի բանով ես հպարտ եմ, որ կատարել եմ իմ վաղեմի փափագը՝ լինել Արցախում»:

Ավ. Իսահակյանը առիթը ներկայացած պահին միշտ էլ առանձին գոհունակությամբ է խոսել Արցախի մասին, նամություն տեսնելով մարդկանց և բնության միջև:

Եվ պատահական չէ, — նշել է Վարպետը, — որ արցախցիներն առնական մարդիկ են. այդ բանին շատ են նպաստում բարձրագահ սարերը, լեռները, զուլալ օդը, ջուրը:

<sup>1</sup> Նույն տեղը, էջ 495:



— Պիտի ասեմ նաև,— շարունակել է վարպետը, որ արցախցին որտեղ էլ լինի, պահպանում է իր արցախյանը:

Մեծ բանաստեղծը նկատի ունի երկու հանգամանք. իր նախնիների լավ սովորությունների պահպանումը, մյուսը՝ մարդկային գծերը: Արցախցին շատ լավ գծեր ունի՝ ամենից առաջ անմիջականությունը: Նա չի սիրում իր սրտինը գաղտնի պահել, իսկույն ընկերոջն է հաղորդում:

— Արցախցին համով, հոտով մարդ է: Մեր Սոֆիկը (վարպետի կինը շուշեցի էր— Ս. Ա.) քեզ օրինակ: Ինչ կխոսի, տեղին կասի, ավել բան, այն էլ իդուր տեղը, լսած չեմ Սոֆիկից: Հետո, Սոֆիկը թեև քիչ է լինում հայրենիքում, բայց շատ է սիրում հայրենակիցներին և ինձ վրա էլ այնպես է ազդել, կարծես ես էլ եմ արցախցի:

վարպետը իր հայրենիքի՝ Շիրակի և Արցախի միջև կապ էր տեսնում. «Արցախցին և լեռնակահանցին,— ասում էր Իսահակյանը,— այնքան էլ հեշտ չեն կտրվում բարբառից, սովորություններից, հեռվից եկող նիստ ու կացից: Երկուսն էլ հյուրասեր ժողովուրդ են: Բայց գլխավորը մարդասիրությունն է, որ ունի և՛ արցախցին, և՛ Շիրակի բնակիչը»<sup>1</sup>:

1959 թվականին Արցախում էր նշանավոր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը: Նա հիացել էր Արցախ աշխարհով՝ ամենից առաջ մարդկանցով: Եվ այստեղ էլ նա գրեց մի բանաստեղծություն Արցախի բարբառի, լեզվի մասին.

Ժայռի նման է այս հիւս բարբառը,  
Ժայռի պես կոշտ է, շրմրկված,  
Ու ժայռի պես կարծր է, համառ է,  
Զի պոկի նրան ոչ մի հարված.  
Շուրթերի վրա այնպես է բառը,  
Ինչպես որ ժայռն է հողում խրված...:

Այժմ էլ բանաստեղծուհին սերտ կապերի մեջ է Արցախի հետ՝ հատկապես այս օրերին, երբ ազգային-ազատագրական երկարամյա պայքար է տարվում հարևաններից ազատազրկվելու համար: Մարզային «Խորհրդային Ղաթաբազ» թերթում

<sup>1</sup> «Խորհրդ» թերթ, 1975 թ., սեպտեմբերի 7:

տպագրվում են սիրելի բանաստեղծուհու հրապարակախոսական ելույթները՝ ուղղված իր հայրենակիցներին:

Բանաստեղծ Միքայել Հարությունյանի գրեթե բոլոր բանաստեղծությունների հերոսը իր չքնաղ ծննդավայր Արցախն է: Նրա համար Արցախն ամեն ինչ է: Մի բանաստեղծություն մեջ նա գոչում է՝ նույնիսկ Աստվածն էլ զարաբաղցի է: Նրա քնարական հերոսը իր զգացումները սիրած աղջկան զեղում է այսպիսի համեմատություններով.

Այնքան լավն ես, քիչ է մնում  
Ասեմ դու հենց Ղարաբաղն ես,  
Ինչ էլ անես չեմ նեղանում,  
Իմ սեր, դու հենց Ղարաբաղն ես:  
Մենակ հեռվից չեմ դիմանում,  
Խենթի նման կմնամ ես,  
Մտիս փուշը ոնց չես հանում՝  
Ասես դու հենց Ղարաբաղն ես!

Բանաստեղծ Բողդան Ջանյանը մի շարք ստեղծագործություններ ունի նվիրված հայրենի եղբրքին: Նրա բանաստեղծություններում ուրվագծվում է մի կողմից արցախցին, մյուս կողմից նրան շրջապատող աշխարհը: Երկուսն էլ անդրդվելի և միշտ հաստատուն են, կանգուն: Ահա այդ կարգի «Իմ Արցախում» բանաստեղծությունը.

Իմ Արցախում էլ փառեր կան, ժայռեր,  
Բայց փառ ու ժայռին կանաչ է լինում,  
Կանաչ հովհարներ պինդ բռնած ծառեր  
Եվ կարմիր, կարմիր կակաչ է լինում,  
Բայց փառ ու ժայռեր, ձուռ ու անդունդին  
Եվ խոր գետերին հակված են մնում,  
Քար ու ժայռերը երկնքի մեջ են,  
Երկնքի շաքից զարկված են մնում:  
Անուններ ունեն հինավուրց ու սուրբ,  
Բայց ո՞վ է հիշում՝ կորած են մնում,  
Ամպ ու մշուշ լքնն փառ ու ժայռերին,

<sup>1</sup> Միքայել Հարությունյան, «Ղարաբաղյան նվագներ», Երևան, Հայպետհրատ, 1968 թ., էջ 152:



Ամպ ու մշուշում կորած են մնում...  
Քար ու ժայռերը ձայն չունեն՝ նշան,  
Ինչ էլ անում են լրած են մնում,  
Նրանք ծնվել են, որ միշտ դիմանան,  
Եվ դիմանալով կանգնած են մնում<sup>1</sup>:

Գուրգեն Գաբրիելյանը ունի մի շարք ստեղծագործութ-  
վյուններ, որոնք և՛ խոսքով և՛ երաժշտությամբ են գովեր-  
գում Արցախը: Նրա «Ղարաբաղ» երգը դրա առհավատչյան է.

Հարյուր տարին խաղ ու պար ա,  
Քու մին տարեն մի սաղ դար ա,  
Ամեն էյունը մին բաղ-բար ա,  
Ամեն վերքիա՝ մին մեծ սար ա:  
Դու մին արծիվ, ես՝ քու նոտր,  
Մեզ պահողը հացեն նոքր,  
Մեր շահ բոքր, սարեն օքր  
Մին էլ արքար պիսին կոքր:  
Շատ շեն կենաս իմ Ղարաբաղ,  
Մեր նրախեն շող ու շափաղ,  
Մեր տուն ու տեղ, հող ու հոտաղ,  
Հինը օնինք լոխ քեզ մատաղ:

Հրաշյա Բեգլարյանը Արցախի այսօրվա շնորհալի բանաս-  
տեղծներից է, որի ստեղծագործական թեման հիմնականում  
հայրենի եզերքն է: Գրողը հայրենի երկրում շատ բան է  
տեսնում, նրան ոգևորում են մարդկային ազնվությունը, ար-  
ցախացու անմիջականությունը, կամքի անկոտրում օժտվա-  
ծությունը: Նա «Ղարաբաղին» բանաստեղծության մեջ ա-  
սում է.

Պատվել գիտե միշտ իր հյուրին,  
Գիտե գինը աղ ու հացի,  
Միշտ հյուրասեր ու միշտ բարի,  
Միշտ արտաբաց դարաբաղցին:  
Կովում լինի, աշխատանքում,  
Խիզախում է ինչպես արծիվ,  
Վաստակն արդար, խիզը մաքուր,  
Արդարադատ դարաբաղցին:

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԵՍՎՈՐՈՒՄԸ ՈՒ  
ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ

1827 թվականին զեղատեսիլ Շուշիի հայկական մասում  
վեր է խոյանում երեք հարկանի մեծ շինություն, որի շուրջը  
պարտեզն էր, իր բազմանուն ծաղիկներով և մատաղ ծառե-  
րով: Ականատեսները իրենց հիշողություններում այդ շենքը  
նկարագրում են որպես Շուշիի թագուհի, որի հմայքը տա-  
րածվում էր շորս բոլորը: Այդ շենքի մի մասը ծառայում էր  
որպես դպրոց, մյուս մասը որպես տպարան:

Զարմանալ կարելի էր, թե ինչպես տպարանի ստեղծման  
առաջին տարում հայթայթված էին նորաձույլ տառեր, տպա-  
գրական սարքեր և անհրաժեշտ մեքենաներ, որոնցով շուտով  
սկսում են հրատարակել մի շարք գրքեր, գրքույկներ: Ի դեպ,  
այդ գրքերը էժան գնով տարածվում էին ընթերցողների շր-  
ջանում: Ինչ խոսք, առաջին գրքերը ոչ միայն թարգմանու-  
թյուններ էին, այլև դրանց զգալի մասը եկեղեցական էր:  
Հենց առաջին գիրքը՝ «Պատմություն սուրբ գրոցը», որի  
թարգմանությունը ռուսերենից կատարել էր Հարություն Զու-  
ղայեցի Դավթյանը, պարունակում է կրոնական, քարոզչա-  
կան կանոններ: Նույնը կարելի է ասել 1829 թվականին լույս  
տեսածների մասին: Ահա դրանցից մի քանիսը. «Հավաքումն  
աստվածային վկայությանց յազագս ամենայն ուսմանց քը-  
րիստոնեական հավատոց» կամ «Ընթերցուածք ի սուրբ գրոց  
հին կտակարանի հավաքեալ ի պետս վարժարանաց» և այլն:

Շուտով Շուշիի տպարանը սկսում է լույս ընծայել գիտա-  
ուսումնական աշխատություններ, որոնց մի մասը մայրենի  
լեզվին տիրապետելու ուղեցույց են, ձեռնարկներ կամ բա-  
նարաններ: Ահա 1829 թվականին հրատարակված «Համա-  
ռոտություն հայկական քերականության» գիրքը, ուր բաժին-  
ներով են ներկայացված հայերենի քերականության գլխա-  
վոր մասերը, տրված են քերականական սահմանումներ, բը-  
նութագրումներ և այլն: Ուսումնական ձեռնարկը օգտակար է  
ամենից առաջ նրանով, որ տեսական խոսքին ուղեկցում են  
համոզիչ օրինակներ, վարժություններ: Ընթերցողն խոսքի  
մասերի հետ ծանոթանում է հանգամանորեն: Այդ առաջին  
հերթին վերաբերում է բային: Մավալուն խոսք է ասվում

<sup>1</sup> Բողդան Զանյան, «Իշխանաձորի կանաչը», Երևան, 1988 թ., էջ 56:



բայի խոնարհման, սեռերի և նրանց հատկանիշների մասին: Գրքի հեղինակը՝ Պողոս վարդապետ Ղարաբաղցին նոր անուն չէր հայոց լեզվի և գրականության հայտնի մանկավարժների համաստեղության մեջ: Նա 1825—1826 թվականներին մայրենի լեզու է դասավանդել Թիֆլիսում նոր բացված Ներսիսյան դպրոցում, միաժամանակ ձգտելով իր հարուստ փորձը մանուկներին ու պատանիներին հասցնել գրավոր խոսքի միջոցով:

Հովսեփ Արցախեցի վարդապետի «Համառոտ բառգիրք ի գրաբարե աշխարհաբար...» գիրքը, որ տպագրվել է Շուշիում 1830 թվականին, մեծ ընդունելություն է գտնում ոչ միայն սովորողների և ուսուցիչների, այլև մտավորականության շրջանում: Գրքի արժանիքն այն էր, որ այնտեղ տրված են գրաբար բառերի աշխարհաբար բացատրությունները: Ավելին, յուրաքանչյուր բացատրություն ամփոփվում է բառերի հոլովման ձևերով և ձևաբանական մյուս հատկություններով:

1833 թվականին հրատարակած գրքերի մեջ ուրույն տեղ ունի Միքայել Չամչյանի «Քերականություն հայկազյան լեզվի» աշխատությունը, որը փաստորեն ուսումնական ձեռնարկ էր: Նրանում հետազոտված են հայոց լեզվի բառային կառուցվածքը, հոլովները և խոսքի մասերը: Այստեղ էլ խոսքը ուղեկցվում է օրինակներով ու վարժություններով:

Հայերենի քերականության խոր ուսումնասիրությանն էր նվիրված Խաչատուր Տեր-Օհանյանի «Համառոտ հայկազյան քերականությունը...», որը լույս տեսավ 1839 թվականին, Շուշիում: Գիրքը բաղկացած է մի քանի բաժիններից: «Յազագս քերականության» բաժնում ընդհանուր գծերով տրվում է, թե ինչ է ուսուցանում և հետապնդում քերականությունը: Այնուհետև հեղինակը ուսումնասիրության է ենթարկում եզակի և հոգնակի հոլովները, խոսքի մասերը, նախադասություն տեսակները և այլն: Մեծ բաժին է հատկացված ածականին:

Գիրքը ուսուցողական է:

Այդ նույն 1839 թվականին հրատարակվում են Եսայի կաթողիկոս Հասան Զալալյանցի «Պատմություն կամ հիշատակ ինչ-ինչ անցից» դիպկոց աշխարհին Աղվանից», «Միսարան, որ կոչի Մաշտոց» և այլ գրքերը, որոնք մեծ մասամբ կոչ-

ված էին ներկայացնելու հայ ժողովրդի պատմության այս կամ այն հատվածը: Այսպես, վերոհիշյալ գրքի առաջաբանում Եսայի Հասան Զալալյանցը նշում է, որ ինքը մտադիր է տալ ներկա օրերի պատմությունը, շարադրել հայ ժողովրդի անցյալում կրած տառապանքները, կանգ առնելով կոնկրետ փաստերի վրա: Հեղինակը իր պատմությունն սկսում է պարսիկների տիրապետության դեմ հայերի մղած ռազմական գործողությունների նկարագրությամբ:

Աշխատությունը զնահատելի է ոչ միայն այն առումով, որ բավականին հանգամանորեն տրվում են ժամանակի կարևորագույն իրադարձությունները՝ կապված հայերի հետ, այլև այն տեսանկյունից, որ Եսայի Հասան Զալալյանցը բերեկամական տոնով է խոսում մյուս ժողովուրդների մասին: Խոսքը կոնկրետանում է հայերի և վրացիների դարերի խորքից եկող բարեկամության և այն մտքի վրա, որ վրացիները միշտ էլ թիկունք են եղել հայերի համար: Գրքի հեղինակը քննադատում է Գյանջայի, Կախեթի, Ղազախի և այլ խաների գործողությունները, որոնց նպատակն էր կործանել վրաց թագավոր Վախթանգի տիրապետությունը:

Հասան Զալալյանցի գրքերը հետապնդում են որոշակի նպատակ՝ օգնել ընթերցողներին ճիշտ ու հավաստի տեղյակ լինելու հայոց պատմության անցուղարձին, զաղափար ունենալու 17-րդ և 18-րդ դարերի իրադարձությունների, նըշանավոր մարդկանց գործունեության, հայերի և հարևան ժողովուրդների փոխհարաբերությունների մասին:

Բեղմնավոր գործունեություն է ծավալում Շուշիում 1838 թվականին հիմնադրված Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի տպարանը: Ինչ խոսք, տպարանը առաջին հերթին մտահոգված էր աշակերտների համար հրատարակել ուսումնական ձեռնարկներ, մայրենի լեզվին, գրականությանը և հայ ժողովրդի պատմությանը նվիրված գրքեր: Հրատարակված գրքերի մեջ ուրույն տեղ էր գրավում անվանի վիպասան Պերճ Պոռչյանի «Ղարաբաղու Տիրամայր սուրբ Մարիամու օրհորդաց ուսումնաբանի բացվելը» աշխատությունը, որտեղ հեղինակը մեծ ջերմությամբ է նկարագրում հայ կանանց կրթության գործի հիմնադրման պահը Շուշիում: Պ. Պոռչյանը և ժամանակի առաջնակի արժանիք օրգաններ Շու-



շիում օրիորդաց դպրոցի բացումը համարում են քաղաքի տոնական հանդեսը:

1864 թվականին լույս է տեսնում Կարապետ Եղյանի կարևոր աշխատությունը՝ «Ներքին կյանք հին Հայաստանի» պատմական քննությունը, որը, ի դեպ, ուսերենից հայերեն էր թարգմանել Պերճ Պոռչյանը:

Ուշադրություն է գրավում 1865 թվականին ուսուցիչների ակտիվ աշխատակցությունը տպագրված «Համառոտ պատմություն հայոց» ուսումնասիրությունը, որի հեղինակը նպատակ էր ունեցել օգնելու հայ երեխաներին պատկերացում կազմելու իր ժողովրդի անցած ուղու մասին:

Սակայն որոշ ժամանակ Շուշիի թեմական դպրոցի տպարանը թուլացնում է իր գործունեությունը, հատկապես, տեխնիկապես թույլ լինելու պատճառով: Ժամանակի մամուլը քննադատական խոսք է ասում այդ առթիվ: Ահա ինչ է զբրված «Մշակ» թերթի 1880 թվականի ապրիլի 29-ի համարում. «Ինչ վերաբերում է տպագրության, պետք է ասել, որ արտաքին կողմից շատ լավ չէ (խոսքը Զոն Վիլիամ Դրեպերի «Պատմություն մտավոր զարգացման» գրքի մասին է: — Ս. Ա.), մանավանդ շատ տպագրական սխալներով, տեղ-տեղ անորոշ և անկանոն տառերով: Բայց այդ ամենը առաջ է եկել ոչ թե իրեն՝ թարգմանչի անուշադրությունից կամ խնայողությունից, այլ տպարանատիրոջ՝ իր պարտքը անբարեխղճաբար կատարելուց... Թեև այդ տպարանը Վ. Սեդրակյանի հետ պայման էր կապել օրինավոր կերպով տպագրելու, բայց գրքից երևում է, որ նա շատ տառեր չի ունեցել. օրինակ «ի» տառը չունենալով, նա «ի» և «ւ» է գրել»:

1880—1881 թթ. Ղարաբաղի թեմական դպրոցի հոգաբարձությունը ամեն կերպ ձգտում էր ոտքի կանգնեցնել իր տպարանը: Եվ այդ նպատակով Մոսկվայից բերել է տալիս տպագրական նոր մեքենաներ ու տառատեսակներ, սակայն կանոնավոր շօգտագործելու պատճառով դրանց մի մասը շարքից դուրս է գալիս:

Դպրոցների համար համեմատաբար մեծ տպաքանակով ձեռնարկների, մայրենի լեզվով գեղարվեստական և այլ տիպի գրականության տպագրումը և, ընդհանրապես, հասարակական-գիտական մտքի զարգացումը թելադրում էին ու-

նենալ տպագրական որոշ բազա, նոր տպարաններ՝ հագեցված ժամանակակից տեխնիկական սարքավորումներով: Այդպիսին էր 1881 թվականին Շուշիում բացված Միրզաջան Մահտեսի-Հակոբյանի տպարանը:

Տպարանի ստեղծման և հետագա գործունեության մասին հետաքրքիր հուշեր է պատմում Արցախի հրատարակչական և, ընդհանրապես, մշակույթի պատմությունը քաջածանոթ Պետրոս Զաքարյանը: Նա Երևանում, 1922 թվականից լույս տեսնող «Նորք» գրական, գիտական և քաղաքական հանդեսում<sup>1</sup> գրել է. «Կառավարական ապարատի օրավուր բարդանալը և ճյուղավորումը, հասարակական, դպրոցական, վաճառականական պահանջներն առաջ բերին տպարանի անհրաժեշտությունը: Շուտով Բաքվի աքսորից վերադարձավ Մահտեսի-Հակոբյան Մ-ն, հիմնեց իր տանը կից հատուկ շենքում ձի տպարան, որտեղ աշխատում էին իր որդիները: Ծիշտ է, տպագրական մամուլը նոր երևույթ չէր Ղարաբաղում... բայց նոր տպարանը բարգավաճում էր իր հիմնվելու օրից: Ի միջի այլոց, այստեղ իր գրական մկրտությունը ստացավ մեծ գրող Լեոն, որը տպարանի առաջին սրբագրողն էր. այստեղ «կսեց իր հրատարակչական գործունեությունը Տիգրան Նազարյանը, հրատարակելով Սենկևիչի «Պողնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը, Ն. Տեր-Ավետիսյանի «Քնար խոսնակը» և այլն, այստեղ երիտասարդ գործակատար Աբել Ապրեսյանը կատարեց Բաֆֆու «Խենթի» առաջին տպագրությունը, Արիստակես Սեդրակյանը տպագրեց «Դրեպերը» և այլն»:

Ինչպես նշվեց վերևում, այս տպարանում է առաջին անգամ (1881 թ.) ամբողջապես տպագրվում Բաֆֆու «Խենթը» (այն սկզբում հատվածաբար լույս էր տեսել «Մշակ» թերթի էջերում), որը ուներ հետաքրքիր պատմություն: Ոչ միայն հեղինակը, այլև առանձին ուսանողներ և մտավորականներ ցանկանում էին «Խենթը» տեսնել շքեղ հրատարակությամբ, բավականին մեծ տպաքանակով: Եվ ահա, 1880 թվականին Մոսկվայի համալսարանի ուսանող Գ. Միրզոյանը դիմում է հեղինակին՝ տպագրության թույլտվություն ստանալու: Սա-

<sup>1</sup> Գիրք № 1, 1922 թ., էջ 83:



կայն այդ մտահղացումը Մոսկվայում չի իրագործվում, որովհետև Ռաֆֆին արդեն իր համաձայնությունն էր տվել տպագրելու Շուշիում: Այս մասին Ռաֆֆին գրում է. «Պարոն Միրզոյանցը մի երկու ամիս առաջ դիմել էր ինձ, որ ես իրավունք տամ «Խենթը» Մոսկվայում տպագրելու, բայց ես չկարողացա կատարել նրա գեղեցիկ ցանկությունը, որովհետև նրանից առաջ արդեն իրավունք էի տված Շուշիում տպագրելու: Այս քաղաքից «Խենթի» առաջին թերթերը ուղարկել էին ինձ տեսնելու համար, թուղթը բավականին լավն է և տպագրությունը մաքուր, երևում է, այնտեղի տպարանը այժմ փոքր ի շատե կանոնավորված է»<sup>1</sup>:

Ինչպես նկատում ենք, Ռաֆֆին ևս զոհունակություն է ցուցնում Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանի բարձրորակ աշխատանքի մասին:

1886 թվականին Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում է առաջին անգամ հայերեն լույս տեսնում ռուս մեծ գրող Ն. Գոգոլի «Տարաս Բուլբան»: Սա բնագրի ուղղակի թարգմանությունը չէր, այլ առանձին հատվածների բովանդակության շարադրանքը:

Շուշիում լույս տեսավ նաև Մանուկ Աբեղյանի «Նմուշներ» բանաստեղծությունների ժողովածուն, ուր հիմնականում ղետեղված էին ժողովրդական ավանդույթներն ու լեզենդները՝ հեղինակի մշակմամբ: Այստեղ երևում է մեծ հայագետի խոր գիտելիքները ոչ միայն բանասիրության, այլև գեղարվեստի ասպարեզում:

1889 թ. հրատարակվում է հեղինակի «Դավիթ և Մհեր, ժողովրդական դուցադնական վեպ» աշխատությունը, որը չեքմ ընդունելություն է գտնում ընթերցողների կողմից: Գրախոսություններից մեկում կարդում ենք. «Այսպես, ուրեմն, պ. Աբեղյանի հրատարակած «Դավիթ և Մհեր» ժողովրդական դուցադնական վեպը, չնայած իր թերատվության, մի շատ նշանավոր երևույթ է մեր գրականության մեջ և ցանկալի է, որ այսուհետև ոչ թե պատահական կերպով անհայտությունից լույս աշխարհ ընկնեն մեր ժողովրդի փառավոր գյու-

ցաղներգության բեկորները, այլև կազմակերպված հետադուստության և ուսումնասիրության արդյունք լինեին նոքա»:

Մեծ արցախցի, ականավոր պատմաբան, գրող և հրապարակախոս Լեոյի աշխատությունների մի զգալի մասը առաջին անգամ լույս է տեսել իր հայերենիքում: Ահա դրանցից մի քանիսը. «Վեպ թե՛ պատմություն» (1887 թ.), «Կույր աղջիկը», «Վահան Մամիկոնյան» (1888 թ.), «Իմ հիշատակարանը», «Սպանված հայրը» (1891 թ.), «Թաթախման գիշերը» (1892 թ.) և այլն:

Մակար վարդապետ Բարխուդարյանը մեծ ավանդ ունի իր հայերենի եզերքի պատմության համակողմանի ուսումնասիրման գործում: Նրա գրչին են պատկանում «Պլյուսուղի», «Միրզա Աննա», «Չնաշխարհիկ տղա», «Չոբանն ու նշանածը», «Բարոյական առածներ», ինչպես նաև գիտական մի շարք աշխատություններ («Աղուանից երկիր և դրացիք», «Պատմություն Աղուանից», «Արցախ» և այլն): 1883 թվականին Շուշիում լույս տեսավ Մ. Բարխուդարյանի «Արազը տարին կտարի» վերնագրով գիրքը, որը գրված է Ղարաբաղի քարբառով:

Ուշագրություն է գրավում նաև Միրզա Տեր-Սարգսյանի («Միր-Սար» գրական անվամբ) վեպը՝ «Ռուշան և Հեբիզադ» վերնագրով, որի նյութը վերցված է Ղարաբաղի անցյալից: Գիրքը լույս է տեսնում 1889 թ., Շուշիում:

Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում լույս են տեսնում նաև «Ուխտավորի հիշատակարանը» (1885 թ.), «Նոր ցավ» (1886 թ.), «Պանդուխտի հիշատակարանը» (1888 թ.) և այլ գրքեր ու գրքույկներ:

1899 թ. Շուշիում լույս տեսած գրքերի մեջ կային այնպիսիները, որոնք թեև գեղարվեստականորեն չէին փայլում, բայց բավականին ակտիվ կերպով քննադատական խոսք էին ասում հարստահարիչների, շահագործողների դեմ: Գրանցից էր, օրինակ, Հ. Ճաղարեկյանի «Հարստության ավետարան», էր, օրինակ, Հ. Ճաղարեկյանի «Հարստության ավետարան», գիրքը, որտեղ հեղինակը ուղղակիորեն նշում է, որ «հարստության մեծագույն մասը կենտրոնացած է սակավաթիվ ձեռքերում»:

<sup>1</sup> «Մուրճ», հ. 9, 1889 թ., էջ 1469:

<sup>1</sup> Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1964 թ., էջ 548:



Միրզաջան Մահտեսի-Հակոբյանի տպարանում լույս են տեսնում նաև թարգմանական գործեր, մեծ մասամբ գեղարվեստական նշանավոր ստեղծագործություններ: Շուշիի թեմական դպրոցի հայոց լեզվի և ֆրանսերենի ուսուցիչ Սամվել Գյուլզադյանի թարգմանությունամբ հայերեն լույս է տեսնում Ֆիրդուսու «Ռոստամ և Զոհրաբը» («Շահնամեից»): Հաջորդ տարում՝ 1894 թվականին Սամվել Գյուլզադյանի թարգմանությունամբ տպագրվում է Ֆիրդուսու «Զոհակ Բուրասպի Աժդահակը»:

Մամուլը դրվատանքի խոսքեր է ասում Ս. Գյուլզադյանի թարգմանությունների մասին:

#### ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՇՈՒՇԻՈՒՄ

19-րդ դարի վերջերին Շուշիում առաջ է գալիս ժողովրդական գրքեր հրատարակելու ցանկությունը: Ակտիվություն է հանդես բերում հայոց բարեգործական ընկերությունը: Նրա՝ Շուշիի տեղական վարչության միջոցով պարզվում են հրատարակելիք գրքերի ուղղությունն ու թեմատիկան:

Պարբերական մամուլը լայնորեն է արձագանքում հայրենասիրական այդ նախաձեռնությանը, որի հիմնական նըպատակն էր՝ աշխատավորական զանգվածների համար լույս ընծայել դյուրըմբռնելի գրքեր, սեր առաջացնել դեպի գիտությունը, վերացնել մարդու գիտակցությունից սնոտիապաշտությունը, հոռի սովորությունները, բարձրացնել գեղագիտական ճաշակը:

«Շուշիի տեղական վարչության ձեռնարկած գործը հա-

<sup>1</sup> «Մուրճ», հ. 5, 1894 թ., էջ 771:

մակրելի գործ է և խրախուսանքի արժանի, — գրում է «Մշակը» 1881 թ. օգոստոսի 20-ի համարում, — մեր հասարակ ժողովուրդը զուրկ է բոլորովին որևէ մտավոր սնունդից. չկա ո՛չ մի պաշար, ո՛չ մի նյութ, որով կարելի լիներ մատակարարել նորան այդ սնունդը: Նախապաշարմունքներ, սնոտիապաշտություններ, անհեթեթ կարծիքներ և գաղափարներ այնպես վարակել են ժողովուրդը, և մտել մի նշև նորա ծուծը, որ նորա դեմ մաքառելու համար հարկավոր է գործածել ազդու և սուր զենք, իսկ այդպիսի զենքը կարող է լինել լավ, դյուրըմբռնելի և մատչելի գիրքը: Հենց այդ պատճառով ժողովրդական գիրք հրատարակելը մի վերին աստիճանի լուրջ գործ է, որին պետք է ձեռնարկել որոշ ծրագրով և պատրաստակամությամբ: Ժողովրդական գիրքը նպատակ պիտի ունենա հասարակ դասի, ամբոխի մտավոր հորիզոնը լայնացնել, բարոյական ձգտումներ առաջ բերել նրա մեջ, ներշնչել նրա մեջ գիտակցություն և ինքնուրույնության զգացմունք, տգիտությունը և նորա հետևանք դանազան թյուր գաղափարներ, սնոտիապաշտությունները որքան կարելի է ցրել, գիտության էական ճշմարտությունները պարզ լեզվով ավանդելով նորան, և ի վերջո գրգռել սեր, ձգտում դեպի ընթերցանությունը»:

Արդեն մեկ ամիս անց «Մշակում» հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական վարչությունը հայտնում է ժողովրդական գրքերի հրատարակության ծրագիրը, որտեղ մատնանշում է, որ առավել ուշադրություն է դարձվել կյանքի վերցված ինքնուրույն և թարգմանական գործերի լույս ընծայմանը: Հրատարակելիք գրքերի մի մասը պետք է լինի գիտական, ուր պատմվեն ոչ միայն զանազան երևույթների պատճառների մասին, այլև ընթերցողներին օգտակար տեղեկություններ հաղորդվեն գյուղատնտեսության և այլ բնագավառների վերաբերյալ: Ծրագրի մեջ նախատեսվում է նաև հրատարակ հանել հանրամատչելի գրքույկներ պատմական գործիչների, նշանավոր մարդկանց կյանքի ու գործունեության մասին:

Հրատարակչություն հայտնվում էր նաև լույս ընծայվելիք գրքերի լեզվի, պատմելաձևի, ներքին կառուցվածքի, կոմպոզիցիայի մասին:



իրականացվում է ծրագրի մի մասը միայն, որովհետև այն հանդիպում է բազմաթիվ դժվարությունների, առաջին հերթին՝ ցարական իշխանությունների դիմադրությունը:

Ժողովրդական գրքի հրատարակման գործում մեծ ջանքեր է ներդնում Տիգրան Նազարյանը: Նա մանկուց օժտված լինելով լեզուների տիրապետման ընդունակությամբ, Գալուստ Փափաղյանի դպրոցում կատարելագործվում է ֆրանսերենի մեջ, մինչև իր կյանքի վերջը զբաղվում է ժուռնալիստիկայով, հրատարակչական գործունեությամբ: 1881 թ. Շուշիում Նազարյանը հիմնում է հրատարակչական գրասենյակ: Այդ առթիվ էլ հայտարարություն է տպագրում «Մշակում».

«Ես կազմում եմ Շուշիում հրատարակչական գրասենյակ» և առաջին սերիան իմ հրատարակությունների՝ կլիսենն հետևյալ վեց գրքույկները. երեսաների համար «Երկու մանրավեպ» Ալֆոնս-Դոդեից թարգմանած (գինն է 15 կոպ.), ծնողների և դաստիարակների համար «Պոզնանի ուսուցչի օրագրից» հեղ. Լետոսի, թարգմանած «Вестник Европы» ամսագրից (գինն է 20 կոպ.), ժողովրդի համար «Մաղիկ և ծաղկահատություն» (գինն է 15 կոպ.): Նույնպես հետևյալ ընթերցանության գրքույկները. «Ճանապարհորդություն Ղաբաբազում» (գինն է 30 կոպ.), «Պարապ ժամեր» (գինն է 25 կոպ.) և «Քնար խոսնակ» ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններ (գինն է 50 կոպ.): Նախապատրաստական մեծ աշխատանքից հետո, նա կազմակերպում է հրատարակչական գրքերի բաժանորդագրություն: Մեր հրատարակությունների առաջին սերիայի համար բաժանորդագրություն բացինք, — ասում է Տ. Նազարյանը, — ոչ այն նպատակով, որ նրանից ստացած փողով առաջ տանեինք հրատարակչական գործը, այլ որպեսզի ընթերցողների մի որոշ թիվ ի նկատի ունենալով՝ նրա համեմատ քանակությամբ հրատարակեինք, թեև բաժանորդների թիվը 200-ի անգամ չհասավ, բայց մենք չնուսահատվեցինք, այլ որոշեցինք ամեն մի գրքույկից տպել մի-մի հազար օրինակ և ցրել գավառներում»:

Տպագրված գրքույկների տարածման համար Տիգրան Նազարյանը կապեր է հաստատում հայաբնակ վայրերի ազդեցիկ մարդկանց հետ, տեղերում աշխատակիցներ է ընտրում,

բայց նրեք գրքույկ հրատարակելուց հետո առաջ են գալիս մի շարք արգելքներ. հատկապես մեծ դժվարություն է քստեղծվում նյութական միջոցների հայթայթման գործում, այն էլ ցարական իշխանությունների մշտական հալածանքի պայմաններում:

Այդ և այլ պատճառներով լիովին չեն իրականանում Տիգրան Նազարյանի մտահղացումները: 1881 թ. վերջերին նա տեղափոխվում է Թիֆլիս, նամակ է հղում «Մշակի» խմբագրին, խնդրելով տպագրել այն՝ ի գիտություն ընթերցողների: Նամակում ասվում է. «Մեր հայտարարական նամակներից, որ տրվեցան հայ պարբերական թերթերում, իհարկե, արդեն հայտնի կլինի մեր հարգելի բաժանորդներին, որ մեզանից բոլորովին անկախ և անակնկալ արգելափակներ խուշրոկտն եղան Շուշիում կանոնավորապես նոցա լույս ընծայելուն և մենք ստիպված էինք անորոշ ժամանակով հետաձգել հրատարակությունների շարունակելը: Առ ժամանակ տեղափոխվելով Թիֆլիս, պատիվ ունենք հայտնել մեր բաժանորդներին, որ այստեղ շուտով լույս կտեսնի մեր հրատարակությունների 4-րդ համարը և անմիջապես կուղարկվեն նրանց, իսկ մյուս համարների շուտ, թե քիչ ուշ լույս ընծայելը կախված է կարևոր իրավունքներ ստանալուց, որոնց ձեռք բերելու մասամբ էլ սրանց համար եկած եմ Թիֆլիս»:

Նա ցանկանում էր ոչ միայն շարունակել նախատեսված գրքերի հրատարակությունը, այլև հիմնել ինքնուրույն պարբերական, ստեղծել սեփական տպարան: 1883 թ. նա հիմնում է մանկական պատկերազարդ «Աղբյուր» ամսագիրը: 1890—1919 թթ. հրատարակում է նաև «Տարազ» գրական, երգիծական շաբաթաթերթը (հետագայում ամսագիրը):

Հետաքրքիր են Տ. Նազարյանի կողմից պատրաստված «Աղբյուրի» և «Տարազի» հավելվածները: Ուշագրավ են մասնավորապես «Գեղամիջիկը» (1907—1912 թթ.), «Կովկասի առավոտը» (1907—1908 թթ.), «Առողջապահիկը» (1911—1912 թթ.), «Փարիզի մոդաները» (1910—1918 թթ.), «Լրաբերը» (1918 թ.) և այլն:

Տիգրան Նազարյանը 1891 թ. Թիֆլիսում ստեղծում է «Արոթ» տպարանը:

Իր ակտիվ գործունեության համար նա դառնում է Թիֆ-



լիսի Հայոց հրատարակչական ընկերության անդամ: Նազար-  
յանը Անդրկովկասում և հայաբնակ այլ վայրերում լույս  
տեսնող գրականության և պարբերական մամուլի ջերմ բա-  
րեկամն էր, ուստի ջանքեր չէր խնայում դրանց տարածման  
և պրոպագանդան համար: Նա «Շուշեցի» և «Արցախցի»  
ստորագրություններով շարունակ հանդես էր գալիս «Մշակ»,  
«Մեղու Հայաստանի» և այլ պարբերականներում:

Լայն էր Տիգրան Նազարյանի ժողովրդական-հրատար-  
ակախոսական գործունեությունը: Մտահոգված լինելով ա-  
պագա հրատարակիչների ու լրագրողների պատրաստման  
գործով, նա դիմում է կառավարությանը՝ թույլատրելու եր-  
կու տարվա դասընթացներ բացելու երիտասարդ լրագրող-  
ների համար: Նրա նպատակն էր բացի մայրենի լեզվից ժող-  
նալիստներին սովորեցնել անգլերեն, իտալերեն, գերմանե-  
րեն, ֆրանսերեն և այլ լեզուներ, զինել նրանց հայ, ռուս,  
վրաց գրականության ու պատմության իմացությամբ, կով-  
կասագիտությամբ և հոգեբանությամբ: Տիգրան Նազարյանի  
«նպատակն է՝ առանց ազգի խտրության տալ պրոֆեսիոնալ  
ուսում երկսեռ լրագրողներին», — գրում է «Մշակը» 1921 թ.  
հունիսի 29-ի համարում:

Տիգրան Նազարյանի հրատարակչական գործունեությունը  
Արցախում անջնջելի հետք է թողել երկրամասի մշակութի  
պատմության մեջ:

### ԱՐՅԱԼԻ ԴՊՐՈՅՆԵՐԸ

Արցախի մշակութային, կուլտուր-կրթական կյանքի պատ-  
մության մեջ առանձնանում է մասնավորապես Ամարասը,  
որը հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, իսկ նրա շինարարու-

թյան լիակատար ավարտման պատիվը պատկանում է թո-  
ռանը:

Փետև 5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցը Ամարասում հիմ-  
նում է դպրանոց և տասնյակ հայ երեխաների ուսուցանում  
ոչ միայն նորաստեղծ մայրենի այբուբենը, այլև հաղորդում  
նրանց կենսական գիտելիքներ: Ահա թե ինչու անվարան  
կերպով կարող ենք ասել, որ Ամարասում աճել են թարգ-  
մանիչներ, պոետներ, պատմաբաններ, մաթեմատիկոսներ,  
վարպետներ...

Ամարասի դպրոցն ուներ հարուստ գրադարան հազվա-  
բաժնու ձևագրերով, նաև զեղարվեստական արհեստանոց, որ-  
տեղ ձեռագիր աշխատանքները նկարազարդվում էին: Ամա-  
րասի խուցերում են ապրել և ստեղծագործել հոգևոր հայ-  
րերը:

Երկար դարեր Ամարասի փառքը շեք խունանում, թեև  
թշնամիները անընդհատ ասպատակություններ էին կազմա-  
կերպում: 13-րդ դարում մոնղոլ-թաթարները շարդուփշուփ  
են արել Ամարասը, իսկ 14-րդ դարում այն հրկիզել են կենկ-  
թեմուրի հրոսակները: Բայց արցախցին միշտ ուժ է գտել  
իր բազուկներում կենդանության տալու Ամարասին, իսկ սկը-  
սած 16-րդ դարից այն վերականգնվում է, ընդարձակվում  
են նրա տարածությունները:

Տարիների հեռվից մեզ են ներկայանում դպրոցական մի  
շարք օջախներ, որոնք այս կամ այն շափով ծառայել են մեր  
ժողովրդին՝ տալով նրան կենսահաստատ գիտելիքներ, ազ-  
գապահպանության և առաջընթացի նպաստներ: Դրանց շար-  
քում առավելապես նշանավոր էին 1820-ական թվականներին  
վանքերին կից (Գանձասարի, Ս. Գրիգորիսի և այլն) ստեղծ-  
ված կրթօջախները: Գանձասարում են սովորել շատ անվանի  
մարդիկ, որոնք աչքի են ընկել ոչ միայն գիտելիքներով,  
այլև հերոսականությամբ, ազգասիրական նախաձեռնումնե-  
րով, լուսավորության տարածմամբ:

Անուրանալի են Հասան Զալալյանի ջանքերը դպրոցաշի-  
նության ասպարեզում: Բոլոր վանքերին կից նա հիմնեց  
դպրանոցներ, որտեղ ուսանում էին հայ երեխաները: Նրա  
ազգակից Սարգիս Զալալյանը վկայում է, որ նա Արցախում  
հիմնեց երկվեզվյան և եռվեզվյան կրթօջախներ, որոնք ան-



ուրանալի դեր են խաղացել ոչ միայն լուսավորութեան տարածման, այլև թարգմանիչներ, գեղարվեստի գործիչներ պատրաստելու ուղղութեամբ:

Սակայն Արցախ աշխարհը զգում էր մի նոր, խոշոր կրթօջախի կարիք, իսկ այդպիսի դպրոց հանդիսացավ 1838 թվականի հունիսին Շուշիում բացված Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցը, որը գոյատևեց մինչև 1920 թվականը (թեև առանձին տարիներ ընդհատվել են նրա պարապմունքները՝ տարբեր պատճառներով):

Հենց առաջին ուսումնական տարվանից դպրոցը ձեռք բերեց մեծ հեղինակություն. շատ-շատերն էին ցանկանում իրենց երեխաներին ուսանելու տալ նորաբաց այդ դպրոցում, զգալով, որ այնտեղ ստեղծված է կարգ ու կանոն, դասատուները բարձր մակարդակ ունեն և պարտականությունները կատարում են ամենայն բարեխղճությամբ: Ահա թե ինչու դպրոցի անցած ուղու մասին ծավալուն դիրք է գրել մեծ ղարաբաղցի, վաստակաշատ գիտնական, պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյան), որը լույս է տեսել 1914 թվականին, Թիֆլիսում:

Լեոն մեծ խանդավառությամբ է իր մտքերը գրքին հանձնել: Նա այդ դպրոցի սաներից մեկն էր, խորապես գիտեր նրա անցած ուղին, զիզվազներով լի գործունեությունը: Աշխատությունը կցված են առանձին փաստաթղթեր, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց հետաքրքրությունը:

Ինչ խոսք, դպրոցի փառքն ինքն իրեն չի ծնվել: Գրպրոցի առաջին ուսուցիչները, մասնավորապես Առաքել Յուզբաշյանն ու Սարգիս Աթաբեկյանը, ուժ ու եռանդ չէին խնայում սովորողներին ոչ միայն հաստատուն գիտելիքներ հաղորդելու, այլև նրանց մեջ սեր առաջացնելու դեպի գիտությունը, մասնավորապես հայոց լեզուն, գրականությունը, պատմությունը և այլն: Ավելին, առանձին դասատուներ, սկզբնական շրջանում իրենց պարտականությունները կատարում էին առանց վարձատրության:

Գպրոցի ուշադրության կենտրոնում էր հատկապես լեզուների խոր յուրացումը: Ահա թե ինչու թեմականն ավարտողները ոչ միայն լավ գիտեին մայրենին, այլև մի քանի լեզուներ:

Թեմական դպրոցում սովորում էին ոչ միայն հոգևորականները, այլև աշխարհիկ մարդկանց երեխաները: Սա նրպաստավոր հանգամանք էր, որ դպրոցի մասին հոգ տանեն բոլորը: Ավելին, առանձին մարդիկ դրամական օգնություն էին ցույց տալիս և՛ դպրոցին, և՛ աղքատ սովորողներին: Այդ մասին հարուստ տվյալներ է հաղորդում ժամանակի մամուլը: «Տարազ» ամսագիրը 1898 թ. № 13-ում գրում է («Գպրոցական» խորագրի ներքո), որ «մարտի 8-ին շուշեցի պարսի: Գերասիմ Թումանյանը Տիրայր վարդապետի առևտով ուղարկել է 1000 ուրբի, խնդրելով թողնել իբրև անձեռնմխելի գումար թեմական դպրանոցի համար և տուկոսը գործադրել աղքատ ուսանողների համար, հայտնելով միևնույն ժամանակ, որ ապագայում ևս կօգնի»:

Հիրավի, Շուշիում կային մարդիկ, որոնք ոչինչ չէին խընայում համաքաղաքացիների կրթության գործի կազմակերպման համար: Նրանք կտակում էին խոշոր գումարներ: Ահա մի ուշագրավ օրինակ. «Տարազը» 1898 թ. № 15-ում «Լուրեր»-ի ներքո հաղորդում է, որ «Հանգուցյալ Համբարձում Աղա Հախումյանի ազգականները, իմանալով նրա հայացքը և կենդանության ժամանակ հաճախակի բողոքը ննչեցյալներին դազողի վրա պսակներ դնելու դեմ, ուղարկել են Շուշիի (Բաքվից— Ս. Ա.) թեմական դպրանոցին պսակների փոխարեն 800 ուրբի, որպեսզի նրա տուկոսներով մի որդեգիր պահվի, քաղաքի շքավոր համբարների երեխաներից՝ Ղարաբաղի թեմական դպրանոցում: Հանգուցյալ Համբարձում Աղան շատ հազար ոսկիներ է ընծայաբերել, իր անձնվեր պաշտպանության և հովանավորության հետ այդ դպրոցին և ուրախալի է, որ նրա ազգականներն էլ այսօր մտաբերում են այդ դպրոցը, որովհետև ավելի են ապացուցում իրենց սերն ու հարգանքը դեպի այդ մարդը, որը Ղարաբաղի առաջադիմության և լուսավորության համար շատ է գործել...»:

Ամսագիրը շեշտում է նաև, որ Առաքել Առաքելյանը 11 տարի Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու երեցփոխի պաշտոն էր վարում: Նրա ժառանգները ի հիշատակ իրենց հանգուցյալ հոր, կտակել են 1000 ուրբի ձեմարանին, 1000 ուրբի ռեալական դպրոցին, 1000 ուրբի Մարինսկի օրիորդաց դպրոցին, 1000 ուրբի հայոց թեմական դպրոցին, 1000 ուրբի



բարեգործական ընկերության Շուշիի ճյուղին, 2000 ուրբի թեմական դպրոցի չբավոր աշակերտների բացվելիք ապաստարանին: Նրանք հանձն են առել Թամիրյան ջրի մի բաժինը բերել իրենց թաղը. Ղազանչեցոց եկեղեցու գմբեթի շինության մնացորդը ավարտել և այլն<sup>1</sup>:

Դպրոցը մի նոր աստիճանի հասավ, երբ նրա տնօրենը դարձավ հմուտ մանկավարժ, խոր և բազմակողմանի գիտելիքների տեր Պետրոս Շանշյանը, որը ուսանել էր հռչակավոր պրոֆեսորների մոտ:

Դպրոցի նոր փառքի ու համբավի մասին է վկայում այն փաստը, որ շուտով այն ունենում է 245 աշակերտ. ավելանում են դասարանները, բարձրորակ ուսուցիչներ են հրավիրվում հայաբնակ կենտրոններից: Նշենք, որ մեր ականավոր գրողներից և մանկավարժներից շատերը տարբեր տարիներ դասավանդել են թեմականում: Նրանցից են Պերճ Պոռշյանը, Ղազարոս Աղայանը, Վրթանես Փափազյանը, Լեոն, Սեդրակ Մանդինյանը և ուրիշներ: Տեղական և անդրկովկասյան պարբերական մամուլը ժամանակին դրվատական խոսքեր է տպագրել դպրոցի առանձին դասատուների, մասնավորապես Ղազարոս Աղայանի մասին: «Մշակը» և մյուս թերթերը շեշտել են, որ աշակերտները անգիր գիտեին Ղ. Աղայանի առանձին բանաստեղծությունները և գեղարվեստական ցերեկույթներին և երեկույթներին հանդես էին գալիս դրանց արտասանություններով: Ի դեպ, այդ կարգի երեկոներին ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս Ղ. Աղայանը, Պ. Պոռշյանը և մեր մյուս գրողները:

Փաստ է նաև, որ Պերճ Պոռշյանը ոչ միայն հայ գրականություն, հայոց լեզու և հայ ժողովրդի պատմություն է դասավանդել, այլև եղել է դպրոցի տեսուչի օգնականը և մեծ ջանքեր է գործադրել, որպեսզի երեխաները գիտելիքներ ձեռք բերեն հայ մշակույթի պատմությունից:

Դպրոցի ուսուցիչները լավ էին գիտակցում, որ աշակերտներին խոր գիտելիքներ հաղորդելու համար քիչ են դասատուների ջանքերը, անհրաժեշտ էր նրանց համար ստեղծել ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր: Ահա թե ինչու ա-

ռաջադեմ ուսուցիչները շահագրգռված էին դպրոցին առնթեր ստեղծված տպարանի աշխատանքները կարգավորելու:

Թեմականի ուսուցիչները հոգ են տարել նաև, որպեսզի տպագրիչ Մինաս Տարղլիճյանը և ուրիշ մասնագետներ աշխատեն տպարանում և պատրաստեն տպագրական գործի գիտակներ: Դպրոցի այդ տպարանում են լույս տեսնում նաև հայ գրականությանն ու պատմությանը նվիրված աշխատություններ: Նշենք հենց 1864 թվականին Պերճ Պոռշյանի թարգմանություններ լույս տեսած Կարապետ Եղյանի «Ներքին կյանք Հին Հայաստանի պատմաբանական քննությունը» գիրքը, որ մի տարի առաջ հրատարակվել էր ռուսերեն:

Ուշագրավ երևույթ էր 1866 թվականին հրատարակած «Համառոտ պատմություն Հայոց» աշխատությունը, որը երկար տարիներ աշակերտների համար ծառայում էր իբրև ուսումնական ձեռնարկ: Շուշիի Հայոց թեմական դպրոցը ուսուցչական կոլեկտիվը ձգտում էր նաև այդ մեծ կրթօջախի համար հիմնել տպագիր թերթ՝ համոզված լինելով, որ դա ևս կօգնի սովորողների ուսման առաջադիմության բարձրացմանը:

Մի խոսքով, Շուշիի հայոց թեմական դպրոցը զավառի հիմնական կրթօջախն էր, որը երբեմն մեծ դժվարություններով գործեց 19—20-րդ դարերում՝ նպատակ ունենալով կրթել, դաստիարակել հարյուրավոր երեխաների, որոնցից շատերը հետագայում դարձան անվանի հասարակական գործիչներ, գիտնականներ, գրողներ, երգահաններ...

Պատմությունը վկան է նաև այն բանի, որ Շուշիի թեմականը ամբողջ զավառի քաղաքական-հասարակական, մշակութային կյանքի առաջադեմ ուղեցույցն էր:

Շուշիում և Արցախի խոշոր գյուղերում գործում էին մասնավոր դպրոցներ, գիմնազիաներ: Հայտնի էին Գարեգին Մուրադյանի, Հովհաննես Տեր-Հակոբյանի, Թևոս Տեր-Հովհաննիսյանի, Ավետիս Տեր-Գաբրիելյանի, Գրիգոր Տեր-Մուկրրտումյանի և այլոց դպրոցները, որոնք գործել են Արցախում 1860—70-ական թվականներին:

Այդ նույն թվականներին Արցախում հիմնադրվեցին Սեդրակ Բաղինյանի, Հովհաննես Տեր-Միքայելյանի, Արտեմ Թառայանի, Բոգդան Բոգդանյանի, Դանիել Պողոսբեկյանի դպ-

<sup>1</sup> Տե՛ս «Տարագ», № 28, 1898 թ.:



րոցները, որտեղ ուսուցումը տարվում էր մեկզատյան ձևով, նպատակ ունենալով տարրական գիտելիքներ հաղորդել հայ երեխաներին, սերմանելով նրանց մեջ աշխատասիրություն, մարդասիրություն, ընկերասիրություն:

19-րդ դարի կեսերին հատկապես մտավորականության ջանքերով, Արցախում հող է տարվում հիմնելու նաև օրիորդաց դպրոցներ: Այդ վեհանձն գործի երախտավորները առաջին հերթին կանայք էին: Հատկապես ուշագրավ են շուշեցի Մարիամ Հախումյանի ջանքերը: Նա մի քանի անգամ խնդրագրեր է ներկայացնում արքեպիսկոպոս Ստեփանոսին՝ Շուշիում հիմնելու օրիորդաց ուսումնարան, որի բացումն իրագործվում է 1864 թվականի ապրիլի 7-ին: Դպրոցն անվանվում է «Ղարաբաղու սուրբ Տիրամայր Մարիամու օրիորդաց ուսումնարան»: Այն ուներ իր հստակ կանոնադրություններ, որտեղ նշված էր, որ պարապմունքները տարվելու են հայոց լեզվով, քննությունները լինելու են հրապարակային, գերազանցիկ աշակերտուհիները ստանալու են նյութական պարգևներ, տարեկան մեկ անգամ տեսուչը աշակերտների և ծնողների ներկայությամբ հաշվետվությամբ հանդես է գալու ուսումնական գործի դրվածքի և նյութական միջոցների ծախսման մասին: Ուսումնարանի կանոնադրության մեջ հաստիկ կերպով շեշտված էին այն հիմնական առարկաները, որոնք պետք է ուսման ընթացքում յուրացնեին օրիորդները. հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, հայոց պատմություն, աշխարհագրություն, ձեռագործություն, վայելչագրություն, նկարչություն, երգեցողություն և այլն:

Դասատուները պետք է օրիորդներին վերահսկեին ինչպես ուսումնարանում, այնպես էլ դրսում, որպեսզի նրանք ոչ միայն լավ սովորեին, այլև լինեին գերազանց վարքի տեր:

Մարիամ Հախումյանի օգնականն էր ամբողջ Արցախում բարի անուն հանած Եղիսաբեթ Սիմոնյանը. բարի կամքի տեր մի կին, որը երկար ժամանակ փափագում էր օրիորդաց դպրոցի ստեղծումը: Իր «Ղարաբաղու Տիրամայր Սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվելը» փոքրիկ գրքում, որը լույս է տեսել Շուշիում 1864 թվականին, Պերճ Պոռչյանը գրում է. «Երկու աղգասեր կանայք, իրենց քաղաքացիական պարտքի գերազանց կատարմամբ ոչ մի միջոցի

առաջ կանգ չեն առել վաղուց փայփայած միտքը ի կատար ածելու»: Հայտնի գրողն ու հմուտ մանկավարժը, որը տարիներ շարունակ զբաղվել է հայ երեխաների ուսման և դաստիարակության գործով, դասատուի և տեսուչի պաշտոններ է վարել առանձին դպրոցներում, ցնծությամբ է նկարագրում Մարիամյան դպրոցի բացման արարողությունը, այն համարելով տոն, բարեկենդան:

Ժամանակի պարբերական մամուլը խանդավառությամբ է հրապարակում իր անկեղծ խոսքը: «Մեզու Հայաստանի» թերթը գրում է. «Մեր բարեկամներից մեկը հաղորդում է մեզ շատ ուրախարար և մխիթարական լուր Շուշիից» լուր, որն ամեն բարեմիտ հայերին անշուշտ պետք է ուրախություն պատճառե և իրեն Շուշու հարգող հայ հասարակության հարգ և պատիվ պետք է բերե: Ղարաբաղու մեր հայրենակիցները առճասարակ իրենց ուսումնասիրությամբ հայկական ոգիով և հաստատուն, ծանրաբարձ վարքով միշտ նշանավոր եղած են մեր ազգի մեջ ու ավելի ընդունակ ամեն ազնիվ գործի համար»:

Պարբերականը ի լուր բոլորի հայտարարում է մարդասիրական այն փաստի մասին, որ հայ տիկինը «հանձն է առել պահելու նույն դպրոցի մեջ երկու աղքատ աշակերտուհիներ, հոգալով նոցա բոլոր ծախսերը թե՛ ուսման և թե՛ հագուստի համար ու տարեկան էլ խոստացել է վճարել ուսումնարանին նշանակված իր սեփականությունից»:

Տիկին Մարիամ Հախումյանը ոչ մի խոչընդոտի առաջ կանգ չի առնում իր սկսած գործն առաջ տանելու ճանապարհին. հինգ սենյականոց իր բնակարանը տրամադրում է նորաստեղծ դպրոցին, հող տանում ուսումնական անհրաժեշտ պարագաներ հայթայթելու մասին:

Ականավոր պատմաբան և գրող Լեոն իր «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի» ուսումնասիրության մեջ խոսում է նաև Մարիամյան դպրոցի մասին, նշում այդ ուսումնարանի հսկայական ավանդը հայ կանանց կրթության և դաստիարակության գործում: Այն առաջինն էր, որ կարգ ու կանոնով սկզբնավորեց Արցախում օրիորդների կրթության առաջընթացը:

Օրիորդաց դպրոցը փաստորեն Շուշիի թեմականին կից



էր, որի ուսուցիչներն էլ միաժամանակ դասավանդում էին Մարիամյան ուսումնարանում: Ուսումնական մասը ղեկավարում էր մեզ արդեն հայտնի մանկավարժ Պետրոս Շանշյանը: Նա թեմականի օրինակով ծրագրեր էր մշակել, առանձին առարկաների դասավանդումը դնելով թեմականի ուսուցիչների վրա, գործող տպարանում հատուկ ուսումնական ձևեր արկներ էր հրատարակել միայն աղջիկների համար, ձգտում էր ավելի լավ հիմքերի վրա դնել երգեցողության, նրկարչության, վայելչագրության ուսուցումը՝ կապելով դրանք առօրյա կյանքի հետ:

Եղիսաբեթ Սիմոնյանը, որին հետագայում կոչում են Աքեր (Արցախի սովորությանը— Ս. Ա.) իր անմիջական պարտականություններից դուրս կազմակերպում էր ձեռագործների ցուցահանդեսներ՝ աշակերտուհիներին խրախուսելու նպատակով:

Մարիամ Հախումյանի և Պետրոս Շանշյանի անմիջական ղեկավարությամբ յուրաքանչյուր եռամսյակ դպրոցը հաշվետվություն էր տալիս իր գործունեության մասին:

Մարիամյան դպրոցը շարունակեց իր գործունեությունը մինչև երկրամասում խորհրդային իշխանության հաստատման օրերը՝ երբեմն կոչվելով Մարիամ-Ղուկասյան: Ինչու՞մն էր բանը: Տիկին Մարիամ Հախումյանը վախճանվել էր, բայց դպրոցական կյանքը շարունակվում էր: Նրա շորս եղբայրները՝ Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Ղուկասյանները իրենց քրոջ հիշատակը հավերժացնելու համար դպրոցին են նվիրում 1000 ռուբլի և իրենց տունը՝ ընդարձակ բակով, պարտնջով, որ արժեք 40 հազար ռուբլի: Նպատակը պարզ էր՝ օգնել ուսումնական օջախին՝ կանոնավոր կրթություն և դաստիարակություն տալու հայ օրիորդներին:

Ղուկասյան եղբայրների օգնությունը շարունակվում է մամուլը վկայում է, որ նրանք այդ նպատակով էջմիածնի տնօրինությանն են տալիս 200 հազար ռուբլի:

Դպրոցի նյութական պահանջներին բավարարություն տալու նպատակով, Արցախի, մասնավորապես Շուշիի բնակիչները հանդես են գալիս նվիրատվություններով: Դպրոցը արդեն ներկայացնում էր պահանջ և ազգօգուտ ձեռնարկումների հաստատուն մի օջախ, որին ձգտում էին շատ-շատերը:

Օրիորդաց դպրոցի նոր որակը մագնիսի պես իրեն էր քաշում գավառի շատ երեխաների: Ահա թե ինչու նրա առաջընթացը նոր ցնծություն էր առաջացրել ոչ միայն Շուշիում, այլև Գանձասարում և այլուր:

Գործում էր դպրոցին առնթեր գրագրարան-ընթերցարանը: Մտացվում էին երկրի տարբեր վայրերում հրատարակվող հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով պարբերականներ, գրականություն, ուսումնական գրքեր:

Ժամանակի պարբերական մամուլը վկայում է, որ շարունակվում էին գրական երեկույթներն ու ցերեկույթները Մարիամ-Ղուկասյան դպրոցի դահլիճում: Ակտիվություն էին հանդես բերում նաև դասատուները: Նրանց նախաձեռնությամբ այստեղ ելույթ էին ունենում մեր առանձին անվանի հրահաններ, երգիչներ, դերասաններ, ստեղծագործողներ:

Դպրոցում արդեն ավանդույթ էր դարձել աշակերտուհիների ձեռագործ և արվեստին վերաբերող շատ աշխատանքներից ցուցահանդեսներ կազմակերպելը, դա նաև այն բանի առճավատչյան էր, որ ուսուցչական անձնակազմը հոգ էր տանում խրախուսելու ուսման առաջավորներին, հանդիսավոր պայմաններում հանձնելով նրանց նվիրատվություններ, պարգևատրումներ:

Օրիորդաց դպրոցը օր-օրի հասակ էր առնում՝ բարձրացնելով իր անունն ու հեղինակությունը գավառի աշխատավորության սրտում: Ահա թե ինչու վերջին տարիներին դրպրոցում արդեն ուսանում էին 245 աշակերտուհի, մի մեծ մասը աղքատ գյուղացիների երեխաներ:

Մարիամ Հախումյանի ցանած սերմերը հիանալի պտուղ են տալիս. դրան մեծապես նպաստում են ոչ միայն իր եղբայրները, այլև թեմական դպրոցի ղեկավարությունը: Ծրագրերով, ուսումնական ձեռնարկներով և մանկավարժական խորհուրդներով շարունակում են իրենց նպաստը բերել մի շարք առարկաների դասատուները:

Զավեն Վարդապետը, որ այդ ժամանակ կառավարում էր Արցախի թեմը, ոչ մի խոչընդոտի առաջ կանգ չի առնում գավառի ուսումնական օջախները լիարժեք կյանք ունենալու համար:

Դպրոցի երանելի գործերի և նրա առանձին զբաղմունքների



մասին անմոռաց հուշեր է պատմել Բոգդան Կնունյանցի քույ-  
րը՝ Փառոն: Փառո Կնունյանցը բախտ է ունեցել սովորելու  
Մարիամյան դպրոցում: Եվ մեկ դար ապրած կինը կրանելի  
է տալիս այն օրերին, երբ ինքն ուսանում էր գեղատեսիլ  
չքնաղ Շուշիում և շփվում էր առաջադիմական գաղափար-  
ների ընկերների հետ, նրանց հանձնարարությունները կա-  
տարում: Փառո Կնունյանցը համոզված շեշտում է, որ Շու-  
շիի Մարիամյան ուսումնարանը մի օջախ էր, ուր մարդը  
ձեռք էր բերում մարդկային վսեմ առաքինություններ:

Դրվատելով ուսումնական այդ օջախը, Շուշիում լույս  
տեսնող «Գործ» հանդեսը 1882 թվականի իր առաջին հա-  
մարում գրել է. «Դպրոցը տալիս է... հայ հոգով և հայ կրթ-  
թույլամբ դաստիարակված, մեծացած օրիորդներ և ապա-  
գա մայրեր, որոնք նույն ուղղությամբ և ոգով պիտի դաս-  
տիարկեն իրենց զավակներին և մեր հասարակության խոր-  
թացած, ստորացած կյանքի մեջ նոր, թարմ կյանք պիտի  
մտցնեն»:

Արցախում լույս տեսնող առանձին թերթեր և հանդեսներ  
առաջ են քաշում այն հարցը, որ Շուշիի օրիորդաց դպրոցը  
հետզհետե մեծանա, դաստիարակության գործը դրվի առա-  
վել բարձր հիմքերի վրա: Հանուն այդ վեհ նպատակի, Շուշիի  
հայ բնակիչները, որոնց թիվը անցյալ դարի վերջվերին հաս-  
նում էր 30 հազարի, նյութական և բարոյական օգնություն  
էին ցույց տալիս դպրոցին, ձգտելով կրթօջախի օրինակով  
ստեղծել դպրոցական լայն ցանց, այն հաշվով, որ մի քանի  
դպրոցների առկայության պայմաններում հեշտ կլինի աշա-  
կերտուհիներին տարբեր մասնագիտություններ սովորեցնելը:

Հիրավի, դպրոցը մեծ անուն էր հանել Արցախում: Եվ  
պատահական չէ, որ մեր գիտնականներից, գրողներից շա-  
տերը հիասքանչ կերպով են ներկայացրել Շուշիի օրիորդաց  
դպրոցի ծնունդն ու բեղմնավոր գործունեությունը:

Արցախի դպրոցների մեջ աչքի էր ընկնում նաև ռեալա-  
կան ուսումնարանը, որը հիմնվել է Շուշիում, 1881 թվա-  
կանին: Ուսումնական օջախի կրթության հիմնական ուղղվա-  
ծությունը ճշգրիտ գիտություններին (մասնավորապես մա-  
թեմատիկա, ֆիզիկա, քիմիա և այլն) տիրապետելն էր: Բայց

այս շի նշանակում թե ուսումնարանը նեղ մասնագիտական  
էր: Այնտեղի ուսանողը պատշաճ կերպով սովորում էր կեն-  
սաբանություն, հայոց և ռուսաց լեզուներ, գրականություն,  
նկարչություն, մարմնամարզություն և այլն:

Ուսումնարանում հիմնականում սովորում էին հայեր. կա-  
յին նաև հույներ, ռուսներ, գերմանացիներ, վրացիներ, լեհեր:

Ռեալականում դասավանդում էին հիմնականում հայոց  
թեմական դպրոցի ուսուցիչները, որոնք ձեռնարկում էին հա-  
մատեղ երեկույթներ, ցերեկույթներ: Փաստերը համոզում  
են, որ ռեալականի և թեմականի տարեկան ավարտական  
հանդեսները կատարվում էին համատեղ: Տիգրան Նաղար-  
յանի «Տարազ» ամսագիրը իր համարներից մեկում շեշտում  
է, որ ռեալական ուսումնարանի աշակերտները հրատարա-  
կում են մի աշակերտական թերթ, ունեն հայկական գրադա-  
րան և մի քանի աղքատ աշակերտներ են պահում իրենց  
ընկերության միջոցներով:

Ի դեպ, ռեալական ուսումնարանը ուներ օդերևութաբա-  
նական կայան, որի աշխատանքները ղեկավարում էր ֆիզի-  
կայի ուսուցիչը՝ հայ աշակերտների ուժերով: Այդ կայանի  
շնորհիվ արցախցիները տեղյակ էին լինում հաջորդ օրվա  
եղանակին:

Ռեալական ուսումնարանի շրջանավարտներից շատերը հե-  
տագայում դարձել են նշանավոր մարդիկ, որոնք մարտա-  
կանորեն պայքարել են ցարիզմի կալանքներից ազատելու  
աշխատավոր ժողովրդին: Այսպես, Արսեն Գյուրջյանը 1903  
թվականի նոյեմբերին Շուշիում ստեղծում է մի խմբակ, որը  
դառնում է Շուշիի սոցիալ-դեմոկրատական կազմակերպու-  
թյան հիմքը:

1905 թվականի փետրվարին նրա ղեկավարությամբ ռեա-  
լականի աշակերտները դասադուլ են հայտարարել միայն այն  
բանի համար, որ ուսումնարանում այնքան էլ հարգի չէր  
հայոց և ռուսաց լեզուների դասավանդումը:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Արցա-  
խում փակվում են ուսումնական շատ հաստատություններ  
և դրանց փոխարեն բացվում են վանքապատկան դպրոցներ,



որոնք, ինչ խոսք, չէին կարող բավարարել ժողովրդի օրավուր աճող պահանջը գիտելիքների նկատմամբ: Եվ ահա, լայն դանգավածների ճնշմամբ նոր դպրոցներ են բացվում ոչ միայն Շուշիում, Վարարակնում, այլև համեմատաբար մեծ գյուղերում (Բալլուշայում, Դաշբուկաղում, Գիշիում, Ճարտարում և այլուր): Շուշիի Իսահակ-Մաթևոսյան-Թադևոսյան, Մեղրացոց և այլ դպրոցները գործում են օրինակելի կերպով: Բարձր դասարանների աշակերտները Շուշիում անլեզակ կերպով կազմակերպում են տպագիր օրգաններ. «Աշակերտ», «Եռանդ», «Միծաղ», «Միրաժ», «Միություն», «Պայքար» և այլն, որոնց կատարած դերը հատկապես աշակերտության քաղաքական-հասարակական գործում անուրանալի է:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Արցախի լուսավորական-կրթական գործում անուրանալի ջանքեր է ներդնում հայտնի մանկավարժ, գիտնական, հասարակական գործիչ Առաքել Առաքելյանը, որը հետագայում դասախոսական աշխատանքներ է ծավալել Երևանի տարբեր բուհերում: Նա եղել է հոգևոր-վանքապետական դպրոցների տեսուչը: Նրա ջանքերով են զավառի մի շարք գյուղերում հիմնվել մեկդասյան և երկդասյան դպրոցներ, համալրելով բարձրորակ դասատուների կազմը տեղացիների ուժերով: Հաճախ է նա «Մշակի», «Ղարաբաղի», «Փայլակի» և այլ պարբերականների էջերում հանդես եկել դպրոցական հարցերով, մի կողմից ցույց տալով առանձին առաջավոր դպրոցների գործունեությունը, մյուս կողմից՝ նշելով այն թերությունները, որ նկատվում են գյուղերի կրթական օջախներում:

Ա. Առաքելյանը ձգտում էր, որ Արցախի դպրոցները դառնան կենսական պահանջ, հակասություն չլինի դպրոցի և ռեալ կյանքի միջև, որ շրջանավարտները օգտակար գործ կատարեն հայրենիքի և ժողովրդի համար: Դպրոցի շրջանավարտը, գրում է Ա. Առաքելյանը «Փայլակ» թերթի 1915 թվականի մարտի 15-ի համարում, չպետք է վախենա դժվարություններից, նա պետք է համարձակորեն կյանք մտնի և պայքարի արատների դեմ: Մի խոսքով, դպրոցը կոչված է լիարժեք քաղաքացիներ պատրաստելու կյանքի համար:

Սակայն այս չի նշանակում, որ ամեն ինչ կարգին էր և նորմալ պայմաններ կային դպրոցների համար: Ամենից ա-

ռաջ չկային հարմար շենքեր, ուսուցիչների համար նյութական պայմաններ: Ուսումնական ձեռնարկների և դասագրքերի պակասը ղգացվում էր ամենուրեք. առանձին դպրոցներում իշխում էր ձեականությունը, առանձնապես նկատվում էր աշակերտներին գնահատելու գործում:

Ընդհանուր առմամբ Արցախի դպրոցները մինչև երկրամասում խորհրդային իշխանության հաստատումը, մեծ դեր են խաղացել ժողովրդի լուսավորության գործում:

#### ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՌԱՋԻՆ ՊԼԱՆԻ ՎՐԱ

1880-ական թվականները Արցախի պատմության մեջ հայտնի են մի շարք ձեռնարկումներով. նկատի ունենք 1881 թվականին Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ», 1881 թվականին Ս. Հախումյանի «Գործ» պարբերականների երևան գալը, Մ. Տեր-Հակոբյանի տպարանի հիմնադրումը, ռեալական դպրոցի ստեղծումը և այլն: Եվ ահա, Շուշիի մտավորականները 1881 թվականի դեկտեմբերի 23-ին նամակ են հղում Թիֆլիսում գտնվող Կովկասի հայոց բարեգործական ընկերության ղեկավարությանը՝ թույլատրելու Շուշիում բացելու արցախյան ճյուղ: Մեծ ակտիվություն են դրսևորում Առաքել Բաբախանյանը (Լեոն), Համբարձում Առաքելյանը, Սիմոն Հախումյանը, Մկրտիչ Խանդամիրյանը, Գաղարոս Աղայանը և ուրիշներ, որոնք հայրենի եզրքում արդեն ծավալել էին կուլտուր-կրթական լայն գործունեություն:

Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը արցախցիների այդ խնդիրը դիտում է որպես հայրենասիրական և ժողովրդասիրական վիթխարի քայլ՝ Արցախի բարեգործական աշխատանքները մի նոր մակարդակի վրա դնելու ճանապարհին:

Ստեղծված ծրագրի մեջ շեշտվում է, որ բարեգործական



ընկերութեան Շուշիի ճյուղի հիմնական նպատակն է լինելու զարկ տալու դպրոցական-կրթական գործին, բացելու գրատուն-ընթերցարաններ, օգնութիւն ցույց տալու աղքատ դպրոցներին ձեռք բերելու անհրաժեշտ սխառութիւններ, գործիքներ, կահակարասիներ:

Բարեգործական ընկերութեան Շուշիի ճյուղի հիմնական եկամուտները կազմվում են նվիրատուութիւններից, թատերասերների բեմադրութիւններից, անդամավճարներից և այլ ազբյութիւններից: Եվ ահա, 1881 թվականի հունիսի 25-ին հայտարարվում է, որ Մարկոս Դոլուխանյանը և իր մայրը՝ այրի Թագուհի Դոլուխանյանը նվիրել են հայոց բարեգործութեան Շուշիի ճյուղին 500 ռուբլի՝ ի հիշատակ հանգուցյալ Նսայի Դոլուխանյանի:

Դրամական այդ նվիրատուութիւնը օգտագործվում է ուսուցիչներին կերպով. 200 ռուբլին տրվում է նորաշեն, վարագաբուն, խանաբաղ և այլ գյուղերում նոր ստեղծվելիք դպրոցներին օգնութեան. 100 ռուբլին՝ դպրոցական մանկական գրադարանին, 125 ռուբլին՝ նշանակվում է թոշակ գյուղական շքավոր աշակերտներին և այլն:

Արդեն մեկ տարվա հաշվետուութեան մեջ կովկասի հայոց բարեգործական ընկերութեան Շուշիի ճյուղի ղեկավարութիւնը հայտնում է, որ ավելի շատ ուշադրութիւն է դարձվել դպրոցական գործի ծավալմանը. մի շարք գյուղերում արդեն սկսել են գործել դպրոցներ՝ իրենց գրադարան-ընթերցարանով. օրինակ է բերվում, որ այդ բնագավառում աչքի է ընկնում հատկապէս Հաղրութի շրջանը:

Բարեգործական ընկերութեան Շուշիի ճյուղը հոգ է տանում որոշ դպրոցներում առանձին առարկաների դասավանդումը բարելավելու մասին: Նրա արձանագրութիւններից մեկում կարդում ենք, որ Վահան Դադյանցը (Տեր-Գրիգորյան) պարտավոր է դպրոցներում կարգ ու կանոն ստեղծելու՝ աշակերտների լեզվաբանական, բարոյական զարգացման և կրօնագիտութեան դասավանդման ուղղութեամբ: Ի դեպ, վահան Դադյանցը մեծ գործ է կատարում Շուշիում «Արցախ» անունով թերթ հիմնելու, դպրոցներին կից գրատուն-ընթերցարաններ կազմակերպելու, հնագիտական պեղումներ կատարելու,

մեծաքանակ հայկական ձեռագրեր հավաքելու և ուսումնասիրելու գործում:

Շուշիի բարեգործական ճյուղի նախագահութիւնը և վարչութիւնը մեծ հոգատարութիւն են ցույց տալիս այն բանի համար, որ գավառի դպրոցներում ընդգրկված լինեն բոլոր դպրոցահասակ երեխաները և ապահովված լինեն մինիմալ պայմաններով: Այստեղ առաջին պլան է մղվում ձրի սնունդը: Մամուլի վկայութեամբ առանձին դպրոցներում եղել են փոքրիկ ճաշարաններ, որոնցից օգտվել են ոչ միայն աղքատները:

Այս հարցում առավել ակտիվութիւն են ի հայտ բերել վարչութեան նախագահ խաչատուր Բահաթրյանը, Ներսէս Բահաթրյանը, Մկրտիչ Խանդամիրջանը, Կոնստանտին Մելիք-Շահնազարյանը, Իսահակ Թադևոսյանը և ուրիշներ:

Ի դեպ, բարեգործական ընկերութեան Շուշիի մասնաճյուղը արեւոյտարի դառնում էր բազմանդամ, և եթէ սկզբում ուներ 14, ապա 1887—1888 թթ. 47 անդամ, իսկ սա մի կողմից նշանակում էր, որ հարստանում էր բարեգործականի եկամուտը, քանի որ վարչութեան յուրաքանչյուր անդամ տարեկան գանձարկը էր մուծում 5 ռուբլի:

Բարեգործականի ծրագրի մեջ էր մտնում նաև աշակերտների համար գրականութեան, ուսումնական գրքերի հայթայթման խնդիրը: Նա ոչ միայն օգնութիւն է ցույց տվել առանձին տպարանների, այլև որոշակի գումար է հատկացրել ժողովրդական գրքերի և հրատարակման, և հայթայթման համար:

Բարեգործական ընկերութեան Շուշիի ճյուղը աչքի էր ընկնում մի այլ նախաձեռնութեամբ. այնպէս անել, որ երկրի տարբեր վայրերից և արտասահմանից Արցախի դպրոցներն ու նրանց գրադարանները ստանան հայերեն և ռուսերեն պարբերականներ: Արխիվային փաստաթղթերը պատմում են, որ Շուշին ստանում էր «Ռուսկոյե բողատսովո»-ն, «Նովոստի»-ն, «Ռուսկայա վեդոմոստի»-ն, «Ռուսկայա մըսլ»-ը, «Նովոյե օբոգրենի»-ն, «Կավկազ», «Մշակ», «Նաբ դար», «Արձագանք», «Արարատ», «Արաքս», «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա» և շատ այլ պարբերականներ:

Ավելին, առանձին երեւելի ուսուցիչներ ունեին իրենց գրա-



տները: Մամուլի վկայութեամբ եղբայր Դադյանները նույնիսկ ունեին գրախանութիւններ Շուշիի հայոց թեմական դպրոցին կից:

Բարեգործականի Շուշիի մասնաճյուղը լայն աշխատանք էր կատարում և՛ դպրոցականների, և՛ աշխատավոր բնակչության մշակութային սպասարկման ուղղութեամբ: Դպրոցներին առնթեր ստեղծված թատերասերների խմբերի ուժերով հաճախ էին համերգներ, երեկույթներ, բեմադրութեաններ կազմակերպում և՛ դպրոցներում, և՛ Շուշիի ակաւմբում, կամ էլ Խանդամիրյանի թատրոնի դահլիճում: Միջոցառումներից ստացված գումարի մի մասը երբեմն էլ տալիս էին շքավոր մարդկանց:

Մի խոսքով, Կովկասի բարեգործական ընկերության Շուշիի ճյուղը, նրա վարչության և նախագահության ակտիվ ջանքերով անուրանալի աշխատանք է կատարում Արցախում դպրոցական գործը, ինչպես նաև նրան առնչվող աշխատանքը բարելավելու ուղղութեամբ: Բավական է նշել, որ 19-րդ դարի վերջերին գավառի դպրոցների քանակը ոչ միայն ավելացավ, այլև արմատապես բեկում առաջացավ ուսումնական դրվածքի մեջ: Ուսումը հետզհետե դառնում էր կենսական պահանջ: Լավ սովորելու համար ստեղծվել էին համեմատաբար բավարար պայմաններ: Դասատուները Շուշիի առաջադեմ մտավորականներից էին, որոնք աշակերտներին մեջ առաջացնում էին սեր դեպի գիտելիքները, մայրենի լեզուն և գրականութունը, դեպի հայրենագիտութունը, հայ ժողովրդի պատմութունը: Այս գործում առանձնանում է Ղազարոս Աղայանի դերը: Նա բարեգործական ընկերության Շուշիի վարչության անդամ էր և հոգ էր տանում հայրենասիրական երգեր, բանաստեղծութուններ սովորեցնելու աշակերտներին: Նա աչքի էր ընկնում մի շարք բարեգործական նախաձեռնութուններով:

Ն. Տեր-Ավետիքյանը, Լեոն (Առաքել Բաբախանյանը), Մըլըրտիչ Խանդամիրյանը և ուրիշներ, որոնք լինելով բարեգործականի Շուշիի վարչության անդամներ, իրենց ուշադրութունը մեծապես նվիրում էին գրականութեան և արվեստի հարցերին: Կազմակերպվում էին Քիֆլիսից և այլ քաղաքներից ժամանած անվանի մարդկանց հանդիպումները:

դպրոցականների և բնակչության լայն խավերի հետ, ստեղծելով շերտ մթնոլորտ երկու կողմերի միջև:

Բարեգործականի ցանած սերմերը երկար տարիներ արգունավետ պտուղ են տալիս: Դրա վկաները Արցախի դպրոցական, տպագրական, մշակութային կյանքի առատ հունձքն է, դիտական հարուստ ժառանգութունը, որ այսօր էլ հիացմունք է առաջացնում մարդկանց մոտ:

#### ԱՐՅԱՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

19-րդ դարի երկրորդ կեսից Արցախը հայտնի է դառնում իբրև հայ պարբերական մամուլի հայրենիք: Այստեղ ավելի վաղ է ծնունդ առնում հայ թերթն ու ամսագիրը, քան Երևանում կամ Բաքվում:

Զարմանալ չի կարելի, որ հենց Արցախի առաջին պարբերականը կոչվել է «Հայկական աշխարհ», որի առաջին համարը լույս է տեսել 1874 թվականի ապրիլին: Ամսագրի տերն ու տնօրենը Խորեն Ստեփանյանն էր, զարգացած մի մարդ, որն ավարտել էր Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ստացել գիտական աստիճան: Նրա առաջին հոգսերից մեկը դառնում է իր ընթերցողների շրջանում հայոց լեզվի զարգացումը, գրել այնպես, ինչպես խոսում են, և խոսել այնպես, ինչպես գրում են:

Մի շարք նախաձեռնումների հեղինակ էր Խորեն Ստեփանյանն: Նա շանքեր թափեց կենդանացնել Արցախի հայոց թեմական դպրոցի տպարանը և այն հագեցնել անհրաժեշտ սարքավորումներով:

«Հայկական աշխարհը» լայն ծրագիր ուներ: Անդրանիկ համարի թմբադրականում նշվում է, որ ամսագիրը հետապնդում է մի հիմնական նպատակ. բարձրացնել իր հայրե-



նակիցներէ քաղաքական, գրագիտական, լուսավորական մա-  
կարդակը, մեծապես նպաստել ընթերցողների հայրենասիրա-  
կան ոգու բարձրացմանը, սեր ներարկել գեպի հայրենիքը,  
նրա մշակույթն ու արվեստը: Ահա թի ինչու խորեն Ստեփա-  
նեն տպագրեց հատվածներ Մովսես Խորենացու «Հայոց պատ-  
մութիւնից»:

Զարմանալ նույնպես չի կարելի, որ Արցախի անգլրանիկ  
պարբերականը պրոպագանդում էր գիրքը, լավ գիրքը հա-  
մարելով մարդու զգացմունքների վրա ներազդող ամենանորը  
և ազդեցիկ գործոններից մեկը: Մի շարք առիթներով նա նը-  
շել է, որ մեր ժողովուրդը իրավունք չունի գիրքը շփրելու:

Ե՛վ ամսագրի խմբագիր-հրատարակիչը, և՛ խմբագրութեան  
անդամներ Համբարձում Առաքելյանն ու Հովհաննես Քուլու-  
բեկյանը, և առավել աչքի ընկած հոգովածագիրները՝ մեր մա-  
մուլի անխոնջ մշակներից Գրիգոր Արծրունին, ներսխյան  
ուսումնարանի հոգաբարձու Գրիգոր Իզմիրյանը և ուրիշներ  
իրենց ելույթներում ընդգծում էին, որ գիրքը մարդու հոգևոր  
սնունդն է, առանց որի նա կմնա տգետ, անբանական:

Արցախի պարբերական մամուլի պատմութեան մեջ ուշա-  
գրավ էջ է գրավում Շուշիի Մ. Մահտեսի-Հակոբյանի տպա-  
րանում 1881 թ. տպագրված Նիկողայոս Տեր-Ավետիքյանի  
«Քնար խոսնակ» պարբերականը: Իր տեսակի մեջ այն տար-  
բերվում էր մյուսներից ամենից առաջ նրանով, որ այստեղ  
ինքնուրույն ստեղծագործութիւններից բացի տեղ էին գտել  
ուսու և եվրոպական դասականների՝ Պուշկինի, Լերմոնտովի,  
Հայնեի, Գյոթեի, Շիլլերի, Բայրոնի և մյուսների գործերից:

Նրա գրչին էին պատկանում 12-ից ավելի գրքեր: Նա  
բուն արցախցի էր, ծնվել էր Շուշիում և մանկուց սկսել իր  
օգտակար գործունեութիւնը: Նրա գերագույն նպատակն էր  
իր ստեղծագործութիւններով նպաստել հայրենակիցների ա-  
ռաջադիմութեանը: Այդ նպատակով էր նաև վարում Արցախի  
հայկական դպրոցների տեսչի պաշտոնը:

Նիկողայոս Տեր-Ավետիքյանը փորձում էր գեղարվեստա-  
կան խոսքի ուժով արտահայտել աշխատավորների իղձերն  
ու ցանկութիւնները, մարմնավորել նրանց միտքն ու խոսքը:  
Հեղինակը որոշ իմաստով հրապարակ է հանում արցախցի-  
նեցի Թորաշխարհը, մարդկային առաքինութիւնները, արժա-

նապատմութիւնը: Նրա մի շարք ստեղծագործութիւններում,  
որոնք լույս են տեսել «Քնար խոսնակում», արտացոլված է  
հայ աշխատավորի ողբերգական վիճակը: Նա ցավով հրա-  
պարակում է այն փաստը, որ կյանքի անտանելի պայման-  
ներից դրդված հայ մարդը կաշկանդված է մահվան ճիրան-  
ներում և ստիպված է ամեն մի դժվարութիւն տանել, ստո-  
րանալ, մի կերպ քարշ տալ ֆիզիկական գոյութիւնը: Բայց  
հեղինակը չի բավարարվում մարդու ցավազին վիճակն ար-  
տահայտելով, որոշ շահով ներկայացնում է լայն դանդաժ-  
ների դժգոհութիւնը ցարիզմի նկատմամբ:

Հեղինակը ծաղրում է նրանց, ովքեր «Լույս», «Հայրենիք»,  
«հայ ժողովուրդ» հորջորջելով՝ իրենց կեղծավորաբար դնում  
են անձնագոհի, հայրենասերի պատվանդանին:

Նա գտնում է, որ հայ ժողովուրդը պետք է միասնաբար  
լինի իր հարցերի լուծման պայքարում, մերկացնի վախկոտ-  
ներին, պայքարից փախչողներին:

Գրեթե նույնատիպ պարբերական էր «Գործը», որ լույս  
տեսավ 1882—1884 թվականներին, Շուշիում: Նրա հրատա-  
րակիչ խմբագիրը՝ Միմոն Հախումյանը, բնիկ արցախցի էր:  
Սկզբնական շրջանում աշակերտել է հայտնի մանկավարժ  
Պետրոս Շանշյանին՝ Շուշիի թեմական դպրոցում: Այնուհե-  
տև սովորել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Երիտա-  
սարդ արցախցին չի բավականացել միջնակարգ կրթութեամբ,  
խորամուկ է եղել առանձին գիտութիւնների մեջ, տիրա-  
պետել է մի քանի լեզուների, սովորել է Փարիզի Սորբոնի  
համալսարանի բժշկական ֆակուլտետում:

Իրավացի է «Լուս» ամսագիրը, որ նրա մահվան առթիվ,  
բնութագրելով 46 տարվա կյանքի ուղի անցած մարդու գոր-  
ծունեութիւնը, գրում է. «Բայց Հախումյանի արժանիքը ոչ  
թե այն է, որ նա երկար տարի գործել է իբրև լրագրող և  
հրապարակախոս, այլ որովհետև նորա գրիչը միշտ և ամեն  
տեղ բուրել է մաքուր հայկական հոգի, անօրինակ ու անձ-  
նվեր սեր դեպի մայրենի լեզուն, մամուլն ու գրականութիւնը,  
որովհետև նորա գրվածքները դուրսից են, անկեղծ սրտից  
բխած, տպավորիչ, սուր ու ջախջախիչ»<sup>1</sup>:

<sup>1</sup> 1905 թ., Ռ. 2, էջ 164:



19-րդ դարի վերջերին Արցախի պարբերական մամուլի պատմության մեջ ուշագրավ էջ է կազմում Տիգրան Նազարյանի գործունեությունը: Ամենից առաջ նշենք, որ նա 1881 թ. Շուշիում հիմնադրում է հրատարակչական գրասենյակ, ապա հոգ տանում հրատարակիչների և երիտասարդ լրագրողների պատրաստման դասընթացներ ստեղծելու մասին: Նրա նպատակն էր մայրենի լեզվից բացի ժուռնալիստներին սովորեցնել անգլերեն, իտալերեն, գերմաներեն, ֆրանսերեն և այլ լեզուներ, զինել նրանց հայ և այլ ժողովուրդների գրականության և մշակույթի պատմությամբ, կովկասագիտությամբ և հազբանություններ: Տիգրան Նազարյանի «նպատակն է՝ առանց ազգի խտրության տալ պրոֆեսիոնալ ուսում երկսեռ լրագրողներին» — գրում է «Մշակ» թերթը 1912 թվականի հունիսի 29-ի համարում:

«Գործ» հանդեսի փակումից հետո Արցախի մտավորականներից շատերը ձգտում են գավառում հիմնել հայերեն և ռուսերեն թերթեր: Դեռևս 1882 թ. ապրիլի 23-ին Մ. Մահատեսի-Հակոբյանը Կովկասի գործերի կոմիտեին հղած դիմումի մեջ գրում է, որ ինքը ցանկություն ունի իր իսկ տպարանում շաբաթը երեք անգամ հրատարակելու «Շուշվա լուրեր» հայերեն և ռուսերեն թերթեր, որոնց հիմնական նպատակն էր զանազան կարգադրություններից և հայտարարություններից զատ հրապարակել ինֆորմացիաներ Շուշիի անցյալի և ներկայի մասին: Սակայն նրա ցանկությունը չի իրագործվում:

1887 թվականին «Արցախ» անունով հայերեն գրական-գեղարվեստական ամսագիր հրատարակելու համար իզուր ջանքեր է թափում Շուշիի բնակիչ Վահան Գաղջանը:

Փաստեր կան նաև այն մասին, որ Շուշիի բնակիչ Աբրահամբեկ Ամիրխանյանը ցանկացել է ունենալ «Շրջան ընտանեկան» անունով ամսագիր, որի միջոցով նա պետք է կուլտուր-լուսավորական աշխատանքներ ծավալեր կանանց շրջանում, բարձրացներ նրանց գիտական մակարդակը, ընդարձակեր հետաքրքրությունների շրջանակները: Սա էլ զրական լուծում չի ստանում:

1890-ական թվականներին Արցախի պարբերական մամուլի պատմության մեջ հայտնի է ակաճավոր բանասեր Եր-

վանդ Լալայանի «Ազգագրական հանդեսի» առաջին համարի լույս ընծայումը: Այն հրատարակվում է Մ. Մահատեսի-Հակոբյանի տպարանում, 1896 թվականին: Խմբագիր-հրատարակիչ Ե. Լալայանը հանդեսի անդրանիկ համարում գրում է. «Մենք շենք խոստանում հրաշքներ գործել, որովհետև այս ձեռնարկությունն անհատական գործ չէ և սոսկ մին տաղանդից չէ կախված. ազգի ուսումնասիրությունն ամբողջ առաջավոր դասակարգի գործն է. երբ ժողովուրդը սիրով կբանալուր սիրտն ազգագրի առաջ... մեր հանդեսը կդառնա ժողովրդական կյանքի մի ճշմարիտ հայելի, մի շտեմարան, որտեղից վիպասանն յուր նյութը կվերցնի ազգային վեպ ըստեղծելու, լեզվաբանը՝ բառեր և ոճեր կբաղձնի ազգային լեզուն հարստացնելու և օտարանալուց ազատելու... բժիշկը՝ նրա ցավերը կտեսնե՝ սպեղանիներ հասցնելու, ուսուցիչը մանկան ընտանեկան կյանքը կըմբռնե՝ այն բարեփոխելու, իսկ գիտնականը՝ յուր նյութը կվերցնե գծելու էվոլյուսիոնի օրենքները: Այսպես՝ այս ձեռնարկությունը ծառայում է ինչպես ազգության, այնպես և գիտության»:

1897—1910 թթ. հայ պարբերական մամուլի համար ծանր ժամանակաշրջան էր. դա ամենից առաջ բացտրվում էր քաղաքական իրավիճակով: Եվ այդ տարիներին Արցախում ևս չի հրատարակվում ոչ մի պարբերական: Առաջին թերթը, որ լույս է տեսնում 20-րդ դարի սկզբին՝ 1911 թվականին՝ «Ղարաբաղն» էր, որը հիմնականում խմբագրում էր մեր անվանի արձակագիր Վրթանես Փափազյանը: Նրա երկու տարիների ընթացքում լույս տեսած 74 համարները հայելու պես վկայում են գավառի առօրյան տվյալ ժամանակահատվածում: Թերթին ակտիվորեն աշխատակցել են և՛ հասարակական, և՛ քաղաքական գործիչներ, և՛ արվեստագետներ, և՛ գրողներ, և՛ փորձառու լրագրողներ: Արժե նշել, օրինակ, մեր անվանի գրող Պերճ Պոռոյանին, Խորեն Բորյանին, Գրիգոր Ներսիսյանին, Լևոն Աթաբեկյանին, Առաքել Առաքելյանին, Լևոն Վարդունուն և ուրիշների, որոնք հանդես են գալիս և՛ հրապարակախոսական ելույթներով, և՛ գեղարվեստական ըստեղծագործություններով:

1911—1914 թթ. Արցախում հրատարակվում է երկու ռուսերեն թերթ՝ «Շուշինսկի լիստոկ» և «Շուշինսկայա ժիզն»:



Երկուսի խմբագիրներն էլ հայեր էին. առաջինին խմբագրում էր Շամիլ Մելիք-Ղարաբյուզյանը, երկրորդին՝ Ստեփան Մանդինյանը: Նրանց տարբեր ժանրերի նյութերը կոչված էին հանգամանորեն լուսաբանելու դավառի առօրյան, ցույց տալու մարդկանց ձգտումներն ու իղձերը:

Նախախորհրդային Արցախում լույս տեսած պարբերականների մեջ ուրույն տեղ ունեն «Փայլակը» (1915—1917 թթ.), «Ծիածանը» (1916 թ.), «Նեցուկը» (1917 թ.), ապա «Արցախը», «Ղարաբաղի սուրհանդակը» (1918 թ.), «Նոր կյանքը» (1919 թ.) և այլ պարբերականներ, որոնցից մի քանիսը ուղղակի կերպով արտահայտում էին աշխատավորների կյանքը, նրանց ձգտումները: Դրանց մեջ, ինչ խոսք, առանձնանում են երկուսը՝ «Փայլակը» և «Նեցուկը»:

«Փայլակը» սկսեց լույս տեսնել այն օրերին, երբ շարունակվում էր համաշխարհային իմպերիալիստական պատերազմը: Թերթի առաջնահերթ խնդիրներից մեկը դառնում է այդ զավթողական պատերազմի վերջ տալուն նվիրված նյութերի տպագրումը, կեղծ հայրենասիրության դեմ պայքարը, մեծ եղևոնից մի կերպ մազապուրծ եղած փախստականների տեղավորումը և այլն:

«Փախստականների հարցը» հոդվածում թերթը ուղղակի գրում է. «Տաճիկ կառավարության ինքնակործան անմիտ քաղաքականությունը սոսկումի և արհամիրքների մեծ դուռ բացեց խաղաղ աշխատանքի սովոր հայ ազգաբնակչության առջև: Հազարավոր բարեկեցիկ ընտանիքներ ստիպված եղան թողնել տուն-տեղ և փախուստի դիմել ձմեռվա ցրտին ու բուքին»<sup>1</sup>:

Թերթը նշում է, որ ամբողջ երկիրը վերածվել է պատերազմական ճամբարների, ուր կտեսնեք միայն բոկոտն, քաղցած, սովամահ մարդկանց, հարյուրավոր անտեր ու որբ երեխաների, լացակոմած կանանց ու աղջիկներին:

«Դեռ հրդեհված քաղաքների ու գյուղերի բոցերը շմարած, — գրում է «Փայլակը», — դեռ սպանվածների ու սրախողող անմեղների արյունը չսառած, դեռ հազարավոր տնից-տեղից... զրկված փախստականների արտասուքները չցամա-

քած, դեռ հարյուրավոր անտեր ու որբ երեխաների աղեկատուր ողբն ու կոծը չդադարած՝ նոր-նոր արհամիրքների ու սոսկումների լուրեր են գալիս «զուլումի» երկրից»<sup>1</sup>:

Այստեղ խոսքն այն մասին է, որ հայերի մի մեծ հատվածը կործանվում է թուրք բռնակալների դավադրությամբ, որ թուրք և քուրդ հրոսակները սպառնալիքների տակ են դրել հայերին և հետզհետե դրությունը ծանրանում է: Եվ թերթը դժվարանում է ընտրել որևէ մեկի պաշտպանությունը: Չէ որ արտասահմանյան պետությունները միշտ խաբել են և սին խոստումներ տվել հայ ժողովրդին:

«Փայլակը» բացելուց շեշտում է, որ «Ալաշկերտի, Դիարդինի, Ղարաքիլիսայի շրջանները տակն ու վրա եղան, արյունարբու դահիճների սրերից ազատվածները գլխապատառ փախուստի դիմեցին ուսական հողը և լցվեցին Երևանի, Սուրմալուի և էջմիածնի գյուղերն ու ավանները: Արդահան, Արզանուշ, Օլթի մինչև Սարիղամիշ արան-թալանի մատնը-վեցին, ահաբեկված ազգաբնակչությունը գլուխն ազատեց մի կերպ՝ թափվելով Ալեքսանդրապոլ, Թիֆլիզ, Ախալքալաք»: Եվ թերթը կոչ է անում իր հայրենակիցներին ամեն գնով օգնել փախստականներին, սատար կանգնել նրանց:

«Փայլակը» լուսաբանում է նաև դպրոցական, մշակութային, Շուշիում ստեղծված սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հարցերը:

Նորաստեղծ կազմակերպության խնդիրներին հանգամանորեն է անդրադառնում «Նեցուկը», որը խմբագրում է հայտնի պատմաբան, ակնավոր հասարակական-քաղաքական գործիչ Աշոտ Հովհաննիսյանը: Իր անդրանիկ համարում թերթը գրում է. «Ասպարեղ է իջնում մեր թերթը պաշտպանելու բանվարության և սեփականազուրկ գյուղացիության շահերը, դասակարգային գիտակցության հրավիրելու ժողովրդական ճնշված խավերին»<sup>2</sup>:

Թերթին ակտիվորեն աշխատակցել են Ալեքսանդր Ծատուրյանը, («Ալ-Ռուբենի» ստորագրությամբ), Հակոբ Հովհաննիսյանը, Գառնիկ Ղազարյանը, Հակոբ Կամարին (Բե-

<sup>1</sup> № 2, 1916 թ., մայիսի 12:

<sup>1</sup> № 11, 1915, ապրիլի 16:

<sup>2</sup> 1917 թ., օգոստոսի 18:



ջանյան) և ուրիշ անվանի գործիչներ: Նրանց բազմաթիվ նյութերը հնչում էին մարտականորեն, համողիչ, հավատ քն-ծայելով գալիքի նկատմամբ:

Արդյունավետ են գործում «Արցախը», «Ղարաբաղի օուր-հանդակը», «Նոր կյանքը» և այլ պարբերականներ, որոնց հիմնական թեման հայրենի Արցախի առօրյան էր, Ադրբեյջանի մուսավաթական կառավարության նկրտումների էությունը գավառի հայության նկատմամբ:

Թերթերը հաղորդում են, օրինակ, որ 1917 թվականի վերջերից սկսած Արցախը ընդհանրապես և Շուշին մասնավորապես գտնվում էին թուրքերի պաշարման օղակի մեջ: Վերջիններս ամեն կերպ ձգտում էին հայկական երկրամասը ենթարկել իրենց, բռնության տակ պահել նրա հայությունը: Հայ տպագիր օրգանները բացեիբաց գրում էին, թե ինչ պետք է անել այդ վիճակից դուրս գալու համար: Հանգամանորեն լուսաբանվում են այդ նպատակով հրավիրված Արցախի հայության համագումարները:

Արցախի հայ ժողովուրդը, նրա ղեկավար գործիչները ամեն ինչ անում են, որպեսզի տերիտորիալ և քաղաքական հարցերը լուծվեն ոչ թե գծառնությունների, ղեկի ու ղեկի, այլ բանակցությունների, խաղաղ ճանապարհով: Հատկապես «Արցախ» թերթը գրում է, որ Ադրբեյջանը իրավունք չունի որևէ տերիտորիալ ակնկալումներ ունենալ: Ադրբեյջանը, շեշտում է թերթը, մոռացել է, որ ինքը աշխարհագրական միավոր չէ, սահմաններ չունի, մինչև ուսական տիրապետությունը կազմում էր Արևելյան Պարսկաստանի մի մասը: «Արցախը» 1919 թ. մարտի 23-ի համարում կոչ է տպագրում ուղղված «Ղարաբաղի հայ ժողովրդին»: Այն սկսվում է այսպես. «Ադրբեյջանական կառավարությունը ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով՝ իր թաթն է մեկնել Ղարաբաղի հայության կենտրոնին՝ Շուշուն: Մոտ մեկ ամիս առաջ ղեկերալ նահանգապետի անունով ուղարկվել էր խոսքով-բեկ Սուլթանովը: Նա և իր նմանները ամեն կերպ ձգտում էին ոտնահարել Ղարաբաղի հայության պատիվն ու արժանապատվությունը: Նբրանք ոչ մի կերպ չէին համաձայնվում այն մտքին, որ հայկական Ղարաբաղը՝ պատմական Արցախը, երբեք չի ենթարկվելու Ադրբեյջանին:

Ամեն կերպ պիտի աշխատել, որ Ադրբեյջանը չկարողանա ոտնահարել Ղարաբաղի հայության անկապտելի իրավունքները»:

1919 թ. հունվարից Շուշիում լույս տեսնող «Նոր կյանք» շաբաթաթերթը առանձին նյութեր է նվիրում այն հարցին, թե ինչպես Արևելյան Անդրկովկասի մահմեդականությունը, հենվելով տաճկական ուժի վրա, անցյալ տարվա (այսինքն՝ 1918 թ.) մայիսի վերջին իրեն անկախ հայտարարեց: Այդ անկախությունը նա կապեց Գանձակի և Բաքվի նահանգների հետ՝ տալով նրան Ազգաբաշխան անունը: Սա առանց հապաղելու սկսեց վայրագությունների և խժոժությունների միջոցով ձգտել իրեն միացնելու Զանգեզուրի և Ղարաբաղի շուրջ 300 հազար ազգաբնակչությանը՝ հակառակ վերջինիս ցանկությունը: «Բուպի պահանջը» խմբագրական հոդվածում թերթը շեշտում է, որ «այդ գավառների հայությունն իրենից վանեց այդ նոր բռնությունը և ղեկը ձեռքին բոլոր ուժով պայքարեց թե տաճիկ բանակի դեմ, որ եկել էր Ադրբեյջանի գաղափարները բռնի ուժով իրագործելու և թե նորաստեղծ Ադրբեյջանի հորդանների դեմ»:

«Նոր կյանքը» գրում էր նաև, որ նման վիճակը, ստեղծված անարխիան վերացնելու համար անհրաժեշտ է ժողովրդի կամքն ու նրա ցանկությունները արտահայտող մի կազմակերպություն, ուր համախմբված լինեն ազնիվ ու տուկուն մարդիկ: «Ղարաբաղի գյուղացին չպիտի բավականանա միայն տգիտության դեմ պայքար մղելով, — նշում է գավառական պարբերականը, — ճա պիտի կարողանա իր առտնին կյանքը կուտուրական ճանապարհով կարգավորելու: Նա պիտի հանգես գա ոչ միայն իբրև կուլոգ, այլև՝ ստեղծող»:

Թերթերը խոր ցավով են նշում Արցախի կենտրոնի՝ Շուշիի ողբերգության մասին: 1920 թ. մարտի 23-ին աննման Շուշին այրվում է բոցերի մեջ: Թաթար-ադրբեյջանցիները, մուսավաթական իշխանությունների թեղադրանքով կոտորում են Շուշիի հայերին, հրկիզում նրանց տները, հայկական մասում գտնվող հիմնական շինությունները, հիմնարկները, խանութները... Սակայն այս ամենի հանդեպ նկատելի էր քար լուծությունը: Թեև ազգային հայ խորհուրդը միջոցներ էր ձեռնարկում դրությունը մի կերպ բարելավելու և կրքերը



հանգստացնելու համար, բայց ոչ մի արդյունքի չէր հասնում: Այդ առթիվ «Նոր կյանքը» գրում է, որ գավառում, մասնավորապես Շուշիում անարխիա է տիրում: Թուրքական վանդալները չէին բավարարվում մարդկային կոտորածներով, Շուշիի և մի շարք գյուղերի հրկիզումներով: Նրանց գազանային վերաբերմունքն ակնհայտ է դառնում նաև դարերով հայերի կողմից պատրաստված կոթողների ոչնչացումով: «Նոր կյանքը» հայտնում է, որ թուրքերը Ամարասի սուրբ Գրիգորիս վանքը ավերի ու թալանի են ենթարկել և շարունակում են նույն վանդալիզմը մյուսների նկատմամբ:

Թերթերը շարունակում են ըստ ամենայնի շուսաբանել գավառի տխուր վիճակը, հույսը դնելով ժամանակի վրա:

Մեր պրպտումները վերջնական արդյունքի հասան. նախախորհրդային Արցախում լույս են տեսել 19 անուն հայերեն և 2 անուն ռուսերեն տպագիր օրգաններ, որոնց դերը չի կարելի ժխտել հայկական Արցախի կյանքում:

Մամուլը արտահայտում էր աշխատավորներին հուզող ամենակենսական խնդիրները, ձգտելով սպեղանի դնել նրա ցավերին, հոգսերին, երկրամասում հաստատելու աշխատավոր մարդուն վայել կյանք:

### ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

Արևիվային փաստերը հաստատում են, որ դեռ անցյալ դարի վերջերին Արցախի հայոց թեմական դպրոցի տարբեր դասարանների աշակերտներին՝ իրավիճակի հանդեպ ունեցած բողոքն ու դժգոհությունը որակ էր կազմում և լուրջ մտահոգություն առարկա էր դարձել թե՛ դպրոցի տեսուչի, և թե՛ տեղի ոստիկանական մարմինների համար: 1894 թ. սեպտեմբերի 9-ին դպրոցի հոգաբարձուական-ուսուցչական ժո-

ղովը լսում է, թե ինչ պատժի պետք է ենթարկել բողոքատու աշակերտներ Արշակ Ոսկանյանին, Զաքարե Բաբայանին, Հովհաննես Եսայանին, Քրիստափոր Միքայելյանին, Ավագ Շահմուրադյանին, Կոստանդին Աբալյանին և Հակոբ Հովհաննիսյանին (ի դեպ, վերջինս 1920-ական թվականներին դարձավ Երևանի պետական համալսարանի ռեկտոր— Ս. Ա.): Սրանց համարում են «դպրոցում և հասարակության մեջ շփոթում հարուցանողներ», հակակրոնական ուղղության պաշտպաններ: Եվ պատահական չէր, որ շատ սովորողներ ամենաչնչին «անկարգությունների» համար արձակվում էին դպրոցից՝ իրավունք չստանալով ուսումը շարունակելու ուրիշ տեղ: Աշակերտներին արգելում էին թերթ, ամսագիր կարդալ, օգտվել քաղաքական գրականությունից: Սակայն նրանք հաշվի չէին առնում ոչ մի պայման ու միջոց՝ իրենց պահանջները իրականացնելու համար: Այդ նպատակով աշակերտների ուժերով հիմնվեցին թերթեր և ամսագրեր: Դեպքերի մասնակից Հարություն Թումյանը, որը հետագայում դարձավ Արցախի Ազգային խորհրդի անդամ և դասախոս Երևանի բուհերում, պատմում է, որ 1905—1907 թթ. թեմական դպրոցի 2-րդ և 4-րդ դասարանների աշակերտների ուժերով հրատարակվում էր «Կոչնակ» անլեզալ խմորատիպ ամսագիրը (լուրաքանչյուր համարը 10—12 էջից բաղկացած), որտեղ համառոտակի արտահայտվում էին օրվա հոգսերը: Այդտեղ հայրենասիրական և ազգասիրական մտտիվները մեծ մասամբ հրապարակ էին հանվում գրական փոքրիկ ստեղծագործությունների՝ բանաստեղծությունների և պատմվածքների միջոցով: Տպագրվում էին շուշեցի Սիմոն Ֆոլյանի, Մարտիրոս Արղումանյանի և ուրիշների գործերը: Ամսագիրը ունենում է 5—6 համարի կյանք:

Ուշագրավ է նաև 1907 թ. թեմական դպրոցի բարձր դասարանների աշակերտներ Սիմոն Տեր-Հարությունյանի, Գրիգոր Ղազարյանի և Գևորգ Տեր-Գրիգորյանի ուժերով լույս տեսնող «Նոր շավիղ» անլեզալ թերթը: Մեզ համար գրած հուշերում երգահան Դանիել Ղազարյանի եղբայր Գրիգորը պատմում է. «Տպագրված օրինակներից մի-մի օրինակ վաղ առավոտյան դնում էինք զանազան դասարանների այս կամ այն աշակերտի նստարանի արկղում, զցում տեսչանոց, ու-



սուցչանոց: Մի ուրիշ անգամ տպագրեցինք մեր հայրենակից  
երգահան Եղիշե Բաղդասարյանի մի գողտրիկ բանաստեղ-  
ծությունը.

Կանգնի՛ր անցորդ, ծուկ խոնարհիւր  
Այս շիրիմին մամռապատ,  
Քաջ հերոսի փառքը երգիւր,  
Մեծ Շմիդտն է լեյտենանտ:  
Թո՛ղ քո երգը կայծակ դառնա,  
Բոցավառվի ամենեմբ,  
Մեծ Սլավը շուտ արթնանա,  
Փառքը երգե հերոսի...

Ի դեպ, Մեծ Սլավը ասելով՝ նկատի ունի Սլավա Կաս-  
պարովին, ականավոր արցախցի գործչին, որ անմարելի  
շատ էջեր է գրել մեր հայրենիքի պատմության մեջ:

Այնուհետև Գրիգոր Ղազարյանը պատմում է. «Մի օր ինձ  
ու Սիմոնին իր մոտ կանչեց հայ գրականության մեր դա-  
սատուն՝ Արսեն Տերտերյանը (նա հետագայում դարձավ  
հայտնի գրականագետ, Երևանի պետական համալսարանի  
պրոֆեսոր, ՀեՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմի-  
կոս): Նա նախ մատնացույց արեց մեր թերթի թերություն-  
ները, ապա զգուշացրեց, որ ոստիկանությունը խստիվ հե-  
տևում է ամենքին և մի փոքր առիթ է փնտրում մեր դըպ-  
րոցը փակելու: Ձեր գործունեությունը նրանց աչքից չի խու-  
սափի և ծանր հետևանք կունենա թե՛ մեզ և թե՛ դպրոցի  
համար:

Մեր հարցին, թե ինչ գիտե, որ մենք ենք. նա ժպտաց.  
«էլ ի՞նչ ուսուցիչ եմ, որ շիմանամ իմ աշակերտներին սիրտն  
ու հոգին...»:

Ուսանողների առանձին հանդուգն ելույթները խեղդվում  
էին դաժան պեղծիքայի կողմից: Բայց ազատ մտքի, ազատ  
կյանքի համար պայքարը շարունակվում էր և հետզհետե նոր  
ծավալ ստանում:

Սկսած 1912 թվականից, երբ ոչ միայն Ռուսաստանի խո-  
շոր քաղաքներում, այլև հետամնաց գավառներում ծայր էին  
առել առաջադիմական շարժումները, Շուշիի թեմական դըպ-

րոցի սովորողները համախմբված էին աշակերտական երկու  
կազմակերպություններում՝ «Միություն» և «Միրաժ»:

1913 թվականից սկսած հրատարակվում է «Միրաժ» կազ-  
մակերպության համանուն անլեզու խմորատիպ ամսագիրը,  
որի յուրաքանչյուր համարն ուներ տետրակի 10—12 թերթի  
ծավալ: Այն տպագրում էին Սիմոն Ափյանը, Անդրանիկ Ա-  
վագյանը, Գևորգ Թովմասյանը և Գրիգոր Նաչյանը: Հետա-  
գայում բոլորն էլ դարձան անվանի լրագրողներ, հասարակա-  
կան-քաղաքական գործիչներ:

«Միրաժ» և «Միություն» աշակերտական կազմակերպու-  
թյուններից դատ 1917 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին  
Շուշիում գործում է «Աշակերտական պատգամավորների  
խորհուրդը» և «Սոցիալիստական երիտասարդության միու-  
թյունը», որոնք ունեին իրենց տպագիր օրգանները: Նրանց  
աշխատանքներին գործարար օգնություն էին ցույց տալիս  
Արցախում արդեն մեծ ճանաչում գտած ակտիվ գործիչներ  
Ալեքսանդր Ծատուրյանը, Սաքո Համբարձումյանը և ուրիշ-  
ներ, որոնք հետագայում եռանդուն աշխատանք ծավալեցին  
Հայաստանում և այլուր:

Առաջագեմ գաղափարներով տոգորված դպրոցականներին  
մեծապես օժանդակում էին Ելենա Բեզդադյանը (Ալեքսանդր  
Բեզդադյանի քույրը), Համեստ Բաղդասարյանը և ուրիշներ,  
որոնք Արցախում կազմակերպում էին աշակերտական ելույթ-  
ներ, մասնակցում նրանց ընդհատակյա հավաքներին:

1916—1917 թթ. Շուշիում շարունակում էին լույս տեսնել  
աշակերտական թերթեր և հանդեսներ, որոնք խոսքի ուժով  
բացահայտում էին կյանքի արատավոր կողմերը և փորձում  
էին ճիշտ ուղի փնտրել դրանց վերացման համար:

Մեծ անուն էր հանել աշակերտական «Ծիծաղ» երգիծա-  
կան ամսագիրը, որ սկսեց լույս տեսնել 1916 թվականին,  
Շուշիում: Նրա ակտիվ թղթակիցները խարազանում էին ա-  
շակերտության մեջ տեղ գտած թերությունները, սպանիչ  
ծաղրի ենթարկում հակահասարակական երևույթները:

Ամսագիրը հաճախակի դուրս էր գալիս դպրոցական շըր-  
ջանակներից, մերկացնում էր հետամնացությունը, սնտոխա-  
պաշտությունը, նախապաշարումներն ու գոեհիկ բարքերը:  
Նա ծաղրում էր նաև այն թերթերին, որոնք հանդգնում էին



փաստերը ներկայացնել ծուռ հայելու մեջ: «Ծիծաղի» լեզուն սուր էր, մարտական:

1916 թվականին մի խումբ աշակերտների հրատարակած «Պայքար» խմորատիպ շաբաթաթերթը «Ծիծաղ» ամսագրի հարվածներից հետո ստիպված երկրորդ համարը շունեցավ: «Ծիծաղը» սովորաբար տարածվում էր երեկոները՝ վստահելի անձանց միջոցով:

Շուշիի աշակերտական մամուլի պատմության մեջ կարեւոր դեր են կազմում նաև «Սրինգ» և «Աշակերտ» խմորատիպ թերթերը: Երկուսն էլ 1917 թվականին հրատարակել են տեղի թեմական և ռեալական դպրոցների սովորողները: Հատկապես առաջինում մեծ ակտիվություն է հանդես բերել վաղամեռիկ շնորհալի պոետ Գրիգոր Ներսիսյանի եղբայրը՝ Եղիշեն, կրթված ու զարգացած մի անձնավորություն, որը մաքառում էր Արցախի ազատագրության համար:

Գրան գործարար օգնություն էր ցույց տալիս նաև Լևոն Վարդունին: Նա հանդես էր գալիս և՛ ստեղծագործություններով, և՛ առանձին համարների նկարագրողումներով, դեղեցիկ ձեռագրով գրում նյութերը:

«Աշակերտ» թերթը հիմնականում գլխավորում էին հայտնի մանկավարժ Լևոն Վարդունին և Մովսես Հարությունյանը: Այս թերթն էլ երկար կյանք չունեցավ՝ ընդամենը 5—6 համար: Նա բաղկացած էր 12 փոքրածավալ էջերից և հիմնականում լուսաբանում էր դպրոցական առօրյա հարցերը: Տպագրվում էին մեծ մասամբ երգիծական նյութեր:

Փաստեր կա՞ն նաև այն մասին, որ 1917 թ. սկզբներին Շուշիում լույս է տեսել «Եռանդ» աշակերտական թերթը, որի կատարած դերն անուրանալի է գավառի հասարակական-քաղաքական կյանքում:

Արցախի աշակերտական պարբերականների ծնունդը ժամանակի պահանջ էր և նրանք արտահայտում էին ոչ միայն դպրոցականների, այլև շատ ժամանակ ամբողջ աշխատավորության իղձերն ու ցանկությունները՝ հայրենի երկրամասը տեսնել ազատ շունչ քաշելիս, ազատ ու անկաշկանդ պայմաններում: Ավելին, աշակերտական պարբերականները առաջ են քաշում դպրոցական գործը կարգավորելու պահանջներ: Նրանք գտնում էին, որ գավառի դպրոցներում պետք է

հարգի լինի մայրենիի՝ հայոց լեզվի ուսուցումը, այն ինչ շատ ժամանակ այն տարվում էր իմիջիվայրոց: Մեծ նշանակություն էին տալիս հայ ժողովրդի պատմության դասավանդմանը, մի բան, որ դուրս էր դպրոցական ծրագրերից:

Աշակերտական թերթերն ու ամսագրերը մեծ կարևորություն էին տալիս բարձրորակ դասատուներ ունենալուն, այն հաշվով, որ նրանք ոչ միայն խորապես տիրապետեն իրենց առարկային, այլև սովորողների մեջ սեր ու հարգանք պատվաստեն դեպի հայրենի ժողովուրդն ու նրա մշակույթը, արվեստն ու գրականությունը:

Աշակերտական պարբերականները բազմաթանր նյութերի միջոցով ձգտում էին ճշմարտացիորեն լուսաբանել շրջապատն ու մարդկանց տրամադրությունը, շեշտը դնելով այն բանի վրա, որ արցախցիները՝ մեծ թե փոքր, ունեն մի մեծ պատվախնդրություն՝ բարձր պահել իրենց նախնիների ավանդույթները, արժանի լինել նրանց և եկող սերունդներին:

Մի խոսքով, նախախորհրդային Արցախի աշակերտական մամուլը քայլում էր ժամանակի հետ և արտահայտում էր իր ժողովրդի ակնկալումները:

## ԹՄՏՐՈՆԸ ԱՐՑԱՆՈՒՄ

Գրերի խորքից է գալիս Արցախի արվեստը: Ստեղծագործական մշակույթով, անվանի գործիչներով, երգահաններով, երգիչներով, դերասաններով հայկական արվեստի զարգացման ասպարեզում մեծ է երկրամասի ավանդը:

Սերը բեմարվեստի, թատրոնի նկատմամբ արցախցուն հատուկ է յուրովի: Դպրոցի սկզբնավորման հետ միասին և՛ շուշեցի, և՛ արցախցի գյուղացին զգացել են իրենց մտքերի ու իղձերի արտահայտման թատերական ձևի քաղցրությունը:



Եվ պատահական չէ, որ դպրոցների բարձր դասարանների աշակերտների ուժերով կազմակերպվում էին գրական-գեղարվեստական երեկույթներ և ցերեկույթներ, որտեղ հատուկ բաժին էր հատկացվում բեմարվեստին: Առանձին մենախոսություններով, հատվածներով ներկայացվում էին այն հեղինակների դրամատիկական գործերը, որոնք մոտ էին արցախցու սրտին, հոգուն: Ժամանակի մամուլը վկայում է, որ առանձին տեղ էին հատկացվում հայրենասիրական և մարդասիրական զգացումներով տոգորված ստեղծագործություններին, որոնց հեղինակները հայեր էին:

Նշենք նաև, որ թատերական առանձին բեմականացումներ էին տրվում նույնիսկ տոնախմբություններում ու հանդեսներում, պարարվեստում, երգերի ժամանակ:

Արցախը գրավել էր շատ արվեստագետների ուշադրությունը, ամենից առաջ նրա համար, որ քաղաքի ու գյուղերի բնակիչները անհադուրդ սեր ունեին թատերարվեստի նրկատմամբ: Եվ, ահա, միտք է ծագում մշտական թատրոն ստեղծել՝ առաջին հերթին Արցախի կենտրոնում՝ Շուշիում: 1865 թվականին Շուշի են գալիս հայ թատրոնի ռահվիրաներից երկուսը՝ Գևորգ Չմշկյանն ու Միհրդատ Ամերիկյանը: Նրանք Շուշիի ակումբում բեմադրում են Գ. Հեքիմյանի «Մամվել» ողբերգությունը, «Վարդան Մամիկոնյան» պիեսը և այլ գործեր:

Շուշին երևելի դերասանների վայր էր դարձել ոչ միայն արցախցիների թատերասիրության շնորհիվ, այլև այն բանի համար, որ այն անմրցելի առողջարան էր՝ հատկապես ամառային ամիսներին: Այդ հոյակապ ամառանոցը գրավել էր նաև Պետրոս Ադամյանին, որն իր խմբով շրջում էր գավառի մի շարք գյուղերը: Մեծ դերասանը հաճախ էր Շուշվա հայկական թեմական, ռեալական, օրիորդաց և այլ դպրոցներում՝ աշակերտների հետ միասին հանդես գալիս այս կամ այն բեմադրությամբ: Մամուլի վկայությամբ Պետրոս Ադամյանի հետ խաղընկեր է եղել հռչակավոր Սիրանուշը, որոնք մասնավորապես խաղացել են Շեքսպիրյան պիեսները: Ականատեսները հիշողություն են թողել այն մասին, որ երկու մեծ դերասանների Համլետի դերակատարման օրերին հոգևոր դպրոցի դահլիճում ասեղ գցելու տեղ չկար:

Արցախի թատերական կյանքի աշխուժացմանը մեծապես նպաստում են նաև Սաֆրազյան ամուսինները: Նրանք սիրող դերասանների հետ բեմադրում են «Մամվել», «Շուշանիկ», «Երվանդ կամ Սանդուխտ կույս» և այլ պիեսներ:

Գավառի թատերական կյանքում անուրանալի դեր է կատարում նաև Կովկասի բարեգործական ընկերությունը: Նա հանդես էր գալիս մի կողմից նախաձեռնողի, մյուս կողմից՝ բեմադրություններին դրամական նպաստ բերողի դերում: Հաճախ նա էր դերասաններին վարձատրում և խրախուսում:

Ընկերության ջանքերով Շուշիի և Արցախի մի քանի խոշոր գյուղերում ստեղծվում են թատերական սիրողական խումբեր, որոնք բեմադրում են հայկական, ռուսական և եվրոպական հեղինակների դրամատիկական գործերը: Սիրողական խմբերի մեջ ընդգրկվում են ոչ միայն աշակերտներ, ուսուցիչներ, այլև արձակուրդ եկած երիտասարդներ: Նրանց խաղացանկի մեջ հիմնականում մտնում էին Գաբրիել Սունդուկյանի «Պեպոն», «Էլի մեկ զոհը», «Խաթաբալան», «Բանդած օջախը» և ուրիշներ:

Սակայն Արցախի թատերասեր հասարակությունը զգում էր պրոֆեսիոնալ թատրոնի պակասը: Եվ ահա, 1891 թվականին, Շուշիում հիմնադրվում է Մկրտիչ Խանդամիրյանի թատրոնը: Մ. Խանդամիրյանը շուշեցի չէր. նրա ծնողները Ղափանի Ծահկերտ (Ղազանչի) գյուղից էին: Շուտով զազանչեցիք, այդ թվում Մկրտիչ հայրը՝ Աբրահամ Խանդամիրյանը, տեղափոխվում են Շուշի՝ հիմնելով այդտեղ դրսրոց, եկեղեցի և մշակութային այլ հաստատություններ: Աբրահամ Խանդամիրյանը իր հարստությունը կտակում է երկու որդիներին: Նրանցից Մկրտիչը իր ժառանգությունը նվիրում է թատրոնի ստեղծմանը: Նա սիրահարված էր թատրոնին՝ դեռ մանկուց: Ավելին, երբ հայրը նրան ուղարկում է Ֆրանսիա՝ Մարսելում մասնագիտանալու մետաքսարդյունաբերության մեջ, նրան այդ չի հրապուրում, ուսումնասիրում է թատերական արվեստը Փարիզում:

Մկրտիչ Խանդամիրյանը Շուշի է վերադառնում և՛ որպես թատերագետ, և՛ որպես խոր գիտելիքներով զինված մի երիտասարդ, որ տիրապետում էր մի քանի լեզուների, խորապես զիտեր ֆրանսիական գրականությունն ու արվեստը: Նա



իր նախագծերով էր պատրաստել թատրոնի շենքը՝ հարմարավետ բեմով, գեղեցիկ դահլիճով, ձեմասրահով: Դերասանների համար թատրոնի շենքին կից կար հանրակացարան: Եռհարկանի այդ շենքը կառուցված էր քարաշեն, աշխատանքը ներսում հիմնականում մեքենայացված էր, հատկապես դեկորների օգտագործումը: Դահլիճն ուներ 350 աթոռ՝ պարտեր, օթյակներ, ամֆիթատրոն: Թատրոնի գրադարանն ստանում էր տասնյակ թերթեր ու ամսագրեր՝ երկրի տաքերովայրերից: Հաճախորդները ծանոթանում էին Ֆրանսիայից ստացվող «Իլյուստրացիոն» պատկերազարդ պարբերականի նյութերին: Նշենք նաև, որ Մկրտիչ Խանդամիրջյանը շարունակում էր սերտ կապեր ունենալ Ֆրանսիայի առանձին մշտավորականների հետ: Նա կատարում էր թարգմանություններ ֆրանսերենից հայերեն: Գրել է նաև պիեսներ: Շատ շուտով անուն է հանում «Խանդամիրջյան» թատրոնը: Պարբերական մամուլը դրվատանքով է գրել նրա գործունեության մասին: «Տարազ» ամսագիրը 1891 թվականի հունիսի համարում գրել է. «Պ. Մ. Խանդամիրջյանը Շուշիում իր տանը կառուցել է մի մեծ թատերական դահլիճ, լավ ու հարմար բեմ և ձեռք է բերել թատրոնական բոլոր անհրաժեշտ պարագաները: Այդպիսով Շուշին ստանում է թատրոնական ներկայացումներ տալու մեծ հնարավորություն»: Ծանաչված դերասան Գրիգոր Ավետյանը հաճախ է հանդես եկել Ն. Խանդամիրջյանի թատրոնում, կերտելով անկրկնելի կերպարներ: Նա ևս հիացած էր թատրոնի նիստ ու կացով և նրա ղեկավարի անսահման հոգատարությամբ: Այդ մասին իր հուշերում շեշտել է. «Նիկիտա Խանդամիրջյանի թատրոնը, որը շնորհիվ իր տիրոջ, աչքի էր ընկնում իր սառք ու կարգով, մաքրությամբ, մանավանդ տիրոջ կողմից դեպի դերասաններն ունեցած սիրով ու հարգանքով— այս ամենը Շուշու Խանդամիրջյանի թատրոնը դարձրել էր մեզ համար մի ուխտատեղի, և ամեն ամառ շտապում էինք օր առաջ գնալ ու մեր սիրելի Նիկիտա Աբրամիչին տեսնել: Արտասովոր մի մարդ էր նա, երկար ժամանակ Փարիզում էր ապրել և այնտեղից հետը բերել մաքրասիրություն, խստություն և ճշմարտություն»<sup>1</sup>:

տապահություն՝ դեպի ամեն ինչ և ամենքի վերաբերմամբ»<sup>1</sup>: Մկրտիչ Խանդամիրջյանը ծրագրել էր շաբաթը երկու անգամ, տեղացի և ամառանոցային հանգստի մեկնած դերասանների ուժերով կազմակերպել ներկայացումներ, հատկապես հայրենասիրական թեմաներով: «Տարազ» ամսագրի հայտնած տվյալներով յուրաքանչյուր ամառ Խանդամիրջյանի թատրոնում բեմադրվում է առնվազն 12 պիես: Շուշի էին գալիս հատկապես Բաքվի և Թիֆլիսի հայ մեծանուն դերասաններից Գրիգոր Ավետյանը, Վրույրը, Գևորգ Պետրոսյանը, տիկին Զաբելը, Մարի-Հրանուշը, օր. Վարդիթերը և ուրիշներ: Թիֆլիսի և Բաքվի հայ պարբերական մամուլը, բարձր գնահատելով դերասանների խաղը, տպագրում էր և՛ փոքրիկ թատերախոսություններ, և՛ ծավալուն ինֆորմացիաներ, որտեղ կոնկրետ խոսք է ասվում այս կամ այն դերասանի խաղի և հասարակության կողմից շեքմ ընդունելության մասին: Այսպես, 1891 թվականի օգոստոսի 6-ի համարում «Մըշակ» թերթը գրում է. «Երրորդ ներկայացումը հուլիսի 20-ին տվեց Թիֆլիսից նոր եկած դերասանուհի տիկին Զաբելը: Դրված էր «Մայրական սեր» անունով թարգմանական գրաման: Տիկին Զաբելը առաջին անգամ Շուշի է եկել սրանից տասը տարի առաջ, հանգուցյալ Աղամյանի հետ: Շուշիումն է տիկինը առաջին անգամ բեմ դուրս եկել Աղամյանի տված ներկայացումների ժամանակ և որքան հիշում ենք, դեռ այն ժամանակ համակրանք էր գտել թատրոն հաճախող հասարակուհու խաղի և հանդիսականների կողմից շեքմ ընդունելության մասին:

Հովհաննես Աբելյանը Արցախի աշխատավորության մեծ բարեկամն էր: Նա ոչ միայն գավառի կենտրոնում էր հանդես գալիս, այլև իր խմբով լինում էր գյուղերում, մոտիկից շփվում էր աշխատավորության հետ, զրուցում նրանց հետ, հագուրդ տալիս նրանց հարցասիրությունը: Հ. Աբելյանը հաճախ էր հանդես գալիս հայ դասականների պիեսներում, Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» մեջ դերա-

<sup>1</sup> «Քառասուն և հինգ տարի հայ բեմի վրա», Երևան, 1933 թ., էջ 134—135:



սանը մեծ վարպետութեամբ է կատարում Աբխազիոն աղայի դերը, դրսևորելով նրա բազմակողմանի արատները՝ փառասիրութեամբ, մեծամտութեամբ, գովառականութեամբ:

Շուշիի թատերասեր հասարակութեանը հաղորդակից է լինում մեծ դերասանի «Պեպո»-ում գլխավոր դերի կատարման վիթխարի արվեստին:

Բացի մեծ տաղանդի դերասան լինելուց, Հ. Աբելյանը Շուշիի թատրոնում հանդես է գալիս նաև որպես բմադրող և ռեժիսոր: Մամուլը վկայում է, որ Հ. Աբելյանը 1893 թվականին բեմադրում է Գ. Սունդուկյանի «Ամուսինները», կատարելով Արտաշեսի դերը:

Շուշիում Հովհաննես Աբելյանի դերը մեծ էր նաև թատրոնի սիրողների տաղանդը զարգացնելու, ստանձնած դերերը մեծ պատասխանատվությամբ կատարելու, բեմարվեստի գաղտնիքներին տիրապետելու ուղղությամբ:

Շուշիի «Խանդամիրյան» թատրոնում արժանի տեղ է զբաղում Գևորգ Պետրոսյանը: Նա կիրթ դերասան էր, զարգացած մտավորական, թատրոնի նկատմամբ տոգորված արվեստական գաղափարներով: 1895 թվականից սկսած նա պարբերաբար հաճախում էր Շուշիի թատրոնը՝ շատ ժամանակ լինելով Աբելյանի և Սիրանուշի խաղընկերը: Նա պատրաստում է կերմոնտովի «Դիմակահանդես» պիեսի ներկայացումը, կատարում Արբենինի դերը: Հայտնի է նաև, որ Գ. Պետրոսյանը բեմադրում է «Օթելլոն» և կատարում մավրի դերը՝ արժանանալով ժամանակի պարբերական մամուլի դրվատական խոսքին:

Գ. Պետրոսյանը ուներ թատերական խումբ, որը հանդես էր գալիս «Խանդամիրյան» թատրոնի շենքում: Խմբի ուժերով 1895 և 1901 թվականներին բեմադրվում է Մուրացանի «Բուզանք» Գ. Պետրոսյանն էլ կատարում է Զաքարիի և Հասան Զալալի դերերը:

Նա այն դերասաններից էր, որոնք հիացած էին Արցախի հասարակության բարեմասնություններով, սիրում էին դարբանակներին՝ աշխատասիրության, մարդասիրության, համեստության, բազմաշնորհության և այլ առաքինությունները համար: Եվ պատահական չէ, որ Գևորգ Պետրոսյանը իր խմբի

հետ «Խանդամիրյան» թատրոնի շենքում հանդես է գալիս քառասուն պիեսներում:

Շուշիի «Խանդամիրյան» թատրոնում նոր աշխուժություն էր հատկապես 1902 թվականին, երբ Շուշի էր գալիս փառաբանված արտիստուհին՝ Սիրանուշը: Նրա դերակատարումները Մագրա («Հայրենական տուն»), Մագամ Սան-ժեն («Սան-ժեն»), Օֆելյա («Համլետ»), Ամալիա («Ավագակներ») և ուրիշ դերերում հմայում էին հազարավոր հանդիսականներին: «Մշակ» թերթը մեծ գոհունակությամբ է ներշնչում («Նամակներ Շուշիից» վերնագրի ներքո), որ «հասարակությունը քարացած նրա յուրաքանչյուր շարժվածքն էր դիտում, նրա հետ տանջվում, այն ու վախ անում, իսկ գործողության վերջում օվազիաներ սարքում»:

Հովհաննես Աբելյանի, Գևորգ Պետրոսյանի, Սիրանուշի հետ ախտիվորեն են գործել Արամ Վրույրը, Փառանձեմը, Վարդիթեր և Մարի Հրանուշ Ֆելեքյան քույրերը, Վարյա Մելիքյանը, Արշակ Հարությունյանը, Հովհաննես Ստեփանյանը, Իսահակ Ալիխանյանը, Արշակ Մամիկոնյանը, Կարապետ Գալֆայանը և շատ ուրիշ մեծատաղանդ արտիստներ՝ տարբեր տարիների և՛ առանձին և՛ խմբերով հանդես են եկել «Խանդամիրյան» թատրոնի բեմում, ստեղծելով անկրկնելի կերպարներ տասնյակ դրամատիկական գործերում:

Շուշիի «Խանդամիրյան» թատրոնը գործեց մինչև 1905 թվականը՝ մինչև հայ-թուրքական ընդհարումները, երբ այդ վտանգ էր հոյակապ շենքը: Թատրոնը գործելով 16 տարի, իր մեջ ամփոփում էր ամբողջ գովառի թատերական, համերգային-երաժշտական, գրական-գեղարվեստական կյանքը. համերգներից բացի «Խանդամիրյանի» դահլիճում տեղի էին ունենում գրողների, երգահանների հանդիպումներ: Փաստորեն այն կատարել է կուլտուր-լուսավորական անուրանալի դեր ամբողջ երկրամասում:

Շուշիում թատրոնը իր ուրույն կյանքն էր ապրում 1910-ական թվականներից հետո: Հիմնական թատերավայրը դարձել էին դպրոցական շենքերն ու աղումբը: Ճանաչված դերասանները նույն ոգևորությամբ չէին հաճախում փառաբանված Շուշին. մի տեսակ փշրվել էր նրանց ոգևորությունը: Նրանց դերը կարծես կատարում էին Շուշիի հայ դերասան-



ները, որոնցից շնորհալիները սիրողական խմբերում բեմադրում էին այս կամ այն պիեսը՝ մեծ մասամբ հայ հեղինակներից:

19-րդ դարի վերջերին թատերական կյանքի որոշակի աշխուժացում է նկատվում Արցախի մի շարք գյուղերում: Դա նկատելի էր նույնիսկ փոքրիկ գյուղերի օրինակով: Փոքրիկ է Փրջամալը, բայց գյուղացիները երկար ժամանակ կարոտ էին կա՛մ որևէ բեմադրության, կա՛մ ուղղակի դեղարվեստական երեկոյի: «Մշակը» 1897 թվականի սեպտեմբերի 27-ի համարում տպագրում է իր թղթակցի նամակը, որտեղ ասվում է. «Ահա երկու տարի է, որ մեր գյուղացիները բախտ են ունենում մի խումբ թատերասերների շնորհիվ երեկույթներ ունենալու: Այս տարի էլ, ինչպես և անցյալ տարի, մի երեկույթ տեղի ունեցավ, բաղկացած երգերից և ներկայացումներից: Ներկայացրին «Կըռթ-կըռթ» և «Մըկճի հարսանիք» վոդևիլները: Որքան ուրախալի էր տեսնել, որ գյուղացիները ամեն կերպ աշխատում էին ներկա լինել երեկույթին, այն ինչ առաջները թատրոնից խորշում էին»:

Դավառի առանձին գյուղերում հանդես էին գալիս ճանաչված դերասաններ, երգիչներ, կազմակերպելով թատերականացված երեկոներ, որոնց մի բաժինը համերգ էր, մյուսը՝ կարճ բեմադրություն: Բնակչությունը ջերմորեն է ընդունում նշանավոր երաժշտագետ Կարա Մուրղալի 100 հոգուց բաղկացած անսամբլի, թեմական դպրոցի երգեցողության ուսուցիչ Ստեփան Դեմուրյանի ղեկավարած քառաձայն երգեցիկ խմբի ելույթները:

Ուշագրություն էին դրավում դպրոցականների ուժերով կազմակերպվող այն միջոցառումները, որոնք անվանվում էին «Գրական-գեղարվեստական առավոտ»: Այստեղ էլ առաջին բաժնում կատարվում էին բնակչության հավանությանը արժանացած երգերը և ներկայացնում գողտրիկ պիեսներ՝ մեծ մասամբ վոդևիլներ:

Հետզհետե դավառի աշխատավորությունը նոր պահանջներ է ներկայացնում և՛ թատրոնին և՛, ընդհանրապես, գեղարվեստական միջոցառումներին: Թատերասեր հասարականությունը գտնում է, որ պետք է թատրոնները դարձնել ժողովրդական, այսինքն ավելի մոտիկ կանգնել ժողովրդի շա-

հերին, բեմադրելով այնպիսի պիեսներ, որոնք ուղղակի կերպով մարմնավորում էին աշխատավորության հոգսերն ու ակնկալումները: «Մշակ» թերթը 1914 թվականի հուլիսի 12-ի համարում տպագրում է օրիորդ Վիկտորիա Դավթյանի նամակը, որտեղ ասվում է. «Ինչպես մամուլը գոյություն կուզու՞մ իրավունք ունենալու համար պետք է անընդհատաբար իր ամբողջ բարոյական ուժը քաղի ժողովրդական կյանքից, ժողովրդի կենսական պահանջներից և ապա ձևակերպելով իր մտքերը, ազնիվ կերպով առաջնորդի ժողովրդին, այնպես էլ թատրոնը պետք է միշտ հետազոտի ժողովրդին և շոշափելով բեմի վրա հասարակական առօրյա կենսական խնդիրներ՝ ջանա լուծել այդ խնդիրները: Մինչև որ մի ազգի թատրոնը ինքնուրույն ստեղծագործող չդառնա, ապա երբեք հասարակական կրթիչ դեր չի կարող խաղալ նույն ազգի հասարակական կյանքում: Գլխավոր խնդիրը մեզ համար այն է, որ մեր թատրոնի վարիչները պետք է շնորք ունենան թատրոնը հայ հասարակության, մանավանդ գավառեցիների համար անհրաժեշտ պահանջ դարձնել»:

Ահա թե ինչու դավառի մի շարք գյուղերում ստեղծվում են ժողովրդական թատրոններ, որոնք տեղացի սիրողների ուժերով բեմադրում են ժողովրդի շահերին օգտակար պիեսներ՝ նպաստելով մարդկանց քաղաքական և գեղագիտական մակարդակի բարձրացմանը: Այդ կարգի թատրոններ են ըստեղծվում Ճարտար, Բալլուջա, Խանածախ, Դահրավ և այլ գյուղերում:

20-րդ դարի սկզբին թատերական կյանքը ծնունդ է առնում նաև Վարարակն գյուղաքաղաքում (հետագայում՝ Խանքենդի, այնուհետև՝ Ստեփանակերտ), որտեղ հիմնականում կենտրոնացած էր զորամաս-շտաբ: Տեղի միակ ակումբում բեմադրվում էին հայկական և ռուսական պիեսներ՝ տեղացիների ուժերով: Մամուլը վկայում է, որ բեմադրություններին ներկա էին և՛ հայ քաղաքացիները, և՛ ռուս զինվորականները: Նրանք իրենց գոհունակությունն էին հայտնում այն հայ արտիստներին, որոնք առանց վարձատրության տալիս էին բեմադրություններ՝ արժանանում հասարակության հարգանքին:

Այ՛ո՛, թատրոնը արցախցիների հոգուն ու սրտին հարա-



զատ է եղել վաղուց: Այսօր էլ այդ բանը վկայում է Ստեփանակերտի հայկական պետական դրամատիկական թատրոնը, որը ծնունդ է առել 1932 թվականին՝ Կարո Ալվարյանի ղեկավարությամբ, Վ. Վաղարշյանի «Օղակում» պիեսի բեմադրությամբ:

Առաջին ներկայացման մեջ մասնակցություն են ունենում Ստեփանակերտում գտնվող դերասանները՝ Կարո Ալվարյանը, Մանուկ Զաղեն, Աննա Մելիքը, Հովհաննես Հովհաննիսյանը, Միքայել Ղորղանյանը և ուրիշներ:

Այնուհետև, թատրոնը բեմադրում է «Պաղտասար աղբարը», «Սպանված աղավին» և այլն: Կարճ ժամանակում թատրոնը դառնում է հայ թատերական արվեստի կարևորագույն օջախներից մեկը, դա ամենից առաջ դրսևորվում է դերասանների աճով, ստեղծագործական կարողությամբ, նոր պիեսների բարձրորակ բեմադրությամբ: Թատրոնում են աճում ճանաչված դերասաններ, ժողովրդական արտիստներ Գուրգեն Հարությունյանը, Միքայել Ղորղանյանը, Թամարա Մելքոնյանը, Նինա Հովսեփյանը, Թագուհի Սահակյանը, Բեհեկ Օվչյանը, Մարգո Բալասանյանը, Զինավոր Գևորգյանը, Մամիկոն Միքայելյանը, Սուրեն Համզոյանը և շատ ուրիշներ:

Թատրոնի խաղացանկում միշտ տեղ են գրավում հայ պիեսներից Արամաշոտ Պապայանի «Աշխարհն, այո, շուտ է եկել», Ալեքսանդր Շիրվանզադեի «Չար ոգին», «Սրտի արատ», րությունյանի «Գլխի գինն է 50 միլիոն», «Սրտի արատ», ինչպես նաև Գորկու «Հատակում», Կ. Բուաչիձեի «Բակում չար շուն կա», Ա. Սուխով-Կոբելի «Դատական գործ», Բ. Շոուի «Սատանայի աշակերտը» և այլ դրամատիկական գործեր, որոնք հիմնականում ամփոփում են մարդասիրական, հայրենասիրական գաղափարներ:

Արցախում, գրեթե նրա 200-ից ավելի գյուղերում գործող ակումբներին կից ստեղծված են դրամատիկական-թատերական խմբակներ, որոնց ուժերով բեմականացվում են առանձին դրամատուրգների գործերը: Այս առումով հարուստ փորձ են կուտակել Բալուջայի, Դաշբուլազի, Ճարտարի, Սոսի, Ղզղալայի և շատ այլ գյուղերի ինքնադործ խմբերը:

Այո՛, թատրոնը արցախցու հոգևոր կենսական պահանջն է, նա այնտեղ որոնում է իր ձգտումների ու իղձերի կա-

տարման ու կենսագործման ուղիները, նա սնունդ է առնում յուրաքանչյուր հաջողված բեմադրությունից, միշտ բուռն ծափահարություններով վարձահատույց լինում սիրած դերասաններին:

Իսկ այդպիսի սիրված դերասաններ շատ են Արցախ աշխարհում:

### ԱՐՑԱԽԻ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԷԶԵՐԻՑ

Գրական կյանքը Արցախում սկիզբ է առնում այն ժամանակ, երբ տարբեր վայրերում հիմնվում են կրթական օջախներ: Առանձին արխիվներում եղած տվյալներով և պարբերական մամուլի հաղորդմամբ, Ամարասում, Գանձասարում և այլուր գործող դպրոցներում հայոց լեզվի և գրականության ուսուցիչների նախաձեռնությամբ և բարձր դասարանների աշակերտների ուժերով հաճախ են արտասանություններ կազմակերպվել՝ մեծ մասամբ հայ գրողների ստեղծագործություններից:

Շուշիում տարբեր առիթներով գրական-գեղարվեստական ցերեկույթներ և երեկույթներ էին կազմակերպում հայոց հոգևոր թեմական դպրոցի աշակերտները, որոնք կրում էին «գրական-ձայնական առավոտ» անունը. ունկնդիրները լսում էին ոչ միայն երաժշտություն, այլև՝ գրական-գեղարվեստական գործեր, մասնավորապես բանաստեղծություններ:

Գավառի կենտրոնում հիմք էր դրվել մի գովելի նախաձեռնություն. միջոցառումներ էին անցկացվում նվիրված առանձին գրողների, սկզբում գեկուցում էր կարգացվում հեղինակի կյանքի և գործունեության մասին, ապա հատվածներ արտասանվում ստեղծագործություններից, երբեմն էլ բեմականացվում նրա որևէ գործը:



1898 թ. ապրիլի 26-ին Շուշիում բարեգործական ընկերության տեղական ճյուղի վարչության նախաձեռնությամբ տեղի է ունեցել հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի հիշատակին նվիրված ցերեկույթ, որը անցել է մեծ հաջողությամբ:

Հետաքրքիր են եղել Մուրացանի, Լեոյի, Տմբլաչի Խաչանի (Կոնստանտին Մելիք-Շահնազարյանի), Լեոն Աթաբեկյանի և այլոց գործունեությանը նվիրված գրական երեկոները:

Գրականության զարգացմանը շոշափելի ազդեցիկ հանդիսացավ Շուշիում գործող գրական ընկերությունը, որի ազդեցությունը մեծ էր ոչ միայն դավառում, այլև ամբողջ Անդրկովկասում: Դրա առհասկապ նմանօրինակ գրական խմբակների ստեղծումն էր Բաքվում, Թիֆլիսում և այլուր:

Դպրոցներից, գրադարան-ընթերցարաններից և ակումբներից զատ, գրական կյանքը շարունակվում էր լայն ծավալ ստանալ հատկապես հրատարակվող պարբերականներում: Նկատի ունենք, առաջին հերթին Արցախի անդրանիկ պարբերականում՝ «Հայկական աշխարհում»: Նրա խմբագիր-հրատարակիչը՝ Խորեն Ստեփանեն և՛ լեզվաբան էր, և՛ գրականության բարեկամ: Ահա թե ինչու հանդեսում տպագրվում էին Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» դրվագներ, Հովհաննես Քոչուրեկյանի օգտակար պատմվածքները («Անբախտ Սելիմը և յուր պատմությունը», «Բաղդասար Մուստաֆան և իր պատմությունը» և այլն), գրական շափածո գործեր:

Արցախում 1880-ական թվականներից սկսած սկիզբ են առնում զուտ գրական-գեղարվեստական պարբերականներ, որոնք անջնջելի հետք են թողել մեր գրական մամուլի պատմության մեջ: Նրանց հրատարակիչները և հիմնական աշխատակիցները կա՛մ գրողներ էին, կա՛մ գրականության ջատագույններ:

Այդպիսի պարբերականներից էր 1881 թվականին Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակը»: Ինքնատիպ այդ հանդեսի մեջ զետեղվում էին ոչ միայն ինքնուրույն, այլև թարգմանական գործեր: Թարգմանությունները կատարվում էին ռուս և եվրոպական դասականներից՝ Պուշկինից, Լերմոնտովից, Հայնեից, Գյոթեից, Շիլլերից, Բայրոնից և այլ հե-

ղինակներից: Սա պատահական երևույթ չէր. «Քնար խոսնակի» խմբագիր-հրատարակիչը լինելով կրթված, զարգացած մարդ, գրական գործեր ընտրելիս առաջին հերթին հաշվի էր առնում դրանց գաղափարական բովանդակությունը, քաղաքական իմաստը: Նշենք նաև, որ Ն. Տեր-Ավետիքյանը նոր դեմք չէր գրական աշխարհում: Նրա գրչին են պատկանում մի շարք գրքեր, թարգմանական գործեր:

Զհաշված Հայնեի «Մանկիկ» ոտանավորը, «Քնար խոսնակի» առաջին բաժինը բովանդակում է ինքնուրույն, մասնավորապես Ն. Տեր-Ավետիքյանի շափածո և արձակ ստեղծագործությունները: Ուշագրություն է գրավում նրա «Պուշկինի արձանը» բանաստեղծությունը՝ գրված 1880 թվականի հուլիսի 6-ին, Մոսկվայում:

Հեղինակը պատշաճ կերպով է գնահատում ռուս մեծ բանաստեղծի ստեղծագործությունները, համարելով դրանք բացառիկ քանքարի և շոալ տաղանդի արտահայտություններ:

Ժողովուրդն իր շխամբող սերը պոետի նկատմամբ արտահայտել է ջերմորեն: Հայ հեղինակը նրան անվանում է հայրենի աշխարհի «ազատության արուսյակ»: Ստեղծագործությունն ավարտվում է այս խոսքերով.

Ուրախացի՛ր, ով հաննար,  
Ահեղագոր են խոսքերդ,  
Ազնիվ դարձան սրտեր քա  
Եվ ծաղկեցան քո փշերդ:

Նա բարձր է գնահատում նաև Բայրոնի տաղանդը՝ նվիրելով նրան ձոն:

Ն. Տեր-Ավետիքյանը ոչ միայն գրվատում է առանձին պատվարժան անձնավորությունների, այլև փորձում է գեղարվեստական խոսքի ուժով արտահայտել աշխատավորների իղձերն ու ցանկությունները, մարմնավորել նրանց միտքն ու խոսքը: Հեղինակը, որոշակիորեն հրապարակ է հանում ժողովրդի ներաշխարհը, ցույց տալիս նրա սոցիալական վիճակը և քաղաքական տրամադրությունները, քննադատական խոսք ասում նրանց հասցեին, ովքեր գոփում են խեղճ գյուղացու արդար վաստակը: Այս մասնավորապես արտահայտվում է նրա «Հյուսիսի աշունը» և «Հյուսիսի ձմեռը» բանաստեղծություններում:



տեղծութուններում: Ճիշտ է, այստեղ հեղինակն իր միտքը ուղղակի չի արտահայտում, դիմում է սիմվոլիստական միջոցների, բայց, այնուամենայնիվ, հասկացնել է տալիս ընթերցողին, որ Ռուսաստանում տարվա բոլոր ամիսներին ձմեռ է, մարդիկ կարոտ են ջերմության, տաքուկ անկյունի: Թե երբ կծագի արևը, բանաստեղծը պատասխան չի տալիս, միայն հույս է հայտնում, որ աշխարհը չի մնա այսպես:

Հայ աշխատավորի ողբերգական վիճակը արտացոլվել է Ն. Տեր-Ավետիքյանի «Սոս» ընդարձակ բանաստեղծության մեջ: Նա ցավով է հրապարակում այն փաստը, որ կյանքի անտանելի պայմաններից զրոյված հայ գյուղացին կաշկանդված է մահվան ճիրաններում և ստիպված է ամեն դժվարություն տանել, ստորանալ, մի կերպ քարշ տալ ֆիզիկական դուրսությունը: Բայց հեղինակը չի բավարարվում մարդու ցավագին վիճակն արտահայտելով, որոշ չափով ներկայացնում է լայն զանգվածների դժգոհությունը ցարիզմի նկատմամբ:

Դառն օրեր էին ապրում նաև հայ երիտասարդը, ուսանելու զնացած հայ աղջիկն ու պատանին: Նրանք զրկված էին ապրելու, կրթություն ձեռք բերելու որևէ հնարավորությունից: Նրանք չունեին ապրուստի որևէ միջոց, բնակվելու տեղ, զրկված էին լույսից, ջրից... Կարողում ես հեղինակի «Ուսանող» փոքրիկ պոեմը և լցվում խոր վշտով:

Գաղափարական որոշ նպատակադրում ունեին Ն. Տեր-Ավետիքյանի շափածո գործերը: Հիմնականը հայրենիքի շենացումն էր, ժողովրդի համար ուրախալի կյանքի ստեղծումը: Այդպիսի միտում ունի «Հասարակություն» բանաստեղծությունը: Այն մի կողմից ներկայացնում է հայրենանվեր գործի հասարակական նշանակությունը, մյուս կողմից՝ արտահայտում Հայաստանի բարգավաճման փափագը: Հեղինակը, սակայն, ծաղրում է նրանց, ովքեր «հայրենիք» հորջորջելով՝ իրենց զնում են անձնազոհի, հայրենասերի պատվանդանին:

Լավի, բարու գաղափարն է զարգացնում հեղինակը «Գարուն», «Վիթխարի բարերար», «Պաշտոնագետ» և այլ ստեղծագործություններում:

Նիկողայոս Տեր-Ավետիքյանը գեղարվեստական գործերի թեմա է դարձրել նաև ժողովրդասիրությունը: Նա մեծ հույ-

սեր է կապում հատկապես ոռու ժողովրդի հետ, գտնելով, որ ոչ միայն Ռուսաստանում բնակվող, այլև շատ ու շատ ազգեր թե ու թրիկունք պիտի լինեն իրար: «Շուշեցու Հայաստան», «Շուշեցու իդեալը» և այլ ստեղծագործություններում շեշտված է հայ և ոռու ժողովուրդների դարերից եկող բարեկամությունը:

Թեև «Քնար խոսնակի» առանձին ստեղծագործություններ քննություն չեն կարող բռնել արվեստի, տաղաշափուկության տեսանկյունից, բայց բոլորն էլ հուզող հարցեր են արծարծում, շնչում են ժամանակի ոգով:

Ն. Տեր-Ավետիքյանը ջանքեր էր ներդնում, որ պարբերաբար հրատարակվի «Քնար խոսնակը», բայց ժամանակի գրաքննությունը երկաթյա ձեռք էր մեկնում ամեն մի լուսավոր մտքի վրա, հասնելով այն բանին, որ փակվի առաջադիմական այդ պարբերականը: Մի կողմից այդ, մյուս կողմից նյութական ծայրահեղ միջոցները այլևս թույլ չտվին, որ «Քնար խոսնակը» ունենա իր հաջորդը:

Բայց չի կարելի ստվեր գցել գեղարվեստական-հասարակական այս պարբերականի խաղացած դերի վրա, այն կարգացվում էր հետաքրքրությամբ և աղղեցություն էր ունենում ընթերցողների վրա:

«Քնար խոսնակը» որոշակի դեր խաղաց անցյալ դարի 80-ական թվականների Ղարաբաղի գրական կյանքն առաջ մղելու գործում: Այն տարածվեց հայաշատ շրջաններում, մուտք գործեց Անդրկովկաս և այլուր:

1882—1884 թթ. Շուշիում լույս էր տեսնում Սիմոն Հախումյանի «Գործ» հանդեսը, որի էջերում գետեղվում էին ոչ միայն ինքնուրույն և թարգմանական ստեղծագործություններ, այլև գրականագիտական հոդվածներ, որոնց ուժը պահանջում է նաև այսօր: Խմբագիր-հրատարակիչը խնդիր էր դնում մոտիկից ուսումնասիրել նաև մյուս ժողովուրդների կյանքը և հատկապես Ռուսաստանի իրավիճակը: Ահա թե ինչու նա իր հանդեսի 3-րդ համարի 4-րդ էջում գրում էր. «Ռուսաստանի կյանքը շատ սերտ կապ և հարաբերություն ունի մերինի հետ, բայց այդ երկրի հասարակական կազմակերպությունը, ներքին կյանքը մեղ համար անհայտ երկիր է»: Դրա պատճառներից մեկը նա համարում է ժամա-



նակի պարբերական մամուլի առանձին օրգանների անբար-  
յացակամ վերաբերմունքը, թերթերի և հանդեսների վատ աշ-  
խատանքը:

Մոտիկ շփում ունենալով ուս ժողովրդի մշակույթի հետ,  
ընդգծում էր հայ հրատարակիչը, վիթխարի քայլերով առաջ  
կգնա նաև հայ արվեստը, գրականությունը: Յա՛վն այն է,  
սակայն, բողոքում էր Ս. Հախումյանը, որ հայ ընթերցողը  
շատ քիչ է ծանոթ ուս գրականությանը: Այնպիսի մեծա-  
նուն գրողներ, ինչպիսիք են Գոգոլը, Տուրգենևը, Տոլստոյը,  
Դոստոևսկին, Սալտիկով-Շչեդրինը և ուրիշներ, ինչպես նաև  
եվրոպական շատ առաջնակարգ գրողներ, հիմնականում  
թարգմանված չեն հայերեն:

«Գործի» խմբագիրը կողմնակից չէր եվրոպական քա-  
ղաքակրթությունը կուրորեն ընդունելուն: Ընդհակառակն, նա  
պահանջում էր քննադատական մոտեցում. «Մենք գտնում  
ենք, որ եվրոպական լուսավորությանը կուրորեն հետևելը և  
նրան կուրորեն ընդունելը՝ չի կարող ազգին մի մեծ բարիք  
լինել: Համաձայն և ջերմ ջատագով ենք այն մտքին, թե մեր  
ժողովուրդը պետք է օգուտ քաղե եվրոպական մտավոր և  
հոգեկան ահագին ժառանգությունից, բայց այդ ժառանգու-  
թյունը ընդունելիս՝ պետք է միշտ քննել, թե եվրոպական  
կուլտուրայի մեջ ինչ բան ճշմարիտ ընդհանուր մարդկային  
է, ինչ բան պողաբեր է, ինչ բան կարևոր է մեր հայրենիքի  
դարգացման և բեղմնավորության համար և ինչ բան նրա  
մեջ մասնավոր է, անցողական՝ մինչև անգամ կեղծ և վնա-  
սակար»<sup>1</sup>:

Ս. Հախումյանը գրեթե նույն կարծիքին էր ուս գրակա-  
նության նկատմամբ: Մուս գրողների բոլոր գործերը նա հա-  
լած չուղի տեղ չէր ընդունում. նա բարձր էր գնահատում  
այն ստեղծագործությունները, որոնք իրականությունն ար-  
տացույցում են ռեալիստորեն, ճշմարտացի, ներկայացնելով  
կյանքի ոչ միայն գրական, այլև հոռի կողմերը: Նա գրվա-  
տում էր այն կերպարները, հերոսները, որոնք լիարժեք ու  
բնութագրական են, բնորոշ տվյալ ժամանակի համար: Եվ

նա իր միտքը ամփոփում էր այսպես. «Մենք պետք է ծանո-  
թանանք ուս գրականության այն արտադրությանց հետ, ո-  
րոնք թեև նկարագրում են ուսաց կյանքը՝ իր բոլոր գեղե-  
ցիկ և հոռի, մխիթարական և անմխիթար կողմերով, բայց  
որոնց մեջ միևնույն ժամանակ երևում են հանրամարդկային  
գծեր, որոնք համահավասար կերպով սիրելի են բոլոր մտա-  
ծող և ամեն ազգի լավագույն մարդկանց համար: Այս տե-  
սակետից են, օրինակ՝ Տուրգենևի, Տոլստոյի գրվածքները,  
և հենց դրա համար է, որ ամբողջ եվրոպան սիրում էր  
Տուրգենևին, թեև նա նկարագրում էր ըստ մեծի մասին ուս  
տիպեր...»<sup>1</sup>:

Պատահական չէր, որ Ս. Հախումյանի հրատարակած  
«Գործում» տեղ էին գտնում Սալտիկով-Շչեդրինի («Անձնա-  
զոհ նապաստակը»), Դր Մոպասանի («Միմոնի Հայրը»), էս-  
քիլեսի և այլ հեղինակների առանձին գործեր:

Հանդեսում միաժամանակ տպագրվել են Շիրվանզադեի  
«Երևում են» պատմվածքը, Ն. Տեր-Ավետիքյանի «Անի» բա-  
նաստեղծությունը և ուրիշ ստեղծագործություններ:

Ս. Հախումյանը բարձր էր գնահատում թարգմանական  
արվեստը, ընդգծելով, որ հատկապես գեղարվեստական գոր-  
ծը պետք է այլ ազգի ընթերցողին հասցվի համ ու հոտով,  
պոետական կուլտուրայով, լեզվաոճական առանձնահատկու-  
թյունների պահպանմամբ:

Գրականագիտական, լեզվաբանական որոշ հարցերի էր  
անդրադառնում հայտնի ազգագրագետ, բանասեր Երվանդ  
Լալայանի «Ազգագրական հանդեսը», որի առաջին համարը  
լույս տեսավ 1896 թվականի սկզբին, Շուշիում: Հրատարա-  
կիչը նպատակ ուներ այդ պարբերականը դարձնել այնպի-  
սին, որ նրա էջերից նյութ քաղեն գրողն ու գիտնականը,  
ազգագրագետն ու հնէաբանը և շատ ուրիշներ:

1896 թվականից՝ «Ազգագրական հանդեսի» լույս ընծա-  
յումից հետո մինչև 1911 թվականը մեզ հայտնի չէ որևէ  
պարբերականի անուն, որ հրատարակված լինի Արցախում:  
Մամուլի հմուտ գիտակ Գարեգին Լեոնյանը մի առիթով նշել  
է, որ վերը նշված տարիները տխուր շրջան էր հայ մամուլի

<sup>1</sup> «Գործ», 1884 թ., էջ 4—5:

<sup>1</sup> «Գործ», 1884 թ., էջ 5—6:



համար: Դրա հիմնական պատճառը, իհարկե, քաղաքական իրավիճակն էր, ցարական գրաքննչության դաժանությունը: Յարիզվել ամեն կերպ ձգտում էր փականքի տակ դնել լուսավոր միտքը և ոչ մի կերպ թույլ չտալ հրատարակ հանելու մասսայական գրականություն, հրատարակելու թերթ, ամսագիր, հանդես, որտեղ կարող են թափանցել հակակառավարական և հեղափոխական մտքեր:

Առաջին թերթը, որ 20-րդ դարի սկզբին լույս է տեսնում Արցախում՝ «Ղարաբաղն» էր, որը հիմնականում խմբագրում էր մեր հայտնի գրող Վրթանես Փափազյանը: Պարբերականը սկսեց իր գործունեությունը 1911 թվականից և նրա առաջին շորս համարներում «Դրական ակնարկների» ներքո տպագրվեց Վրթանես Փափազյանի ծավալուն հոդվածը՝ արվեստագետի, նրա աշխարհայացքի, արժարծվող գաղափարների և պոետական արժանիքների մասին:

«Դրական ակնարկների» մեջ հեղինակը իբրև տաղանդաշատ գրողի և մեծ արվեստագետի առաջին հերթին անդրադառնում է Ավետիք Իսահակյանի ստեղծագործություններին, մասնավորապես հռչակավոր «Աբու-Լալա-Մահարի» պոեմին:

«Իսահակյանը ռուսահայ գրականության այն երիտասարդ տաղանդներից է, — գրում է Փափազյանը, որ վառ երանդներով լի մտել է կյանքի մեջ որպես մի թիթեռ՝ սիրելու համար ծաղիկ ու աղջիկ, երգելու համար ծաղկի բուրմունք, կույսի սեր, մրմունջ-տրտունջ և տանջվող սրտի երգ ու վերք...»<sup>1</sup>:

Հեղինակը զարգացնում է այն միտքը, որ գրողը պետք է կապված լինի իր ժողովրդին, արտացոլի նրա առօրյան, ինչպես նաև ժամանակի բնութագրական կողմերը:

Հայ պարբերականի էջերում լայն տեղ էին հատկացվում ևևոն Աթաբեկյանի, Գրիգոր Ներսիսյանի, Խոսրոս Բորյանի և ուրիշների այն ստեղծագործություններին, որոնց մեջ գովերգվում էին հալալ աշխատանքի տեր մարդկանց, արտահայտելով նրանց իրձեքն ու ցանկությունները:

Սրտի թրթիռով ու ներքին անսովոր զգացմունքով է կարդացվում ևևոն Աթաբեկյանի՝ Ղարաբաղի բարբառով գրված

«Մոր նամակը»: Այն արձակ բանաստեղծությունն է: Հիմնականում մոր խոսքն է՝ շորս տարի բանակում գտնվող որդուն: Ծեր կինը, որ մի կերպ էր իր գոյությունը պահպանում, անսահման կարոտում է որդուն և իր նամակում պատմում է տեղի զոռբանների ու թալանչիների վայրագությունների մասին:

Բանաստեղծը «Հոգնություն երգերում» նույնպես շարունակում է մերկացնել այլանդակ կյանքի սիրահարներին, որոնց նպատակն է շաշխատել, բայց ապրել միշտ լիության մեջ, անհոգ ու անարտում:

Լ. Աթաբեկյանը ոգևորում է մարդուն՝ սլանալու, թռչելու, «կարմիր այգը ողջունելու», մի բան, որ նա անկարող էր անել «կտորած թևերով ու պատռած կրծքով»: Եվ նա իր միտքը ամփոփում է երեք բառի մեջ.

— Ապրիր, որպեսզի հաղթահարես:

Իր մի շարք բանաստեղծություններում, հատկապես Գրիգոր Ներսիսյանը, վառ գույներով է մարմնավորում հայրենիքի սերը, հայրենի բնությունը, հարազատ շրջապատը: Նա կոչ էր անում շարունակել պայքարը լավ կյանքի հասնելու համար: Հեղինակը տեսնում էր, որ ռեակցիայի տարիներից հետո հեղափոխության գործը արագորեն առաջ է ընթանում, ազնիվ մարդիկ մասսաների գլուխն անցած, պատրաստվում են վճռական գրոհի: Եվ նա «Նոր այգ» բանաստեղծության մեջ ասում է.

Մոսյլ ամպերը ցրվել են առդեն,  
Կապույտ երկնքից արևն է շողում,  
Սառցե շրթաներ շուտով կհալվեն  
Եվ սեգ-քախձախոս սարն էլ է ժպտում...  
Մեռնում են վշտեր և ֆո սիրավառ  
Երգերը խոռխոս հնչում են ուժգին...  
Վառվում են հույսեր... և ֆո ցավատանջ  
Սիրտն էլ է բնդում նոր աշխարհին...

Գրական ստեղծագործություններն արժանի տեղ են գրավում Շուշիում 1915—1917 թթ. լույս տեսնող «Փայլակ» թերթում: Իրենց շափածո և արձակ գործերով աչքի են ընկնում Գրիգոր Ներսիսյանը, Գառնիկ Ղազարյանը, ևևոն Վարդունին

<sup>1</sup> «Ղարաբաղ», 1911 թ., նոյեմբերի 20:



և ուրիշներ: Հիմնական թեման էր հայրենի եղերքի հոգսերը, աշխատավոր մարդուն լուսավոր ասիեր դուրս բերելը: Կետն վարդունին գրում է. «Դու մի վհատվիր» բանաստեղծությունը, որ լույս է տեսնում թերթի 1917 թ. հունվարի 1-ի համարում:

Դու մի վհատվիր, իմ բնկեր անգին,  
Որ ողջ աշխարհը սև մուր է պատել,  
Ու սև օրերի փոքորիկն ուժգին,  
Պայթում է, գոռում մարդկության գլխին...  
Մի նայիր հեռուն, տես ինչպես գարնան  
Նորոգ արևի շողերը ուժգին  
Նոր քափ են առնում, որ այս սև մուրի  
Կապանքները գոռ փշրեն, խորտակեն...  
Դու մի վհատվիր, մոտ է վախճանը  
Մարդկության գլխին ծանրացած մուրի...

Արցախի գրական կյանքում նշանակալից է «Ծիածան» գրական-գեղարվեստական պարբերականի դերը, որը լույս տեսավ 1916 թ. Շուշիում: Նրա էջերում հանդես էին գալիս Գառնիկ Ղազարյանը, Ավագ Կոծինյանը, Խորեն Կորենցը, Միսակ Պետրոսյանը և ուրիշներ: Նրանց ստեղծագործությունների լեյտամտիվը երկրամասում նոր լույսի ճառագումն էր: Ահա «Ծիածանի» խմբագիր-հրատարակիչ՝ Մ. Պետրոսյանի «Հերոսի երազը» փոքրիկ պոեմի հերոսը, որը երազում է ոչ միայն նոր կյանք, այլև սերտ միություն բոլոր ժողովուրդների միջև.

... Մեզ համար էլ թող ծաղկի  
Նոր Արշալույս, նոր Տարի,  
Մի տեղ ձուլվենք նոր կյանքում  
Հյուսվի մի սիրտ, մի հոգի...

Հետագայում էլ հեղինակը չի հրաժարվել իր թեմայից և շարունակում է ներկայացնել անցյալի դառը կյանքը, տրտմությունը, և մարդու բուռն ցանկությունը «խավարի թագավորությունից» դուրս գալու համար: Գեղարվեստական խոսքի արտահայտման միջոցներով նա նկարագրում է, թե ինչպես գիշեր ու ցերեկ մարդը հողի հետ կռիվ է տալիս, ար-

յուն-քրտինք է թափում, բայց անկարող է իր վաստակով ամոքել դերդաստանի հոգսերը: Կարծես իր հանգիստը, ազատությունը ձգտում է գտնել հեռու, հեռու վայրերում, անապատներում, այնտեղ, ուր մարդկային հետք չկա:

Ստեղծագործող քաղաքացին շատ շուտով համոզվում է, որ պետք է վերադառնալ մարդկանց մոտ, ուր «եսն» է ձուլվում «մենքի» մեջ և «մենքը»՝ «եսի»:

Հիրավի, նախախորհրդային Արցախի գրական կյանքը հարուստ է առաջադեմ գրողներով, որոնք սրտաբուխ գովերգում էին նոր գալիքը, տենչում ազատություն և արդարություն:

#### ԱՐՅԱԽԻ ԿՈՒՆՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՕՋՍԵՆԵՐԸ

Գյուրությունն ու տպագրությունը վաղ է սկսվել Արցախում: Դա ամենից առաջ այն բանի վկան է, որ երկրամասի հայերը գիրն ու գրականությունը միշտ էլ դիտել են որպես հոգևոր սնունդ, կենսական պահանջ: Ահա թե ինչու 5-րդ դարից սկսած, երբ փառավոր Ամարասում մեծն Մեսրոպ Մաշտոցը հիմնել էր դպրանոց, դրան կից սկսել էր գործել գրատուն:

Գրատներ են եղել նաև Գանձասարում, Ս. Հակոբի եկեղեցուն կից գալրանոցում և այլուր:

Սակայն գրադարան-ընթերցարանի հասկացողությունն ու գործածությունն ավելի լայն կիրառում է գտնում 19-րդ դարի առաջին կեսից սկսած, երբ ոչ միայն Արցախի նախկին կենտրոնում՝ Շուշիում, այլ նաև մի շարք խոշոր գյուղերում (Թաղավարդում, Ծարտարում, Սոսում և այլուր) հիմնադրվում են դպրոցներ՝ հանրակրթական առարկաներով:

Գրադարան-ընթերցարանը իբրև պրոֆեսիոնալ կուլտուր-լուսավորական օջախ Շուշիում սկսում է գործել 1838 թվա-



կանի հունիսի 22-ին հիմնադրված Ղարաբաղի հայոց հոգե-  
վոր թեմական դպրոցում, որն ի դեպ, շարունակեց իր գոր-  
ծունեությունը մինչև 1921 թվականի սկիզբը: Փամանակի  
մամուլը վկայում է, որ թեմականի գրադարանում և հայա-  
գիտական գրքեր և երկրի տարբեր վայրերում ու արտասահ-  
մանում լույս տեսնող հայատառ պարբերականներ կան: Գրա-  
դարանը հարստացել էր նաև թեմական դպրոցի հրատարա-  
կած մի շարք գրքերով («Ներքին կյանք հին Հայաստանի,  
պատմաբանական քննությունը»), «Համառոտ պատմություն  
հայոց», «Տիրամայր սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնա-  
րանի բացվելը» և այլն):

Պաշտոնապես հայտնվում է, որ 1858 թ. Շուշիում բաց-  
վում է գրադարան, որը ստանում է Անդրկովկասում լույս  
տեսնող մի քանի թերթեր և ամսագրեր: Ուներ նաև մի քանի  
հարյուր գրքեր:

Արցախի աշխատավորների զարգացման և դաստիարա-  
կության գործում որոշակի դեր է կատարում 1865 թվակա-  
նին Շուշիում բացված հասարակական ընթերցարանը: Այս-  
տեղ կազմակերպվում էին նաև երեկոներ՝ նվիրված առանձին  
նշանավոր մարդկանց հոբելյաններին:

Արդյունավետ էր գործում Շուշիի Հռիփսիմյան հայոց  
օրիորդաց դպրոցի գրադարան-ընթերցարանը: Գրքային ֆոն-  
դը հիմնականում կազմված էր առանձին խմբագրություն-  
ներից ձրի ուղարկված պարբերականների մեկ-երկու օրինա-  
կից և նվիրատվություններից:

1878 թվականին Շուշիում նորաբաց հասարակական ա-  
կումբին կից գործող ընթերցարանը իր շուրջն էր համախմբել  
ոչ միայն ուսանողների, այլև քաղաքաբնակ շատ բնակիչ-  
ների, որոնք հիմնականում կարդում էին հայ ժողովրդի պատ-  
մությունն նվիրված գրքերը: Ընթերցարանի հիմնական բա-  
ժիններից էր հայ դասականների գեղարվեստական ստեղ-  
ծագործություններից ժողովված գրականությունը: Մամուլի  
վկայությամբ ընթերցարանից օգտվում էին Շուշիի Քարին  
տակ, Շոշ և այլ գյուղերի բնակիչները:

Արդյունավետ աշխատանք էր ծավալել 1881 թվականին  
քաղաքացի Ա. Հակոբյանի կողմից հիմնադրված գրադարան-  
ընթերցարանը: Տնօրենը լայն կապեր ուներ առանձին քա-

ղաքների կուլտուր-լուսավորական օջախների հետ և նրանց  
օգնությունը էլ ստանում էր տարբեր լեզուներով լույս տես-  
նող գրքեր, թերթեր և ամսագրեր: Սակայն սա էլ երկար  
կյանք չի ունենում:

Արցախում հսկայական գործունեություն էր ծավալել 1881  
թ. Կովկասի Հայոց բարեգործական ընկերության Շուշիում  
ստեղծված մասնաճյուղը: Նրա առաջին նախաձեռնությունն  
էր տեղում գրադարան-ընթերցարանի բացումը: Այս գործում  
վճռական դեր է խաղում հատկապես Առաքել Բաբախանյանը  
(Լեոն): Գրադարան-ընթերցարանի շենքը ընտրվել էր Հայոց  
հրապարակի վրա գտնվող Խուբլարյան եղբայրների խանութի  
վերին հարկը: Մշակութային այդ նոր օջախի բացումը տեղի  
է ունենում 1881 թ. մարտի 12-ին:

Հենց այդ օրերից գրադարան-ընթերցարանը հարստանում  
է Շուշիի բնակիչների նվիրած գրքերով: Առանձնապես մեծ  
ակտիվություն ցույց ավելի Հովհաննես Աղամյանցը: Նրա  
նվիրած գրքերի մեջ ուշագրավ էին մեր պատմիչների (Ղա-  
ղար Փարսեցու, Սեբեոսի, Եղիշեի և մյուսների) և շատ երե-  
վելի հայ լեզվաբանների աշխատությունները, առանձին պար-  
բերականներ («Հյուսիսափայլ», «Փորձ», «Արձագանք» և այ-  
լն): Ավելին, առանձին մարդկանց նվիրատվությունների մի-  
ջոցով գրադարան-ընթերցարանի համար ձեռք են բերվում  
կահկարասիներ:

Բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի սույն  
գրադարանը երկրի խոշոր քաղաքներից, մասնավորապես  
Պետերբուրգից և Մոսկվայից ստանում էր հայերեն և ռուսե-  
րեն պարբերականների թարմ համարները. նկատի ունենք  
«Ռուսկայա միսլը», «Վեստնիկ Եվրոպին», «Բազմավեպը»,  
«Մուրճը», «Մշակը», «Արձագանքը» և այլն:

Պարբերական մամուլը վկայում է, որ գրադարանը հե-  
տըզհետե հարստանում է տարբեր լեզուներով լույս տեսած  
գրքերով: Եվ Արցախի հայերը սերտորեն կապված էին մշա-  
կութային այդ կարևոր օջախի հետ:

Գրադարան-ընթերցարան է ստեղծվում նաև նորաբաց  
ռեալական դպրոցում: Գրքերը և պարբերականները մի քանի  
լեզուներով էին: Դա էլնում էր այն բանից, որ ուսուցումը  
ռեալականում տարվում էր և՛ հայերեն և՛ ռուսերեն:



Ռեալականի, մյուս դպրոցների և մասնաշաղկապի գրադարան-ընթերցարանների աշխատանքը Արցախում որոշակի դեմք է ունենում 1910—1920-ական թվականներին, երբ սուսումը հետզհետե դառնում էր պահանջ և ավելի շատ երեխաներ են ընդգրկվում դպրոցներում:

Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ Շուշի քաղաքի ծխական հոգևոր դպրոցի ուսուցիչ պ. Վահան Գաղյանը 1888 թ. հոգ է տարել գրադարան-ընթերցարան բացելու մասին: Եվ ահա, հայոց հոգևոր տեսչության տպարանին կից պ. Հասան-Ջալալյանի տանը բացվում է նոր գրադարան-ընթերցարան, որտեղ ստացվում են տասնյակ անուն հայերեն, ռուսերեն պարբերականներ, նոր լույս տեսած գրքեր:

Գրադարան-ընթերցարանները դառնում են նաև այն օջախները, որտեղ մշակութային ձեռնարկումներից բացի կազմակերպվում են հեղափոխական աշխատանքներ:

Սակայն մասնաշաղկապի և այլ ձեռնարկումների համար առավել հարմար էին ակումբները, մի բան, որ նոր երևույթ էր Արցախի համար: Բեղմնավոր էր գործում 1882 թվականին Շուշիում բացված Մյուլլերի ակումբը: Գերմանացին նրպատակ ուներ իր մասնավոր ակումբում կազմակերպել ներկայացումներ, համերգներ, զեղարվեստական երեկոներ և, իհարկե, ունենալ նաև ընթերցարան: Այդպիսի շենք հեշտ չէր Շուշիում գտնել 19-րդ դարի վերջերին: Այնուամենայնիվ շուտով գլուխ է գալիս շենքի ընտրությունը, որն ուներ ընդարձակ թատերական դահլիճ, կուլտուրական խաղերի մի քանի սենյակ, գրադարան-ընթերցարանի համար հատուկ սրահ:

Ժամանակի մամուլի վկայությամբ Մյուլլերի ակումբում ներկայացվում են արտասահմանից ժամանած կրկեսային բեմադրություններ: Հատկապես Շուշիի բնակչությունը մեծ հետաքրքրություն է հանդես բերում կրկեսային խմբերի ներկայացումների նկատմամբ:

Մյուլլերի ակումբը երկար չի գործում՝ ընդամենը երկու տարի: Այն հետագայում դառնում է ուղղակի գրադարան-ընթերցարանի վայր: Վավերագրերը պատմում են նաև, որ Շուշիում և Արցախի խոշոր գյուղերում շարունակում են ժա-

մանակ առ ժամանակ սիրողների ուժերով բեմադրություններ կազմակերպել: Ակտիվություն են հանդես բերում թեմական և օրիորդաց դպրոցների սովորողները: Նրանց բեմադրությունները և զեղարվեստական երեկոները գրեթե տեղի են ունենում դպրոցների դահլիճներում:

Կուլտուր-լուսավորական աշխատանքներ են ծավալվում նաև Վարարակնում (այն ժամանակվա Խանքենդում, այսօրվա Ստեփանակերտում): «Մշակ» թերթը գրել է. «Խանքենդին (այն ժամանակ այդ տեղամասը ծառայում էր զինվորների համար— Ս. Ա.) ունի մի մշտական թատերական բեմ, ուր հաճախ լինում են ներկայացումներ..., մի գրադարան, ուր ղժբախտաբար մի հայերեն թերթ շտեսա, թեև անդամների մեջ կան 5—8 օֆիցերներ և մի քանի հայ ընտանիք, մի կլուբ, ուր ամեն շաբաթ լինում են ընտանեկան երեկոներ և պարահանդեսներ»<sup>1</sup>:

Թատերական կյանքը Արցախում որոշակիորեն աշխուժանում է, երբ 1891 թվականին Շուշիում հիմնադրվում է Մկրտիչ Խանդամիրյանի թատրոնը: Դա փաստորեն պրոֆեսիոնալ թատրոն էր, որտեղ հիմնականում հանդես էին գալիս ոչ միայն տեղացիները, այլև հոշակավոր դերասաններ Թիֆլիսից, Բաքվից: Փաստ է, որ Մ. Խանդամիրյանի թատրոնում ժամանակին ելույթ են ունեցել Հովհաննես Աբելյանը, Սիրանուշը, Գրիգոր Ավետյանը, Սաֆրազյան ամուսինները, Մարի Հրանուշը, օր. Վարդիթերը և շատ ուրիշներ: Նրանք բեմադրել են հայ դասական և ժամանակակից պիեսներ:

Ավանդույթ էր դարձել թատերասերների և աշակերտների համատեղ ուժերով բեմադրություններ տալ դպրոցներում: Հետաքրքիր է շեշտել, որ ներկայացումների սկզբում, ընդմիջմանը և վերջում աշակերտները կատարում էին երգեր, արտասանում բանաստեղծություններ:

Բեմադրություններ են կազմակերպվում գավառի առանձին գյուղերում, նպատակ ունենալով թեթևացնել մարդկանց հոգսերը, բարձրացնել նրանց տրամադրությունը:

Գյուղական վայրերում համերգներով հանդես էին գալիս և՛ երաժշտական խմբեր և՛ առանձին դերասաններ: Հայտնի

<sup>1</sup> 1880 թ., հուլիսի 12:



է, օրինակ, որ 1890-ական թվականներին նշանավոր երգահան Քրիստափոր Կարա Մուրզան ոչ միայն համերգներ էր տալիս, այլև հավաքում էր ժողովրդական երգեր և վարպետորեն մշակում դրանք:

Փաստեր կան նաև այն մասին, որ Արցախի մի շարք գյուղերում բեմադրութիւններ են կազմակերպել մեր առանձին մեծութիւնները: Հովհաննես Աբելյանը իր խմբով շրջել է գյուղեր, իսկ 1915 թվականին Արուս Ոսկանյանը Շուշիում ներկայացումներ է տվել ամառային ակումբում և Մ. Խանդամիրյանի վերանորոգված թատրոնի շենքում (այն այրվել, հրդեհի բաժին էր դարձել 1905 թվականին՝ թուրքերի կողմից — Ս. Ա.):

Արուս Ոսկանյանի Շուշիում եղած օրերի մասին մեր գրքած հուշերում պատմվում է. «Արուսն ամեն անգամ խոշոր ծաղկեփնջեր ու ընծաներ էր ստանում: Ներկայացումից ազատ օրերը դուրս էինք գալիս զբոսնելու Շուշվա շրջակայքի գեղատեսիլ վայրերում: Արուսը լավ ձի էր հեծնում. մի կողքի վրա թեթև նստում էր նժույգին, մտրակում ու սլանում էր, կարծես թռչում էր օդի մեջ՝ միշտ բոլորից առաջ անցնելով:

Շուշվա ամեն մի քարը հերոսական պատմութիւն ունի: Մի անգամ Արուսիս հետ բարձրացել էինք մեզ մոտիկ անտառապատ քերձի գլուխը: Օդը լավ էր ու զով, թեթև գեղեցուկ մեղմիկ շոյում էր մեր դեմքերը... ներքևում գետն էր հոսում, կանայք լվացք էին անում, երեխաները լողանում, մի քանի մարդ ձուկ էին որսում... Գետեզերքում հողե հյուղակների մի կույտ կար՝ գյուղացիների բնակարանները, շուրջը խեղճութիւն, կեղտ ու աղքատութիւն, իսկ ժողովուրդը բարի, ազնիւ... Հայ գյուղացին գիտութիւն լույսից զուրկ, խարխափում է խավարում, ապրում է միջնադարյան կյանքով... Մինչև ե՞րբ պիտի տևի այս հետամնացութիւնը»<sup>1</sup>:

Հիրավի, Արցախը իր կուլտուր-լուսավորական օջախներով գրավել էր երևելի գործիչների ուշադրութիւնը: Հայ երգահանները, երգիչները, մեծանուն դերասանները և տեղացի սիրողները դեռ նախախորհրդային շրջանում ջանքեր շէին

խնայում հայկական Ղարաբաղը հայեցի պահելու համար: Այդ նպատակով էլ նրանք հաճախ էին լինում գավառում, շփվում աշխատավորների հետ, ձգտում իրենց գեղեցիկ խոսքով, արվեստով սպեղանի լինել ծով հոգսերին, վառ պահել հայ դպրոցն ու տպագրական արվեստը, թատրոնն ու գրականութիւնը, օժտելով մարդկանց ամենամարդկային հատկութիւններով:

Այո՛, Արցախը միշտ էլ եղել և մնում է հայկական. դրա առհավատշանքից մեկը կուլտուր-լուսավորական օջախների առկայութիւնն է դեռևս անցյալ դարի առաջին կեսից սկըսած:

#### ԱՐՅԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Լեռնային Ղարաբաղը (պատմական Արցախը) հարուստ է բանահյուսական գանձերով: Դարերի ընթացքում տեղի ժողովուրդն ստեղծել է իր ինքնատիպ բանավեստը՝ հրաշապատում հեքիաթներ, առակներ, առած-ասացվածքներ, հանելուկներ և այլն: Դրանց ինքնատիպութիւնը պայմանավորված է երկրամասի յուրահատուկ աշխարհագրական դիրքով, տեղի ժողովրդական մտածողութեամբ, հոգեբանութեամբ, սովորութիւններով ու զբաղմունքներով:

Երկրամասի բանահյուսութեան ուսումնասիրութեամբ արբեր ժամանակներում զբաղվել են առաջին հերթին տեղացիները՝ Բահաթրյան եղբայրները, Մակար Բարխուդարյանը, Կասաանդին Մելիք-Շահնազարյանը (Տմբլաշի Խաչան), Մարգարիտ Գրիգորյանը — Սպանդարյանը, Միքայել Առաքելյանը, Ռոբերտ Ղահրամանյանը և ուրիշներ: Դեռ 1896 թվականի հունվարին Շուշիում լույս տեսած Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսում» հրատարակ են հանվել Արցախի

<sup>1</sup> Ա. Պարբուսյան, «Իմ Արուսը», 1955 թ., էջ 186—187:



բանահյուսական արժեքները, որոնք լի են ժողովրդական իմաստություններով, թեւավոր խոսքերով, սրամիտ մտքերով, բնութագրական համեմատություններով: Ժողովված բանահյուսական մի շարք նյութեր ժամանակին տպագրվել են «Բյուրական», «Հանդես ամսօրյա» և ուրիշ պարբերականներում, ապա առանձին ժողովածուներում («Արցախ», «Վարանդա», «Հայ ժողովրդական հեքիաթներ» և այլն):

Բանահյուսական գանձերի հավաքումն ու ուսումնասիրումը շարունակվում է մեր օրերում: 1960 թվականին Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կենտրոնում՝ Ստեփանակերտում, ստեղծվում է ժողովրդական ստեղծագործությունների տուն, որի հիմնական խնդիրն է հավաքել և մշակել ժողովրդական կյանքի ընդերքում ապրող բանահյուսական գանձերը: Եվ ահա 1978 թ. «Հայաստան» հրատարակչությունում լույս տեսավ Միքայել Առաքելյանի և Ռոբերտ Ղահրամանյանի կազմած «Նմուշներ Լեոնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից» աշխատությունը, որը, բավարար գաղափար է տալիս երկրամասում թաքնված բանահյուսական գանձերի մասին:

Հիրավի, ժողովրդական բանահյուսությունը հարուստ գանձեր է բովանդակում, որոնցից միշտ էլ «չուր» են խմել մեր մեծերը, և՛ գրողները, և՛ երաժիշտները: Ահա թե ինչու միշտ էլ շահեկան է, երբ մարդիկ զբաղվում են ժողովրդի ընդերքում թաքնված բանահյուսական գանձերը հրատարակ հանելու գործով:

Մ. Առաքելյանի և Ռ. Ղահրամանյանի աշխատությունը մանրակրկիտ և ժրաջան աշխատանքի արդյունք է: Տարիներ շարունակ նրանք երկրամասի տարբեր բնակավայրերում հավաքել և մշակել են բանահյուսական այն մտքերը, որոնց հիմքում ընկած են բանականությունը, մարդկային բարեմասնությունները, բարին հաղթանակելու և շարուն պարսավելու ձգտումը: Ժողովրդական բանահյուսության այս նմուշները միաժամանակ պատմություն են, իրական պատում, որոնք վկայում են տեղացիների նիստուկացի, զբաղմունքի, սովորությունների, մարդկային հարաբերությունների, ձգտումների և ակնկալումների մասին:

Շատ ավանդույթներում, սովորություններում և նույնիսկ

հեքիաթներում անուղղակի և անուղղակի կերպով արտացոլվում են լեոնային երկրամասի աշխատավորությունների որոշ առանձնահատկությունները, կյանքի բնորոշ կողմերը, անցած ուղին: Բանահավաքները կարողացել են քննական մտածելով ունենալ յուրաքանչյուր բանահյուսական նմուշի նկատմամբ, «ստուգել» են նյութը համակողմանիորեն, ձգտել են հրապարակ հանել նաև «իրենցը», առավել հավաստին: Ահա թե ինչու հարկավոր է շեշտել, որ հեղինակները գիտականորեն են վերաբերվել, պահպանելով դրանց և՛ գաղափարական և՛ լեզվաոճական առանձնահատկությունները:

Հեքիաթները, առակներն ու զրույցները, ավանդույթները, հանելուկները, առած-ասացվածքները, ժողովրդական խաղիկները կարծես մեկը մյուսի շարունակությունը լինի, որոնց մեջ իշխում է մարդասիրությունը, հայրենասիրությունը, ժողովուրդների բարեկամությունը, արժանապատվությունը... առաքինություններ, որոնցով օժտված են Արցախի մեծ ու փոքրը հայ բնակիչները:

Հեքիաթներում և՛ առակներում, զրույցներում և՛ առածներում մարդկայինի գովքն է, լուսավոր ափեր դուրս գալու անհողողող ձգտումը: Առանձին հեքիաթներում բացահայտվում են մարդու հարուստ ներաշխարհը, մաքուր, անբիծ սեքը, կնոջ տղամարդուն հավասար հերոս լինելու ընդունակությունը: Այդ նմուշներից են, օրինակ «Առյուծ սպանող տղան», «Երկու ախպեր», «Ըշխադածն անուշ ա անում» և այլ հեքիաթները: Սրանք աչքի են ընկնում կառուցվածքով և ընթերցողին հետաքրքրում են ոչ միայն սկզբնամասով, այլև ամբողջ կառուցվածքով՝ պահպանելով արցախցու պատմելաձևի յուրահատկությունները, լեզվական կոլորիտը:

Տարբեր բովանդակություն ունեն ավանդույթները: Եթե մի մասում փաստորեն տրվում է աղջկա արժանապատվության դրվատանքը (ասենք, օրինակ, «Անահիտին աղբյուր», «Կլերիկ կրդ» և այլն), մի այլ մասում ուսա մարդու բարի լինելը, վեհանձնությունը (օրինակ, «Ռուսին աղպյուր» և այլն), ապա մի քանի ավանդույթներում հետաքրքիր ձևով են պատմվում առանձին գյուղերի («Պառավաթումբ», «Փիքջամալ» և այլն), տեղամասերի («Նավաղխան», «Զուրուխանյա»),



լեռներին, լճակներին, աղբյուրներին ծագման, անվանման մասին:

Չենք կարող շնչել, որ այս ավանդույթների մեջ պատմական ճշմարտություն կա, և առավելություն է, որ ընթերցողը համոզվում է նյութի հավաստի լինելու մեջ: Սա ոչ միայն ավանդույթի առավելությունն է, այլև նյութը պատշաճ ձևով ներկայացնելու մատուցողների շնորհքը:

Երկրամասում տարածում գտած առականերից, ասացվածքներից յուրաքանչյուրը մի պատմություն է, գեղարվեստական խոսքի ուժով պարուրված մի պատում Արցախի հայերի մարդկային առաքինությունների, ուժի ու զորության, ճարտարության, դժվար պայմաններում կողմնորոշվելու հմտության մասին:

Առականերն ու ասացվածքները աչքի են ընկնում սրամբտություններ և միտքը լակոնիկ ոճով արտահայտելու միտումով:

Երկրամասի ժողովրդական խաղիկները ուշագրավ են ոչ միայն գաղափարով, այլև երաժշտականությամբ, արվեստի, խոսքի հմայիչ արտահայտման տեսանկյունից: Բոլորի մեջ էլ կենտրոնական գործող անձը մարդն է՝ հարուստ ներաշխարհով, հոգեբանությամբ, նիստուկացով:

Ժողովրդական խաղիկների մեջ առավել ուշագրավ են դրսևորվում երկրամասի կոլորիտը, աշխարհագրական վայրերը («Ըսկյարան», «Թարթառ», «Քիրս», «Շուշի» և այլն), աշխատանքային զբաղմունքները (գութան, անասուն, այգի, բոստան և այլն), հագուստը, ուտելիքները, տնային օգտագործման պարագաները, մարդկանց անունները և այլն:

Փաստորեն, ժողովրդական բանահյուսության այս նմուշները ունեն ճանաչողական բնույթ: Դրանք պատկերացում են տալիս Արցախի և ներկա, և անցյալ իրավիճակի, մարդկային հարաբերությունների, տեղի բնակիչների ազգային կազմի, ապրելավայրերի, տարածքի մասին: Սա մի ավելորդ անգամ վկայում է, որ Արցախի բնակիչները հենց էն գլխից հայեր են և շարունակում են ապրել իրենց պայանական հողի վրա:

Չի կարելի անտեսել բանասեր-բանահավաք Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի արժեքավոր ներդրումը հայրենի

եղերքի բանահյուսական գանձերը հավաքելու և հրատարակելու գործում: Նրան ծանոթ ենք դեռևս 1966 թվականից, երբ «Հայ ժողովրդական հեքիաթների» հրատարակության 5-րդ հատորում ամփոփվեցին Արցախի 100-ից ավելի հեքիաթներ՝ իրենց մի քանի տեսակներով: Ահա այդ առաջին ծանոթությունից էլ գզացվում էր, որ հանձին Մ. Գրիգորյան-Սպանդարյանի մենք գործ ունենք հմուտ մի բանահավաքի հետ, որը քաջատեղյակ է ոչ միայն իր հայրենիքի, այլև հայ ժողովրդի բանահյուսությանն ընդհանրապես:

Ով է Մ. Գրիգորյան-Սպանդարյանը: Ծնվել է Շուշի քաղաքում, սովորել է տեղի Մարիամ-Ղուկասյան օրիորդաց դպրոցում, մանկուց մեծ հետաքրքրություն է հանդես բերել դեպի իր ժողովրդի բառն ու բանը, դեպի բանասիրությունն ու բանահյուսությունը: Ահա այդ գիտելիքների պաշարը, մեծ հետաքրքրությունը իր սիրած մասնագիտության նկատմամբ՝ մղել են նրան ձեռնարկելու մի շնորհակալ գործ՝ ի մի հավաքելու Լեռնային Ղարաբաղի աշխատավորության կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող բանավոր խոսքը, գրառելու դրանք շատ զգուշորեն՝ պահպանելով բարբառն ու խոսվածքի առանձնահատկությունները, որոնք իմաստավորում են տեղացիների կենցաղը, ապրելակերպը, աշխարհագրական հասկացողությունները, սովորույթներն ու ավանդույթները:

Ամենից առաջ նշենք ջանգյուլում երգերի իմաստը, որոնցից 1850-ը հավաքել և մշակել է Մ. Գրիգորյան-Սպանդարյանը: Դրանք մի շարք կողմերով տարբերվում են մինչև այժմ հրապարակի վրա եղածներից. ամենից առաջ ջանգյուլումների (խաղերգերի) հոգեբանական և փիլիսոփայական կողմը, կենսասիրությունն ու լավատեսությունը: Արցախցիները ջանգյուլումների մեջ արտահայտել են հավատը ապագայի նկատմամբ:

Արցախցիները դարերի խորքից իրենց հետ բերում են սուրբ ավանդույթներ, սովորություններ, որոնք երևան են գալիս կյանքի բազմազան ոլորտներում: Դրանք, ինչ խոսք, ժողովրդի կենցաղի մեջ արդեն մարմնավորված են անքակտելի կերպով և իրենց մեջ բովանդակում են իմաստնացած կյանքի մասունքներ, որոնք առհավետ կենսունակ են: Եվ այստեղ էլ հիշենք մեծ Թումանյանի իմաստուն խոսքը. «Ա-



մենամեծ քննադատը ժողովուրդն է, նրա գրածը չես կարող ջնջել»:

Իրոք, ժողովրդական ստեղծագործությունները, մասնավորապես բարի սովորություններն ու ավանդույթները բյուրեղացած են, հղկված և հիանալի կերպով քննություն են բռնում ժամանակի հետ:

Արցախի երգիծական մտքի ստեղծողներն ու երկրպագուները շատ են: Դրանց մեջ առանձնանում է հայտնի կատակաբան Պլլը-Պուղին: Նա կարծես լուռ վկան է մի ամբողջ ժողովրդի երգիծական շնորհի, որը գրսևորվել է բազմաթիվ զվարթ գրույցներում, ասույթներում, սրամիտ ու հակիրճ պատմվածքներում:

Պլլը-Պուղու գրույց-ասացվածքները այսօր էլ թևածոմ են Արցախում, փայլում ոչ միայն հումորի և երգիծանքի անսպառ երանգներով, այլև մտքի, զաղափարի, նյութի գոլտրիկությունը:

Մ. Գրիգորյան-Սպանդարյանը հուժկու ջանքեր է թափել ծանոթանալու Արցախի ժողովրդական խաղիկներին, հեքիաթներին, հանելուկներին, երգիծական գրույցներին, զվարճախոսություններին, որոնց հավաքումն ու իմաստավորումը կապված է շատ ու շատ դժվարությունների հետ: Նա կարողացել է թափանցել յուրաքանչյուր բանահյուսական նյութի մեջ, վերծանել նրա էությունը, իմաստը ներկայացրել պարզ ու մատչելի, տվել յուրաքանչյուրի գեղագիտական արժանիքը:

Այո՛, արցախցիների մտքի պոռթկումը ակնհայտ է նաև բանահյուսական նյութերի մեջ: Դրանք արտահայտում են սեղացիների ու լինելը, քնդունակությունները, բազմաշնորհությունը, մտքի ճկունությունը, տրամաբանական կուռ կառուցվածքը:

Ոչ լրիվ տվյալներով այժմ կեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում հաշվում են շուրջ 1800 պատմա-ճարտարապետական հուշարձաններ, որոնց մեծ բաժինը ընկնում է Մարտակերտի (նախկինում՝ Ջրաբերդ) շրջանին՝ 520:

Պատմա-ճարտարապետական այդ հուշարձանները ոչ միայն մեծաքանակ են, այլև դարերի պատմություն ունեն՝ «դիմանալով մի կողմից ժամանակի ազդեցությանը, մյուս կողմից՝ բազմաթիվ նվաճողների ավերածություններին... Այդ հուշարձանները մեր նախնիների կերտած պատմության քարակերտ տարեգրությունն են, քարե մատյանները, որոնցում արտացոլված են իր ազատությունն ու անկախությունը պաշտպանած ժողովրդի հայրենասիրական ոգին, հարատևելու անսասան կամքը»:

Շահեն Մկրտչյանը, տարիներ առաջ, աշխատելով կեռնային Ղարաբաղի մարզային պատմա-երկրագիտական թանգարանի տնօրեն, մի շարք թանգարաններ ստեղծելու հետ միասին, հնարավորություն է ունեցել անձամբ տեսնելու և մոտիկից ուսումնասիրելու հայրենի երկրամասի հուշարձանները, հավաքելու և ամբողջացնելու դրանց մասին եղած սակավաթիվ տեղեկությունները: Այդ ժամանակաշրջանում հավաքած աղբյուրագիտական, վիճաբանական և այլ կարգի նյութերի հիման վրա հյուսված նրա «կեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները» աշխատությունում, որն ունեցել է հայերեն և ռուսերեն մի քանի հրատարակություններ, հանգամանորեն պատմվում է մարզի տարածքում գտնվող հուշարձանների մասին, ցույց տրվում դրանց արժանիքները, յուրաքանչյուրի հետ կապված այն առանձնահատկություններն ու էական կողմերը, որ միաժամանակ արտացոլում է հայ ժողովրդի մի հատվածի՝ Արցախի պատմության հերոսական գրվագները: Աշխատության էջերից ընթերցողը տեղեկանում է Արցախի ոչ միայն նախնադարյան ժամանակաշրջանի, այլև վաղ միջնադարի, 9—13-րդ և հետագա դարերի հնագիտական, պատմական և ճարտարապետական նշանավոր համակառույցների, վանքերի, եկեղեցիների, բնակավայրերի, ամրոցների, ինժեներական և կոմունալ



մենամեծ քննադատը ժողովուրդն է, նրա գրածը չես կարող ջնջել»:

Իրոք, ժողովրդական ստեղծագործությունները, մասնավորապես բարի սովորություններն ու ավանդույթները բյուրեղացած են, հղիված և հիանալի կերպով քննություն են բռնում ժամանակի հետ:

Արցախի երգիծական մտքի ստեղծողներն ու երկրպագուները շատ են: Դրանց մեջ առանձնանում է հայտնի կատակաբան Պըլը-Պուղին: Նա կարծես լուռ վկան է մի ամբողջ ժողովրդի երգիծական շնորհի, որը դրսևորվել է բազմաթիվ զվարթ զրույցներում, ասույթներում, սրամիտ ու հակիրճ պատմվածքներում:

Պըլը-Պուղու զրույց-ասացվածքները այսօր էլ թևածում են Արցախում, փայլում ոչ միայն հումորի և երգիծանքի անսպառ երանգներով, այլև մտքի, դադափարի, նյութի գողտրիկությամբ:

Մ. Գրիգորյան-Սպանդարյանը հուժկու ջանքեր է թափել ծանոթանալու Արցախի ժողովրդական խաղիկներին, հեքիաթներին, հանելուկներին, երգիծական զրույցներին, զվարճախոսություններին, որոնց հավաքումն ու իմաստավորումը կապված է շատ ու շատ դժվարությունների հետ: Նա կարողացել է թափանցել յուրաքանչյուր բանահյուսական նյութի մեջ, վերծանել նրա էությունը, իմաստը ներկայացրել պարզ ու մատչելի, տվել յուրաքանչյուրի գեղագիտական արժանիքը:

Այժմ, արցախցիների մտքի պոռթկումը ակնհայտ է նաև բանահյուսական նյութերի մեջ: Դրանք արտահայտում են տեղացիների ով լինելը, բնդունակությունները, բազմաշնորհությունը, մտքի ճկունությունը, տրամաբանական կուռ կառուցվածքը:

Ոչ լրիվ տվյալներով այժմ կեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում հաշվում են շուրջ 1800 պատմա-ճարտարապետական հուշարձաններ, որոնց մեծ բաժինը ընկնում է Մարտակերտի (նախկինում՝ Զրաբերդ) շրջանին՝ 520:

Պատմա-ճարտարապետական այդ հուշարձանները ոչ միայն մեծաքանակ են, այլև դարերի պատմություն ունեն՝ «դիմանալով մի կողմից ժամանակի ազդեցությանը, մյուս կողմից՝ բազմաթիվ նվաճողների ավերածություններին... Այդ հուշարձանները մեր նախնիների կերտած պատմության քարակերտ տարեգրությունն են, քարե մատյանները, որոնցում արտացոլված են իր ազատությունն ու անկախությունը պաշտպանած ժողովրդի հայրենասիրական ոգին, հարատևելու անսասան կամքը»:

Շահեն Մկրտչյանը, տարիներ առաջ, աշխատելով կեռնային Ղարաբաղի մարզային պատմա-երկրագիտական թանգարանի տնօրեն, մի շարք թանգարաններ ստեղծելու հետ միասին, հնարավորություն է ունեցել անձամբ տեսնելու և մոտիկից ուսումնասիրելու հայրենի երկրամասի հուշարձանները, հավաքելու և ամբողջացնելու դրանց մասին եղած սակավաթիվ տեղեկությունները: Այդ ժամանակաշրջանում հավաքած աղբյուրագիտական, վիճագրական և այլ կարգի նյութերի հիման վրա հյուսված նրա «կեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները» աշխատությունում, որն ունեցել է հայերեն և ռուսերեն մի քանի հրատարակություններ, հանգամանորեն պատմվում է մարզի տարածքում գտնվող հուշարձանների մասին, ցույց տրվում դրանց արժանիքները, յուրաքանչյուրի հետ կապված այն առանձնահատկություններն ու էական կողմերը, որ միաժամանակ արտացոլում է հայ ժողովրդի մի հատվածի՝ Արցախի պատմության հերոսական զրվազները: Աշխատության էջերից ընթերցողը տեղեկանում է Արցախի ոչ միայն նախնադարյան ժամանակաշրջանի, այլև վաղ միջնադարի, 9—13-րդ և հետագա դարերի հնագիտական, պատմական և ճարտարապետական նշանավոր համակառույցների, վանքերի, եկեղեցիների, բնակավայրերի, ամրոցների, ինժեներական և կոմունալ



բնույթի հուշարձանների մասին, ըստ որում խոսքն ասվում է խորունկ հոգեհարազատությամբ և գործի քաջատեղյակությամբ:

Ե. Մկրտչյանի աշխատության մեջ պատշաճ տեղ է հատկացված հայ ճարտարապետության հանրագիտարան Գանձասարի, Դադի կամ Խուժավանքի, Գոշավանքի, Ամարասի, Ղաղանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու և շատ այլ հուշակալ պատմական կառուցումներին, որոնք ժամանակին վիթխարի դեր են խաղացել մեր ժողովրդի հասարակական կյանքում:

Աշխատության հեղինակը ճիշտ է վարվում, որ մարդի պատմական հուշարձանները ներկայացնում է ըստ շրջանների, գիտական շրջանառության մեջ դնելով տասնյակ նոր հնավայրեր, մեծ հետաքրքրություն ներկայացնող նյութեր, որ հայտնաբերվել են կատարված պեղումների, հողաշինարարական աշխատանքների ծավալման շնորհիվ:

Ե. Մկրտչյանի կողմից ներկայացվող պատմա-ճարտարապետական հուշարձանները պատկառելի քանակ են, նկատի ունենալով նաև, որ հայկական մարդի տարածքը մեծ չէ, ընդամենը 4,4 հազար քառակուսի մետր: Այդ կոթողները, որոնք իրենց ինքնատեղծ արվեստով անջնջելի կնիքի նրման հավերժ դրված են լեռնոտ երկրամասի դեմքին և զգալի չափով հարստացնում են ազգային մշակույթը, միաժամանակ իրեղեն ապացույցներ են հայ ժողովրդի շինարարական հանճարի, նրա բարձր կուլտուրայի:

Նյութի փաստացի առատությունը և տրված հնարավորությունը հեղինակին հարկադրել են հուշարձանների մասին հակիրճ խոսել, սակայն սեղմ տեքստի մեջ դնել խոր միտք և եզրահանգումներ, որոնք բխում են հրապարակ բերվող թվերից ու փաստերից:

Գիրքը զուտ հաղորդումներ չէ բովանդակում, այլ հեղինակի գիտական զննումների արդասիք է, որ երբեմն ուղեկցվում է տվյալ շրջանի աշխարհագրական նկարագրությամբ: Ըստ որում այդ նկարագրությունները բովանդակում են պատմական հաղվազեպ փաստեր: Շրջանառության մեջ են առնվում տարածքի կամ կոնկրետ հուշարձանի հետ անմիջապես առնչվող տվյալներ գետերի, ձորակների, լեռների մասին,

բոլոր գեպերում բնութագրելով պատմա-ճարտարապետական հուշարձանները, Ե. Մկրտչյանը ճշմարտացի տվյալներ է բերում պատմական հրաշալիքների գտնվելու տեղի, բնատեղծման ժամանակաշրջանի, դրանց շուրջը եղած գրականության, առանձին հետազոտողների վերաբերմունքի և կարծիքների մասին: Բավարարվենք մեկ օրինակով. խոսելով Գանձասարի մասին, հեղինակը գրում է. «նաշենագետի աջ ափին, բարձրաբերձ մի տեղում բազմել է հինավուրց Գանձասարը՝ Արցախ—Ղարաբաղ աշխարհի հրաշալիքներից մեկը: Այս վանքի եկեղեցու շինությունն սկսվել է 1216 թվականին և ավարտվել է 1238 թվականին: Նրա արևմտյան կողմից կառուցված դավթի հիմնադրման տարեթիվն անհայտ է, սակայն այստեղ գտնվող արձանագրության համաձայն շինությունն ավարտվել է 1266 թվականին: Ժամանակակից պատմիչները և հատկապես Կիրակոս Գանձակեղին հիացմունքով են պատմում վանքի շինարարության և նրա օժման արարողության հանդամանքները»:

Շահեն Մկրտչյանը սիրով ու երախտազիտությամբ է խոսում ոչ միայն հայկական հուշարձանների, այլև այն բոլորի մասին, որ կապված են Արցախի հետ:

Հիրավի, եթե Ե. Մկրտչյանը մեծ նախասիրությամբ և սիրով համակված շինեիր իր հայրենի երկրամասի նկատմամբ, ապա դժվար թե այդպիսի ջերմությամբ, գիտական բարեխղճությամբ և հիացմունքով գրեր անցյալի լուռ վիաների՝ հուշարձանների մասին:

Հետազոտողը հեշտ ճանապարհով չի գնացել, նա պրպրտումներ է կատարել, տվել է յուրաքանչյուր հուշարձան-մասունքի կենսագրությունը, լուսանկարը, առանձին վանքերի տեսքը՝ մի քանի կողմերով և ընդհանուր առմամբ: Հմտությամբ է կազմված լեռնային Ղարաբաղի վանքային համալիրների քարտեզը, որին հետևում է օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը:

Ե. Մկրտչյանի ընձեռած գործը արժանի է դրվատանքի, բարեխղճությամբ ներկայացնելով հայրենի երկրամասի պատմական կոթողները, որոնք լինելով դարերի վիան, մեծ խորհուրդ են ընդգրկում՝ ամենից առաջ իբրև վկայություններ աշխատավոր ժողովրդի անսահման ջանասիրության և խոր



մտքի, մի ժողովրդի պատմական անցյալի հիանալի մասունքներ, որոնք շատ բանի մասին են խոսում:

Շ. Մկրտչյանը սովոր չէ չոր ու ցամաք շարադրության՝ առանց կարևորագույն փաստերի ու բնութագրումների, այն գրված է հայրենասիրական պաթոսով, կենդանի, սահուն լեզվով, Արցախի պատմության, հատկապես մշակույթի հուշարձանների նկատմամբ մեծ հետաքրքրությամբ և խոր իմացությամբ:

Հեղինակի սույն հետազոտությունը թելադրված է մեր ժամանակի հրամայական պահանջներով, երբ հետաքրքրությունը հուշարձանների նկատմամբ անհամեմատ բարձրացել է, երբ անցյալի արժեքների պահպանությունը ԽՍՀՄ սահմանադրությամբ մտնում է յուրաքանչյուրիս պարտականություն մեջ: Ավելին, մեր հարևան հանրապետության որոշ սաղրիչ «գիտնականներ» փորձում են յուրացնել Արցախի հայ ժողովրդի դարերի ընթացքում ստեղծված այդ հուշարձան կոթողները, որոնք կարող են պատիվ բերել ամեն մի մեծ ժողովրդի: Արցախցիները այդ հուշարձաններով կրկին վկայում են իրենց հայրենի եզերքի հայկականությունը և ոչ մի հարևան թող հույս չունենա, թե կարող է սրբապղծել հայ ժողովրդի ստեղծածը:

## ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՐՅԱԽՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ՀՈՎՍԵՓ ԱՐՅԱԽԵՅԻ

Արցախը Հայաստանի 15 մեծ նահանգներից մեկն էր, ուր անարգել կերպով դարգանում էր հայ դպրութունն ու մշակույթը, գիտությունն ու արվեստը, հրապարակ բերելով անվանի շատ գործիչներ, որոնց անունը երբեք չի խամրի մեր պատմության առավել ուշագրավ էջերում: Նրանցից մեկն էր Հովսեփ Արցախեցին, որի կյանքի և գործունեության մասին շատ սուղ տեղեկություններ կան: Լեոն շեշտում է, որ նա ծնվել է Խաչենի (այժմվա Արցախի Ասկերանի շրջանի) Ղշլաղ գյուղում: Ղշլաղը պատմական Իշխանաշենն է, որն այժմ անվանակոչել են Մաղկաշատ: Ի դեպ, այս գյուղում է ծնվել Սարգիս Ղշլաղեցին, որի անունը հիշատակվում է 1554 թ. արձանագրության մեջ, որի կատարած դերը նույնպես անուրանալի է: Չի կարելի չհիշատակել Նիկոլ Դումանին (Նիկոլ Տեր-Հովհաննիսյանին), մի անվանի ֆիզալիստի, որի գործը շատ բարձր է գնահատել գորավար Անդրանիկը:

Հովսեփ Արցախեցին կանոնավոր կրթություն է ստացել և շատ կարճ ժամանակում աչքի ընկել իր իմաստասիրությամբ և գիտելիքների մեջ խորանալու պատրաստականությամբ:

Որոշ տվյալներ կան այն մասին, որ աշակերտ ժամանակ նա տարվել էր փիլիսոփայական, գրական-գեղարվեստական, բնագիտական գրքերի ընթերցանությամբ: Նրա սրտին շատ մոտ էին իր հայրենի եզերքի պատմության առավել հերոսա-



կան դրվագները, որոնք շատ լավ են բնութագրում Արցախեցու մարդկային հաղվագյուտ հատկությունները. իմաստասիրությունը, հերոսականությունը, պատվախնդրությունը, ներաշխարհի հարստությունը, մարդասիրությունը և այլն:

Նրա այդ հատկությունների մասին ընդգծել են մեզ անվանի գրողները, գիտության գործիչները: Մեսրոպ Թադևոսյանը պատմել է, շեշտում է կեռն, որ Հովսեփ Արցախեցին իր ժամանակին հայտնի էր իբրև «իմաստասեր», «գիտնական», «վարժապետ» և այլ տիտղոսներով: Իր շրջապատի մարդկանց մեջ նա առանձնանում էր մանկավարժական գիտելիքներով և մեթոդներով, խորհուրդներով և իր սաների նկատմամբ սրտացավ վերաբերմունքով:

Ահա թե ինչու Արցախի բնակիչները, մասնավորապես Շուշիի հարուստները Հովսեփ Արցախեցուն Թիֆլիսի ներսիսյան դպրոցից հրավիրում են լեռնային երկրամաս ուսուցանելու իրենց երեխաներին Գանձասարում, ս. Հակոբի և այլ վանքերի դպրոցներում: Հիմնովին կրթություն ստանալու համար շատերը իրենց երեխաներին թույլատրում են ապրելու վանքապատկան դպրոցներում:

Հովսեփ Արցախեցին մեծ սիրով էր ուսուցանում մայրենի լեզուն, աստվածաբանությունը, տրամաբանությունը, ճարտասանությունը և գրականությունը, օգտագործելով ուսման իր ձևերն ու մեթոդները:

Դպրոցներում դասավանդելուն ղուզընթաց Հովսեփ Արցախեցին եղել է Շուշիի թեմի վարդապետ, որը զբաղվել է փիլիսոփայությունով: Նա հետևում էր ֆրանսիական փիլիսոփաներին, հրապարակ էր հանում նրանց ազդեցության տակ գրված աշխատություններ, որոնք լույս են տեսնում 1840-ական թվականներին: Դրանց մեջ առանձնանում է 1840 թ. Շուշիում տպագրված «Առաջին մասն փիլիսոփայության, որ ասի տրամաբանություն...» աշխատությունը, որտեղ մեծահամբավ հեղինակը փորձել է ներկայացնել տրամաբանության ըմբռնումները հայ իրականության մեջ: Աստվածաբան-փիլիսոփայի այս էսքիզները գրի են առնվում Գանձասարում, երբ նա հիմնականում զբաղված էր ուսուցողական աշխատանքներով:

Հովսեփ Արցախեցու փիլիսոփայական այդ հետազոտությունը հրատարակում է Բաղդասար մեսրոպուլիտը, որն այդ ժամանակ Արցախի սրբազան առաջնորդն էր:

Հովսեփ Արցախեցու մեզ հասած աշխատությունների մեջ առանձնանում է «Համառոտ բառգիրք ի գրաբան է աշխարհաբան, ի պետս համբակաց...»-ը, որը լույս տեսավ 1830 թվականին, Շուշիում, ամենայն հայտք կաթողիկոս սրբազան սուրբ Եփրեմի կարգադրությամբ:

Երևելի հեղինակը ծավալուն գրքի մեջ այբբենական կարգով տվել է գրաբար բառերի աշխարհաբար բացատրությունները: Առանձին բառերի բովանդակությունը ներկայացվում է մի քանի առումով: Տրված է բառերի հոլովման ձևերը և ձևարանական մյուս հատկությունները:

Բառգիրքն աչքի է ընկնում մատչելիությամբ: Սա դրական երևույթ էր և, անկասկած, ժամանակին որոշակի դեր է խաղացել մայրենի լեզվի ուսումնասիրման բնազավառում:

Փաստորեն Խ. Աբովյանի, Հ. Ալամդարյանի բառարանագիրտական աշխատանքների հետ միասին այն լուրջ ներդրում է հայտք լեզվի գործնական ուսուցման գործում: Հեղինակը նպատակ է ունեցել Շուշիի հայկական միջավայրում ուսանողությանը և, ընդհանրապես, բնակչությանը նպաստել գրական հայերենի ուսուցմանը, դրանով իսկ դպրոցներում անցնել գրաբարը, մի բան, որին ժամանակին (1830—40-ական թվականներին) հետապնդում էին եկվոր բողոքականները:

Չի կարելի ուրանալ, որ Հովսեփ Արցախեցու «Բառգիրքը» երկար տարիներ Արցախի դպրոցներում ծառայել է իբրև ուսումնական ձեռնարկ մայրենի համար:

Այս, Հովսեփ Արցախեցին մեծ հեղինակություն էր վայելում և՛ իբրև իմաստասեր-գիտնական, և՛ իբրև մանկավարժ-ուսուցիչ: Նա երկար ապրեց և մեռավ խոր ծերության մեջ: Բաղդասար մեսրոպուլիտի հրամանով մեծ շուքով թաղվեց Գանձասարի բակում, ուր այսօր էլ պահպանվում է նրա գերեզմանը:

Երախտավոր սերունդները ամեն անգամ աննման Գանձասարը տեսնելու ցանկությամբ հաճախելով, մի պահ կանգ են առնում Հովսեփ Արցախեցու տապանաքարի մոտ, գլուխ



խոնարհում նրա իմաստուն գործի և փառքի առջև, փառք, որ ձեռք է բերվել իմաստասիրության, մեծ աշխատասիրության և ժողովրդին նվիրվելու շնորհիվ:

### ԲԱՂՂԱՍԱՐ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԸ՝ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Արցախը որպես հայ մշակույթի օջախ ամենից առաջ աչքի է ընկնում հրատարակչական-տպագրական գործունեությամբ: Հենց այն փաստը, որ այստեղ 1827 թվականին արդեն հիմնվել էր տպարան և հաջորդ տարում լույս էր տեսել առաջին գիրքը («Պատմություն սուրբ գրոցը»), այն էլ հայերեն, վկայում է, որ լեոնային երկրամասում մտահոգված էին տպագրական խոսքի զարգացմամբ, դպրոցական գործի ծավալմամբ, բնակչության աշխարհաճանաչողության մակարդակի բարձրացմամբ:

Ճիշտ է, մինչև 1837 թվականը Շուշիի տպարանում լույս են տեսնում 21 անուն գիրք, այդ թվում ներսիսյան Պողոս Ղարադաղցու «Համառոտություն հայկական քերականության», Միրբայել Չամչյանի «Քերականություն հայկազեան լեզվի», և այլն, բայց այդ թվականից սկսած, երբ հրատարակչական գործը իր վրա է ստանձնում Ղարաբաղի սրբազան մետրոպոլիտ Բաղդասար Հասան Ջալալյանը, սկսվում է տպագրվել այնպիսի գրքեր, որոնք գերազանցապես հայագիտական էին, լուսաբանում էին կա՛մ հայոց լեզվի քերականության հատկությունները, կա՛մ հայոց պատմության առավել ուշագրավ էջերը, կա՛մ էլ առանձին գրական-գեղարվեստական գործեր:

Բաղդասար Հասան Ջալալյանի նպատակներից մեկն այն էր, որպեսզի Շուշիում հրատարակվող գրքերը որոշ չափով նպաստեն թե՛ արևելահայ լեզվի հղկմանն ու մշակմանը և թե՛ գրական լեզուն ավելի մատչելի ու հասկանալի դարձնելուն:

Բ. Հասան Ջալալյանը ձեռք է բերում տպագրական նոր սարքավորումներ և Շուշի քաղաքի հայկական մասում գործի է գցում մի այնպիսի տպարան, որ կարող էր մրցել խոշոր քաղաքների տպարանների հետ՝ ամենից առաջ բարձր որակի արտագրանքով՝ տպագրական թղթից մինչև մատչելի տառատեսակները, ձևավորումը, մամուլների կազմումը և այլն: Եվ պատահական չէ, որ տպարանը կոչվում է «Վիճակավոր Առաջնորդին Ղարաբաղու բարձր Սրբազան միտրոպոլիտին Բաղդասարայ», իսկ տպագրված գրքերը ունենում են այս դրոշմը. «Հրամանով տեառն Բաղդասարայ իշխանազնի Ջալալյան սրբազան արքեպիսկոպոսի և միտրոպոլիտի հայոց ամենայն Աղուանից»:

Շատ գրքերի ծախսերը հոգում է ինքը՝ Բաղդասար Հասան Ջալալյանը: Նրա օրոք Շուշիում է լույս տեսնում (1839 թվականին) Հասան-Ջալալյան Եսայիի «Պատմություն կամ հիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց աշխարհին Աղուանից» ուսումնասիրությունը: Գրքի վրա գրված է. «Հրամայեցաք մուծանել ի տիպ սեփհական ծախսոք մերովք վիճակավոր Առաջնորդ Ղարաբաղու և այլոց՝ Արքեպիսկոպոս և Ասպետ միտրոպոլիտ Բաղդասար Հասան Ջալալյանց: Ի 7 հունիսի 1839 ամի»: Սա եղակի դեպք չէ, Բ. Հասան Ջալալյանը շատերին է օգնել լույս աշխարհ բերելու իրենց գիտական արտադրանքը:

Եսայիի գրած առաջաբանում նշվում է, որ ինքը մտադիր է տալ ներկա օրերի պատմությունը, շարադրել հայ ժողովրդի անցյալում կրած տառապանքները, կանգ առնելով կոնկրետ փաստերի վրա: Հեղինակը իր պատմությունն սկսում է պարսիկների տիրապետության ժամանակաշրջանից, ներկայացնում հայոց երկրի ներքին երկպառակությունները, պատերազմական գործողությունները, թշնամիների արշավանքները, նկարագրում լեզգիների բարբարոսությունները և այլն:

Աշխատությունը գնահատելի է ոչ միայն այն առումով, որ բավականին ծավալուն կերպով տալիս է ժամանակի դեպքերը, ունենալով վավերագրի արժեք, այլև նրա համար, որ Եսայի Հասան-Ջալալյանը բարեկամական տոնով է խոսում մյուս ժողովուրդների մասին, շեշտում է հայերի և վրացի-



ների՝ հեռավոր դարերից եկող եղբայրությունն ու համագործակցությունը: Մեծ էր Եսայի Հասան-Ջալալյանի համակրանքը Վրաստանի նկատմամբ, և պատահական չէր նրա քրննագատությունն այն խաների (Գյանջալի, Կախեթի, Ղաղախի և այլն) հասցեին, որոնք ձգտում էին կործանել Վախթանգի տիրապետությունը:

Փաստերով առատ այդ գիրքը օգնում է հայոց պատմությունն ուսումնասիրողներին՝ որոշակի գաղափար կազմելու 17—18-րդ դարերի իրադարձությունների, առանձին նշանավոր մարդկանց գործունեության, հայերի և հարեան ժողովուրդների հարաբերությունների և նրանց համագործակցության մասին:

Չի կարելի չնշել Բ. Հասան-Ջալալյանի հոգատարությունը Միքայել Սալլանթյանի «Առաջին մասն փոքր քերականության դրաբար լեզվի հայոց...» վերնադրով աշխատությունը հրատարակելու գործում: Նախ ասենք, որ այն առաջին անգամ լույս է տեսնում Մոսկվայում, 1827 թվականին, ապա՝ Շուշիում 1840 թվականին՝ միտրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանի հրամանով ու ծախքերով, ապա՝ շեշտենք, որ այն խիստ օգտակար դեր խաղաց Շուշիի հայոց դպրոցների կյանքում՝ մայրենի լեզվի քերականական սահմանումները և վարժությունները սովորելու գործում:

Գրքի հեղինակը առաջին մասում բացատրում է քերականության կոչումը, ապա կանգ առնում նրա առանձին բաժինների վրա, պարզաբանում բառերի էությունը, մասնիկները, պարզ և բաղադրյալ բառերը, ձայնավորներն ու բաղաձայնները: Օգտակար մտքեր են հաղորդվում մասնավորապես գերանունների և բայերի մասին, «Պատկեր հոլովադասություն» բաժնում արվում են բազմաթիվ օրինակներ բառերի եզակի և հոգնակի ձևերի մասին:

Գիրքը հարուստ է խոսքի մասերին նվիրված քարտեզներով, ունի հավելված առանձին քերականական հարցերի վերաբերյալ: Կան բառերի վերլուծումներ՝ ըստ խոսքի մասերի և կազմության:

Բաղդասար միտրոպոլիտը ձգտում էր հրատարակել նաև տեղացի հեղինակների այն աշխատությունները, որոնք մեծ մասամբ պետքական են դպրոցականների համար: Առաջին

տեղացի հեղինակներից էր հայոց լեզվի ավագ սարկավագ Գրիգոր Տեր-Ավագյանը: Օժտված լինելով գիտական կարողությամբ և գրական աշխատանք կատարելու շնորհքով, նա հրապարակ է հանում մի քանի ուսումնասիրություններ, որոնք հայ աշակերտների համար ծառայում են իբրև դասագիրք կամ ձեռնարկ: Նա այլ լեզուներով լույս տեսած դասագրքերը հարմարեցնում էր հայ դպրոցին: Ավելին, առանձին բարդություն ներկայացնող քերականական գրքերը մատչելի էր դարձնում ստորին դասարանների կամ հենց նոր դպրոցական քերականությունը սովորող աշակերտների համար: Այդպես նա վարվեց, օրինակ, Միքայել Սալլանթյանի «Համառոտություն փոքր քերականության դրաբար լեզվի հայոց» աշխատության հետ:

Նա կազմեց դյուրին, հասկանալի աղյուսակներ՝ քերականական հարցերով և պատասխաններով:

Եվ եթե վերը նշված գիրքը լույս է տեսնում 1839 թվականին, ապա հաջորդ տարում Գրիգոր Տեր-Ավագյանը աշխատում է Միքայել Սալլանթյանցի մի նոր աշխատության՝ «Առաջին մասն փոքր քերականության դրաբար լեզվի հայոց» վրա՝ այն աշակերտների համար դարձնելու ավելի մատչելի ու հասկանալի: Ի դեպ, սույն գիրքը լույս էր տեսել Կոստանդնուպոլսում և Մոսկվայում:

Նույն բանը կարող ենք ասել Միքայել Սալլանթյանցի՝ «Կրոնագիտություն կամ Հոգեվարժություն քրիստոնեական: Ըստ լուսավորչական ուղղափառ դավանության առաքելական եկեղեցու Հայաստանյայց...» աշխատության մասին, որը նույնպես իր համառոտակի և հասկանալի արտահայտությունը գտավ Գրիգոր Տեր-Ավագյանի շնորհիվ:

Բաղդասար Հասան-Ջալալյանի ծախսերով է հրատարակվում Խաչատուր Տեր-Օհանյանի «Համառոտ Հայկազյան քերականությունը», որը լույս տեսավ 1939 թվականին: Գիրքը փաստորեն ուսումնական ձեռնարկ էր և հեղինակը հետապնդում էր մի նպատակ՝ օգնել դպրոցականներին՝ խորապես յուրացնելու մայրենի լեզվի քերականական կանոնները:

Բ. Հասան-Ջալալյանի օրոք Շուշիում տպագրվել են նաև փիլիսոփայական և այլ գրքեր, որոնք, անշուշտ, պատիվ են բերում և հեղինակներին և հրատարակիչներին: Եջեք 1840



Թվականին լույս տեսած Հովսեփ Արցախեցու «Առաջին մասն փիլիսոփայության, որ ասի տրամաբանություն» աշխատությունը, որը հայ իրականության մեջ առաջին անգամ տալիս էր տրամաբանության կատեգորիաները, նրա փիլիսոփայական էությունը:

Բաղդասար միտրոպոլիտի մահից (1854 թ.) հետո տպարանը իր տնօրինության տակ է պահում Գևորգ եպիսկոպոս Վեհապետյանը: Նոր թեմակալ առաջնորդը նպատակ էր դրնում ամենից առաջ լույս ընծայել ուսումնական ձեռնարկներ և գիտական աշխատություններ, բայց դրան խոչընդոտում է դրամական միջոցների պակասը: Այս հարցով նա դիմում է Շուշիի բնակիչներին, հատկապես հարուստներին: Բայց օգնությունը անբավարար է լինում և տպարանը շարունակում է գործել շատ սահմանափակ հնարավորություններով:

1864 թ. տպարանը անցնում է Արցախի հայոց թեմական հոգևոր դպրոցին:

### ՈՎ Է ՄԻՐՉԱ ՅԱՐՈՒՅԵԸ

Շատ կցկտուր տեղեկություններ կան Միրզա Ֆարուխի մասին: Ասվում է, որ նա ծնվել է Ղարաբաղում և պարսկերեն գրել է Ղարաբաղի պատմությունը՝ «Թարիխ-Սաֆի» վերնագրով, որ հայերեն թարգմանվում է «Բարեկամված պատմություն»:

Սակայն այս անվան տակ ո՞վ է թաքնված, ի՞նչ անձնավորություն է, կյանքի ի՞նչ ճանապարհ է անցել և ի՞նչ անուն է թողել մշակութային պատմության մեջ, մնում էին մութ, անբացատրելի: Մեզ հաջողվել է որոշակի տեղեկություններ քաղել արխիվներից Միրզա Ֆարուխի մասին:

Մնվել է նա 1798 թվականին, Շուշի գավառի Թաղուս

գյուղում: Իսկական անունը Հարություն էր, հայրանունը՝ Ներսես; և մի քանի տեղեր հիշատակվել է որպես Հարություն Ներսեսի Ղարաբաղցի:

Վեց-յոթ տարեկան հասակում, 1805 թվականի ուսուցարսկական պատերազմների ժամանակ գերի է վերցվում: Պարսկական արքունիքում նա ստանում է «Ֆարուխ» անունը:

Շատ կարճ ժամանակում պատանին հանդես է բերում արտակարգ ընդունակություններ, տիրապետում էր մի քանի լեզուներին, գիտեր ոչ միայն հայերեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, այլև գերմաներեն, ֆրանսերեն և անգլերեն: Քսան տարեկանում արդեն Թեհրանի սարգարի քարտուղարն էր, փաստորեն՝ խորհրդականը:

Սակայն երիտասարդ Հարությունի սիրտը մաշում էր արքունիքի ցոփ ու շվայտ կյանքը; և նա այդտեղ իրեն համարում էր ամենասոսկալի տանջանքների ու տառապանքների մեջ:

Շատ անգամ է հայ երիտասարդը փորձում փախչել արքունիքից, բայց հարմար առիթը չի ներկայանում:

Եվ, ահա, 1826 թվականի ուսուցարսկական պատերազմի օրերին Հարությունին հաջողվում է փախչել Շուշի: Նրան մտահոգում է մի կողմից իր հայրենակիցների ծանր վիճակը, մյուս կողմից՝ մշակութային կյանքի դարգացումը:

1827 թվականին, երբ արդեն Շուշիում էին հաստատվել Շվեյցարիայի Բազել քաղաքի ավետարանական քարոզչական ընկերության երկու երևելի ներկայացուցիչներ՝ Ավգուստ Դիտրիխն ու Ֆելիցա Զարեմբան, Հարությունը մտերմանում է նրանց հետ ու օգնում Ղարաբաղում հիմնելու տպարան: Ճիշտ է, եկվոր բողոքականները այլ հոգս ունեին՝ գրքի տպագրության միջոցով քրիստոնեություն տարածել այլադավան ժողովուրդների մեջ, բայց դրա հետ միասին նրանց ձեռնարկած գործն ուներ և առաջադիմական բնույթ. նախ նրանք էին առաջինը, որ սկսեցին հրատարակչական գործը Ղարաբաղում և առաջին գիրքը՝ «Պատմություն սուրբ գրքի»-ը լույս տեսավ 1828 թվականին, երկրորդ՝ կրոնական-քարոզչական գրքերի հետ միասին հիմք դրեցին գիտական-ուսումնական աշխատությունների հրատարակմանը:

Երիտասարդ Հարությունը բազելցիների օգնությամբ ձեռ-



նարկում է հայոց լեզվի վերաբերյալ ուսումնական ձեռնարկները հրատարակմանը: 1829 թվականին Շուշիում լույս տեսավ «Համառոտություն հայկական քերականության» աշխատությունը, որը ընդհանուր առմամբ բովանդակում է հայերենի բառերի հոլովումները, խոսքի մասերի բնութագրումը և առանձին քերականական սահմանումներ:

Հարություն Ղարաբաղցին քիչ ջանքեր չթափեց նաև Հովսեփ Արցախցու «Համառոտ բառագիրք գրաբարից աշխարհաբար»-ի տպագրության համար, որը լույս ընծայվեց հաջորդ տարին՝ 1830 թվականին:

Բաղկացի միսիոներների հրատարակած գրքերի հիմնական առավելությունն այն է, որ բոլորն էլ աշխարհաբար էին, հասկանալի, խոսակցական լեզվին մոտ: Հարություն Ղարաբաղցու օգնությամբ բաղկացիները Շուշիում նաև ուսումնարան են հիմնում: Այնտեղ նա որոշ ձեռնարկումներ է կատարում՝ ուսուցումը ընդունելի մեթոդներով կազմակերպելու ասպարեզում:

Ոչ միայն այս, Հարություն Ղարաբաղցին զբաղվում է իր հայրենիքի պատմության ուսումնասիրությամբ, նպատակ ունենալով հրապարակ հանել ծավալուն մի աշխատություն, որն ընդգրկի Ղարաբաղի պատմությունը սկզբից մինչև 1820-ական թվականների իրադարձությունները, քննական մոտեցում ունենալով պատմական փաստերի նկատմամբ: Բայց ինչ-ինչ պատճառներով այս աշխատությունը հրապարակի վրա չկա և մնացել է միայն պարսկերեն գրած նրա տրակտատը Ղարաբաղի մասին:

Առանձին փաստեր կան նաև, որ Հարություն Ղարաբաղցին զբաղվել է թարգմանությամբ:

Կյանքի վերջին տարիներին նա կատարում էր պետական ծառայություն, մտերիմ հարաբերությունների մեջ էր Ղարաբաղի թեմի առաջնորդի՝ Բաղդասար մետրոպոլիտի հետ: Վերջինիս աջակցությամբ Հարությունը դասավանդում էր Ղարաբաղի թեմական դպրոցում:

Վախճանվել է 1864 թվականին Շուշիում:

Շուշիի տպագրության պատմության մեջ ամենաուշագրավ դերը պատկանում է Միրզաջան Մահտեսի-Հակոբյանին: Նա նպատակ էր դրել իր կյանքի մեծ մասը նվիրաբերել այդ գործի զարգացմանը: Թեև նա երիտասարդ հասակում որոշ անհաջողության է հանդիպում, այնուամենայնիվ, Բաքվում երկար տարիների բանտարկությունից հետո, բնակություն հաստատելով հայրենի քաղաքում, 1880 թ. հիմնում է իր նախորդը չունեցած հարուստ տպարան: Նա Բաքվից և մյուս քաղաքներից հայթայթում էր տպագրական հարկավոր պարագաներ և տեղափոխում Շուշի:

Տպագրական աշխատանքներին օգնում էին նաև Մ. Մահտեսի-Հակոբյանի որդիները (մեկը գրաշար էր, մյուսը տպագրիչ):

Տպարանը առաջին հերթին լույս աշխարհ է հանում հայ անվանի հեղինակների գործերը, հրապարակում այնպիսի գրքեր, որոնք կարևորություն էին ներկայացնում գաղափարապես: Շուտով Մ. Մահտեսի-Հակոբյանը տպարանի շուրջը համախմբում է նշանավոր մարդկանց: Այստեղ է աշխատում Լեոն (նա առաջին սրբագրիչն էր), այստեղ է սկսում իր հրատարակչական գործունեությունը Տիգրան Նազարյանը՝ տպագրելով Հ. Սենկևիչի «Պոզնանի ուսուցչի օրագրից» պատմըվածքը, Ն. Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» գրական ժողովածուն և այլն:

Նորաստեղծ տպարանի անդրանիկ պտուղը Բաֆֆու «Խենթի» տպագրությունն էր՝ 1881 թվականին:

1886 թ. Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում է առաջին անգամ հայերեն լույս տեսնում ռուս մեծ գրող Գոգոլի «Տարաս Բուլբան»: Սա բնագրի ուղղակի թարգմանությունը չէր, կային որոշակի կրճատումներ: Պատահական չէր, որ «Տարաս Բուլբան» թարգմանվեց հայերեն: Հայրենասիրական այդ երկն արտահայտում է ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարը, մարմնավորում աշխատավորական ուժն ու ցասումը բռնակալների նկատմամբ:

Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում լույս տեսավ Մանուկ Աբեղյանի «Նմուշներ» բանաստեղծությունների ժողո-



վածուն, որը հիմնականում բովանդակում է ժողովրդական ավանդույթներն ու լեզունդները՝ հեղինակի մշակմամբ: Այստեղ երևում է ապագա հայագետի հակումը դեպի բանասիրությունը և գեղարվեստի իմացությունը:

Մ. Մահտեսի-Հակոբյանը շարունակում է ներդնել իր ջանքերը Մ. Աբեղյանի աշխատությունների տպագրման գործում: 1889 թ. հրատարակվում է հեղինակի կարևոր ուսումնասիրությունը՝ «Գավիթ և Մհեր» ժողովրդական դրուցալեզան վեպ» վերնագրով: Սա ևս արժանանում է մեծ գրվատանքի:

Մ. Մահտեսի-Հակոբյանը սերտ կապերի մեջ էր իր մեծ հայրենակցի՝ Լեոյի հետ: Ի դեպ, Լեոն ոչ միայն սրբագրություն էր կատարում, այլև փաստորեն շատ գրքերի խմբագիրն էր (թեև այդ մասին չի հիշատակվում ոչ մի գրքի վրա): Նա իր աշխատությունների մեծ մասը առաջին անգամ տպագրում է Շուշիում. «Վեպ, թե պատմությունը» (1887 թ.), «Կոլյր աղջիկը», «Վահան Մամիկոնյանը» (1888 թ.), «Իմ հիշատակարանը», «Սպանված հայրը» (1891 թ.) և այլ գրքերի առաջին ընթերցողները շուշեցիներ էին:

Հետաքրքիր երևույթ էր նաև «Աղբյուր-տարազ» հրատարակությամբ առանձին գրքույկների տպագրումը Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանում: Այս մատենաշարը նպատակ ուներ աշխատավոր ընթերցողներին մատչելի լեզվով հրամցնել ոչ միայն գրական գործեր, այլև մասնագիտական աշխատություններ, բարձրացնել նրանց մտահորիզոնը և աշխարհաճանաչողությունը:

Այս տպարանը նշանավոր է դառնում աշխարհահռչակ մի շարք թարգմանական երկերի հրատարակությամբ: Շուշիի թեմական դպրոցի հայերեն և ֆրանսերեն լեզուների ուսուցիչ, գրականագետ Սամվել Գյուլզադյանը պարսկերենից հայերեն է թարգմանում Ֆիրդուսու «Ռոստոմ և Զոհրաբ»-ը («Շահնամից»): 1894 թ. նույն հեղինակի թարգմանությամբ լույս է տեսնում «Զոհրակ Բյուրասպի Աժդահակը»:

Բազմաթիվ են Միրզաջան Մահտեսի-Հակոբյանի տպարանի գործունեության արգասիքները. գրանք անվանի գիտնականների, գրողների, մանկավարժների բազմաթանր գործերն էին, որոնք հիմնականում գիտամասսայական բնույթի

էին և որոշակիորեն նպաստում էին գավառի բնակչության աշխարհըմբռնմանը:

Շուրջ 25 տարի տպարանը համարվում էր Ղարաբաղի հիմնական տպագրական օջախը, մինչև 1897 թվականը այստեղ լույս է տեսել 83 անուն գիրք: Նշենք նաև, որ Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանը ոչնչացավ Շուշիի հրդեհի ժամանակ: Հետագայում նա իր գործունեությունը շարունակում է մինչև 20-ական թվականները, Թիֆլիսում՝ «Մամուլ» անվան տակ:

Առանձին հրատարակված գրքեր աչքի էին ընկնում ձևավորման ճիշտ մտահղացումներով, պատկերազարդմամբ:

Մ. Մահտեսի-Հակոբյանը տիրապետում էր մի շարք լեզուների և լինելով հմուտ մանկավարժ՝ մանուկների համար պատրաստել է դասագրքեր: Նրա հրատարակած գրքերից մեկի տիտղոսաթերթի վրա կարդում ենք. «Մայրենի լեզու, այբենարան. թարգմանություն Մ. Մահտեսի-Հակոբյանի, 1886»: Գրքույկը սոսկ թարգմանություն չէ, Մ. Մահտեսի-Հակոբյանը կազմել է մի դասագիրք, որը շատ կողմերով գերազանցում է բնօրինակին և մատչելի է հայ երեխայի համար:

Մ. Մահտեսի-Հակոբյանը մեր մշակույթի համեստ մշակներից է, որի կյանքն ու գործը արժանի է լուրջ ուսումնասիրության:

### ԼԵՈՆԱՅԻՆ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ ԳՆՂԱՆԿԱՐԻԶԸ

Լեոնային երկրամասը՝ պատմական Արցախը, շատ անվանի մարդկանց հայրենիք է, այստեղ են ծնվել և իրենց տաղանդը հայրենիքին ի սպաս դրել գիտնականներ, գրողներ, զորավարներ, գեղանկարիչներ, երաժիշտներ, որոնք



անջնջելի հետք են թողել հայ մշակույթի և, ընդհանրապես, պատմության մեջ:

Այս համաստեղության մեջ մեծ թիվ են կազմում կանայք: Հայտնի է օրինակ, Մարիամ Հախումյանի գործունեությունը 1864 թ. Շուշիում օրիորդաց դպրոց բացելու, Սոֆյա Առաքելյանի՝ բարոյախրատական գրքեր թարգմանելու և այլոց ջանասեր աշխատանքը: Ավելին, Սոֆյա Առաքելյանը մի քանի կրթված կանանց հետ ձգտում էր Շուշիում ստեղծել «կանանց հանրամատչելի գրադարան»:

Անուրանալի է օրիորդ Վիկտորիա Դավթյանի գործունեությունն Արցախում՝ ժողովրդական թատրոններ ստեղծելու ուղղությամբ: Նա գտնում էր, որ «թատրոնը պետք է միշտ հետադուրսի ժողովրդին և շոշափելով բեմի վրա հասարակական առօրյա կենսական խնդիրներ, լուծել ջանա այդ խնդիրները»: Նա պայքարեց այն բանի համար, որ թատրոնն ինքնուրույն ստեղծագործող մարմին դառնա՝ ունենալով հասարակական կրթիչ դեր:

Ուշագրություն արժանի են հատկապես Մարգարիտ Ալեքսանյանի հայրենանվեր ջանքերը: Դեռ փոքր հասակից նա մեծ սեր ուներ դեպի գիրն ու գրականությունը: Տաթևի վանքում նա տեսնում է շքեղ կազմված մի Ավետարան, և նրա մեջ միտք է հղանում զբաղվել գեղանկարչությամբ: Երիտասարդ Մարգարիտը իր սենյակը դարձնում է նկարչական արվեստանոց: Բայց մինչև այդ նա անցել էր հետաքրքիր ճանապարհ, որը նրան բերել էր մեծ համբավ:

Մ. Ալեքսանյանը ծնվել է 1858 թ. Շուշիում: Այդ տարիներին հայրենի քաղաքում հայտնի էր Աքեր Եղիսաբեթի օրիորդաց վարժարանը, ուր մի քանի օրիորդներ վարժվում էին վայելչագրության մեջ: Նա այդտեղ դրսևորում է անհագուրդ սեր դեպի գեղանկարչությունը: Այդ ժամանակ էլ նրա մեջ առաջանում է միտք՝ պատրաստել «Հայկական գեղանկարչություն» ալբոմ և հրատարակել այն: Այս մտահղացման իրականացմանը մեծ օժանդակություն է ցույց տալիս մորեղբայրը՝ Տիգրան Նազարյանը, որի ավանդը անուրանալի է հատկապես Շուշիում 1881 թ. հրատարակչական գրասենյակ հիմնելու, Թիֆլիսում տպարան ստեղծելու, «Տարագ», «Աղբյուր» և այլ պարբերականներ լույս ընծայելու գործում:

Մ. Ալեքսանյանի գեղանկարները հիացրել էին և՛ մամուլի, և՛ հրատարակչության աշխատողներին: Գեղանկարչության ալբոմի առանձին նկարներ լույս էին տեսնում «Տարագի», «Աղբյուրի» և ուրիշ պարբերականների էջերում և ջերմ արձագանք գտնում ընթերցողների շրջանում: Այդ գեղանկարներում առաջին հերթին ուրվագծվում էին հայկական բնաշխարհը, հայրենի Ղարաբաղի նիստուկացը, մարդկային կյանքի տարբեր ոլորտները: Տիկին Մ. Ալեքսանյանի գործերի պսակն է կազմում այն ձեռագիր աշխատանքը, որն այժմ գտնվում է էջմիածնի թանգարանում: Հինգ տարվա (1867—1872 թթ.) ընթացքում Մ. Ալեքսանյանը, օր ու գիշեր աշխատելով, արտագրել է Ավետարանը և ոչ ոքի մըտքով չի անցնում, թե դա մարդու ձեռքի աշխատանք է: Կորցնելով աչքերի լույսը, նա այնպիսի մի աշխատանք է ստեղծել, որին կարող է նախանձել ամենահմուտ մեքենան: Ժամանակի մամուլը շատ բարձր է գնահատել Մարգարիտ Ալեքսանյանի աշխատանքը, գտնելով, որ նրա ձեռքի յուրաքանչյուր գործ արժանի է դրվատանքի: Հայտնի պատմաբան Լեոն 1891 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Տարագ» գրական-գեղարվեստական, երգիծական պատկերազարդ շաբաթաթերթում գրել է՝ «Տիկին Մարգարիտ Ալեքսանյանի գործերի մեջ չբացվեց է սրտնել այն, ինչ գեղարվեստի կանոններով ու ճաշակով կրթված մարդը որոնում է հարուստ պատկերահանդեսներում, պետք է հասկանալ նրա գծած յուրաքանչյուր գծի պատմությունը, պետք է իմանալ ինչպիսի հանգամանքների մեջ այդչափ նրբության, ճաշակավոր դասավորվածություն է հասել և այն ժամանակ ամենայն իրավամբ կարող ենք գովել կամքի ուժը, համառ ու շարքաշ աշխատության պտուղը, որ, անկասկած, ստեղծագործողի բնականից բարձր ընդունակություններն է հայտնում»:

Այո՛, Մ. Ալեքսանյանի նկարների մասին խոսելիս պետք է ընդգծել ոչ միայն նրա բնատուր շնորհքը, այլև կամքի ուժը, անսահման աշխատասիրությունը, հայրենիքին անպայման օգուտ բերելու հախուռն ձգտումը: Այդ է վկայում նրա ձեռքի աշխատանքի լայն մասսայականությունը ոչ միայն Բուսաստանում, այլև արտասահմանում: Նա ձգտում էր իր գեղանկարները տպագրել Վենետիկի Միսիթարյանների մոտ



և տարածել շատ տեղեր: Դեռ 1868 թ. Մ. Ալեքսանյանն իր գեղանկարչության արժանիքը ուղարկում է վենետիկի Մխիթարյան տպարանատեր Հ. Աթազինես Երեմյանին, և վերջինս էլ, հիացած արժանով, իր կնոջը գրում է. «... Արդարև դորձ, դարմանասքանչ և ճարտար մատանց գեղեցիկ և հնարագետ գծագրություն»: Տեսորը, ցավոք, չի հրատարակվում, որովհետև Մ. Ալեքսանյանը չէր կարող հոգալ տպագրական ծախսերը: Այն լույս է տեսնում 1881 թվականին Շուշիում, Տ. Նազարյանի «Հրատարակչական գրասենյակի» հրատարակությունը:

Հիրավի, ժողովրդի ընդերքում թաքնված մի տաղանդ էր Մարգարիտ Ալեքսանյանը, որի կատարած գործը, հուշը երբեք չի կարող խամրել: Նա գործում էր շատ մոռյլ ժամանակահատվածում, երբ հնարավոր չէր ոչ միայն բնածին տաղանդը զարգացնել, այլև կատարածը լույս աշխարհ հանել առանց նյութական մեծ օժանդակություն: Թեև նա չգարծավ մեծ կտավների հեղինակ, բայց արածն այնքան մեծ է, որ այժմ էլ շատ-շատերին թվում է անիրագործելի:

Մ. Ալեքսանյանը մահացել է 1902 թվականի մարտի 27-ին: Թաղված է Շուշիի եկեղեցու բակում, ուր սրբատաշ քարի վրա գրված է «Աստ հանգչի բաղմավաստակ գրիչ ու ծաղկող Մարգարիտ Ալեքսանյանը»:

Շուշեցի Մարգարիտ Ալեքսանյանը հայ առաջին գեղանկարչուհիներից է, որի անունը երբեք չի մոռացվի գեղանկարչության պատմության ոսկե էջերում: Տեղն է նշել, որ, ցավոք, մինչև հիմա ո՛չ իր հայրենիքում, ո՛չ էլ արժանի մի այլ վայրում չկա նրա անունը կրող ո՛չ դպրոց, ո՛չ փողոց, ո՛չ էլ որևէ մշակույթի օջախ: Հավատացած ենք, որ այդ բացը շուտով կվերացվի նրա հաղարավոր երկրպագուների ջանքերով:

«ՏԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՅՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ,  
ՅՈՒՐ ԱՆՁԸ, ՅՈՒՐ ԿՅԱՆՔԸ»

(Սիմոն Հախումյանի ծննդյան 130-ամյակի առթիվ)

«Կումա» ամսագիրը 1905 թ. 4-րդ համարում հարուստ տեղեկություններ է հաղորդում Սիմոն Հախումյանի կյանքի և գործունեության մասին: Նա ծնվել է 1859 թ. Շուշի քաղաքում: Սկզբնական շրջանում աշակերտել է Պետրոս Շանշյանին, ավարտել է տեղի թեմական դպրոցը: Այնուհետև սովորել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Երիտասարդ դարաբաղցին չի բավականացել միջնակարգ կրթությամբ, խորամուխ է եղել գիտությունների մեջ, հարուստ գիտելիքներ ձեռք բերել մասնավորապես հայկական, ռուսական և արտասահմանյան գրականությունների գծով, տիրապետել է մի քանի լեզուների: Սովորել է Փարիզի Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Սկզբից իր գործունեությունը ծավալել է մանկավարժական ասպարեզում. 1879 թ. 20-ամյա Մ. Հախումյանը եղել է Կարսի հայկական դպրոցի ուսուցիչն ու տեսուչը, իսկ 1880—82 թթ. Շուշիի թեմական և օրիորդաց դպրոցների ուսաց և հայոց լեզուների դասատուն: Ծանոթուն են եղել նրա ջանքերը նաև Թավրիզի հայոց երկսեռ դպրոցներում:

Մ. Հախումյանի հրատարակատեսակական-լրագրական աշխատանքը սկսվում է «Մշակ» թերթից: Այստեղ նա հանդես է եկել 1885—1890 թթ., իսկ 1890—1892 թթ. «Տարազ» և «Աղբյուր» ամսագրերում, 1894—1897 թթ. «Արձագանք», 1899 թ. «Նոր-դար» և այլուր:

Սիմոն Հախումյանը պարբերաբար ելույթներ է ունեցել ռուսական մամուլի էջերում, մասնավորապես «Новое обозрение», «Тифлисский листок», «Кавказ», «Русский курьер», և այլ թերթերում:

Իբրև թղթակից նա Թավրիզից, Կ. Պոլսից, Լոնդոնից, Փարիզից աշխատակցել է հայերեն և ռուսերեն լույս տեսնող պարբերականներին: Հաճախակի նրանց էջերում տպագրվել է այնպիսի հոդվածներ, որոնց մեջ արծարծվում էին ոչ միայն մշակութային հարցեր, այլև որոշակիորեն արտահայտ-



վում աշխատավորութեան մտահղացումներն ու ցանկութեանները: Բացի հոգւածից, թղթակցութեաններից, ֆիլետոսներից ու մամուլի տեսութեանից նա տպագրել է պատմվածքներ, վիպակներ և դրամատիկական գործեր, զբաղվել է նաև թարգմանութեամբ: Հրատարակախոսական նյութերի տակ իր իսկական անունից և «Ս. Հ.»-ից բացի ստորագրել է «Ահրիման» («Տարագ» և «Արձագանք») «ЭХО» («Тифлисский листок», «Новое обозрение») և այլն, «Ծերուկ» («Աղբյուր»), «Մար-Ամաղ» և այլն: Նրա տաղանդը դրսևորվել է նաև թատերական բնագավառում, տարբեր տարիներ Ս. Հախումյանը ղեկավարել է Թիֆլիսի թատերական խումբը, իսկ Բաքվում՝ հանդես եկել իբրև հայկական խմբի ղեկավար: Ս. Հախումյանը հայ դպրոցին, մամուլին և հրատարակախոսութեանը նվիրված մի անձնավորութեան էր և պատրաստ էր իր ուժերը նվիրաբերել շատ ու շատ օգտակար գործերի: «Լուծա» ամսագիրը նրա մահվան առթիվ, բնութագրելով 46 տարվա կյանքի ուղի անցած մարդու գործունեությունը, գրում է. «Բայց Հախումյանի արժանիքը ոչ թե այն է, որ նա երկար տարի գործել է իբրև լրագրող և հրատարակախոս, այլև, որովհետև նորա գրիչը միշտ և ամեն տեղ բուրել է մաքուր հայկական հոգի, անօրինակ և անձնվեր սեր դեպի մայրենի լեզուն, մամուլն ու գրականությունը, որովհետև նորա գրվածքները դուրսից են, անկեղծ սրտից բխած, տպավորիչ, սուր և ջախջախիչ:

Դժբախտաբար նա ևս ենթարկվեց հայ գրողների վիճակին, քանի մի տարի ապրեցավ Փարիզում հետին կարոտություն մեջ, վերջին տարիներս ստացավ հոգեկան անբուժելի հիվանդություն և մեռավ տակավին այրական հասակում, երբ նորա տաղանդը հասել էր գագաթնակետին և խոստանում էր հայ գրականության առավել լուրջ ու արդյունավետ մասնակցություն»:

Իրենցով ժամանակի կրթված երիտասարդներից մեկը, Ս. Հախումյանը տոգորված էր ազնիվ նպատակներով՝ օգտակար լինել հայրենիքին և ժողովրդին: Տարբեր առիթներով նա իր բարի և հանրօգուտ նպատակների մասին հանդես է եկել հրատարակով: «Մշակում» նա տպագրում է Շուշիից ուղարկած մի հայտարարություն, որտեղ ասված է. «Մենք դուրս

ենք գալիս ժողովրդի առաջ՝ նրան գրեթե բոլորովին անծանոթ և առանց աշխատելու կանխավ հեղինակություն և անուն ստանալ: Այդ սովորական կարգից դուրս է, խոստովանում ենք: Բայց մենք դուրս ենք գալիս նորա առաջ անարատ զգացմունքներով և մի միակ ցանկութեամբ— ծառայել ժողովրդին:

Ոչ մի քաջալերական օրինակ չկա մեր առաջ՝ անցյալից կամ ներկայից, բայց կա, հավատացած ենք, մի զորեղ ու աննկուն նեցուկ, որի վրա մենք կարող ենք կռթնել: Դա այն մատաղ սերունդն է, որի միտքը դեռ մաքուր է, որն ապրում է ընկերի համար և ապա իրեն համար, այն երիտասարդությունը, որի մեջ ետևում, եփում են կյանք և հասարակական զգացմունքներ: Մեր հույսն այդ մատաղ սերնդի վրա է, որը պետք է ազատ լինի ներկա բուրժուական ոգուց և չպետք է մասնակցի սուտ ինտիլիգենցիայի խարդավանքներին»:

Սիմոն Հախումյանը փափագում էր ունենալու տպագիր օրգան: Թիֆլիսի «Մշակը» նույնպես դրվատանքով է խոսում Ս. Հախումյանի եռանդի և սկզբունքայնության մասին: «Շուշուց մեզ գրում են, որ այդտեղի մի պարոն, Սիմոն Հախումյանց, շատ է աշխատում հրատարակել «ԳՈՐԾ» անունով հայերեն մի ամսագիր»:

Ս. Հախումյանը 1881 թ. փետրվարին Կովկասի փոխարքայությունն է ներկայացնում դիմում: Խնդրելով թույլ տալ լույս ընծայելու սեփական ամսագիր: Մամուլի գրաքննչական մարմինները սկզբունքորեն շեն առարկում Ս. Հախումյանի՝ ամսագիր հրատարակելու վերաբերյալ ներկայացրած ծրագրին և նույն թվականի նոյեմբերի 27-ին թույլատրվում է նրան հիմնելու «Գործը»: Կովկասի փոխարքայության մամուլի գործերի կոմիտեն այս որոշումն ընդունում է միայն այն պայմանով, որ ամսագրի բոլոր նյութերը ենթարկվեն խիստ գրաքննության:

Ըստ Ս. Հախումյանի ներկայացրած ծրագրի «Գործ» հանդեսը պետք է ունենար 7 բաժին, որտեղ լուսաբանվեր տեղական անդրկովկասյան կյանքը, տրվեր հայ և մյուս ժողովուրդների առօրյան, հրատարակվեին քաղաքական և ներքին տեսություններ, գիտական, մանկավարժական և բարոյական նյութեր, գրույցներ, մատենախոսություններ, գրախոսություն-



կեր, բույս ընծայվեին վերադաս օրգանները կարգադրութեան-  
ներ և այլն:

«Գործի» հրատարակիչը նախատեսում էր իր հանդեսում  
լայն տեղ տալ գրականութեան զարգացմանը նպաստող հար-  
ցերին՝ հրատարակելով ոչ միայն ինքնուրույն, այլև թարգ-  
մանական ստեղծագործութեաններ: Հանդեսը պետք է ունե-  
նար 5—6 մամուլ ծավալ՝ բաղկացած 80—90 էջից:

Հենց սկզբից ևեթ Ս. Հախումյանը հրատարակախոս-  
հրատարակչի հմտութեան է հանդես բերում՝ հարուստ և խե-  
լացի, ծրագիր նախատեսելով «Գործի» համար: Բաղմամբով  
հարցերի լայն լուսաբանման համար նա նկատի ուներ պար-  
բերաբար յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ հրատարակել  
«Գործը»: Սակայն ֆինանսական անելանելի դրութեանը և  
ցարական դաժան գրաքննութեանը թույլ չեն տալիս նրան  
իրագործելու ծրագիրը: 1882 թվականին լույս է տեսնում  
«Գործի» միայն մեկ համար, այն էլ՝ նվազ տպաքանակով:

Ս. Հախումյանը նյութական ծանր կացութեան մեջ էր:  
Եվ դա էր թերևս հիմնական պատճառը, որ նա չի կարողա-  
նում հաջորդ տարում հրատարակել հանդեսի մի լիարժեք  
համար: Բայց որպեսզի հրատարակչի իրավունքը չկորցնի,  
նա ստիպված 1883 թվականին լույս է ընծայում 13 էջանոց  
մի տետր՝ «Գործ» անունով:

Թեև այս անուր համարում հրատարակիչը խոստանում է  
կարգավորել իր հանդեսի լույս ընծայումը, բայց այդ նրան  
չի հաջողվում, հրատարակվում է ընդամենը երեք համար  
(վերջինը հաջորդ տարում): Առանձին փաստեր վկայում են,  
որ 1885 թ. Ս. Հախումյանը ձեռնարկել է «Գործի» շորտորդ  
համարի հրատարակութեանը, ուր պիտի զետեղվեր նաև իր  
«Կորածներ» վերնագրով վիպակը, բայց դա մնում է լոկ  
ցանկութեան և ջանքերի իզուր վատնում: Ցարական գրաքն-  
նութեանը հանդուգն մտքի համար կապանք է դնում և «Գոր-  
ծը» դադարում է գոյութեան ունենալուց:

«Ով ձգտում է օգուտ տալ ժողովրդին, պետք է լինի նրա  
հետ, — առաջին համարի «եղիու խոսքում» ասում է Ս. Հա-  
խումյանը: — Ժողովրդի իդեալական հայրենիքի հիմքը, — զը-  
րում է նա, — նրա իրական հայրենիքի շոշափելի հողը պետք  
է լինի, իսկ ժողովրդասերի իդեալական հայրենիքը այդ ժո-

ղովրդի իրական կյանքը պետք է լինի: Ով կամենում է օգնել  
ժողովրդին, պետք է նրա հետ զգա այն ամենը, ինչ որ նա  
զգում է: Զի կարելի մի ժողովրդի զգացածը զգալ, առանց  
նրան ճանաչելու»:

Նա հատուկ ուշադրություն է դարձնում երիտասարդու-  
թյանը, որի «առաջ ընդարձակ ասպարեզ կա գործելու, ժո-  
ղովրդի դրութեանն ուսումնասիրելով և նրա վիճակը բարվո-  
քելով»: Հանձին երիտասարդութեան Ս. Հախումյանը տես-  
նում էր ապագան կերտողին, նրան, որին վիճակված էր ո-  
րոշելու ժողովրդի, հայրենիքի բախտը: Նա երիտասարդու-  
թյանը կոչ էր անում առաջադիմութեան համար պայքարել,  
առանց ընկճվելու ու դժվարութեաններից վախենալու: «Չվա-  
խենալ վտանգից, չխրտնել խոնավ բնակարաններից, կիսա-  
վեր խրճիթներից, մաշող հիվանդութեաններից, մտնել հա-  
մարձակ զոցա մեջ, ընկեր դառնալ արհեստավորին՝ գործի  
ժամանակ, գյուղացուն՝ յուր ցանքի ժամանակ, գտնել թըշ-  
վառներին, համեմատել դրանց՝ յուրի առատութեանից տրաք-  
վողների հետ, նկարագրել զոցա դրութեանը, բացատրել պատ-  
ճառները, տալ ժողովրդին յուր աշխատանքը, յուր անձը, յուր  
կյանքը՝ ահա ինչ անող երիտասարդներ են հարկավոր» —  
շեշտում է Ս. Հախումյանը:

Այնուհետև Ս. Հախումյանը գտնում էր, որ հատկապես  
երիտասարդութեանը, որի միտքը խիզախ է, պրպտուն, պետք  
է անձնվիրաբար գործի, կյանքի բովում կերտի իր վաղվա  
օրը, կյանքի հորձանուտում մարտնչի Պրոմեթևսի պես:

### ԱՆԵՈՆՁ ՀՐԱՏԱՐԱԿԻՉՆ ՈՒ ԽՄԲԱԳԻՐԸ

(Տիգրան Նազարյանի ծննդյան 125-ամյակի առթիվ)

Հայ հրատարակչական գործը հարուստ անցյալ ունի, և  
և՛ թե աշխարհում առաջին տպագիր գիրքը լույս է տեսնում  
մոտավորապես 1448—52 թթ., ապա հայերինը՝ 1512 թվա-



կանին, Վենետիկում: Աշխարհի գրեթե բոլոր մեծ քաղաքներում և պետություններում սկիզբ է առնում հայ գրքատպագրությունը:

Արտասահմանի համեմատությամբ Անդրկովկասում ուշ է սկիզբ առնում գրքի տպագրությունը: Շուշին, այնուամենայնիվ այն քաղաքներից մեկն է, ուր ստեղծվեց տպարան և դպրոց: Առաջին գիրքը այստեղ լույս տեսավ 1828 թ.՝ շուրջ 50 տարի շուտ, քան, ասենք, Երևանում կամ Բաքվում:

Շատ երախտավորների (Բաֆֆի, Լեո, Պերճ Պոռչյան, Մանուկ Աբեղյան և ուրիշներ) առաջին գրքերը տպվել են Շուշիում գործող տպարաններում: Սակայն տպագրական գործի երախտավորների շրջանում ամենից եռանդունը Տիգրան Նազարյանն էր, որ ծնվել է Շուշիում 1858 թ.: Նա արդեն նախադպրոցական հասակում սկսեց գրել-կարդալ, ունակություններ զբաղեցրել գրականության և լեզուների ուսումնասիրության բնագավառում: Երբ արդեն ձեռք է բերում անհրաժեշտ գիտելիքներ և Գալուստ Փափաղյանի դպրոցում կատարելագործվում է հատկապես ֆրանսերենի մեջ, մտածում է իր հայրենակիցների շրջանում «ժողովրդական գրքեր» հրատարակել: Այդ մասին նա հայտարարություն է տպագրում ժամանակի հայ ամենաազդեցիկ թերթերից մեկում՝ Թիֆլիսում լույս տեսնող «Մշակում» (1872—1921 թթ.): Նա գրում է. «Ես կազմում եմ Շուշիում «հրատարակչական գրասենյակ» և առաջին սերիան իմ հրատարակությունների կլինեն հետևյալ գրքույկները. երեխաների համար «Երկու մանրավեպ»՝ Ալֆոնս-Դոդեից թարգմանված (գինը 15 կոպեկ), ծրնողների և դաստիարակների համար՝ «Պոզնանի ուսուցչի օրագրից», հեղինակ՝ Լեովոսի, թարգմանված «Վեստնիկ Եվրոպի» ամսագրից (գինն է 20 կոպ), ժողովրդի համար՝ «Ծաղիկ ծաղկահրատարակություն» (գինն է 15 կոպեկ): Նույնպես հետևյալ ընթերցանության գրքույկները. «Ճանապարհորդություն Ղարաբաղում» (գինն է 30 կոպ.), «Պարապ ժամեր» (գինն է 25 կոպ.) և «Քնար խոսնակ» (ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններ, գինը 50 կոպ.), (տե՛ս թերթի 1881 թ. ապրիլի 22-ի համարը):

«Մշակի» էջերում երկրորդ անգամ է հանդես գալիս Տիգրան Նազարյանը, այս անգամ նպատակ ունենալով որոշ

պարզաբանումներ անել իր նախաձեռնություն՝ գիրք հրատարակելու նպատակների մասին: Կարողում ենք. «Այս տարվա (խոսքը 1881 թ. մասին է— Ս. Ա.) սկզբից Շուշիում հրատարակչական գրասենյակ բացեցինք և մեր նպատակն էր գավառցի ժողովրդի ու մանուկների ընթերցանության համար հեշտ հասկանալի գրքույկներ հրատարակել և միևնույն ժամանակ մեր կարողության շահով միջոց տալ երիտասարդ հեղինակներին և թարգմանիչներին՝ իրենց աշխատությունները լույս ընծայելու»:

Ինչպես նկատում ենք, Տիգրան Նազարյանը նպատակ է ունեցել օգնել նաև հեղինակներին՝ հրատարակ բերելու իրենց ստեղծագործությունները, զարգացնելու հայրենի գրականությունն ու մայրենի լեզուն, թարգմանական գործը:

Ականավոր հրատարակիչը կարևոր էր համարում տպագրած արտագրության տեղ հասցնելը: Այդ նպատակով նա տեղերում հանձնարարություններ է տալիս, մարդկանց ընտրություն կատարում՝ այս կամ այն գիրքը ընթերցողներին հասցնելու համար: Տիգրան Նազարյանի ոգևորությունն անսահման էր, հետևողական՝ սկսած գործը մինչև վերջ շարունակելու, բայց շուտով դժվարություններ են ստեղծվում, առաջին հերթին ցարական գրաքննությունը, երկրորդ՝ նյութական անկարողությունը: Տիգրան Նազարյանը չի հուսահատվում, շարունակում է գրքեր հրատարակել, որոնք օգտակար են մասսայական ընթերցողների համար: Սկսած գործը մինչև հաղթական ավարտ հասցնելու համար նա ստիպված էր տեղափոխվել Թիֆլիս: Այս մասին նա հրատարակայնորեն հանդես է գալիս մի նամակով, որ լույս է տեսնում «Մշակի» 1881 թ. դեկտեմբերի 26-ի համարում: Նամակը, ինչ խոսք, ի գիտություն էր ընթերցողների. «Առ ժամանակ տեղափոխվելով Թիֆլիս, պատիվ ունենք հայտնել մեր բաժանորդներին, որ այստեղ շուտով լույս կտեսնի մեր հրատարակությունների 4-րդ համարը և անմիջապես կուղարկվի նրանց, իսկ մյուս համարների շուտ, թե քիչ ուշ լույս ընծայելը կախված է կարևոր իրավունքներ ստանալուց, որոնք ձեռք բերելու, մասամբ էլ սրանց համար եկած եմ Թիֆլիս»: Փաստորեն ցարական գրաքննությունը Տ. Նազարյանին արգելել էր Շուշիում գրքեր տպագրել՝ ոչ թե Շուշին գավառական քաղաք լինելու,



այլ որ գլխավորն է, «վնասակար ուղղութեան» գրականութիւն լույս ընծայելու համար:

Ինչևէ, Տ. Նազարյանը Թիֆլիսում ձեռք է բերում իր հրատարակչի իրավունքը՝ հրատարակում խոստացած գրքերը: Նա նաև ձեռնամուկ է լինում ինքնուրույն պարբերական հիմնելու գործին: Այդ նպատակով ստեղծում է իր տպարանը Թիֆլիսում: 1883 թ. լույս է տեսնում «Աղբյուր» մանկական, պատկերազարդ ամսագիրը, որը հարատևում է շուրջ 35 տարի: Այստեղ հրատարակվում են մեր մեծանուն շատ գրողների՝ Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Բաֆֆու, Պերճ Պոռչյանի, Ալեքսանդր Ծատուրյանի, ինչպես նաև իր հայրենակիցների՝ Կոստանտին Մելիք Շահնազարյանի (Տմբլաչի Խաչանի), Սիմոն Հախումյանի, Նիկողայոս Տեր-Ավետիքյանի գրական, գեղարվեստական և գիտական գործերը:

Ամսագիրը ձգտում էր իր տպագրած ստեղծագործություններով և բազմաթանր նյութերով նպաստել երեխաների աշխատասիրությանն ու հայրենասիրությանը, պատվաստել նրանց մեջ մարդկային վեհ հատկություններ:

Տիգրան Նազարյանի հրատարակչական-հրատարակախոսական-ժուռնալիստական գործունեության մեջ կարևոր էջ է կազմում «Տարազ» շաբաթաթերթի հրատարակությունը (1890—1919 թթ.):

Տ. Նազարյանի ջանքերով հրատարակվեցին «Աղբյուրի» և «Տարազի» հավելվածները, «Գեղափնջիկը» (1907—1912 թթ.), «Կովկասի առավոտը» (1907—1908 թթ.): «Առողջապահիկը» (1911—1912 թթ.), Փարիզի մոդաները» (1910—1918 թթ.), «Լրաբերը» (1918 թ.) և այլն:

Տիգրան Նազարյանը իր ակտիվ հրատարակչական գործունեության համար շուտով դառնում է Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության անդամ:

Տ. Նազարյանի գործունեությունը անխզելիորեն կապված է Անդրկովկասում լույս տեսնող «Մշակ», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականների հետ: Հաճախ նա, «Շուշեցի», «Արցախեցի» և այլ ծածկանուններով հանդես է եկել հայատառ թերթերում և ամսագրերում, ձգտել է լայնորեն լուսաբանել իր հայրենի Ղարաբաղի և ընդհանրապես Անդրկով-

կասի առօրյան, տպագիր խոսքի ուժով օգնել հայրենակիցներին՝ դուրս գալու լուսավոր ափեր:

Տ. Նազարյանի գործունեությունը լայն ասպարեզ ունեւր, նրան մտահոգում էին շատ հարցեր: Հայերեն տպագիր օրգանների համար լրագրողներ պատրաստելու նպատակով նա դիմում է կառավարությանը՝ թույլատրել բացելու երիտասարդ լրագրողների երկու տարվա դասընթացներ՝ նպատակ ունենալով նրանց սովորեցնել ոչ միայն մայրենի լեզու և գրականություն, հայրենի գրականություն, պատմություն, այլև օտար լեզուներ, մասնավորապես անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, պարսկերեն և այլն:

Հետագայում էլ թեև Տիգրան Նազարյանը ապրեց Թիֆլիսում, բայց նա մտահոգված էր իր հայրենիքի բախտով, մի շարք օգտակար նախաձեռնությունների հեղինակ է:

Տիգրան Նազարյանը մահացավ 1926 թ., Թիֆլիսում, նրա անունը անջնջելի է հայ մշակույթի պատմության ոսկե էջերում: Առաջինն է նա, որ մտահոգված էր հրատարակել այնպիսի գրքեր, որոնք օգտակար կլինեն մասսայական ընթերցողների համար: Նա է փաստորեն Շուշիում հիմնադրել հրատարակչական գրասենյակ՝ իր լայն գործունեությամբ: Տ. Նազարյանը մեր իրականության մեջ առաջինն է, որ ժամանակին մտահոգվեց լրագրային աշխատողների պատրաստման և վերապատրաստման հարցով, պայմաններ ստեղծեց երիտասարդ ժուռնալիստների կատարելագործման համար:

#### ԱՎԱՆԱՎՈՐ ԵՐԳԻԾԱԲԱՆՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԸ

Գրականության և հրատարակախոսության պատմության մեջ Տմբլաչի Խաչանը (Կոնստանտին Մելիք-Շահնազարյան) հարյուրն է իր երգիծական հնարքներով, խոսքի թովչանքով,



ժողովրդական բառ ու բանի վարպետ օգտագործմամբ: Նրա ամբողջ արվեստը, գրական-երգիծական ստեղծագործությունը, կյանքը անմնացորդ նվիրաբերում է աշխատավոր ժողովրդի շահերին: Այս մասին նա արտահայտվել է տարբեր առիթներով: Ահա թե ինչ ենք կարգում հեղինակի «Զուռնա-Տմբլա» վերնագիրը կրող սովորածավալ ժողովածուի առաջաբանում. «Նրանի կարողանայինք սրանով մի փոքր ծառայություն անել մեր հայրենակիցներին, որոնց մտավոր ու բարոյական առաջադիմության ջերմ փափագողներին մեկն է սողերիս գրողը»:

Մեկել է նա 1856 թվականին, Շուշի քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենիքի հոգևոր դպրոցում, ապա՝ էջմիածնի Գևորգյան, իսկ հետագայում Մոսկվայի էպարքյան ճեմարանում: Նրա վրա մեծ ազդեցություն են ունենում ռուսական խոշոր քաղաքի թոհն ու բոհը, հեղափոխական-ազատագրական շարժումները:

Գիտելիքների համապատասխան պաշարով, ձևավորված աշխարհայացքով ապագա մեծ ֆելիետոնիստը վերադառնում է Անդրկովկաս և զբաղվում մանկավարժությամբ:

Թեև Մելիք-Շահնազարյանը կանոնավոր կրթություն ուներ, բայց ուսման ծարավը նրան հեռու է տանում. 1883 թվականի հուլիսին նա մեկնում է Ֆրանսիա, ուսանում հայտնի Մոնպելիեի գյուղատնտեսական բարձրագույն դպրոցում: Ավարտում է այն և վերադառնում հայրենիք, վերսկսում իր մանկավարժական աշխատանքը և միաժամանակ զբաղվում գրական-գեղարվեստական գործունեությամբ: Առաջին աշխատությունը՝ «Ղըլըցի կնանոց պընըրփեշակը» հուշակ է բերում հեղինակին: Այն գրված է հայրենի բարբառով, աչքի է ընկնում հետաքրքիր մանրամասներով, գունեղ պատկերներով, ժողովրդական իմաստություններով, աֆորիզմներով, թևավոր խոսքերով: Ընթերցողը պարզ պատկերացում է կազմում դարբաղցի գեղուկի մի շարք բարեմասնությունների մասին, ծանոթանում է նրա ոչ միայն աշխատասիրության, համեստության, այլև սուր մտքի, մարդասիրության, ճկուն բանականության հետ:

Մելիք-Շահնազարյանը գրում է նաև մանկական ստեղծագործություններ: Այդ բնույթի նրա անդրանիկ գրքույկը՝

«Փըշրանք»-ը, լույս է տեսնում 1888 թվականին, Շուշիում: Նա պարբերաբար հանդես է գալիս անդրկովկասյան հայատառ շատ պարբերականներում:

Սակայն Մելիք-Շահնազարյանին անուրանալի փառք բերողը «Զուռնա-Տմբլա» ժողովածուն էր, որ լույս տեսավ 1908 թվականին, Վաղարշապատում (այժմ՝ էջմիածին): Ընթերցողները գայթակղության կարգացին «Շուշվա ղալին խերն ու շառք», «Իմ կտակը», «Նուրդափարա պեներ», «Տնգլբազ» և այլ ֆելիետոններ, որոնցում քննադատվում են ժամանակի շատ վարչական հիմնարկներ, բարեգործական ընկերություններ, ազգասիրական անուն ստացած կազմակերպություններ: Երգիծական այդ նյութերի մեջ իշխողը ոչ միայն բնութագրական փաստն է ու նրա գեղարվեստական մարմնավորումը, այլև բարձր գաղափարայնությունը: Կ. Մելիք-Շահնազարյանը շատ ժամանակ անուղղակի կերպով, եզովպոսյան լեզվով մերկացնում է աշխատավոր մարդու քրտինքը յուրացնողներին, շահագործողներին, անբաններին, պորտաբույծներին:

Այնուհետև հեղինակը շարունակում է գրել նոր ստեղծագործություններ, որոնք հիմնականում ուղղված են մանուկ և երիտասարդ մարդկանց՝ նպատակ ունենալով անաղարտ պահելու նրանց մատաղ հոգին ու մտածողությունը: Այդ շարքի ստեղծագործություններից են «Կարբին», «Աշուղը», «Լվացարար», «Երկրագործ», «Հասկեր», «Այգեպան», «Կովերն ու հորթերը», «Շերամի որդը» և ուրիշները, որոնք ամփոփված են 1907 թվականին Բաքվի հայոց հրատարակչական ընկերության կողմից լույս ընծայված «Փնջիկ» ժողովածուի մեջ:

Կ. Մելիք-Շահնազարյանը գրական-գեղարվեստական գործունեությանը զուգընթաց լրատվում էր հրատարակախոսություններով՝ մեծ մասամբ մասնագիտական հարցերի լուսաբանում հեղինակը անդրադառնում է ցանքերի կտտարման, բույսերի, այգիների աճեցման և, ընդհանրապես, հողից բարձր բերք ստանալու «գաղտնիքներին»:

Իբրև գյուղատնտես-մասնագետ և հրատարակախոս, Մելիք-Շահնազարյանը մեծ անուն էր հանել Անդրկովկասում: Ահա թե ինչու, երբ 1924 թվականին նշվում էր նրա գրական-հասարակական գործունեության 35-ամյակը, Երևանի գյու-



ղատնտեսական ինստիտուտում սահմանվում է Տմբլաշի Խաչանի անվան ուսանողական երկու թոշակ: Նույն թվականին Մելիք-Շահնազարյանն արժանանում է վաստակավոր գյուղատնտեսի կոչման:

Մելիք-Շահնազարյանը հավաքել է ժողովրդական շատ խաղիկներ ու հեքիաթներ և դրանք տպագրել է առանձին ժողովածուով: Նա զբաղվում է նաև թարգմանություններ և մի շարք հաջողված թարգմանություններ է կատարել Պուշկինից, Լերմոնտովից, Նեկրասովից, Գյոթեից: Նա հայերեն է փոխադրել լատիշական և հնդկական հեքիաթներ, բարձրորակ թարգմանություններ արել մասնագիտական գրականություններից:

Տմբլաշի Խաչանը գրել է նաև պիեսներ, որոնց մի ղգալի մասը մնացել է անտիպ: Դրանցից են «Կուվան կալվածատերը», «Գող, սիրտը դող», «Փոքրիկ նվագածուն կամ մանկություն Մոցարտի», «Կուլորը» և այլն: Նա ակտիվ քաղաքացի էր, մտահոգվում էր իր հայրենակիցների հոգսերով, ձգտում էր օգնություն ձեռք մեկնել նրանց, ովքեր դրա կարիքն զգում էին:

4. Մելիք-Շահնազարյանը ժամանակի աշքի ընկնող գրողներից, հրապարակախոսներից մեկն էր և իր գրիչը ծառայեցրել է իր ժողովրդին: Ահա թե ինչու հենց սկզբից էլ նրան տրվել է ՏՄԲԼԱՉԻ ԽԱՉԱՆ անունը, այսինքն մի ստեղծագործող, որ օժտված է սուր մտքով և երգիծելու մեծ շքանորհրով:

### ԱԿԱՆԱՎՈՐ ՊԱՏՄԱԲԱՆԸ, ԳՐՈՂԸ, ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԸ

(Լեոյի ծննդյան 130-ամյակի առթիվ)

Հայ մշակույթի և նրա տարբեր բնագավառների պատմության մեջ Լեոն (Առաքել Բաբախանյանը) առանձնանում

է գիտական ծանրակշիռ աշխատություններով, հրապարակախոսական փայլուն ելույթներով, գրականագիտական հոդվածներով և մենագրություններով: Նրա ավանդը անուրանալի է նաև հրատարակչական և մանկավարժության ասպարեզում: Եվ այս ամենը ոչ միայն խոր գիտելիքների, այլև անկրկնելի աշխատասիրության շնորհիվ: 1908 թվականին՝ գրական-հրապարակախոսական գործունեության 25-ամյակի առթիվ իր շնորհակալական խոսքի մեջ Լեոն ասել է. «Ամենից առաջ ես իմ շնորհակալությունը, իմ հիացմունքը ձոնում եմ այդ տիեզերական մեծ սկզբունքին — աշխատանքին»: Այո՛, նրա համար աշխատանքը, հատկապես գիտական-հրապարակախոսական գործունեությունը կենսական պահանջ էր և իր երջանկությունն ու հանգիստը տեսնում էր դրա մեջ:

Եվ հենց սկզբից նշենք, որ նրա 60-ի հասնող կապիտալ աշխատությունները, հարյուրավոր բաղմաբնույթ և բազմաթեմատիկ հոդվածները անկարող էր մեկ ուրիշը ընթերցողներին հասցնել այդքան ոչ երկար ժամանակահատվածում: Նրա արածը մի ամբողջ ինստիտուտի գործ էր:

Լեոն ծնվել է 1860 թվականին, Արցախ աշխարհի այն ժամանակվա կենտրոնում՝ Շուշիում, որը հենց ծննդյան տարում հայ բնակչության թիվը անցնում էր 30 հազարից:

Ականավոր արցախցին մի առիթով շեշտել է, որ իր վրա մեծ ազդեցություն է գործել ոչ միայն տեղի բնակչության նիստ ու կացը, մարդկային բարենպաստ պայմանները, այլև շքնաղ բնությունը, օդն ու ջուրը:

Սկզբնական կրթությունն ստանում է հայրենի քաղաքում: Ավարտում է թեմական և այլ դպրոցներ: Այդ տարիներին արդեն զգացվում էր պատանու ոչ միայն անհագուրդ սերը իր ժողովրդի պատմության և գրականության, այլև մամուլի նկատմամբ: Նա համոզված էր, որ իր հարազատ ժողովրդի հետ արագությամբ հաղորդակցվելու, նրա հոգսերն ու մտահոգություններն արտահայտելու համար առաջին հերթին հարկավոր է սերտ կապեր ունենալ թերթերի և ամսագրերի հետ, հաճախ հանդես գալ դրանց էջերում: Եվ յուրաքանչյուրը՝ սկսած անցյալ դարի 70—80-ական թվականների հայ պարբերական մամուլի էջերը թերթելիս, անպայման կհանդիպի Լեոյի ծանրակշիռ նյութերին, որոնք բնութագրական փաս-



տերի շրջանառութեամբ լուսաբանում են այս կամ այն հար-  
ցը, խնդիրը: Դա ամենից առաջ վերաբերվում է «Մշակին»,  
«Արձագանքին», «Տարազին», «Աղբյուրին» և այլ պարբերա-  
կանների, որոնք լույս էին տեսնում Անդրկովկասի տարբեր  
քաղաքներում: Էլ չեմ ասում նրա փայլուն ելույթները Շու-  
շիում 1911 թվականից հրատարակվող «Արարազ», «Փայ-  
լակ» և մյուս թերթերում: «Փայլակի» 1917 թվականի մար-  
տի 9-ի, 16-ի և 23-ի համարներում լույս տեսած «Արա-  
բազ և զարաբաղցիներ» մեծածավալ հոդվածը պատիվ կա-  
րող է բերել յուրաքանչյուր տպագիր օրգանի: Անվանի հեղի-  
նակը որոշ հատկանշական կողմերով ներկայացնելով իր հայ-  
րենակիցների բարեմասնություններն ու առաքինությունները,  
շեշտը դնում է այն բանի վրա, որ Արցախը ոչ մի դեպքում  
չպետք է զիջի իր դիրքերը, այն ինչ այդ միտումն արդեն  
նկատելի է: Եվ Լեոն այդ մի կողմից բացատրում է շարու-  
նակվող համաշխարհային պատերազմով, մյուս կողմից՝ Արե-  
մքոյան Հայաստանում կատարված հայաջինջ քաղաքակա-  
նությունը:

Լեոն կարծես տեսնում էր վաղվա օրը. «Գեո հրդեհված  
քաղաքների ու գյուղերի բոցերը չմարած, դեռ սպանվածների  
ու սրախողխող անմեղների արյունը շատած, դեռ հաղարա-  
վոր տնից-տեղից... զրկված փախստականների արտասուր-  
ները շցամաքած, դեռ հարյուրավոր անտեր ու որբ երեխա-  
ների աղեկտուր ողբն ու կոծը շղաղարած նոր-նոր արհա-  
վիրքների ու սոսկումների լուրեր են գալիս «ղուլումի երկ-  
րից»:

Խոսքը պարզ էր ու համոզիչ. հայերի մի մեծ հատված  
կործանվում էր թուրք բռնակալների ձեռքով: Եվ նա դժվա-  
րանում էր ասել. ո՞ւմ դիմել նրանց պաշտպանության հա-  
մար:

Եվ այսպես, կարող ենք մի շարք հրապարակախոսական  
ելույթների մասին խոսք ասել, որոնք ելնում էին օրվա հու-  
զոր հարցերից և մեծանուն հեղինակը ձգտում էր սպեղանի  
փնտրել իր հայրենակիցների պաշտպանության համար:

1881 թվականից սկսած Լեոյի գիտական-հրատարակչա-  
կան, հրապարակախոսական գործունեությունն առնչվում է  
Մ. Մահտեսի-Հակոբյանի տպարանի հետ: Նա միաժամանակ

այդ տպարանի վերահսկիչ սրբագրիչն էր և կատարում էր  
խմբագրական աշխատանքներ: Նա մտահոգված էր, որպեսզի  
իր ծննդավայրում աճեն հրատարակչական գործի նվիրյալներ  
և բարձր աստիճանի վրա լինի գրատպությունը Արցախում:

Եվ պատահական չէ, որ Լեոյի աշխատությունների մեծ  
մասը առաջին անգամ տպագրվեցին Շուշիում. «Վե՞պ թե  
պատմություն» (1887 թ.), «Կույր աղջիկը», «Վահան Մամի-  
կոնյանը» (1888 թ.), «Իմ հիշատակարանը», «Սպանված  
հայրը» (1891 թ.), «Թաթախման գիշերը» (1892 թ.) և այլն:

Լեոն սիրում էր հրատարակչական գործը ոչ միայն Շու-  
շիում, այլև Բաքվում և Թիֆլիսում աշխատելու տարիներին  
նա իր կապերը շէր խզում Արցախից. հետաքրքրվում էր մշա-  
կութային կյանքով և հնարավորին շափ նպաստում նրա զար-  
գացմանը: 1893 թ. Բաքվում տպարանի կառավարիչ եղած  
ժամանակ նա տպագրական որոշ նյութեր է ուղարկում Շուշի:

1898 թվականին մշտական աշխատանքի անցնելով «Մը-  
շակի» խմբագրությունում, Լեոն ձգտում էր հնարավորին շափ  
մեծ տեղ տալ Ղարաբաղի առօրյայի լուսաբանմանը, պար-  
բերաբար նյութեր տպագրել և Շուշիից և այլ բնակավայրե-  
րից:

Լեոն գործնական աշխատանքին զուգահեռ կատարում էր  
ծանր հետազոտություններ. ուսումնասիրում էր իր ժողովրդի  
հարուստ պատմությունը, գրականությունը: Առանձնապես  
արժեքավոր է հեղինակի «Հայոց պատմություն» բազմահա-  
տոր աշխատությունը, որտեղ ուրվագծվում էր մեր ժողովրդի  
անցած ուղին՝ հնագույն շրջանից մինչև 19-րդ դարը: Սա-  
կայն նա ուսումնասիրում է նաև նոր շրջանի պատմությունը:  
Եվ Լեոն ճշմարտացի էր, երբ գրում է. «Ուսումնասիրողների  
համար հետաքրքրություն ներկայացնում էր կարծես միայն  
մեր հին պատմությունը, այն, ինչ ամփոփված է Խորենացու  
պատմության մեջ: Մնացած շրջանները կարծեք մոռացված  
են: Եվ, սակայն, չէ որ մենք պատմական կյանք ունեցել ենք  
և միջին և նոր դարերում»:

Լեոն այն հետազոտողներից էր, ովքեր քննական մոտե-  
ցում էին դրսևորում արդեն հրապարակի վրա եղած գրակա-  
նության նկատմամբ, ովքեր եղածը հալած յուղի տեղ չէին  
դնում, այլ իրենք քննում, զննում էին և տալիս «իրենցը»,



նորը, ավելի ճշմարիտը: Այս առումով Լեոյի շատ աշխատություններ քննություն են բռնում: Տարբեր առիթներով է նա նշել, որ պատմությունը զվարճալի ընթերցանություն չէ, այլ մի գիտություն է, որը ամփոփում է ժողովրդի անցած մեծ ու փոքր ժամանակահատվածում: Ավելին, դեռ 1901 թվականին մեծ պատմաբանը «Մուրճ» ամսագրում գրել է. «Պատմությունը ժամանակակից հասկացողությամբ թագավորների, իշխանների, հոգևորականների պատմություն չէ, այլ ժողովրդի պատմություն»:

Հիրավի, Լեոյի մեծ ու փոքր աշխատությունները այն բանի առհավատաշյան են, որ պատմություն ստեղծողները առանձին անհատներ չեն, այլ մի ամբողջ ժողովուրդ, որի ճշմարտացի, օբյեկտիվ կենսապատմանը, քաղաքական-հասարակական իրադարձությունների ներկայացմանը պետք է աշխատություններ նվիրել՝ խոսքն ու միտքը մարմնավորելով կրթությունամբ, մարտական շնչով:

Նրա աշխատությունների մի այլ առանձնահատկությունն այն է, որ շեշտված կերպով զգացվում է հեղինակի հայրենասիրությունը, նվիրվածությունն իր ժողովրդին, հայրենի եզերքին:

Անբասիր հեղինակը ոչ մի խոշընդոտի առաջ կանգ չի առնում հանձնարարությունը կամ իր նախասիրած թեմայով աշխատությունը ձեռնարկելու համար: Դրա վառ վկայությունն էր 1912 թվականին ստանձնած առաջադրանքը Արցախի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակի առթիվ գրելու նրա պատմությունը: Զարմանալ կարելի է, թե ինչպես այդ կարճ ժամանակում, մի տարվա ընթացքում Լեոն այնքան հարուստ տվյալներ է հավաքում՝ դպրոցի մասին, որ այդ փաստերը դուրս են գալիս մի ուսումնարանի պատմության սահմաններից և ուրվագծվում է ոչ միայն Արցախի, այլև մասամբ երկրի քաղաքական, հասարակական, կուլտուր-կրթական կյանքի անցած ուղին: Հեղինակի փաստերը կոնկրետ են՝ մանրամասնություններով, բնութագրումներով, եզրակացություններով, և, իհարկե, հանձնարարականներով:

Մեզ թվում է, թե Լեոն ինչ գրել է, անպայման նախասիրություն է ունեցել դրա նկատմամբ: Այդ երևում է ամբողջ տեքստից: Դրա ապացույցն է նաև 1914 թ. Թիֆլիսում լույս

տեսած ծավալուն գիրքը՝ «Պատմություն Դարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի»:

Նրա գիտական-մանկավարժական և հրապարակախոսական գործունեությունը տքնաջան ու բեղմնավոր էր նաև խորհրդային շրջանում: Նա հրապարակ հանեց մի շարք աշխատություններ («Նոջայական կապիտալ», «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը»), «Կոմունիզմը հայոց պատմության մեջ» և այլն), որտեղ երևում էր բազմապատակ գիտնականի բարդ և երբեմն էլ հակասական աշխարհայացքը:

Լեոն մի շարք մենագրություններում ձգտել է իրադարձություններին մոտենալ մատերիալիստական ըմբռնմամբ, քննադատել է կղերա-ֆեոդալական, սխոլաստիկական պատմագրությունը: Լեոն մեծ ծառայություն ունի Հայաստանի անդրանիկ բուհի՝ պետական համալսարանի զարգացման գործում: Գրեթե հիմնադրման օրից անվանի գիտնականը երկար տարիներ աշխատում է որպես հայ ժողովրդի պատմության դասախոս: Եվ շատ-շատերը, որոնք իբրև ճանաչված պատմաբանի, Լեոյի ուսանողներն են եղել:

Նրա ուսանողներից մի քանիսը պատմում են, որ երբ Լեոն սկսում էր պատմել հայոց պատմության այս կամ այն էջը, ունկնդիրը զգում էր իրեն տվյալ շրջանում՝ պատմության մասնակից: Նրա խոսքը ոչ միայն ճշմարտացի էր, հյուսիսի, հեշտ ընկալելի, այլև տոգորված էր ներգործուն ուժով: Իսկ դա այն բանի վկան էր, որ դասախոսը խորապես տիրապետում է իր առարկային և կարողանում է մատչելի կերպով նյութը հաղորդել ուսանողին:

Լեոյի դասախոսությունները և հայրենասիրական էին, և ազգասիրությամբ տոգորված: Նա փաստերի և օրինակների բնութագրում էր կատարում, գիտեր, որ փաստը հաղորդելը ունկնդրին, որպեսզի նրա վրա ազդեցություն ունենա:

Նրա հյուսիսի լեզուն շատ շատերին է կախարդել: Այդ վերաբերում է և բանավոր և գրավոր խոսքին: Ահա թե ինչու հանձարեղ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, կարգալով Լեոյի «Անի» ձեռագիր աշխատանքը, գրել է. «Հանգուցյալ ականավոր հեղինակ Առաքել Բաբախանյանի-Լեոյի անտիպ աշխատությունը՝ «Անին» շատ մեծ հաճույքով կարգա-



ցի: Այնքան հրապուրիչ էր գրված ամեն տեսակետից, որ մի անգամ սկսելով անկարող եղա բաժանվել գրքից— այնքան հափշտակեց ինձ: Մինչև այսօր Անիի մասին այսքան սպառնիչ, լիակատար գործ չէի կարգացել, միանգամայն գիտական և հանրամատչելի... մանրամասն, նյութերով հարուստ, բովանդակալից, բազմակողմանի... հեղինակի լեզուն պատկերավոր է, աշխույժ, սահուն, ոճը կենդանի, էմոցիոնալ»:

Լեոն մահացավ 1932 թվականին, երբ նա դեռ գործում էր երիտասարդի ավյունով: Ականատեսները պատմում են, որ նա գրասեղանի մոտ աշխատում էր օրական 14—16 ժամ: Այժմ, նա մի ամբողջ գիտական կոլեկտիվի աշխատանք կատարեց, իր անունը հավերժ կապելով մայր ժողովրդի պատմության հետ:

### ՎԱՀԱՆ (ԽԱՉԻԿ) ԴԱԳՅԱՆ

19-րդ դարի երկրորդ կեսին Արցախը ակնառու է դառնում իբրև հայ մշակույթի կարևորագույն օջախ: Մի կողմից հրատարակչական-դպրոցական գործի առաջընթաց, մյուս կողմից՝ մշակութային ձեռնարկումների ավելի արդյունավետ դարձնելը, մտավորականության ակտիվ մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին:

Թեմական, օրիորդաց, ռեալական դպրոցների և այլ ուսումնական օջախների գործունեությունը և տպագիր նոր օրգանների հանդես գալը Շուշիի դարձրել էին Արցախի մշակութային երևելի կենտրոնը, որը ձգողական ուժի պես իրեն էր քաշում շատ ու շատ անվանի գործիչների: Նշենք, որ 1860—70-ական թվականներին Շուշիում էին գործում մեր անվանի գրողներից Պերճ Պոռչյանը, Ղազարոս Աղայանը,

հայտնի մանկավարժներից Պետրոս Շանշյանը, Սեդրակ Մանգինյանը և ուրիշներ:

1881 թվականին Նիկողայոս Տեր-Ավետիքյանը հրատարակեց «Քնար խոսնակ», իսկ 1882—1884 թթ.՝ Սիմոն Հախումյանը իր «ԳՈՐԾ» հանդեսը, որոնց կատարած դերն անուրանալի է հայ պարբերական մամուլի պատմության մեջ: Այդ նույն 1884-ական թվականներին մեծ ջանքեր է դնում Վահան (Խաչիկ) Տեր-Գրիգորյանը—Դադայանը «Արցախ» անունով նոր պարբերական հրատարակելու գործում:

Վահան Դադայանը մտածում էր լույս աշխարհ բերել մի թերթ, որը ոչ միայն կանոնավորապես լուսաբանել գավառի առօրյան, այլև տպագրել այնպիսի նյութեր, որոնք մի կողմից բարձրացնում են ընթերցողների գաղափարական մակարդակը, մյուս կողմից՝ սպեղանի է քաղաքի և գյուղի աշխատավորների հոգսերը թեթևացնելու ուղղությամբ: Նա ծրատավորների հոգսերը թեթևացնելու ուղղությամբ: Նա ծրագրել էր իր թերթը հրատարակել շաբաթը մեկ-երկու անգամ՝ մի քանի բաժիններով. «ԱՐՅԱՆ», «ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ», «ՌՈՒՍՍՍԱՆ», «ԱՐՏԱՍԱՀՄԱՆ», «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍ», «ՆԱՄԱԿՆԵՐ», «ՓՈՍՏԻՅ» և այլն: Ինքնըստինքյան պարզ է, որ խմբագիր-հրատարակիչը լայն ծրագիր ուներ և ձգտում էր այն իրականացնել, խմբագրության շուրջը համախմբելով Արցախի առաջավոր մտավորականներին, առաջին հերթին հայոց թեմական դպրոցի ուսուցիչներին: Վահան Դադայանը մի շարք անգամ է դիմում ներկայացնում կովկասի գործերի մամուլի կոմիտեին, բայց նրա խնդրանքները ամեն անգամ «պատճառաբանվում» են անհիմն ձևակերպումներով՝ իբր՝ թե հեղինակը անհուսալի է, շունի նյութական միջոցներ և այլն:

1887 թվականին վերջին անգամ Վահան Դադայանը դիմելով վերադաս մարմիններին՝ իրեն իրավունք տալու «ԱՐՅԱՆ» անունով գրական-գեղարվեստական ամսագիր հրատարակելու մասին, նույնպես մերժվում է, այս անգամ էլ «պատճառաբանելով» թե իբր անհրաժեշտ բաժանորդներ չեն ունենա:

Ով էր Վահան (Խաչիկ) Դադայանը. ծնվել է 1863 թվականին, Արցախի Վարանդայի (Փոքր Սյունիք) գավառի Զարդանաշեն (Վերին Թաղավարդ) գյուղում: Վաղ հասակից նա



ցի: Այնքան հրապուրիչ էր գրված ամեն տեսակետից, որ մի անգամ սկսելով անկարող եղա բաժանվել գրքից— այնքան հափշտակեց ինձ: Մինչև այսօր Անիի մասին այսքան սպառնիչ, լիակատար գործ չէի կարգացել, միանգամայն գիտական և հանրամատչելի... մանրամասն, նյութերով հարուստ, բովանդակալից, բազմակողմանի... հեղինակի լեզուն պատկերավոր է, աշխույժ, սահուն, ոճը կենդանի, էմոցիոնալ»:

Լեոն մահացավ 1932 թվականին, երբ նա դեռ գործում էր երիտասարդի ավյունով: Ականատեսները պատմում են, որ նա գրասեղանի մոտ աշխատում էր օրական 14—16 ժամ: Այ՛ր, նա մի ամբողջ գիտական կոլեկտիվի աշխատանք կատարեց, իր անունը հավերժ կապելով մայր ժողովրդի պատմության հետ:

### ՎԱՀԱՆ (ԽԱՉԻԿ) ԴԱԳՅԱՆ

19-րդ դարի երկրորդ կեսին Արցախը ակնառու է դառնում իբրև հայ մշակույթի կարևորագույն օջախ: Մի կողմից հրատարակչական-դպրոցական գործի առաջընթաց, մյուս կողմից՝ մշակութային ձեռնարկումների ավելի արդյունավետ դարձնելը, մտավորականության ակտիվ մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին:

Թեմական, օրիորդաց, ռեալական դպրոցների և այլ ուսումնական օջախների գործունեությունը և տպագիր նոր օրգանների հանդես գալը Շուշին դարձրել էին Արցախի մշակութային երևելի կենտրոնը, որը ձգողական ուժի պես իրեն էր քաշում շատ ու շատ անվանի գործիչների: Նշենք, որ 1860—70-ական թվականներին Շուշիում էին գործում մեր անվանի գրողներից Պերճ Պոռչյանը, Ղազարոս Աղայանը,

հայտնի մանկավարժներից Պետրոս Շանշյանը, Սեդրակ Մանգինյանը և ուրիշներ:

1881 թվականին Նիկողայոս Տեր-Ավետիքյանը հրատարակեց «Քնար խոսնակ», իսկ 1882—1884 թթ.՝ Սիմոն Հախումյանը իր «ԳՈՐԾ» հանդեսը, որոնց կատարած դերն անսուրանալի է հայ պարբերական մամուլի պատմության մեջ: Այդ նույն 1884-ական թվականներին մեծ ջանքեր է դնում Վահան (Խաչիկ) Տեր-Գրիգորյանը—Դադայանը «Արցախ» անունով նոր պարբերական հրատարակելու գործում:

Վահան Դադայանը մտածում էր լույս աշխարհ բերել մի թերթ, որը ոչ միայն կանոնավորապես լուսաբանել գավառի առօրյան, այլև տպագրել այնպիսի նյութեր, որոնք մի կողմից բարձրացնում են ընթերցողների գաղափարական մակարդակը, մյուս կողմից՝ սպեղանի է քաղաքի և գյուղի աշխատավորների հոգսերը թեթևացնելու ուղղությամբ: Նա ծրագրել էր իր թերթը հրատարակել շաբաթը մեկ-երկու անգամ՝ մի քանի բաժիններով. «ԱՐՅԱՆ», «ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ», «ՌՈՒՍԱՍԱՆ», «ԱՐՏԱՍԱՀՄԱՆ», «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍ», «ՆԱՄԱԿՆԵՐ», «ՓՈՍՏԻՅ» և այլն: Ինքնըստինքյան պարզ է, որ խմբագիր-հրատարակիչը լայն ծրագիր ուներ և ձգտում էր այն իրականացնել, խմբագրության շուրջը համախմբելով Արցախի առաջավոր մտավորականներին, առաջին հերթին հայոց թեմական դպրոցի ուսուցիչներին: Վահան Դադայանը մի շարք անգամ է դիմում ներկայացնում կովկասի գործերի մամուլի կոմիտեին, բայց նրա խնդրանքները ամեն անգամ «պատճառաբանվում» են անհիմն ձեռնարկումներով՝ իբր՝ թե հեղինակը անհուսալի է, շունի նյութական միջոցներ և այլն:

1887 թվականին վերջին անգամ Վահան Դադայանը դիմելով վերադաս մարմիններին՝ իրեն իրավունք տալու «ԱՐՅԱՆ» անունով գրական-գեղարվեստական ամսագիր հրատարակելու մասին, նույնպես մերժվում է, այս անգամ էլ «պատճառաբանելով» թե իբր անհրաժեշտ բաժանորդներ չեն ունենա:

Ով էր Վահան (Խաչիկ) Դադայանը. ծնվել է 1863 թվականին, Արցախի Վարանդայի (Փոքր Սյունիք) գավառի Զարդանաշեն (Վերին Թաղավարդ) գյուղում: Վաղ հասակից նա



մտադրվում է աղբօգուտ լինել, նվիրվել իր մայր ժողովրդին: Այդ միտքը նրան մտահոգում է, երբ սովորում է Արցախի հայոց թեմական դպրոցում, որն ավարտում է 1881 թվականին:

1881—1884 թթ. նա մեծ աշակցություն է ցույց տալիս Շուշիի հրատարակչական գործին՝ օգնելով նորաստեղծ Տիգրան Նազարյանի գրասենյակին՝ մի քանի օգտակար գրքեր լույս ընծայելու համար:

Խ. Դադյանը աշխատակցում է «ԴՈՐԾ» հանդեսին, տպագրելով մի քանի նյութեր գավառի առօրյաչից:

Նա Շուշիում և Վարարակնում (այժմ՝ Ստեփանակերտ) մանկավարժական լայն գործունեություն է ծավալում, դասավանդում է մայրենի լեզու և գրականություն, աստվածաբանություն, կրոն և այլն:

Ղեկավարում է տեղական ծխական հոգևոր դպրոցը, ապա Ա. Հոփսիսի մանկուսանաց Անապատի ծխական հոգևոր դպրոցում աչքի է ընկնում իր կազմակերպչական գործունեությամբ: Նա հոգ է տանում դպրոցին կից գրագարան-ընթերցարան բացելու մասին: Խոսք չկա այն իրագործվում է. մշակույթի այդ օջախը 1888 թ. հունվարի 1-ից Շուշիում բացվում է, որը ծառայում էր ոչ միայն իբրև գրագարան, այլև սիրված մի օջախ, ուր իրականացվում էին բեմադրություններ, գեղարվեստական ցերեկույթներ, երեկույթներ: Ավելին, արխիվային փաստաթղթերը վկայում են, որ այդ գրագարանին կից արդեն գործում էր եղբայր Դադյանների գրախանութը, ուր վաճառում էին հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով լույս տեսած նոր գրքեր: Փաստաթղթերից մեկում ուղղակի ներկայացվում է մի հայտարարություն այն մասին, որ նորաստեղծ գրագարանը ստանում է հայերեն և ռուսերեն մի շարք պարբերականներ՝ երկրի տարբեր վայրերից, այն բանի մի քանի հարյուր ընտիր գրքեր, մեծ մասամբ գեղարվեստական:

Գրագարանն ուներ կանոնադրություն, որն ձրի կերպով ընթերցողները ստանում էին Դադյանների գրախանութից:

Նշենք նաև, որ Խ. Դադյանը 1888 թվականին ձեռնադրվել է կուսակրոն հոգևորական և որպես սարկավազ, պաշտոնա-

վորել է Արցախի Գրիգորիսի և Մեծարանք Ս. Հակոբի վանքում, ապա որպես վանահայր Խոթու վանքում:

Սկսվում է նրա գործունեության մի նոր շրջանը. 1888 թ. մինչև 1890 թվականները Խ. Դադյանը կատարել է հնագիտական պեղումներ Խաչենի (այսինքն՝ Արցախի— Ս. Ա.) Առաջածոր, Քուլատակ գյուղերի բլուրներում և Սաղսաղան բերդում: Միաժամանակ նա Ղարաբաղի քահանաների և մեկերի տներից հավաքել է հայերեն, պարսկերեն, տաճկերեն, ռուսերեն և վրացերեն վավերագրեր, առանձին ձեռագրեր և հանձնել Ս. էջմիածին: Այդ ձեռագրերը-վավերագրերը գիտական մեծ արժեք են ներկայացնում, որոնք նոր լույս են սփռում պատմական մի շարք կնճառ հարցերի լուսաբանման վրա:

Այդ վավերագիր-ձեռագրերի մի մասը այժմ պահպանվում է Երևանի Մատենադարանում:

Ս. էջմիածնի գերագույն պատրիարք, Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հրամանով Խաչիկ Դադյանը 1894 թվականին ձեռնադրվում է վարդապետ:

Այնուամենայնիվ Խ. Դադյանը շարունակում է գիտական աշխատանքը: Նա Ատրպատականի հայոց թեմի փոխանորդության տարիներին այցելելով Մակու, Խոյ, Սալմաստ, Ուրմիա, Բարանդուզ, Մարադա և այլ վայրեր, հավաքել է մեծաքանակ հայերեն ձեռագրեր, պատմական վավերագրեր և ուրիշ հնություններ, որոնք լրացրել են էջմիածնին «Հայրիկյան թանգարանի» ֆոնդը: Եվ պատահական չէ, որ 1899 թվականին Խաչիկ Դադյանը նշանակվեց այդ նորաստեղծ թանգարանի տեսուչ և էջմիածնի տպարանի տնօրեն:

1887 թվականից սկսած Խաչիկ Դադյանը դառնում է կովկասյան հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական վարչության անդամ: Դա մեծ պատասխանատվություն էր դնում Խ. Դադյանի վրա՝ նոր եռանդով լծվելու Արցախի դպրոցական-մշակութային գործունեությանը: Նրա օգնությամբ մի շարք ձեռնարկումներ են իրականացվում: Նրա անվան հետ են կապված հայոց հին ճարտարապետության գրուխ գործոցներից մեկի՝ «ԶվԱՐԹՆՈՅ» տաճարի ավերակների պեղումները, որոնք սկսել է նա 1900 թվականին՝ կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հավանությամբ և կայսերական



հնագիտական հանձնաժողովի թույլտվությամբ. նա ղննում-  
ներ է կատարում Գվինում, Հին Արմավիրում (Շահրիար),  
որտեղ էլ 1908 թվականին գտել է ուրարտական 28 տողից  
բաղկացած արձանագրություն:

Խաչիկ Դադյանը զբաղվել է նաև բանասիրությամբ, ազ-  
գագրական նյութերի ուսումնասիրությամբ: Նա հավաքել է  
ժողովրդական, ազգագրական երգեր և հանձնել մշակողներին:  
Առանձին նյութերի մշակմամբ և գիտական շրջանառության  
մեջ ղնելու գործում քիչ ավանդ չունի և. Դադյանը:

Խ. Դադյանը գրի է առել մեծ եղեռնի ականատեսների և  
տուժածների պատմածները թուրք բարբարոսների վայրենի  
սպանությունների մասին:

Մեծ է խաչիկ Դադյանի ծառայությունը, ահա թե ինչու  
1904 թվականին Նիկողայոս Տեր-Ավետիքյանը չափածո ձոն  
է ուղղել նրան, որի մեջ դրվատում է նրա մարդկային ար-  
ժանապատվությունը, դերը հայ հասարակական-մշակութային  
կյանքում:

Հիրավի, Արցախի պատմության մեջ, որ ընդգրկում է 19-  
րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին քսանամյակը, անու-  
րանալի է նրա կատարած աշխատանքը կյանքի տարբեր ո-  
լորտներում՝ մշակութային, հասարակական-գիտական-լուսա-  
վորական և այլ բնագավառներում:

Ահա թե ինչու Ն. Տեր-Ավետիքյանի ձոներում գեղար-  
վեստական արտահայտման միջոցների արտահայտմամբ աս-  
վում է, որ խաչիկի անունը երբեք չի խամրի մեր ժողովրդի  
պատմության մեջ:

Այսուհանդերձ, թեև Հայաստանի Հանրապետության պե-  
տական կենտրոնական արխիվային վարչության համապա-  
տասխան ֆոնդում կան ուշագրավ նյութեր խաչիկ Դադյանի  
մասին, բայց նրա գործունեության ավելի քան 45 բեղուն  
տարիները խոր ուսումնասիրության կարիքն ունեն:

Առաքել Գևորգի Առաքելյանի վաստակն անուրանալի է  
մեր մշակույթի զարգացման ասպարեզում: Նա ծնվել է Լեո-  
նային Ղարաբաղի Խաչեն գավառի (այժմ Ասկերանի շրջան)  
Խանաժախ գյուղում, 1887 թ. հունվարին: Ծնողները չբավոր  
էին: Հողագործի որդին ուսումնատենչ տղա էր: Ավարտելով  
Շուշիի թեմական դպրոցը, Ա. Առաքելյանը որոշում է սո-  
վորել նաև էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Տասնհինգամ-  
յա պատանին այստեղ հրապուրվում է մի շարք առարկա-  
ներով, հատկապես գրականությամբ, փիլիսոփայությամբ, հո-  
գեբանությամբ և լեզուներով:

Ժամանակակիցները պատմում են, որ նա այդ տարիներ-  
րին, բացի գրաբարից, խորապես ծանոթանում է նաև հու-  
նարենին: Երիտասարդ ճեմարանցին միաժամանակ աչքի է  
ընկնում որպես կրթոտ քաղաքացի: Նա անտարբեր չէր քա-  
ղաքական իրադարձությունների նկատմամբ: Թադևոս Ավ-  
դալբեգյանի հետ այդ կրթօջախում ստեղծում է մարքսիստա-  
կան ընդհատակյա խմբակ, որը գործում է մինչև 1907 թ.:  
Երկար շանցած, ակտիվ գործունեության համար երկուսին էլ  
վտարում են ճեմարանից: Նրանք վճռում են զբաղվել ու-  
սուցչությամբ, դասավանդում են Իզդիրի դպրոցում, աշա-  
կերտների մեջ անհատուրդ սեր բորբոքում դեպի հումանիտար  
գիտությունները, հայ գրականությունն ու հարազատ ժողո-  
վրդի պատմությունը:

1908 թ. Առաքելյանը տեղափոխվում է Ղարաբաղ, ուսուց-  
չական աշխատանք կատարում Շուշիի թեմական և այլ դըպ-  
րոցներում՝ դասավանդելով մայրենի լեզու, հայ գրականու-  
թյուն և հայ ժողովրդի պատմություն:

Այդ տարիներին նա արդեն երկրամասում ճանաչված ու-  
սուցիչ էր: 1912—1914 թթ. զբաղեցրել է Ղարաբաղի հայկա-  
կան դպրոցների տեսուչի պաշտոնը: Նրա ջանքերով գավա-  
ռում հիմնվում են հայկական մի շարք դպրոցներ:

Ա. Առաքելյանը բեղմնավոր գործունեություն է ծավալել  
նաև պարբերական մամուլում: 1910—1915 թթ. նա հանդես



էր գալիս Անդրկովկասի հայկական թերթերում: Հայտնի է նրա հոդվածների շարքը հատկապես «Մշակի» էջերում: Խանգավառ մանկավարժը քննադատում էր այն դպրոցները, որտեղ կրթությունն իրականացվում էր հին մեթոդներով, ուշադրություն չէր դարձվում առանձին առարկաների ուսուցումը դուրսի դարձնելուն: Նրա երգիծական նյութերը «Ղարաբաղ» թերթի 1912—1913 թթ. համարներում տպագրվում էին «Խաթերիս համար» խորագրի ներքո: Ա. Առաքելյանն իր հոդվածներում առաջ էր քաշում լուսավորական-կրթական գործը երկրամասում հիմնավորապես բարելավելու պահանջը՝ խարազանելով գավառի նահապետական սովորություններն ու խոցելի բարքերը:

Անդրկովկասում հաստատվում են խորհրդային կարգեր: Ա. Առաքելյանը 1921—1925 թթ. Կոնստանդնուպոլիսում գրություններ էր, իսկ հետագա երկու տարիներին՝ մարզի լուսժողովում:

Ինքնավար մարզի բոլոր դյուղերում նրա ջանքերով բացվում են տարրական և ոչ լրիվ միջնակարգ դպրոցներ, պայքար է ծավալվում անգրագիտությունը վերացնելու համար: Նա եռանդով զբաղվում էր նաև ուսուցչական կադրեր և ուսումնական ձեռնարկներ պատրաստելու գործերով: Նրա նախաձեռնությամբ մարզում ստեղծվում է երիտասարդ ուսուցիչներին օգնող հանձնաժողով, որը գլխավորում է ինքը:

1927 թ. Ա. Առաքելյանն իր գիտամանկավարժական աշխատանքը շարունակում է Բաքվում, ուր բացվում են հայկական դպրոցներ: Փոխվում են ուսուցման մեթոդներն ու ձևերը: Նա միաժամանակ դասավանդում էր բանֆակում և ուսումնական այլ հաստատություններում:

1934 թ. Առաքել Առաքելյանը տեղափոխվում է Երևան: Այստեղ ավելի ահնառու է դառնում նրա գիտական և մանկավարժական գործունեությունը: Սկզբում նա աշխատում է մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում՝ հիմնականում ծավալելով թարգմանչական աշխատանք: Երկու տարի անց հրավիրվում է դասախոսական աշխատանքի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան, Լենինականի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտներում: Նա դասախոսում է արտասահմանյան գրականություն, ոուս գրա-

կանություն, գրաբար, հայոց լեզու և այլ առարկաներ: Տասընհինգ տարուց ավելի Ա. Առաքելյանը ղեկավարում է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ոուս և արտասահմանյան գրականությունների ամբիոնը:

Ա. Առաքելյանը երեսուցից ավելի ասպիրանտներ և հայցվորներ է ղեկավարել՝ հաղորդելով նրանց իր գիտամանկավարժական աշխատանքի հարուստ փորձն ու խոր գիտելիքները:

Դասախոսական աշխատանքին դուզահեռ նա զբաղվում էր գիտական գործունեությամբ: Նրա «Հունական գրականությունն պատմությունը», «Հունական գրականության պատմությունը», «Գրաբարի դասագիրքը» ունեցան մի քանի հրատարակություն: Ուսուցիչների և ուսանողների համար նա կազմել է «Գրաբարի ինքնուսուցման ձեռնարկ»:

Առաքել Առաքելյանը՝ ձեռնամուխ է եղել հույն ժողովրդի կրթական գործի ուսումնասիրմանը: Մանկավարժ գիտնականն ազատ տիրապետում էր հունարենին, և պարզ է, որ նրա ձեռքի տակ կային հարուստ շատ փաստեր: Եվ ահա, լույս է ընծայում իր աշխատությունը՝ «Կրթությունը և դաստիարակությունը հին Հունաստանում» խաղրագրով:

Բազմավաստակ հեղինակի ունեմնասիրությունների մեջ ուրույն տեղ է գրավում հայ մշակույթի զարգացման պատմությունը նվիրված աշխատությունների շարքը: Հինգ հատորանոց այդ հետազոտությունը լուսաբանում է մեր մշակույթի այն կարևորագույն էջերը, որոնք սկիզբ են առել դեռևս հինգերորդ դարից:

Հեղինակին բախտ չվիճակվեց բոլոր հինգ հատորները տեսնել հրատարակված: Լույս տեսած երեք հատորները ընթերցողին պարզ պատկերացում են տալիս Հայաստանում և նրա սահմաններից դուրս մաթեմատիկայի, ֆիզիկայի, փիլիսոփայության, գրականության, հայոց լեզվի, հետադարձական արվեստի և գիտության այլ բնագավառների զարգացման մասին:

Լայն էր Ա. Առաքելյանի հետազոտական աշխարհը: «Գրքավազներ քննադատական մտքի պատմությունից» աշխատությունում նա լուսաբանել է քննադատական միտքը և տվել դրա պատմությունը, վեր հանել Գ. Վ. Պլեխանովի, Մ. Գոր-



կու, Մ. Նալբանդյանի, Ստ. Շահումյանի, Ա. Սպանդարյանի, Ալ. Մյանսիկյանի և ուրիշների թողած գրական-գիտական ժառանգությունը, ցույց տվել նրանց գործերի արժեքը, բնութագրել նրանց տեղը քննադատական մտքի պատմության մեջ:

Պրոֆեսոր Ա. Առաքելյանի կատարած գործն անուրանալի է նաև թարգմանության ասպարեզում: Նա գերմաներենից հայերեն է թարգմանել Ֆ. էնգելսի «Բնության դիալեկտիկան», Գ. Վ. Պլեխանովի «Իդեալիզմից մատերիալիզմ» աշխատությունը և մի շարք դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ:

Ա. Առաքելյանը մեծ հմայքի տեր մարդ էր, շէր հրապուրվում տիտղոսներով ու կոշումներով, նրան ամենից առաջ հուզում էին ազնիվ աշխատանքն ու արգասաբեր գործունեությունը:

ՀեՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոշում: Մինչև իր կյանքի վերջը անվանի գիտնականն զբաղվում էր իր սիրած գործով՝ գիտահետազոտական աշխատանքներով:

Առաքել Առաքելյանը սիրված դասախոս էր, վաստակաշատ հետազոտող և անվանի մանկավարժ: Մանրակշիռ է նրա վաստակը հայ դպրության և լուսավորական գործի պատմության մեջ:

### ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՆ ՈՒ ԳՈՐԾԻԶԸ

Լևոն Սերգեյի Վարդապետյանը մեր հայրենակիցն է, ծընվել է 1884 թ. Գյումրի ճարտար գյուղում:

Պատանին շատ մանկուց սեր էր տածում դեպի ուսումը, հետաքրքրվում էր շրջապատով, մարդկանցով, երևույթներ-

րով: Դրա առհավատչյան նրա ուսման փայլուն առաջադիմությունն էր Շուշիի ռեալական դպրոցում, որն ավարտեց 1902 թվականին:

Աշակերտական տարիներին 18—20-ամյա Լևոնը ընդգրկվում է առաջադիմական շարժումների մեջ, գաղտնի հրատարակելով «Երիտասարդ գրիչ» հանդեսը: Ավելին, նա Բ. Կնունյանցի և նրա կնոջ՝ Գորիկովայի հետ կազմակերպում է աշակերտական խմբակ:

Ուսման ծարավը 1903 թվականին նրան տանում է Մոսկվա՝ իրավաբանական ֆակուլտետում սովորելու: Այստեղ նա մտերմանում է մի շարք ականավոր գործիչների հետ, որոնք բարերար ներգործություն են ունենում նրա վրա: Հատկապես սերտ կապերի մեջ էր հայտնի հասարակական գործիչ Ռուբեն Քաթանյանի հետ:

Մոսկվայի համալսարանն ավարտելուց հետո աշխատում է Թիֆլիսի դատական մարմիններում, իսկ 1911 թվականից՝ մշտական բնակություն է հաստատում իր սիրած Շուշիում: Որպես իրավաբան, նա ակտիվ մասնակցություն է ունենում Ղարաբաղի քաղաքական կյանքում:

1915 թվականին Լևոն Վարդապետյանը Շուշիում սկսում է հրատարակել և խմբագրել «Փայլակ» թերթը, որը լուսաբանում է գավառի կյանքը, մասնավորապես կրթական-առողջապահական հարցեր: Վարդապետյանի հրապարակախոսական գործունեությունը շէր սահմանափակվում միայն «Փայլակով»: Նա ակտիվորեն աշխատակցում էր Թիֆլիսում լույս տեսնող մի շարք հայ պարբերականների, մասնավորապես «Նոր խոսք»-ին:

Նրա հասարակական-քաղաքական աշխատանքի համար նոր ասպարեզ է բացվում խորհրդային Հայաստանում: Այստեղ Լ. Վարդապետյանը վարում է մի շարք պատասխանատու պաշտոններ: 1921 թվականին նա պարենավորման ժողկոմատի կոլեգիայի, այնուհետև՝ ֆինժողկոմատի կոլեգիայի անդամ էր, 1922—1923 թթ.՝ Դարալագյազի գավառային գործադիր կոմիտեի նախագահ, արդարադատության ժողկոմի օգնական, իսկ 1923—1927 թթ.՝ հանրապետության դատախազ, 1927 թ.՝ Հայկական ԽՍՀ Կենտրոնական կազմհրա-



հանգչական բաժնի վարիչ, 1927—1931 թթ. գերագույն դատարանի նախագահ:

Լեոն Վարդապետյանը հասարակական-քաղաքական աշխատանքը հմտորեն զուգակցում էր ուսումնա-մանկավարժական գործունեությանը: Նա արդեն ճանաչված իրավաբան էր: Սկսած 1935 թվականից դասախոսություններ էր կարդում Երևանի պետական համալսարանում և այլուր:

Իր գիտական բարձր մակարդակի, պետական բեղմնավոր գործունեության համար նա մեծ հեղինակություն էր վայելում աշխատավորների շրջանում:

Լեոն Վարդապետյանի կյանքն ընդհատվեց 1943 թվականին:

### ԲԱՆԱՍՏԵՂԾԸ, ՈՒՍՈՒՑԻՉԸ...

(Գրիգոր Ներսիսյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Գրիգոր Ներսիսյանի բանաստեղծական արվեստը միշտ գեղեցիկ մտքեր է առաջացրել իր ընթերցողների մեջ: Լինելով բարձր կուլտուրայի տեր բանաստեղծ, նա կարողացել է խոսքի միջոցով կենդանացնել մարդու ակնկալիքներն ու ձգտումները, մարմնավորել նրա մտորումներն ու խոհերը:

Մնվել է 1887 թվականին, Շուշիում: Ողբերգական է եղել պատանու մանկությունը: Մի կտոր հաց վաստակելու համար Գրիգորն ստիպված էր ամենածանր ֆիզիկական աշխատանքներ կատարել: Սակայն հայրենի բնաշխարհը, մարդկային գեղեցիկ զգացմունքները նրա մեջ միշտ վառ են պահել առաջանալու, լուսավորվելու տենչը: Գիրն ու գրականությունը, ազնիվ խոսքը դառնում են նրա ապավենն ու հենարանը: Եվ

նա պատանեկան երազներով ու խոհերով ոտք է դնում Շուշիի թեմական դպրոցը:

Գյրոցի ուսուցիչները և Շուշիում գտնվող գրողներն ու արվեստագետները բարերար ազդեցություն են ունենում Գր. Ներսիսյանի վրա: Գեո դպրոցական նստարանից շատերը նրա մեջ տեսնում են մի շնորհալի երիտասարդի, որը կարող է համարձակորեն մտնել կյանքի հորձանուտը և իր խոսքը ասել «համ ու հոտով»:

1913 թ. Գրիգոր Ներսիսյանն ավարտում է թեմականը, սկսում զբաղվել ուսուցչությամբ: Ղարաբաղի մի շարք դըպրոցներում նա հայոց լեզվի և գրականության գանձերը հասցնում էր իր սաներին, նրանց մեջ սեր առաջացնում դեպի մայրենի մշակույթը: Հենց այդ ժամանակ էլ երիտասարդ բանաստեղծը սկսում է իր գրչի ուժով մարմնավորել մի կողմից գավառի թշվառ վիճակը, մյուս կողմից՝ գալիքը:

Գր. Ներսիսյանի բանաստեղծությունները աչքի էին ընկնում իրենց գաղափարայնությամբ, բարձր կուլտուրայով, պոետական հնարանքներով: Ընթերցողները հենց սկզբից ըզգում են, որ իրենք գործ ունեն մի բանաստեղծի հետ, որի մոտ ճշմարտապատում է պատկերների էմոցիոնալ բովանդակությունը, խոսքը հագեցված է խոր հուզականությամբ, կատարյալ են արտահայտչական միջոցները:

Եթե սկզբնական շրջանում Գր. Ներսիսյանի մոտ առաջնայինը քնարական էր, անձնականը, ապա 1915 թ. սկսած, երբ նա բարձրագույն կրթություն ստանալու նպատակով Մոսկվա էր գնացել, գրիչը դառնում է ավելի մարտական, նպատակասլաց, ներգործուն: «Սև հուշեր»-ի տեղ բանաստեղծը սկսում է երգել կյանքի առաջընթացը, համոզված լինելով, որ շուտով, շատ շուտով «տանջանք, պատրանք աշխարհում...» կծագի արևը պայծառ: Եվ նա անում է այն մարդկանց գովքը, ովքեր իրենց արյամբ են կոտմ գալիքը: Նա էլ է ձգտում ձուլվել հեղափոխության մարտիկներին, ապրել ու գործել նրանց հետ:

Օ՛, մարտիրոսներ... ձուլվել եմ ուզում  
Ձեր հպարտ հոգու գոռ ապրումների  
շարանների մեջ... ապրել եմ ուզում  
ձեր արյուն կյանքով:



Հեղափոխական խմորումները, բանվորական շարժման փոթորիկը, լայն զանգվածների ելույթները բանաստեղծին բերում են այն համոզման, որ հսկա մրրիկը նոր ծավալ կըստանա և կբացվի նորոգ կյանքի այգաբացը: Հեղինակը մոտավորապես դա արտահայտում է «Նոր այգ» բանաստեղծույթյան մեջ:

1916—1917 թթ. Գրիգոր Ներսիսյանը Պետերբուրգում էր: Նա ահանատես է լինում արագ զարգացող իրադարձություններին, փոթորկալից ստեղծագործություններ է գրում, ներառելով նրանց մեջ մարդկային ձգտումներն ու ակնկալությունները, ներքնաշխարհը, հույզերը:

Ներսիսյանի գրիչը սուր էր և մարտական, խոցող և մերկացնող, նա քննադատում էր ցարական իշխանությունը, մերկացնում էր նրա կամակատարներին, բացահայտում նրանց բարբերը, ցոփ ու շվայտ կյանքը, անբարոյականությունն ու ամբարտավանությունը: Ավելի լավ է խոսքը տանք իրեն բանաստեղծին.

Ապրել եմ ուզում..., բայց ոչ ձեր կյանքով,  
Հավատի որդիք... ձեր պալատներ  
Շինված են, գիտեմ, հազար խեղճ մարդկանց  
Դառն արցունքից, անգոր արյունից...

Ապրել եմ ուզում ձեր մահվան օրը  
Տեսնելու համար... ձեր պալատների  
Ու տանքների, հաղթ ամրոցների  
Կործանման գույժը երգելու համար:

Գրիգոր Ներսիսյանի ստեղծագործական պաթոսը, արվեստի ուժը և խոսքի թուլշանքը նոր եռանդ ու փայլ են ստանում հետագա շրջանում. նրա ստեղծագործությունների լեյտմոտիվը նոր մարդն էր՝ իր աշխատանքով, մտածելակերպով, իր բազմաբեղուն առօրյայով: Մարդն է ամենակարող ուժը, դրոմ է Ներսիսյանը, որն ընդունակ է ստեղծելու անմահ կոթողներ, շինելու աշխարհը, փոխելու ամեն բանի հույսը, սկիզբը... Նվ գրվատելով մարդուն, նա փառաբանում էր նրա աշխատանքը, եռանդը, ոգևորությունը, ծաղկող հայրենիքը:

Երգեր նվիրելով նոր քաղաքներին ու գյուղերին, Գրիգոր Ներսիսյանը պարզ տեսնում էր, թե ինչպես իր աչքի առջև կործանվում է հինը, իր դարն ապրածը և ամեն տեղ հաղթանակում է նորը, առաջավորը:

Գրիգոր Ներսիսյանի ստեղծագործությունները տպագրվում էին Անդրկովկասի հայ պարբերական մամուլում: Շատ-շատերն են «Ղարաբաղ», «Փայլակ», «Պայքար», «Միածան» և այլ օրգաններում հոգվածներ նվիրել պոետի ստեղծագործական աճին, ցույց տալով նրա արվեստի ուժն ու կարողությունը, ստեղծագործությունների արժեքը, բնութագրելով նրա պոետական հնարքները, լեզվական բարձր կուլտուրան: Միաժամանակ այդ նույն թերթերում և հանդեսներում պարբերաբար տպագրվում էին Գր. Ներսիսյանի բանաստեղծություններն ու պոեմները, բալլադներն ու սոնետները:

Ստեղծագործելու հետ միասին Գր. Ներսիսյանը 1919 թվականից սկսած մինչև իր կյանքի վերջը (1937 թ.) ուսուցչություն էր անում Ղարաբաղի, մասնավորապես Ստեփանակերտի դպրոցներում: Նա բազմահմուտ և նորարար մանկավարժ էր, աշակերտները հիանում էին նրա դյուրիչ պարզ, սակայն խորիմաստ խոսքերից: Գրիգոր Ներսիսյանը միաժամանակ առաջին մարդն էր, որ խորհրդային Ղարաբաղում ստեղծեց գրական մթնոլորտ, գրական միջավայր:

Նվ ահա այսօր, երբ 80 տարի է անցել նրա ծննդյան օրից և 30 տարի մահվանից, մեր երախտագիտական խոսքն ենք ուղղում մեր սիրելի և անմոռանալի ուսուցչին, պոետին, քաղաքացուն:

## ԳՐՈՂԸ, ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶԸ

(Միստֆ Պետրոսյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ղարաբաղը մշակույթի անվանի գործիչների հայրենիք է: Այստեղ են ծնվել ու հասակ առել տաղանդաշատ բանաստեղծներ, գրականագետներ, երաժշտագետներ, երգիչներ...:



Ականավոր երաժշտագետ Վ. Ղորղանյանը «Կովկասի երա-  
ժրշտությունը» աշխատության մեջ, որը լույս է տեսել 1908  
թվականին, Թիֆլիսում, Ղարաբաղը ներկայացնում է մի վայր,  
որը երաժիշտներ է մատակարարում ամբողջ Կովկասին,  
բարձր գնահատելով նրանց առաքինություններն ու բարե-  
մասնությունները:

Այդ նույն բանը կարող ենք ասել նաև բանաստեղծական,  
գեղարվեստական խոսքի վարպետների մասին, որոնցից մեկն  
էլ Միսաք Պետրոսյանն է: Նա ծնվել է 1886 թվականին, Շու-  
շիում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենիքում, ա-  
պա ավարտել է Երևանի թեմական դպրոցը:

Պատանեկան հասակից նա մեծ հետաքրքրություն է հան-  
դես բերում մայրենի գրականության նկատմամբ: Վերադառ-  
նալով Շուշի, նա զբաղվում է ուսուցչությամբ: Այդ շրջանում  
նա գրում է մի շարք բանաստեղծություններ, որոնք տպա-  
գրվում են տարբեր պարբերականներում:

Միսաք Պետրոսյանը վաղուց մտահոգված էր գրական  
պարբերական ստեղծելու հոգսերով: Եվ նրան հաջողվում է  
ընկերների աջակցությամբ զարգացնել այդ գործը: Հայտնի  
մանկավարժ Լևոն Վարդունին իր հուշերում գրում է. «1915  
թվականն էր. ես թեմական դպրոցի վերջին, ավարտական  
դասարանի աշակերտ էի, գրում էի բանաստեղծություններ  
և գրավոր կապ ունեի մի շարք երիտասարդ գրողների՝ Գառ-  
նիկ Ղազարյանի, Ավագ Կոծինյանի, Խորեն Լորենցի հետ,  
որոնք հենց այդ ամառ պետք է գալին Շուշի՝ հանգստա-  
նալու: Այդ ամառ Շուշի էր եկել և Աղատ Վշտունին. եկան  
նաև վերոհիշյալ ընկերներ, և սկսվեց մեր գրական կյանքը:  
Ամեն օր հավաքվում էինք և ընթերցում մեր բանաստեղ-  
ծությունները. արձակ գրում էր միայն Ավագ Կոծինյանը:  
Մի օր որոշեցինք հրատարակել մի ամսագիր, բայց որով-  
հետև բոլորս երիտասարդ էինք, մեզ չէին թույլատրի: Այդ  
ժամանակ Շուշիում էր ուսուցիչ և գրող Միսաք Պետրոսյանը,  
որը հասակով բոլորիցս մեծ էր: Նա հավանություն տվեց մեր  
մտահղացմանը և համաձայնվեց լինել պաշտոնական խմբ-  
բագիր...»:

Այդ ամսագիրը «Ծիածանն» էր, որի միակ համարը լույս  
տեսավ 1916 թվականի մարտին, Շուշիում: Միսաք Պետրոս-

յանը մեծ ջանքեր գործադրեց պարբերականի հրատարակ-  
ման ու նրա գաղափարական ուղղության վրա: Նրա խընդ-  
րանքով «Ծիածանին» աշխատակցեց նաև Աղատ Վշտունին:  
Տպագրվեցին նրա «Կա և չկա, չէ...», «Աննպատի մեջ» շա-  
փածո գործերը, որոնց մեջ հեղինակը ներկայացնում է տը-  
խուր իրականությունը, մարդկային անազատ կյանքը:

«Ծիածանում» լույս տեսան նաև Միսաք Պետրոսյանի ըս-  
տեղծագործությունները: «Կարավանս գալիս է» բանաստեղ-  
ծության մեջ հեղինակը փափագում է նոր, աղատ կյանք, որ-  
տեղ իշխի ոչ թե պատրանքն ու սին երազը, այլ մարդկային  
առաքինությունն ու բարությունը: Ահա թե ինչու «Հերոսի  
երազը» փոքրիկ պոեմում նա գրում է.

... Մեզ համար էլ քոզ ծաղկի  
Նոր Արշալույս, Նոր-Տարի,  
Մի տեղ ձուլվենք նոր կյանքում,  
Հյուսվի մի սիրտ, մի հոգի...,

«Ծիածանում» տեղ են գտնում նաև Գառնիկ Ղազարյանի,  
Գրիգոր Ներսիսյանի, Լևոն Վարդունու և ուրիշների ստեղ-  
ծագործությունները, որոնց մեջ ուղղակի և անուղղակի ձե-  
վով քննադատվում էին գոփողները, ուրիշի վաստակը յու-  
րացնողները, անբարոյականությունը, աշխատավածությունը,  
երկերեսանությունն ու անազնվությունը: Առանձին գործերում  
աշխատանքի մարդիկ հակադրված են քաղքենիներին:

Խորհրդային տարիներին Միսաք Պետրոսյանը արդեն գո-  
վերգում է նոր հույսով ապրող մարդուն, նոր գաղափարների  
տեր քաղաքացուն, որը երկար մաքառումներից հետո ձեռ-  
տում է համառորեն ապրել աղատ ու անկաշկանդ: Նրա հե-  
րոսը հայրենի Լեոնային Ղարաբաղի գյուղացին է, համայ-  
նական դաշտերի մշակը, անասնապահն ու կոմբայնավարը,  
նոր մարդը նոր մտածելակերպով: Նա ռեկտրված էր Հայրե-  
նական մեծ պատերազմում մեր ժողովրդի տարած հաղթա-  
նակով: «Մոր նամակը ռազմի որդուն» բանաստեղծության  
մեջ հեղինակը գրում է.

Այ դրոշը մեր փառքի  
Ամուռ պահիր մինչև մահ,



Ֆաշիստներին զագրելի  
Բնաջնջիր անխնա.  
Հրացանդ նորագույն,  
Գնդակներդ անվրեպ.  
Հրե սուրդ դյուցագնի  
Ձեռքից շտապ մինչև մահ...  
Ռազմի անեղ մարտերում  
Փոքորիկ ես ու կայծակ,  
Շանքանաբիր ամենուր  
Դու թշնամուն սանձառձակ:

Միսաք Պետրոսյանի ստեղծագործությունների մի զգալի մասը նվիրված է կնոջը, երեխաներին: Հեղինակի խոսքը հընչում է իբրև պատգամ մանուկներին՝ սիրելու գիրքը, գրականությունը, մարդկայինը, բարին, ատելու շարն ու վատը:

Արժեքավոր են Միսաք Պետրոսյանի բանաստեղծությունները՝ նվիրված հայրենիքին, Արցախին, ժողովուրդների բարեկամությանը, աշխարհում խաղաղության պահպանմանը: Նրա այս շարքի բանաստեղծությունները այսօր էլ շնչում են նորովի:

Միսաք Պետրոսյանը շատ բանաստեղծություններ թողեց անտիպ, որ պահպանվում է իր դուստրի՝ Արևիկի մոտ: Նըրանց հետ ծանոթությունը բերում է այն հետևություն, որ հեղինակը կրթոտ քաղաքացի էր, ապրում էր իր ժողովրդի հոգսերով, ուրախություններով ու մտահոգություններով:

## ՄԵՄ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՀՄԱՅԻՉ ԴԱՍԱԽՈՍԸ

(Արսեն Տերտերյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Բնությունն Արսեն Տերտերյանին պարգևել էր շատ բարեմասնություններ, որոնք քշերին է բախտ վիճակվում. ամենից առաջ սուր միտք, տրամաբանություն, գիտելիքներ ձեռք բերելու անհատնում ընդունակություն, խոսելու անառարկելի շնորհք, մարդկային հմայք, բարություն... Եվ այս ամենին,

ըստ երևույթին նպաստել են ոչ միայն բնությունն ու շըրջապատը, այլև նրա աշխատասիրությունը:

Արսեն Տերտերյանը ծնվել է 1882 թվականի նոյեմբերի 12-ին, Լեռնային Ղարաբաղի Շոշ գյուղում: Շոշը հեռու չէ Շուշի քաղաքից, որը նախախորհրդային շրջանում Ղարաբաղի կենտրոնն էր: Այստեղ էին կենտրոնացված գավառի կուլտուր-լուսավորական օջախները, այստեղ է 1828 թվականին լույս տեսնում հայերեն գիրքը, հիմնադրվում դպրոց, հետագայում թատրոն և այլն: Շուշիում, դեռ անցյալ դարի վերջերին, գործում էր երիտասարդներից կազմված հեղափոխական խումբ, որը նպատակ էր դրել մարքսիստական գաղափարներ տարածել գավառի առավել առաջադեմ բնակիչների շրջանում:

Պատանի Ա. Տերտերյանի ուսումնառությունն սկզբնավորվում է հայրենի գյուղում: Շուշիի սեմինարիայում սովորելիս նա աչքի է ընկնում ոչ միայն բարձր գնահատականներով, այլև տիրող կարգերին անհնազանդ լինելու հանդգնությամբ: Դեռ չէր լրացել Տերտերյանի 12 տարին, երբ նա ընդգրկվում է «անհնազանդների» շարքերը, վտանգելով ուսումը շարունակելու իրավունքը: 1894 թվականի սեպտեմբերի 9-ի՝ Ղարաբաղի հոգևոր սեմինարիայի հոգեբարձական-ուսուցչական խառը ժողովի որոշման մեջ ասվում է. «Իբրև դպրոցում և հասարակության մեջ շփոթում հարուցող և անվայել վարք ունեցող աշակերտ Ա. Տերտերյանին պատժի ենթարկել...»: Այս նշանակում էր, որ պատանին արդեն ընդգրկվել էր առաջադիմական գաղափարներով տոգորված աշակերտության շարքերը և ձգտում էր դուրս գալ «խավարի թագավորությունից», լուսավոր ափեր:

Արսեն Տերտերյանը ուսման մեջ դրսևորում էր ակնհայտ առաջադիմություն, Շուշիի սեմինարիան ավարտում է գերազանց գնահատականներով և բուռն ցանկություն հայտնում ուսումը շարունակելու էջմիածնի Գևորգյան ձեմարանում: Ձեմարանի ջերմ մթնոլորտը, ուսուցիչների բարձր մակարդակը և մայրենի լեզվի ու գրականության նկատմամբ Ա. Տերտերյանի սերը նրան մղում են հայրենանվեր գործի՝ 1905—1907 թվականներին Շուշիում աշխատում է որպես հայ գրականության և գրականության տեսության ուսուցիչ սեմի-



նարիայում: Այդ տարիներից սկսած Արսեն Տերտերյանն ա-  
վելի է կապվում մայրենի գրականության հետ՝ հրապարակ  
բերելով գրականագիտական մնացուկ հոդվածներ:

Օժտված լինելով գիտական աշխատանք կատարելու անա-  
ռարկելի ձիրքով, Ա. Տերտերյանը ձեռնամուխ է լինում մե-  
նագրությունների, առանձին աշխատությունների ստեղծմանը,  
որոնց մեջ գլխավոր փաստին հաջորդում են մեկնաբանու-  
թյունը և եզրակացությունը, ամփոփումը:

Ուսուցիչ-գիտնականի առաջին աշխատությունը նվիրված  
էր հայ հեղափոխական-դեմոկրատ գրող Միքայել Նալբանդ-  
յանին, որ լույս տեսավ 1910 թվականին: Գիրքը՝ «Ազգու-  
թյան հրապարակախոսը», վկայություն էր այն բանի, որ  
հանձին Ա. Տերտերյանի, մեր գրականագիտության բնագա-  
վառն է մտել տաղանդավոր մի երիտասարդ՝ փաստերն ու  
երևույթները վերլուծելու անուրանալի ձիրքով: Միայն այն  
փաստը, որ Ա. Տերտերյանը առաջինն էր Միքայել Նալբանդ-  
յանին ներկայացնում ամբողջությամբ, ցույց տալով նրան  
ոչ միայն հեղափոխական-մարտական գրող, այլև կրթոտ  
հրապարակախոս, վկայում էր գրականագետի խորաթմփան-  
ցությունը, անառարկելի գիտելիքները, գիտական աշխատանք  
կատարելու ունակությունները:

Միքայել Նալբանդյանը արժանվույն է գնահատվում որ-  
պես հայ ռեալիստական գրաքննադատության և հայ մար-  
տական հրապարակախոսության սկզբնավորող:

1910 թվականին լույս տեսավ հեղինակի մի նոր աշխա-  
տությունը՝ «Վահան Տերյան» վերնագրով: Սա արդեն լայն  
ճանաչում բերեց նրբաճաշակ գրականագետին: Արսեն Տեր-  
տերյանն ընթերցողներին, գրականագետներին ու գրողներին  
ներկայացավ որպես անզուգական Տերյանին ճիշտ դիրքերից  
գնահատող հետազոտող, ցույց տալով նրա քնարի ուժը, խոս-  
քի անզուգականությունը, մտքի խոր գաղափարայնությունը,  
տրամաբանությունը:

Հետզհետե դրսևորվում է Արսեն Տերտերյան գրականա-  
գետի միտքը. առանձին նշանավոր գրողների գրական գոր-  
ծունեության վերլուծությունը դառնում է նրա գրականագի-  
տական օբյեկտը: Ալեքսանդր Շիրվանզադեն մեր այն դա-  
սականներից մեկն է, որի մասին ծավալուն խոսք ասաց

Արսեն Տերտերյանը: Գրականագետը մեկ առ մեկ վերլուծե-  
լով վիպասանի, դրամատուրգի մեծ ու փոքր ստեղծագոր-  
ծությունները, ամբողջական կերպով էր բնութագրում առան-  
ձին կերպարները, ընթերցողներին համոզելով իր եզրակա-  
ցությունների և ամփոփումների մեջ:

Ալ. Շիրվանզադեին նվիրված աշխատության մեջ երևում  
է Տերտերյան-գրականագետի օբյեկտիվ վերաբերմունքը դը-  
րողի ստեղծագործությունների արժեքավորման գործում: Նա  
Շիրվանզադեին ներկայացնում է ոչ միայն հախուռն զար-  
գացման մեջ, գրական լիարժեք, անկրկնելի կերպարներ ըս-  
տեղծող, այլև առանձին ստվերներ է նշմարում նրա առան-  
ձին երկերում, որոնք, ինչ խոսք, կարող են նպաստ չբերել  
մեծ գրողին:

Գրականագետի գրչին են պատկանում մի շարք բարձր ար-  
ժեք ներկայացնող ուսումնասիրություններ մեր անվանի գը-  
րողների՝ Նար-Դոսի (1912 թ.), Հովհաննես Թումանյանի  
(1914 թ.), Մուրացյանի (1915 թ.) և այլոց մասին: Այդ մե-  
նագրություններում տաղանդավոր գրականագետը թափան-  
ցում էր գրողների ստեղծագործական լաբորատորիան, ար-  
ժեքավորում ստեղծագործությունները, նշում նրանց դերը մեր  
գրականության զարգացման ասպարեզում: Սակայն Ա. Տեր-  
տերյանի խոսքը կենսագրական ինֆորմացիա չէր՝ իր ըն-  
դարձակ փաստերով, այլ գերազանցապես գիտական միտք  
էր՝ պարուրված գրականագիտական մտքերով, եզրակացու-  
թյուններով, տեսական սահմանումներով:

Ա. Տերտերյանը դարմանալի կերպով կարողանում էր ու-  
սուցչական գործնական աշխատանքը զուգակցել գիտականին,  
հրապարակ բերել այնպիսի գրականագիտական ուսումնասի-  
րություններ, որոնց մի զգալի մասը այսօր էլ վերջին խոսք է  
մնում այս կամ այն գրողի մասին:

Հատկապես գիտական արդյունավետ տարիներ էին 1909—  
1920 թվականները, երբ նա, որպես հայ գրականության դա-  
սատու, աշխատում էր էջմիածնի թեմական դպրոցում:

Վերջին տարիները նոր հնարավորություններ և պայման-  
ներ ստեղծեցին ակնավոր գրականագետի համար: Նա ար-  
դեն լայն ճանաչում էր գտել գիտական աշխարհում: Երբ  
հիմնադրվում է Երևանի պետական համալսարանը, Արսեն



Տերտերյանը հրավիրվում է նորաբաց բարձրագույն դպրոցը՝ իբրև դասախոս, դառնալով հայ գրականության ամբիոնի վարիչը:

Նրա դասախոսական աշխատանքը գայթակղում էր շատերին. նրա խոսքը խորն էր ու հմայիչ: Շատ-շատերն էին ցանկանում լսել անկրկնելի դասախոսին, ունկնդրել նրա խորհմաստ վերլուծումները, գրականագիտական միտքը: Եվ տարեց տարի մեծանում էր Ա. Տերտերյանի՝ գիտնական-դասախոսի պատիվն ու հարգանքը: Արժանվում է գնահատվում նրա գիտական-մանկավարժական գործունեությունը: 1928—1929 ուսումնական տարում նա ստանում է պրոֆեսորի կոչում, իսկ 1940 թվականին՝ դոկտորի գիտական աստիճան:

Ա. Տերտերյանն այն դասախոսներից չէր, որ շտապ հրապուրվի կոչումներով և բավարարվի ձեռք բերածով, շարունակում է դասախոսական-գիտական աշխատանքը նոր եռանդով: Հրապարակ են գալիս Հակոբ Պարոնյանին, Խաչատուր Աբովյանին, Բաֆֆուն և մեր մյուս մեծերին նվիրված հոդվածներն ու գիտական ուսումնասիրությունները, որոնք նոր խոսք են գրողի ստեղծածն արժեքավորելու ասպարեզում: Հայ գրականագիտության գանձարանում մնալուն հետք են թողել հեղինակի 1942 թվականին լույս տեսած «Հովհաննես Թումանյանի հայրենասիրական պոեզիան», «Գաբրիել Սունդուկյանը և ժողովուրդների բարեկամությունը» և այլ աշխատությունները:

Արսեն Տերտերյանը ուսումնասիրության օբյեկտ է դարձնում նաև ուս գրողների ստեղծագործությունները: Նրա «Պուշկինը և հայ կուլտուրան», «Ռուս հանձարեղ առակախոս-բանաստեղծը» և այլ հոդվածներ ու ուսումնասիրություններ հայ ընթերցողների առաջ կրկին բացում են երկու ժողովուրդների գրական սերտ կապերի վիթխարի աշխարհը, որ հնում և այսօր էլ կենսական պահանջ էր, առաջադիմության մի նոր գործոն:

Արսեն Տերտերյանի գիտական հարուստ գործունեությունը բարձր է գնահատվում գիտական աշխարհում: Առաջիններից մեկն էր նա, որ ընտրվում է հանրապետության Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, շարունակելով իր դասախո-

սական հմայիչ աշխատանքը Երևանի պետական համալսարանում:

Արսեն Տերտերյանը մեծ քաղաքացի էր, ապրում էր իր ժողովրդի ուրախություններով ու հոգսերով, արձագանքում էր հայրենիքի համար կարևորագույն իրադարձություններին ու երևույթներին, համարձակորեն ելույթ էր ունենում տեղական և կենտրոնական մամուլում:

Նա կապված էր նաև իր հայրենի Ղարաբաղին, իր Շոշին, հետաքրքրվում էր համագյուղացիների ակնկալություններով ու ձգտումներով, օգնում էր նրանց ուսումնառության և գիտական աշխատանքում ընդգրկվելու գործում: Ահա թե ինչու մահվանից առաջ նա կտակել էր իր հարուստ գրադարանը նվիրել հայրենի գյուղին: Այժմ Շոշում գործում է Արսեն Տերտերյանի անվան գրադարանը:

Այո՛, Արսեն Տերտերյանը իբրև գրականագետ, դասախոս, իբրև քաղաքացի մեծ ավանդ է ներդրել գրականագիտության առաջընթացի գործում: Այսօր էլ շատ-շատերը, ուսանողներն ու դասախոսները գլուխ են խոնարհում նրա թողած գիտական հարուստ ժառանգության առջև: Եվ թեև շուրջ 30 տարի է, ինչ չկա Արսեն Տերտերյանը, բայց հարյուրավոր մարդիկ օգտվում են նրա գրականագիտական վիթխարի ժառանգությունից, սերունդներին փոխանցելով նրա միտքն ու խոսքը, մարդկային հմայքը:

## ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՍԻՐՈՎ

Արղավիր Քամայանի անունը քաջ հայտնի է Արցախի աշխատավորությանը: Նա ժամանակին հասարակական-քաղաքական եռանդուն աշխատանք է ծավալել դեռևս Շուշիի ռեալական ուսումնարանում սովորելիս, Պետերբուրգի համալսարանում ուսանելու տարիներին, 1918—1920 թթ. Ղարաբաղի համար ծանր ժամանակաշրջանում, երբ իր վրա էր զրկված «Ղարաբաղի սուրհանդակի» լույսընծայման պարտականությունները:



Արշավիր Ոսկանի Քամալյանը ծնվել է 1889 թ. սեպտեմբերին, Շուշիում: 1909 թ. բացառիկ ընդունակությունների տեր պատանին Շուշիի ռեալական ուսումնարանն ավարտում է փայլուն գնահատականներով: Սկսած 1905 թ. նա հայրենի քաղաքում ստեղծված սոցիալ-դեմոկրատական աշակերտական կազմակերպության անդամ էր, որ ընդհատակյա ազդեցություն-պրոպագանդիստական աշխատանք էր ծավալում գավառի ծայրամասային գյուղերում, մեծ մասամբ մետաքսագործական ֆաբրիկաների աշխատավորության շրջանում: Գործում էր «հուլյանի ու հուլյանի աշխարհում»՝ տոգորված առաջադիմական գաղափարներով: Ահա այս շրջանի դպրոցականների մասին է, որ նշանավոր պատմաբան, «Նեցուկ» (1917 թ., Շուշի) թերթի խմբագիր Աշոտ Հովհաննիսյանը գրել է. «1890-ական թվականների վերջերում հուլյանի ու լույսների աշխարհում էր ապրում նաև Շուշի քաղաքի երիտասարդությունը: Նոր սերնդի մտայնությունը տակավին չէր բոլորել իր կյանքի հերոսական շրջանը: Հղի հանդուգն ծրագրերով՝ ստեղծվեց հոգևոր մի մթնոլորտ, որտեղ ծնվում էր և սնվում նաև դպրոցում սովորող մատաղ աշակերտությունը: Հասակակից ընկերներ էին, տոգորված վառ ցնորքներով, լի եռանդով, պատրաստ ամեն զոհաբերության... Դպրոցից դուրս կար ժողովատեղի, որտեղ հետևում էին քաղաքական գրականությունը, լսում էին ղեկուցումներ «երկրի» մասին, վեճի բռնվում, որոշումներ ընդունում, խմբագրում ձեռագիր թերթը՝ «Կոկոնը» («Կոմունիստ», Բաքու, 1923 թ., ապրիլի 13):

Սակայն նրան տանջում էր նաև մի մեծ հոգս. ստանալ բարձրագույն կրթություն: Քեռու կողմից նյութական օջնություն ստանալով տեղափոխվում է Պետերբուրգ և 1910 թ. ընդունվում պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ: Ուսանողական շարժմանն ակտիվ մասնակցելու համար 1911 թ. Ա. Քամալյանին բանտարկում են և մեկ ամսվա կալանքից հետո ուղարկում ետ՝ հայրենիք: Սակայն շուտով նրան հաջողվում է նորից ընդունվել Պետերբուրգի համալսարան, որը ավարտում է 1915 թվականին:

Ա. Քամալյանի իղձը, սակայն, այն չէր, որ անպայման գործի երկրի կենտրոնում, նրան կանչում էր հայրենի Արցախը: Նա վերադառնում է Շուշի ու դառնում ռեալական

ուսումնարանի առաջատար դասատուներից մեկը՝ ակտիվորեն մասնակցելով տեղի սոցիալ-դեմոկրատական խմբակի աշխատանքներին:

1918 թ. սկզբին Ղարաբաղում ստեղծվել էր ծանր վիճակ. գավառում, որ ամբողջովին մեկուսացված էր կենտրոնից, տիրում էր անարխիան: Մուսավաթական Ադրբեջանը իր գործողություններով սրել էր հայերի և ադրբեջանցիների միջև պռանց այն էլ լարված վիճակը: Հենց այդ ժամանակահատվածում Ա. Քամալյանը ակտիվ մասնակցություն է ունենում Ղարաբաղի գյուղացիական համագումարներին, ընդգրկվում է «Հայկական ազգային խորհրդի» մեջ: Եվ, ահա, նրան նշանակում են նոր ստեղծվող տպագիր օրգանի խմբագիր: 1918 թ. օգոստոսի 29-ին հրատարակվում է «Ղարաբաղի սուրհանդակ» թերթը, որը, փաստորեն, Ղարաբաղում գործող կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծված կոալիցիոն կառավարության օրգանն էր, որի էջերում տպագրված նյութերը արտահայտում էին աշխատավորության պահանջները, դիրքորոշումը:

Հրապարակված նյութերում ընդգծվում է գոյություն ունեցող անիշխանության և ճնշումների դեմ ծավալվող պայքարի, արդարացի որոշումներ կայացնելու, ճնշվածներին, կեղծվողներին պաշտպանելու, ինքնադատաստան գործողությունների վերացման, ֆինանսական ծանր դրության կարգավորման, ընտրական սկզբունքի սահմանման անհրաժեշտությունը և այլն:

«Ղարաբաղի սուրհանդակում» տպագրված մի շարք կոչերում, շրջաբերականներում ադրբեջանցի աշխատավորներին կոչ է արվում վերջ տալ թշնամությանը, ճանապարհների շրջափակմանը, գողություններին, հաստատելու կատարյալ խաղաղ դրություն:

«Ղարաբաղի սուրհանդակում» լույս տեսած մի շարք խրատ-բազրականների հեղինակը Արշավիր Քամալյանն էր՝ խոր գիտելիքներով օժտված մի մտավորական, որի ամբողջ գործունեությունը իր հարազատ ժողովրդին ծառայելու պայծառ օրինակ է:

Թերթի լույս տեսած համարներից շատ քչերն են պահպանվել, սակայն դրանք էլ բավական են, որպեսզի համոզ-



վենք, որ Ղարաբաղի այդ ծանր օրերին տպագիր օրգանը ճիշտ ուղի էր բռնել, պայքարում էր ժողովուրդների խաղաղեցման համար՝ միշտ բարձր պահելով Ղարաբաղցիների արդար պահանջը:

Խորհրդային կարգեր ստեղծվելուց հետո Ա. Քամալյանը ղեկավարում է Թաղավարդի հեղափոխական կոմիտեն: Այնուհետև նա գործում է լուսավորության-կրթական աշխատանքների բնագավառում, կազմակերպում է ժողովրդական կրթական օջախներ ոչ միայն Ստեփանակերտում, այլև անանձին գյուղերում:

1923 թ. օգոստոսի 1-ից Ա. Քամալյանը ղեկավարում է նորաստեղծ հայկական մարզի լուսժողովում: Նրա հինգ տարի ղեկավարությունը մարզի դպրոցներին բերում է թարմություն՝ ոչ միայն նոր դպրոցներ բացելու, այլև եղածների մեջ կարգ ու կանոն սահմանելու, դպրոցների ծրագիրն ու կանոնադրությունը մշակելու, նոր առարկաներ դասավանդելու, աշակերտների շրջանում դաստիարակչական աշխատանքները նորմալ հունի մեջ դնելու ուղղությամբ:

1928 թ. օգոստոսից Արշավիր Քամալյանը, անձնական խնդրանքի համաձայն, ազատվում է լուսժողովի պարտականություններից և նշանակվում Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի ուսումնական մասի վարիչ: Մինչև 1934 թվականը նա իր ուժերն ու կարողությունները ներդնում է հայրենի եզերքի նորաստեղծ տեխնիկումի գործունեությանը՝ մարզի համար պատրաստելով գյուղատնտեսական բարձրորակ կազմեր:

1935—39 թթ. մասսայական ռեպրեսիաները թույլ չտվեցին Արշավիր Քամալյանին շարունակելու իր բեղմնավոր աշխատանքը: 1954 թ. մինչև 1969 թվականը նա ապրել է Երևանում: Ծանր հիվանդ էր, գամված անկողնուն: Սակայն նա այդ ծանր օրերին էլ շէր դադարում աշխատելուց, ձրգտում էր թղթին հանձնել այն իրադարձությունների ճշմարիտ պատկերը հայրենի Արցախում, ուր երկար տարիներ գործել է ինքը: Եվ նրա ձեռագիր աշխատանքները, հատկապես այս օրերին, մեծ դեր ունեն կատարելու, անտեղյակ մարդկանց ճշմարտությունն ասելու Արցախի ծանր վիճակի մասին, որ անբաժան է եղել նրանից տարիներ շարունակ, և տեղի հայ

բնակչությունը միշտ էլ ձգտել է արդարության ուժով հասնել իր հիմնական պրոբլեմի լուծմանը՝ Արցախը միացնելու մայր հայրենիքին:

### ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ

Նախախորհրդային շրջանում մեր ժողովուրդը շատ երախտավորներ է տվել, որոնք քիչ ջանքեր չեն ներդրել աշխատավոր լայն զանգվածներին «խավարի թագավորությունից» լուսավոր ամեր դուրս բերելու դժվարին պայքարում: Երախտավորների մեջ ուրույն տեղ է գրավում Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը, մի մարդ, որ հրապարակ է հանել կապիտալ շատ աշխատություններ և իր քաղաքական ու մշակութային գործունեությամբ անջնջելի հետք է թողել հայ ժողովրդի պատմության պայծառ էջերում:

Ա. Գ. Հովհաննիսյանը ծնվել է 1887 թվականի հունիսին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Սկզբնական կրթությունը նա ստացել է տեղական դպրոցում: Ռեալական դրպրոցում ուսանելու տարիներին աչքի է ընկնում ոչ միայն իբրև արտակարգ ընդունակությունների տեր պատանի, այլև ակտիվորեն մասնակցում է երիտասարդական ելույթներին:

Ռեալական դպրոցից ստացած գիտելիքները չէին կարող բավարարել ուսման մեջ խորացող և գիտելիքների հարուստ պաշարի ձգտող երիտասարդին: Բարձրագույն կրթությունը ըստանալու նպատակով 1906 թվականին Ա. Հովհաննիսյանը մեկնում է արտասահման: Գերմանիայի մի քանի համալսարաններում (Մյունխենի, Ենայի-Հալեի և այլուր) սովորում է ինքնամոռաց կերպով, խոր գիտելիքներ ձեռք բերելով պատմությունից, փիլիսոփայությունից, տնտեսագիտությունից և



այլ առարկաներից: Գերմանական հռչակավոր գիտնականները հայ ուսանողի մեջ տեսնում էին ապագա հետազոտողին, որն իր առաջադիմությունները աչքի էր ընկնում ուսանողության և դասախոսական շրջանում:

1913 թվականին Ա. Հովհաննիսյանը վերադառնում է Շուշի: Տեղի հոգևոր սեմինարիայում նա դասավանդում է պատմություն և գերմաներեն, սովորողների մեջ անհատորդ սեր պատվաստելով դեպի հասարակական գիտություններն ու լեզուները:

Այնուհետև նրա ուսումնամանկավարժական գործունեությունը շարունակվում է Վաղարշապատում (էջմիածնում)՝ Գևորգյան ճեմարանում, այնտեղ, ուր դասավանդում էին շատ երեւելի անձնավորություններ:

Սակայն նա երկար չի մնում Վաղարշապատում, տեղափոխվում է Շուշի և ծավալում հասարակական-քաղաքական գործունեություն: Շուշիում 1917 թ. օգոստոսին նա հիմնադրում է «Նեցուկ» թերթը, մի շարք նյութեր հրատարակում տարբեր թեմաներով, ցույց տալով, որ աշխատավորների ազատության համար պետք է անողոք պայքար մղել թշնամական տարրերի, հոսանքների դեմ, քննադատության սուր սրվաքը ուղղելով մուսավաթականների, էսեռների, մենշևիկների դեմ:

Աշոտ Հովհաննիսյանի գործունեության հաջորդ շրջանը Բաքվում աշխատած տարիներն էին. նա ղեկավարում է քաղաքային կուլտուր-լուսավորական բաժինը, այնուհետև կոմունայի լուսավորության կոմիտարիատի գաղտնիական բաժինը՝ ամեն կերպ ձգտելով ժողովրդական կրթության գործը դնել նորմալ հիմքերի վրա:

Բաքվի կոմունայի ժամանակավոր անկումից հետո Ա. Հովհաննիսյանը աշխատանքի է գործուղվում Մոսկվա՝ Ազգությունների գործերի կոմիտարիատում: Այնտեղ ղեկավարում է գրական-հրատարակչական բաժինը, իրականացնում մի շարք աշխատությունների լույս ընծայման գործը:

Ա. Հովհաննիսյանի ջանքերն անուրանալի են նաև ՌՍՖՍՀ լուսավորության ժողովրդական կոմիտարիատում աշխատած տարիներին, երբ ղլխավորում էր հայկական բաժինը:

Պետական գործունեության հետ միասին նա հրատարա-

կախոսական-խմբագրական աշխատանք է կատարում երկրի տարբեր վայրերում: 1920 թ. Գոնի-Ռոստովում խմբագրում է «Բանվորի կռիվ» թերթը, որի էջերում հրատարակվեցին մի շարք տեսական հոդվածներ:

1920 թ. հոկտեմբերից սկսած Ա. Հովհաննիսյանի գործունեությունը ծավալվում է Հայաստանում: Անուրանալի են նրա ներդրած ջանքերը Հայաստանի կուլտուրան ու լուսավորությունը առաջ տանելու գործում: Իբրև լուսավորության ժողովրդական կոմիտար, Ա. Հովհաննիսյանը մեծ գործ է կատարում՝ անգրագիտությունը վերացնելու, հանրապետությունում գաղտնիական լայն ցանց ստեղծելու, կուլտուր-լուսավորական օջախներ հիմնելու, գրականությունն ու արվեստը առաջ տանելու ասպարեզներում:

1928 թ. տեղափոխվում է Մոսկվա և կատարում հասարակական-քաղաքական, գիտա-մանկավարժական բեղուն աշխատանք: Նա դասախոսական աշխատանք է կատարում մի շարք ինստիտուտներում, ղեկավարում է գիտահետազոտական օջախների պատմության բաժինները, ընտրվում է նյութական կուլտուրայի պատմության պետական ակադեմիայի իսկական անդամ:

1954 թ. նա Հայաստանում ծավալում է գիտահետազոտական բեղուն գործունեություն՝ հատկապես ակադեմիայի պատմության ինստիտուտում, վարելով նոր պատմության բաժինը: Իր բազմաբեղուն գիտական արգասաբեր գործունեության համար 1960 թվականին Ա. Հովհաննիսյանն ընտրվում է հանրապետության Գիտությունների ակադեմիայի ակադեգեմիկոս: Դա պատահական երևույթ չէր 73-ամյա գիտնականի կյանքում: Նրա գրչին են պատկանում մի շարք աշխատություններ, որոնք տարիներ շարունակ գիտական սնունդ կարող են մատակարարել շատ սերունդներին: Նկատի ունենք նրա առաջին աշխատությունից սկսած («Խրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը», 1913 թ., Մյունխեն) մինչև «Նալբանդանը և նրա ժամանակը» երկհատոր ծավալուն ուսումնասիրությունը:

Հիրավի, Ա. Հովհաննիսյանը բազմաբեղուն, լայն մտահորիզոնի տեր գիտնական էր, որի գրչի տակից դուրս եկած յուրաքանչյուր ուսումնասիրություն կարող է պատիվ բերել



մեր օրերի փառաբանված ամեն մի գիտնականի: Այս ասե-  
լով, շեշտում ենք նրա այնպիսի աշխատությունները, ինչպի-  
սիք են «Մաշտոցյան օրերի պատմական նշանակությունը»,  
«Թոնդրակյան շարժումը Հայաստանում», «Փրիկը պատմա-  
քննական լույսի տակ», «Դրվագներ հայ ազատագրական  
մտքի պատմության» և այլն, որոնք նվիրվելով պատմության,  
մշակութային տարբեր հարցերի ու պրոբլեմների, ցույց են  
տալիս հեղինակի գիտական լայն մտահորիզոնը, զարգացման  
բարձր մակարդակը և բեղուն աշխատանք կատարելու անու-  
րանալի եռանդը:

Նա մեծ երախտիք ունի նաև գիտական երիտասարդ կադ-  
րերի պատրաստման գործում: Գիտության շատ թեկնածուներ  
և դոկտորներ աճել ու գիտական հասակ են առել ահանավոր  
գիտնականի օգնությամբ: Նա ուրախ էր յուրաքանչյուրի ա-  
ռաջադիմությամբ:

## ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԵՏԱՎՈՐԸ

(Հառուրյուն Թումյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Արցախը մեր այն հատվածներից մեկն է, որն առատորեն  
է սնել լուսավորական գործի երախտավորներին, տվել նվիր-  
յալ գործիչներ: Նրանցից է Հարություն Գրիգորի Թումյանը:  
Նա ծնվել է 1889 թվականին, Շուշիում: Սկզբնական կրթու-  
թյունն ստացել է տեղի հայոց թեմական դպրոցում, այնու-  
հետև ուսումը շարունակել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում:  
Ժամանակակիցները հուշեր են թողել այն մասին, որ Ներ-  
սիսյան դպրոցում Թումյանը տարված էր մեծ մտածողների  
աշխատությունների ուսումնասիրությամբ, կարգում էր հայ  
գրականության մեծերին, հաղորդակից լինում հմուտ ման-

կավարժների գիտական ժառանգությունը: Սակայն նա հնա-  
րավորություն չունեի ուսումը շարունակել երկրի համբավա-  
վոր ուսումնական հաստատություններում, ուստի տեղափոխ-  
վում է Հայաստան, Ղարաբլիխայում ու նրա շրջակա գյու-  
ղերում երկու տարի աշխատում որպես ուսուցիչ: Այս աշ-  
խատանքը երիտասարդ Հարությունի համար դարձել էր կեն-  
սական պահանջ, դասերից դուրս հաճախ էր հանդիպում ա-  
շակերտներին, զրուցում գիտելիքների օգտակարության և  
դրանց ձեռքբերման ուղիների մասին: Ծնողները Հ. Թումյա-  
նին դիտում էին որպես մի վստահելի անձնավորություն, որն  
ընդունակ է ոչ միայն խոր գիտելիքներ հաղորդել երեխա-  
ներին, այլև ճիշտ ուղղությամբ տանել նրանց դաստիարա-  
կությունը, ներարկել մարդկային արժանապատվություն:

Այնուամենայնիվ, Հ. Թումյանը կարիք էր վզում բարձ-  
րագույն լիարժեք կրթության: Նա տարբեր առիթներով լի-  
նում է երկրի կենտրոններում, փափագելով ունկնդրել ճա-  
նաչված գիտնականների և դասախոսների: Թումյանը, այ-  
նուամենայնիվ, բարձրագույն կրթություն ստանում է նախ՝  
Պետերբուրգում, ապա՝ Կիևում, առաջինում ավարտում է տե-  
ղի առևտրի ինստիտուտը, երկրորդում համալսարանի պատ-  
մաբանասիրական ֆակուլտետը: 1917 թվականի փետրվար-  
յան հեղափոխությունը և հայրենի Արցախում ծայր առած  
հասարակական-քաղաքական բարդ իրադարձությունները ըս-  
տիպում են նրան վերադառնալ հայրենիք:

1917 թվականի վերջին Ղարաբաղում ստեղծվում է ժո-  
ղովրդական կառավարություն, որի կազմում Հ. Թումյանը  
ստանձնում է ռազմական գործերի ղեկավարումը (զինվորա-  
կան կոմիսար): 1920 թ. նա անգլիացիների կողմից ձեռքա-  
կալվում է և արտաքսվում Ղարաբաղից ու տեղափոխվում  
Հայաստան:

1920—1921 թվականներին Հ. Թումյանն աշխատում է  
Երևանում՝ հայերեն լույս տեսնող «Կոմունիստ», ապա «Նոր-  
հրդային Հայաստան» թերթի խմբագրություններում, որպես  
պատասխանատու քարտուղար: 1921 թ. հուլիսից մինչև 1922  
թվականի վերջը Ալ. Մյասնիկյանի երաշխավորությամբ Հ.  
Թումյանն ընդգրկվում է ՀԽՍՀ Ժողկոմիսորճի օրենսգրական  
հանձնաժողովի կազմում որպես պատասխանատու թարգմա-



նիշ: 1923 թվականին Հայաստանի կոմկուսի Կենտրոնը նրան գործուղում է Լենինական՝ «Բանվոր» թերթի խմբագրությունում աշխատելու: Սակայն այստեղ նա երկար չի մնում: 1924—1928 թթ. աշխատում է էջմիածնի գավառային լուսբաժնում՝ սկզբում որպես սոցիալական դաստիարակության բաժնի վարիչ, այնուհետև՝ ժողովրդական կրթության բաժնի վարիչ: Չորս տարիների ընթացքում լիովին ի հայտ են գալիս Հ. Թումյանի կազմակերպչական ընդունակությունները: Նրա եռանդուն աշխատանքն աննկատ չի մնում, նա աշխատանքի է նշանակվում հանրապետության լուսավորության ժողովրդական կոմիսարիատում՝ սկզբում կազմ-հրահանգչական, իսկ հետո՝ վիճակագրական բաժնի վարիչ:

1933 թվականի օգոստոսից մինչև 1937 թվականը Հ. Թումյանը աշխատել է ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտում որպես գիտական աշխատող և միաժամանակ պատմական հուշարձանների պահպանության բաժնի վարիչ: Հետագայում, Հայաստանի Կենտգործկոմի նախագահ Սերգո Մարտիրոսյանի հանձնարարությամբ, 1937—1938 թթ. աշխատել է Կենտգործկոմին առընթեր պատմական հուշարձանների պահպանության կոմիտեում՝ սկզբում որպես գիտական քարտուղար, այնուհետև՝ նախագահի տեղակալ: Այդ բնագավառում նրա կատարած աշխատանքը բարձր են գնահատել անվանի գիտնականներ Հ. Օրբելին, Բ. Պիոտրովսկին և ուրիշներ:

1938 թվականի վերջերին Հ. Թումյանը դասախոսական աշխատանքի է անցնում Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում և նշանակվում լեզվագրական ֆակուլտետի ղեկան: Այստեղ 17 տարի անբասիր աշխատելուց հետո 1955 թվականին անցում է կենսաթոշակի:

Հ. Թումյանի գրչին են պատկանում բազմաթույթ աշխատություններ, որտեղ լուսաբանվում են ոչ միայն ժողովրդական կրթության, այլև գիվանագիտական հարցեր, քաղաքական պրոբլեմներ: Դրանց մեջ, ինչ խոսք, առանձնաճանաչ է մեկը «Դեպքերը Լեոնային Ղարաբաղում 1917—1920 թվականներին (պատմական ակնարկ)» որտեղ հեղինակը ոչ միայն ակնատեսի, այլև ակտիվ գործչի իրավունքով պատմում է, թե հայրենի եզերքում ինչպիսի պայքար էր ծավալ-

ված հարևանների կողմից հայկական Արցախը իրենցը համարելու ուղղությամբ:

1965 թվականին աշխատությունը հանձնվել է հրատարակչությանը և հասկանալի պատճառով մինչև հիմա լույս չի տեսել:

Հ. Թումյանը հստակ, փաստերի և բնութագրական օրինակների ուժով ներկայացնում է մուսավաթական Ազրբեջանի դավթողական քաղաքականությունը, ցույց տալիս այդ նպատակին հասնելու՝ ազրբեջանցիների խժոժությունները, կոտորածը, արչունալի դեպքերը:

Հիբավի, մեծ է Հարություն Թումյանի ծառայությունը լուսավորական գործում: Հմտանալով ժողովրդական կրթության ասպարեզում՝ նա իր ուժերը գործադրում էր նաև այլ մարզերում, թղթին հանձնելով այն արժեքավորը, որ հրամայական պահանջ է այսօրվա համար:

Եվ ահա այսօր, երբ լրացել է Հ. Թումյանի ծննդյան 100 տարին, մեր հիացական խոսքն ենք ուղղում հիանալի մտավորականին, քաղաքական-լուսավորական գործչին, որը մինչև վերջ մնաց ազնիվ դիրքերում:

## ԼԵՎՈՆ ՎԱՐԳՈՒՆԻ

Լեոն Մուշեղի Վարդունին իսկական արցախցի էր: Թեև վերջին շրջանում նա ապրում էր Երևանում, բայց երբեք չէր խզում կապը հայրենի եզերքից, ամեն ամառ նա մեկ-երկու ամսով լինում էր Արցախում, շփվում էր ընկերների հետ, բարի խորհուրդներ տալիս, օգնում գիտական և մանկավարժական կադրերին՝ հմտանալու իրենց ասպարեզում:

Լ. Վարդունին ծնվել է 1896 թվականին, Շուշի քաղաքում: Շուշին նրա համար հեքիաթային աշխարհ էր: Տեղի թեմա-



կան դպրոցում սովորելու տարիներին նա իրեն գրսևորում է որպես առաջադեմ աշակերտ, որն ընդունակ է լինելու նաև ակտիվ քաղաքացի: Աշակերտական տարիներին նա հիմնում է խմորատիպ թերթեր, ծաղրի ենթարկում շրջապատում գոյություն ունեցող արատները, աշակերտություն և ուսուցչություն միջև նկատվող թերությունները:

Նա ակտիվորեն ընդգրկվում է թեմականի կից գործող գրական և երաժշտական խմբակներին, գրում էր բանաստեղծություններ, երգում էր և նվագում:

Թեմականն ավարտելուց հետո նա ուսուցչություն է անում և՛ Շուշիում, և՛ Արցախի մի շարք գյուղերում: Մեծ էր նրա հետաքրքրությունը աշակերտների հանդեպ, նա սերմանում էր սեր մայրենի լեզվի, գրականության նկատմամբ, սովորողների մեջ միշտ թարմ պահելով արցախասիրությունն ու ժողովրդասիրությունը:

Նա շէր բավականանում մանկավարժական գործունեությամբ, ուսուցչական կոլեկտիվներում ստեղծում էր թատերական և երաժշտական խմբակներ և ինքն էլ ղեկավարում: Նա հանդիպումներ էր կազմակերպում անվանի գրողների, դերասանների, երգիչների, երգահանների հետ, երբեմն էլ ստացած գումարով օգնում այս կամ այն մշակութային օջախներին:

1917 թվականին Լ. Վարդունին ակտիվորեն մասնակցում է Շուշիի անլեզալ կազմակերպության աշխատանքներին, լինում է Լեոնային Ղարաբաղի Վարանդայի կոմիտեի նախագահ:

1921 թվականից սկսած նա գործուղվում է Տաշքենդ և մեծ աշխատանք ծավալում լուսավորության նախարարության ազգային փոքրամասնությունների կոմիտեի հայկական սեկցիայում՝ ղեկավարելով այն:

1922 թվականից Լ. Վարդունին գործուղվում է Հայաստան՝ սկզբում աշխատում որպես Երևանի և էջմիածնի գավառների լուսբաժնի վարիչ, ապա լուսժողկոմի քաղլուսգլխավարչության պետի տեղակալ, լուսժողկոմի տեղակալ, ամբիոնի վարիչ Երևանի բարձրագույն դպրոցներում, օտար լեզուների և հեռակա մանկավարժական ինստիտուտների ուսկառ:

Մեծ է Լ. Վարդունու ավանդը մանկավարժական և մշա-

կութային օջախների համար կազմեր պատրաստելու ուղղությամբ: Բուհերում աշխատելու տարիներին լիովին գրսևորվում է նրա գիտական, մանկավարժական և կազմակերպչական տաղանդը:

1941—1945 թթ. նա ակտիվ մասնակցություն է ունենում հայրենական մեծ պատերազմին՝ որպես սպա:

Իր հասարակական-քաղաքական գործնական աշխատանքներին ղուգընթաց Լ. Վարդունին ծավալում է գիտական աշխատանք. պատրաստում է դասագրքեր՝ միջնակարգ դրսւրոցների համար. մի շարք աշխատություններ աշակերտների և ուսանողների դաստիարակության, գիտելիքների ձեռքբերման և այլ հարցերի շուրջ:

1947 թվականին Լ. Վարդունին պաշտպանում է դիսերտացիա և ստանում մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան: Իր անբասիր մանկավարժական և գիտական աշխատանքի համար նա արժանանում է գիտության վաստակավոր գործչի կոչման:

Լեոն Վարդունին մեծ հարգանք և հեղինակություն էր վայելում առաջին հերթին սովորողների, դասախոսական անձնակազմի և գիտնականների շրջանում: Նա բարեսիրտ, մարդու հոգսերին նվիրված, հոգատար անձնավորություն էր: Ամբողջ կյանքում մեծ խորհուրդ է ունեցել՝ ուժերն ու կարողությունները նվիրաբերել մատաղ սերնդի դաստիարակությանն ու աճին, գեղագիտական զարգացմանը, մարդկային լավագույն հատկությունների ձեռքբերմանը:

Ահա թե ինչու այսօր էլ չի թառամել Լ. Վարդունու հիշատակը նրան ճանաչողների սրտում:

ԺՈՒՌՆԱԼԻՍՏ-ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՐ,  
ՀՄՈՒՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Դարբին Առաքելը ոչ մի գաղափար չունեի առաջադիմական շարժումների մասին: Բայց նա մտահոգված էր, որ որ-



դին ուսում ստանա, գիր սովորի, լավ մարդ դառնա: Անցան ոչ շատ տարիներ, և շատերը դարբին Առաքելին երանի էին տալիս՝ որդին ոչ միայն ուսում էր ստացել, այլև դարձել էր հայտնի մանկավարժ, հրապարակախոս:

Գրիգոր Առաքելի Խաչիչյանը ծնվել է 1896 թ. փետրվարի 14-ին, Շուշիում: Ինը տարեկան էր Գրիգորը, երբ մեծ դժվարություններով ընդունվեց Շուշիի հայոց թեմական դպրոցը: Քաղաքական հարցերը նրան հուզում էին աշակերտական տարիներից և նա ակտիվ մասնակցություն է ունենում դպրոցի սովորողների գաղտնի ժողովներին ու մյուս միջոցառումներին: Դա մեծապես նպաստում է, որպեսզի պատանի Գրիգորը մոտիկից ծանոթանա երկրամասում արդեն հայտնի գործիչներ Ալեքսանդր Մատուրյանի, Աշոտ Հովհաննիսյանի, Սաքո Համբարձումյանի և այլոց հետ, որոնք մեծ աշխատանք էին ծավալել գավառի երիտասարդության, մասնավորապես Շուշիի աշակերտական շրջանում:

Պատանի Գրիգորն զգում էր, որ Շուշիի թեմական դպրոցում ստացած գիտելիքները չեն կարող հագուրդ տալ իր հետաքրքրություններին, բավարարել իր պահանջները: 1916 թվականին ավարտելով թեմականը, նա ուսումը շարունակում է էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Սակայն տնտեսական և քաղաքական պայմանները հնարավորություն չտրվեցին 20-ամյա Գրիգորին ավարտելու ուսումը:

1917 թ. ապրիլից, երբ նա արդեն տեղափոխվել էր Բաբու, սերտ կապերի մեջ է մտնում Ա. Միկոյանի և մյուս հայտնի գործիչների հետ: Նա շրջում էր Անդրկովկասի հայաշատ շրջանները, հանդես գալիս աշխատավորների առջև, պարզ ու շիտակ խոսք ասում այն մասին, թե ովքեր են բանվոր մարդկանց բարեկամները և ովքեր են արդար վաստակի հակառակորդները:

Երկար չի տևում նրա շրջադասությունները և 1918 թվականի սկզբներին նա նորից հաստատվում է Շուշիում:

1918 թվականը Լեոնային Ղարաբաղի համար շափաղանց լարված ժամանակահատված էր: Հակաժողովրդական տարրերը ամեն կերպ ձգտում էին խափանել առաջընթաց շարժումները, դիմելով ռեպրեսիաների: Գրիգոր Խաչիչյանը, իբրև հրմուտ գործիչ, ուղարկվում է Առաջածոր գյուղը: Թ. Միրզա-

բեկյանի հետ նա քաղաքական-հասարակական մեծ աշխատանք է տանում ոչ միայն այդտեղ, այլև գավառի շատ գյուղերում:

Քսանական թվականների սկզբից Գր. Խաչիչյանը Շուշիում և նրա մերձակա գյուղերում մանկավարժական բուռն գործունեություն է ծավալում՝ ամենից առաջ պայքար ծավալելով անդրադիտության վերացման համար: Նրա նախաձեռնությամբ մի շարք բնակավայրերում բացվում են դպրոցներ: 1923—1931 թթ. նրա եռանդը ավելի է մեծանում, երբ աշխատում է որպես լուսավորության ժողովրդական կոմիտեի տեղակալ, գյուղատնտեսական տեխնիկումի տնօրեն, «Նորհրդալսին Ղարաբաղ» թերթի խմբագիր և այլն: Հատկապես վերջին պաշտոնում աշխատելիս Գր. Խաչիչյանը կարողանում է լիովին օգտագործել իր հնարավորությունները հայրենի երկրամասում բարվոք վիճակ ստեղծելու լուսավորության, մշակութային օջախներում: Թերթը մի շարք նախաձեռնություններ է անում՝ վերցնելով առանձին գրադարանների, դպրոցների, ակումբների շեֆությունը:

Գր. Խաչիչյանը հեղինակ է մի շարք հոդվածների, հրապարակախոսական ելույթների՝ ուղղված Լեոնային Ղարաբաղում կուլտուրական հեղափոխության իրականացմանը, մարդկանց դիտական մակարդակի բարձրացմանը:

1931 թվականից Գր. Խաչիչյանը աշխատում է Ադրբեջանի լուսժողովատում, ապա ռադիոհաղորդումների կոմիտեում որպես ռադիոթերթի խմբագիր:

1937 թվականից նա մանկավարժական աշխատանք է կատարում Բաքվի հայկական դպրոցներում՝ ավանդելով հայոց լեզու և գրականություն:

Սկսվում է հայրենական մեծ պատերազմը: Գրիգոր Խաչիչյանը առաջին օրերից մինչև 1943 թ. սրբություն է կատարում իր պարտքը հայրենիքի հանդեպ:

1945—1951 թթ. Գր. Խաչիչյանը աշխատում է Ռումինայում՝ խորհրդային դեսպանությունում: Վերադառնալով Ռումինիայից, նա շարունակում է իր մանկավարժական-լուսավորական աշխատանքը հայրենիքի տարբեր վայրերում:

Վերջին տարիներին, մանկավարժական աշխատանքին զուգընթաց, Գր. Խաչիչյանը շարունակում է իր սիրած աշ-



խատանքը՝ ակտիվորեն մասնակցելով Անդրկովկասի հայերեն մի շարք պարբերականների գործունեությանը: Նա կարողանում էր գրավոր և բանավոր խոսքի ուժով մարդկանց սրտին ու հոգուն հանձնել իր տեսակետները այս կամ այն հարցի վերաբերյալ՝ լինելով լուսավորական գործի նվիրյալ:

### ՄԻՐՉԱ ՏԵՐ-ՍԱՐԳՍՅԱՆ (ՄԻՏՍԱՐ)

19-րդ դարի վերջերին Անդրկովկասի տարբեր քաղաքներում և երկրի զանազան վայրերում անուն հանած մարդկանցից շատերը արցախցիներ էին, որոնց այդտեղ էր բերել բախտի քմահաճույքը, կենսապայմանների պահանջը կամ էլ ընտանեկան հոգսը:

Բայց շատ էին նաև այն մարդիկ, որոնք հաշվի չէին առնում ոչ մի խոչընդոտ, չէին վախենում անմխիթար կենսապայմաններից, մութ ու խոնավ բնակարանից, դառնություններից, հոգեմաշ հիվանդությունից... Նրանց հուշում էր միայն ու միայն հայրենի եզերքի բախտը, իր ժողովրդի այսօրն ու ապագան... Այդպիսին էր Միրզա Առաքելի Տեր-Սարգսյանը, որը շատ ժամանակ (հատկապես գրական գործերի տակ) ստորագրում էր «Միտսար»: Նա ծնվել է 1868 թվականին, Շուշիի գավառի Փիրջամալ գյուղում, քահանայի ընտանիքում:

Հայրը երազում էր որդուն կանոնավոր կրթություն տալ: — Նա միշտ ասում էր. «Ես ուսման մեջ թերի մնացի, գոնե դուք աշխատեցե՛ք ինձ պես չլինել, աշխատեցե՛ք որքան կարելի է լավ կարդալ, լավ մարդ դառնալ, — պատմում է Միտսարը իր ինքնակենսագրական պատմվածքներից մեկում:

Միրզան շատ գոհ էր իր հորից, որ ոչ մի դեպքում չէր խոչընդոտում իրեն ուսում ստանալու, ընդհակառակը՝ խրա-

խուսում ու ոգևորում էր: Եվ որդու առաջին ուսուցիչը դառնում է Տեր Առաքելը՝ սովորեցնելով հայոց այբուբենը: Այդ ժամանակ խալիֆայական օրենքով ինը տարեկան երեխան դեռ փոքր էր համարվում դպրոց հաճախելու:

Փոքրիկ Միրզան մեծ ուրախություն էր ապրում, երբ հորից լսում է, որ իրենց գյուղի մոտ գտնվող Վարազաբնում շուտով ուսումնարան կբացվի և ինքն էլ անպայման կլինի այդ դպրոցի առաջին աշակերտներից մեկը:

Ինչպես պատմում է Միրզան իր հիշողությունների մեջ, հիմնական ուսուցիչը Տեր-Գրիգորն էր, խստապահանջ, բայց միևնույն ժամանակ բարի մի մարդ, որի նպատակն էր բարոյակրթական մարդ դարձնել վարազաբունցիներին, կանոնավոր դաստիարակություն տալ նրանց, հեռու պահելով վրնասակար սովորություններից, միշտ ձգտելով դեպի գիտություն, դեպի ուսման զանազան ճյուղերը:

Միրզա Տեր-Սարգսյանը դառնում է նորաբաց ուսումնարանի ամենաուշիմ ու աչքաբաց աշակերտը:

Սակայն պատանին զգում էր, որ գյուղի ուսումնարանը չի կարող բավարարել իր ուսումնական տենչը: Միրզան ընդունվում է Շուշիի հայտնի հոգևոր թեմական դպրոցը, ունենալով շատ անվանի և գործին անմնացորդ նվիրված ուսուցիչներ:

Թեմականում ուսանելու տարիներին նա ընդգրկվում է ուսանողական շարժումներին, պայքարում է դպրոցական ունիորմներ անցկացնելու օգտին: Ամենից առաջ նա ձգտում էր դպրոցներում ստեղծել կարգ ու կանոն, առաջին պլան մղելով հայերենի, հայոց պատմության և գրականության խոր ուսուցումը:

Հայկական թեմական դպրոցը անմար կայծեր էր վառել Միտսարի հոգում՝ դեպի գեղեցիկը, արվեստը, գրականությունը: Նա ձգտում էր իր տեսածն ու զգացածը վերարտադրել գեղարվեստական արտահայտման միջոցներով: Նա հակում ուներ առավելապես դեպի արձակը: Նրա փոքրիկ պատմվածքները, վեպիկներն ու զրույցները 1884 թվականից սկսած, երբ դեռ նոր էր բուլբուլ 16 տարին, լույս էին տեսնում կովկասահայ տարբեր թերթերում՝ տարբեր ստորագրությունների ներքո: Միտսարը հաճախակի էր հանդես գա-



լիս «Նոր դար», «Մշակ», «Երկիր», «Ժամանակ», «Ժայռ», «Խարխախ», «Արոր», «Վտակ», «Հորիզոն», «Ղարաբաղ», «Բաբվի ձայն» և այլ պարբերականներում:

Նրա տպագիր և անտիպ մի շարք արձակ գործերի ստվար ժողովածուն «ԿԱՅԻՆԵՐ» ընդհանուր խորագրի ներքո լույս տեսավ 1914 թվականին, Շուշիում, Մելքում Բաբաջանյանի տպարանում:

«Կայսրիներ» մեջ արժարժվում են ժամանակի շատ հուզող հարցեր, որոնք առաջին հերթին վերաբերում են արցախցիներին: Առանձին գործեր ուղղակի ինքնակենսագրականներ են:

Ժողովածուն բացվում է «Դեպի խալիֆայի դպրոցը» պատմվածքով, ուր հեղինակը՝ Միտսարը, պատմում է, թե ինչպես է նա հաճախել ուսումնարան, ինչպիսի բարի դիրք ուներ այդ հարցում հայրը, ուսումնարանի առօրյան և այլն: Այստեղ էլ ընդգծված են գյուղական մարդկանց առանձին կերպարները՝ և՛ դրական և՛ բացասական առումներով: Եթե «Բանտի այցելուն» պատմվածքի մեջ շեշտը դրված է ազնիվ սիրո կենսունակության վրա, ապա «Թաթախման գիշերը» գողտրիկ գրվածքի մեջ հեղինակը ներկայացնում է Ասկերանի (Լեռնային Ղարաբաղ) մոտ տեղի ունեցած հայ-թուրքական կոտորածները, որի հետևանքը լինում է այն, որ հայերը դեն են շարտում դարավոր թշնամու ոհմակներին:

Հայ ժողովուրդը փառաբանում է իր հերոսներին:

Ոչ միայն «Թաթախման գիշերը», այլև «Աղան տանը չէ», «Կես գլուխ», «Հաջի բեկը», «Գայլերը» և այլն, իրական եղևույթուններ են, իրական պատկերներ, որոնք գեղարվեստական շունչ են առել Միտսարի գրչի շնորհիվ:

Ժողովածուում տեղ գտած պատմվածքների մեջ առանձնանում են «Մի անցքը», «Արծիվ կամ վանդակը», «Սև թաշկինակը», «Կարկուտը» և այլն, որոնք հազեցված են հնչել գաղափարականությամբ, լեզվա-ոճական հնարանքներով, թե՛ վավոր խոսքերի, աֆորիզմների, ժողովրդական իմաստությունների, մակդիրների օգտագործմամբ:

Միրզա Տեր-Սարգսյանը ականատեսի և գործողությունների ակտիվ մասնակցի աչքերով է ներկայացրել Լեռնային Ղարաբաղը 1917—1923 թվականներին: Սա ամփոփված է

հեղինակի ձեռագիր ծավալուն, շափազանց արժեքավոր մի աշխատությունում, որ մինչև հիմա լույս չի տեսել: Այն գտնվում է Միտսարի թոռան՝ հանրապետության կուլտուրայի վաստակավոր գործիչ, պոետ, հայ դասական և ժամանակակից պոեզիայի և արձակի թարգմանիչ Վրույր Բալասանի մոտ:

Աշխատությունը բաղկացած է երկու մասից. առաջինում նախախորհրդային Արցախն է, երկրորդը նվիրված է Լեռնային երկրամասի խորհրդային կարգերի առաջին օրերին:

Զարմանալի փութաշանությամբ, կարեզր փաստերի ընդգրկմամբ, երբեմն էլ մանրամասնությունների մեջ ընկնելով Միրզա Տեր-Սարգսյանը թղթին է հանձնել իր գեղեցիկ ձեռագրով միանգամայն ճշմարտացի մի իրապատում, որտեղ ուրվագծվում են Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները 1917—1923 թվականներին:

Հեղինակը տարբեր բաժիններով է ներկայացրել իր հայրենիքի իրական պատմությունը տվյալ ժամանակահատվածում: Մանրամասնությամբ են տրված Ղարաբաղի հարցի ծագումը, Շուշի գավառում գտնվող մեծ գյուղի՝ Ղարաղլաղի (այժմ՝ Բերդաձորի) անկումը, Զամիլ Զեյտի արշավանքները Արցախի վրա՝ նպատակ ունենալով նվաճել արցախահայությունը:

Ձեռագիր աշխատանքի մեջ մեծ բաժին է կազմում դուրավար Անդրանիկի գործունեությունը Ղարաբաղում:

Հեղինակը չլուսաբանված տվյալներ է հաղորդում Խոսրով-բեկ Սուլթանովի հայատյացության գործողություններից, մի տխրահուշակ բժիշկ, որը ոչնչի առաջ կանգ չէր առնում Արցախի հայությունը ընկճելու համար: Տրված է նաև նրա գաղինքը անդլիսցիների հետ՝ Ղարաբաղը Ազրբեջանին ենթարկելու համար:

Շուշիի կործանումը, Ասկերանի անկումը, գերիների ջարդը, գաղթականների գրությունը, Դրոյի գործողությունները և այլն, ներկայացվում են հետաքրքիր մանրամասներով, նոր լույս սփռելով պատմական այդ ժամանակահատվածի՝ 1917—1923 թթ. Արցախի իրադարձությունների օբյեկտիվ և ճշմարտացի լուսաբանման վրա:

Միրզա Տեր-Սարգսյանը տալիս է թուրք-ազերների վայ-



րագուստները հայկական Արցախում՝ նպատակ ունենալով ստոր ու զիշատիչ միջոցներով տիրել հայկական այդ հինավուրց երկրամասին, ճիզեր, որ շարունակվում են առայսօր:

Հեղինակը ուրախությամբ է ներկայացնում այն պահը, երբ 1921 թ. հունիսի 18-ի ղեկընտոյվ կենսային Ղարաբաղը հայտարարվում է Հայաստանի անբաժան և անկապտելի մասը:

Սույն ձեռագիրը աշխատանքը կարծես մի հանրագիտարան է, որտեղից ցանկացողը կարող է հավաստի նյութ քաղել կենսային Ղարաբաղի նշված ժամանակահատվածի իրադարձությունների մասին:

Ափսոսալ միայն կարելի է, որ այն մնացել է անշարժ (հայտնի պատճառներով) և մինչև հիմա հրապարակում չի ունեցել՝ ընթերցողների լայն շրջանների սեփականությունը դարձնելու համար: Նրա հրատարակությունը հատկապես այս օրերին հրամայական պահանջ է:

Հետաքրքիր է Միրզա Տեր-Սարգսյանի կատարած աշխատանքը հայկական բացատրական բառարաններ, ուսումնական ձեռնարկներ կազմելու ուղղությամբ: Նրա արխիվում է գտնվում ձեռագիր մի աշխատանք ևս՝ «Հայերեն բացատրական բառարանը», որը ոչ միայն ծավալուն է, այլև արժեքավոր նյութ է պարունակում յուրաքանչյուր բառի նշանակության վերաբերյալ: Հեղինակը գերադասել է Ղարաբաղի բարբառային բառերը հայերեն գրական լեզվով բացատրել մի քանի հոմանիշների միջոցով:

Հիրավի, Միրզա Տեր-Սարգսյանը արցախցի մի մտավորական էր, որ տարբեր տարիներ (1921—1927 թթ.) զբաղվել է նաև մանկավարժությամբ, եղել է հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, դպրոցի տնօրեն, բայց միշտ բարձր է պահել իր հարադատ ժողովրդի շահը, ձգտել է ամեն հնարավորը անել Արցախը միշտ հայկական մնալու համար:

Ականատեսները և թողած հուշագրությունները մեզ համոզում են, որ Միրզա Տեր-Սարգսյանը աչքի էր ընկնում մարդկային բարեմասնություններով, եղել է մեծ ընտանիքի հայր և բոլոր երեխաներին դաստիարակել է կրթոտ հայրենասիրությամբ՝ տալով բոլորին բարձրագույն կրթություն:

Մահացել է 1927 թվականին:

Յավալի է, որ մինչև հիմա Միրզա Տեր-Սարգսյանը մնացել է ստվերի տակ, արժանի գնահատական չի տրվել ո՛չ նրա քաղաքական-հասարակական գործունեությանը, ո՛չ էլ գրական-գիտական աշխատանքին: Ժամանակը չէ, արդյո՞ք, հանգամանորեն զբաղվել Միրզա Տեր-Սարգսյանի ամբողջ գործունեությամբ՝ տալով նրա ամբողջական դիմանկարը՝ թեկուզ մի համեստ գրքույկի միջոցով:

## ՋԱՎԱԴ ԻՇԽԱՆՅԱՆ

1911 թվականի հունվարյան սառնամանիքի օրերին Արցախի աշխատավորությունը հողին է հանձնում Ջավադ Իշխանյանին, մի մարդու, որին փոքրից մեծը հարգում էր և նրան համարում էին երկրամասի խորհրդատուն և անփոխարինելի բարեկամը: Ահա թե ինչու «Մշակ» թերթը 1911 թվականի 19-րդ համարում ուղղակի գրում է. «Հանձին Ջավադբեկի այսօր Ղարաբաղը զրկվում է իր բարեհամբույր խորհրդատուից և պաշտոնյայից: Նրա տեղը մնում է բաց և ոչ ոք չկա, որ նրան փոխարինի»:

Ոչ միայն «Մշակը», այլև Արցախում և այլուր լույս տեսնող հայ պարբերականները իրենց տպագրած մահախոսականներում միանգամայն բարձր են գնահատում Ջավադ Իշխանյանի ծառայությունը հայրենի երկրամասին, մասնավորապես դպրոցաշինությունը, կրթության գործի զարգացմանը և հասարակական-քաղաքական աշխատանքների առաջընթացին:

Ով էր Ջավադ Իշխանյանը: Ծնվել է 1848 թականին Խաչենի (այժմվա Ասկերանի շրջանի— Ս. Ա.) գավառի փոքրիկ Խանցք գյուղում: Հայրը համեմատաբար հեշտությամբ էր կարողանում հոգալ գերդաստանի հոգսերը և մտածում էր որդի-



ներից մեկին լիարժեք կրթութիւն տալ: Գլուղի դպրոցն ավարտելուց հետո նա մտնում է Արցախի նշանավոր հայոց հոգևոր թեմական դպրոցը և ավարտում բարձր ցուցանիշներով: Այստեղ, Շուշիում նա տեսնում էր աշխատավորների դասակարգային շերտավորումը՝ հարուստների և շքավորների նիստն ու կացը և նրա մոտ միտք է հղանում բարձրագույն կրթութիւն ստանալ Ռուսաստանի խոշոր համալսարաններում: Այդ նպատակով նա հաջողութեամբ քննութիւն է տալիս և ընդունվում Մոսկվայի համալսարանը: Նա մեծ եռանդով մասնակցում է ուսանողական ընդվզումներին (հայտնի պրոֆսոր «Պոլոնինի դեպք» անունով) և 1869 թվականին հեռացվում է համալսարանից: Այս անգամ Զ. Իշխանյանը հեշտ է ավարտում իր «գործը» և մաքառում է շարունակել կրթութիւնը: Տեղափոխվում է Պետերբուրգ, մտնում համալսարանի զինվորական - վիրաբուժական ֆակուլտետը, բայց այս անգամ էլ նրան չի հաջողվում ավարտել և 4-րդ կուրսից վճռվում են՝ գաղտնի ընկերութիւնների աշխատանքներին ակտիվ մասնակցելու համար: Նա անդամագրված էր «Ժողովրդական հաշվեհարդար» անունով մի ընկերութեան, որ նպատակ էր դրել բռնի ուժով տապալել ցարական իշխանութիւնը: 1871 թվականին, կարճատե բանտարկութիւնից հետո Զավադ Իշխանյանը տեղափոխվում է հայրենի Շուշի, սկզբում մասնավոր դասեր է տալիս՝ ամբողջովին նվիրելով իրեն կրթութեան գործին:

Շատ կարճ ժամանակում Արցախի աշխատավորութիւնը համոզվում է, որ հանձին Զ. Իշխանյանի, ունեն մի մտավորական, որը օժտված է օգտակար շատ ձեռնարկումներ կատարելու՝ ոչ միայն կրթութեան, այլև շատ բնագավառներում: Առաջին հերթին նրա առջև բացվում են Ղարաբաղի հոգևոր թեմական դպրոցի դռները՝ սկզբում ուսուցիչ, ապա տեսուչ:

Նա իր տեսուչի պաշտոնը վարեց երկու տարի (այդպէս էր Շուշիի հոգևոր հայկական դպրոցում — Ս. Ա.): Եվ նա համարվեց այն ուժը, որ պետք է թարմութիւն մտցնի դըպրոցական կյանքում: Նրա օրոք նոր ուժեր հավաքագրվեցին ուսուցչական աշխատանքի ասպարեզ: Այնպիսի անուն հանած մանկավարժներ, ինչպիսիք էին Նվարդ Տեր-Մովսիսյանը, Գրիգոր Թառումյանը, Ենովք Գեոնջյանը, Պողոս Տեր-

Պողոսյանը, Աբրահամ Իշխանյանը, Հովսեփ Փինանջյանը, ստանձնեցին տարբեր առարկաների դասատուական պաշտոն:

Զ. Իշխանյանը ստիպում էր, որ բոլոր ուսուցիչները դասարան մտնեն միայն կոնսպեկտով, ուր պետք է արտացոլվի օրվա անցնելիք և կրկնողական թեմաների բովանդակութիւնը՝ որոշ մանրամասներով:

Հոգևոր թեմական դպրոցի տեսուչը հարկավոր ուշադրութիւն էր դարձնում լեզուների և գրականութեան դասավանդմանը: Նա շատ ժամեր էր հատկացնում հատկապես մայրենի լեզվի պարապմունքներին, գտնելով, որ թեմականի ուսանողը պետք է հրաշալի իմանա և՛ գրաբարը և՛ աշխարհաբարը: Այս գործում, ինչ խոսք, վճռական նշանակութիւն ունի սովորողների կարգապահութիւնը՝ դասերին անպայման հաճախումը և ուշադիր լինելը:

Ճշմարիտ փաստ է այն, որ յուրաքանչյուր անգամ դասերից բացակայողների մասին նա հատուկ զեկուցագիր էր ուղարկում վերադաս մարմնին՝ միջոցներ ձեռնարկելու համար: Այդպէս պատահեց 1883 թվականին, երբ 3-րդ և 4-րդ դասարանների աշակերտներից երեք հոգի՝ դժգոհ լինելով դասատուներից, սկսեցին շնորհակցանալ պարապմունքների: Նրա բողոք-զեկուցագրերում արտահայտվում էր բուն էութիւնը, պարզաբանվում ճշմարտութիւնը:

Զավադ Իշխանյանը 1887—88 ուսումնական տարում դեկավարել է նաև օրիորդաց դպրոցը, որը երկար տարիներ փաստորեն գործում էր թեմականին առընթեր:

1894 թվականին տեղի ունեցան հոգաբարձուական ընտրութիւններ: Ընտրութիւններում հաջողութեան են հասնում բժիշկ Խաչատուր Բահաթրյանը և Զավադ Իշխանյանը:

Զավադ Իշխանյանին ժողովուրդը ճանաչում էր իբրև դըպրոցական գործի գիտակ. այդ պատճառով էլ Արցախի կրթական գործում որևէ հետամնացութիւն նկատելու դեպքում նրան ուղարկում էին այնտեղ: Նա ճանաչված մասնագետ էր հայոց և ուսաց լեզուների և հայ գրականութեան գծով: Այդ առարկաները նա դասավանդում է իր հայրենիքի մի շարք դպրոցներում:

Զ. Իշխանյանի հեղինակութիւնը հասել էր այն աստիճանի, որ մի քանի անգամ նա ընտրվել էր Շուշիի քաղաքա-



գլուխ և վարել դատաստանական գործեր: Հանդես էր գալիս նաև որպէս հմուտ պաշտպան՝ մի շարք քրեական գործերում:

1903 թվականին, երբ ռուսական կայսրութեան հրամանով պետք է պետութեանը անցնէին հայ եկեղեցական կալվածքները (դրանց շնորհիվ էին գործում հայկական դպրոցները — Ս. Ա.), Ջ. Իշխանյանը բացառիկ ակտիվութիւն է հանդես բերում՝ այդ հրամանը չկենսագործելու համար: Շուշում ծագած խռովութիւնների ժամանակ նա վարչական կարգով բանտարկվում է և արքային ռուսական քաղաքներ: Նրորոգ բաժանմունքի կողմից նա արդեն ճանաչված էր իբրև «վտանգավոր անձնավորութիւն»: Բայց ո՞րն էր նրա մեղքը կամ վտանգավորութիւնը, այն, որ նա պաշտպան էր կանգնում հայկական դպրոցների գոյութեանը: Ավելին, երբ հետագայում Ջ. Իշխանյանը արդարացիվում է և վերադառնում է հայրենիք, նորից լծվում է քաղաքական պայքարին և ամեն մի ջանք գործադրում, որպէսզի ավելանան հայոց դպրոցները, դառնան օրինակելի՝ հաստատուն կարգ ու կանոնով, ծրագրով ու կանոնադրութեամբ:

Պետրոս Զաքարյանը, որ մի շարք տարիներ ուսանել է Զավադ Իշխանյանին, «Մշակի» էջերում հետաքրքիր մանրամասնութիւններ է պատմում իր ուսուցչի մասին, շեշտելով այն հանգամանքը, որ նա անմնացորդ նվիրված էր իր հայրենի եղերքին, նրա ժողովրդին՝ հասկապես կրթութեան և մշակութային գործը առաջ տանելու համար:

Դպրոցական լայն ցանց ստեղծելու հետ միասին նա մտածում էր գրադարաններ հիմնելու, բնակչութեան շրջանում կուլտուր-լուսավորական աշխատանք ծավալելու մասին: Անգրագիտութիւնը վերացնելու համար նա առաջարկում էր զբոսայրոցներից զատ ունենալ տնային դասեր՝ առանձին մարդկանց հետ: Այդ նա անում էր շատ ժամանակ ձրի՝ առանց վարձատրութեան:

Նրա մեծ հեղինակութեան մասին է վկայում այն փաստը, որ Զավադ Իշխանյանի մահվան առթիվ թեմական դպրոցում նրա անունով որդեգրում են շորս չքավոր աշակերտներին:

Արցախի ժողովուրդը պաշտում էր իր սիրելի գավազին՝ Զավադ Իշխանյանին, նաև այն բանի համար, որ նա չէր խորշում ոչ մի դժվարութիւնից, հաղթահարում էր խոշոր-

դոսները, չէր վախենում բանտարկութիւնից կամ հեռավոր արքայից՝ միշտ հույս ունենալով, որ կփոխվի աշխարհը և կհաղթանակի արդարութիւնը: Նման խոսքեր հնչեցին նրա թաղման արարողութեան ժամին, երբ նրա դիակը դրված էր սկզբում թեմականի, ապա Թաղևոսյան դպրոցների բակում:

Այո՛, արցախցիները քաջ գիտեն գնահատել իրենց երախտավոր զավակներին, որոնց թվում է նաև Զավադ Իշխանյանը: Մեղրեցոց եկեղեցու բակում է հանդիսավոր պաշտաններում թաղված նրա դիակը, ուր բարձրանում էր մարմարե քարե հուշարձանը:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԸ, ԽՄԲԱԳԻՐԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

Արցախի նշանավոր մարդկանց մեջ քիչ չեն նաև նրանք, ովքեր մեծ ավանդ ունեն պարբերական մամուլի զարգացման բնագավառում: Նրանցից ոմանք հանդես են գալիս խմբագիրներ, հրատարակիչներ կամ ուղղակի հրապարակախոսներ: Բայց կան նաև այնպիսիները, որոնք իրենց բեղմնավոր գործունեութիւնն սկսել են որպէս լրագրային ակտիվ աշխատող, ապա դարձել հրատարակիչներ, խմբագիրներ, ակտիվ հասարակական-քաղաքական գործիչներ: Դրանցից է Հովհաննես Գրիգորի Խաչատրյանը, որի կյանքի ու գործունեութեան մասին կան շատ սուղ տեղեկութիւններ:

Հովհաննես Խաչատրյանը ծնվել է 1854 թվականին, Շուշում: Սկզբում ուսանել է հայրենի քաղաքի դպրոցներից մեկում, ապա Մոսկվայի Լազարյան ձեմարանում, որտեղ կատարելագործվել է լեզուների ուսումնասիրման մեջ: Նա դերագանց գիտեր ոչ միայն հայերեն և ռուսերեն, այլև օտար լեզուներ:



Հ. Գ. Խաչատրյանը ավարտում է նաև Մոսկվայի գիտությունների կայսերական ճեմարանը, անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերում տնտեսագիտության գծով:

Սակայն երիտասարդ Հովհաննեսի ուշքն ու միտքը լրագրությունն էր: Եվ, ահա, 1884 թվականից սկսած պարբերաբար աշխատակցում է «Նովոե օբոզրենիե» թերթին, 1887 թվականից՝ նաև «Թիֆլիսկի լիստոկին»:

Պարբերական մամուլը, մասնավորապես «Մշակը» վկայում է, որ Հ. Խաչատրյանը տարբեր տարիների խմբագրել է «Բակինսկի իզվեստիան», հրատարակել է «Արգոնավթ» թերթը, որոնց էջերում հրատարակվել են հայ խմբագիր-հրատարակչի բազմաթանր նյութերը՝ նվիրված մասնավորապես նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորների ապրելակերպին:

Հովհաննես Խաչատրյանի խմբագրական-հրատարակչական գործունեության մեջ մեծ տեղ է գրավում «Թիֆլիսկի լիստոկը», մի պարբերական, որ հիմնադրվել է 1886 թվականին Թիֆլիսում և գոյատևել է մինչև 1919 թվականը:

Փաստորեն թերթը 1887 թվականից սկսած ամբողջովին անցնում է Հովհաննես Խաչատրյանի եղբոր Քրիստափորի տնօրինությանը: Նա դառնում է օրաթերթի հրատարակիչը: Եվ երբ «Թիֆլիսկի լիստոկի» խմբագիր է նշանակվում Հովհաննես Խաչատրյանը, թերթը դառնում է ոչ միայն ամենօրյա, ծավալուն, այլև նոր ուղղություն է ստանում: Խմբագիրը, իհարկե, մեծ տեղ էր տալիս ռեկլամին առաջին և վերջին էջերում տպագրվում էին տարբեր բնույթի հայտարարություններ՝ զեղեցիկ, ճաշակով ձևավորված, բայց դրա հետ միասին լույս էին տեսնում մեծ ու փոքր նյութեր, որոնք լուսաբանում էին երկրի նիստ ու կացը, ներքին և արտաքին կյանքը:

Թերթի յուրաքանչյուր համարում հաստատուն տեղ էին գրավում «Տեղական բաժին», «Հեռագրեր», «Մեր թղթակիցները», «Դատական», «Մամուլը», «Ձեռիետոնը», «Թատրոն և երաժշտություն», «Նամականեր», «Տեղեկատու բաժին» և այլ խորագրերը:

Հենց սկզբից խմբագիրը հմտություն է հանդես բերում նյութերի հրատարակման մեջ. զետեղվում են այնպիսի ին-

ֆորմացիաներ, հոդվածներ, թղթակցություններ, նամականեր և այլն, որոնք այս կամ այն շահով լուսաբանում են երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը, ընթերցողին բավարար տեղեկություններ են տալիս աշխարհի անցուդարձի մասին:

Հ. Խաչատրյանը հակված էր այն բանին, որ իր իսկ խմբագրած թերթում արտացոլվի հայրենի եզերքը, գրվի այն մասին, թե ինչ վիճակում է Արցախը, նրա կենտրոնը՝ Շուշին և այլ բնակավայրեր: Այդ նպատակով էլ «Շուշիից մեզ հաղորդում են» խորագրի ներքո հաճախ տպագրվում են նյութեր Շուշիի դարոցական, մշակութային, գրահրատարակության, լուսավորական օջախների մասին:

«Թիֆլիսկի լիստոկը» ընթերցողներին ծանոթացնում էր նաև Հայաստանի նիստուկացին, կատարվող իրադարձություններին: Պարբերաբար նյութեր են հրատարակվում Երևանից, Վաղարշապատից (Էջմիածնից), Ալեքսանդրապոլից, ներկայացնելով աշխատավորների տրամադրություններն ու հոգսերը:

Պարբերականի էջերում հոդվածներ էին տպագրվում առանձին երեւելի անհատների կյանքի և գործունեության մասին: Ինքը՝ խմբագիրը՝ «Հ. Խ.» ստորագրությունը հանդես է եկել գններալ-լեյտենանտ Վ. Ա. Պոտտոյին, Զարզ Դարվինին, Դերժավինին նվիրված հոդվածներով: Նա երբեմն փոքր նյութերի տակ ևս դնում էր իր ստորագրությունը՝ հաշվի առնելով դրանց հնչեղությունը և բովանդակած փաստի էությունը:

Հովհաննես Խաչատրյանը զարգացած մարդ էր և այդ ըզգացվում էր պարբերականի էջերում: Մեծ ուշադրություն էր դարձնում գրախոսություններին, զրքի պրոպագանդային: Պատշաճ տեղ ուներ «Մատենագիտություն» բաժինը, որտեղ համառոտակի տրվում էին նոր լույս տեսած գրքերի բովանդակությունը՝ խմբագրության ղեհահատականով:

Նա համարձակ խմբագիր էր. առանձին երևույթների մասին շատ ժամանակ հրատարակում էր հանգամանակից տեղեկություններ: Սակայն ժամանակ առ ժամանակ ենթարկվում էր դատական քննության: Թերթի 1909 թ. փետրվարի 17-ի համարում «Դատական» խորագրի ներքո տպագրված է ինֆորմացիա այն մասին, որ Հովհաննես Խաչատրյանի դեմ



հարուցված է քրեական գործ՝ մեղադրելով նրան դատական հանգամանալից հաղորդման համար: Դատարանում նա իրեն պահում էր որպես կրքոտ մի հրապարակախոս, որ մտահոգված էր ճշմարտությունը երևան բերելու հոգսով:

«Թիֆլիսկի լիստոկը» Հովհաննես Խաչատրյանի օրոք դառնում է այն ռուսալեզու պարբերականը, որտեղ բազմահազար ընթերցողները կարող են գտնել իրենց ցանկացած նյութը: Ընդհանուր առմամբ թերթը լայն մասսայականություն էր վայելում: Սակայն ոչ բոլորն էին համակրում նրա նյութերին և ռեկլամային պրոպագանդային: Սուրեն Սպանդարյանը ևս նրանցից մեկն էր, որ հրապարակայնորեն հանդես էր գալիս Հովհաննես և Քրիստափոր Խաչատրյանների ժողովրդասիրական-հրատարակչական գործողությունների դեմ: Նա 1910 թ. մայիսի 17 (4)-ին «Նովայա ռեչ» պարբերականում տպագրում է մի հոդված, որտեղ քննադատում է «Թիֆլիսկի լիստոկը» հենց այն բանի համար, որ քիչ գաղափարական հոգվածներ է տպագրում այս կամ այն երևույթի, իրադարձությունների մասին, ընթերցողներին իբր չի կողմնորոշում քաղաքական իրադարձությունների նկատմամբ: Ավելի պարզ ասած, Ս. Սպանդարյանը դեմ էր Հ. Խաչատրյանի թերթում ռեկլամին պատշաճ տեղ հատկացնելուն. դա համարում էր ոչ լուրջ վերաբերմունք տպագիր մարմնի նկատմամբ:

Իհարկե, Հ. և Ք. Խաչատրյանները պատասխանում են Ս. Սպանդարյանին՝ շնորհունելով նրա գնահատականը թերթի վերաբերյալ:

Հովհաննես Խաչատրյանը քսան տարուց ավելի խմբագրում է «Թիֆլիսկի լիստոկը»՝ դարձնելով այն մի պարբերական, որը «Մշակի» նման համակողմանիորեն էր լուսաբանում Անդրկովկասի և ամբողջ երկրի կյանքը, հայկական առօրյան դարձնելով բոլոր հարցերի արծարծման դիտակետը: Թերթը տոգորված էր հայրենասիրական ոգով. ընթերցողներին մղում էր մի գերագույն նպատակի՝ հայրենիքը սիրել բացառիկ ջերմությամբ:

Հովհաննես Խաչատրյանը վախճանվեց 1915 թ. հունիսի 11-ին, Թիֆլիսում, 61 տարեկան հասակում: Թաղված է Խոջիվանքի գերեզմանոցում: Նրա վախճանվելու կապակցությամբ Անդրկովկասի հայատառ և ռուսալեզու պարբերականները

մահախոսականներ են նվիրում հրապարակախոսի, խմբագրի, հրատարակչի և հասարակական-քաղաքական մեծ ուղիանցած մի մարդու, որի գրիչը շուրջ երեսուն տարի ծառայում էր իր ժողովրդին, իր հայրենիքին:

Ժամանակն է, որպեսզի իր գնահատականը ստանա Հովհաննես Խաչատրյանը, նրա բազմաբնույթ հոգվածները լույս տեսնեն մի ժողովածուում, բնութագրվի նրա գործունեությունը հատկապես «Թիֆլիսկի լիստոկում»:

#### ԳՊՐՈՅԻ ՏԵՍՈՒՉԸ, ԹԵՐԹԻ ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ

1838 թ. հունիսին Շուշիում հիմնադրված Ղարաբաղի հոգևոր թեմական դպրոցը, որը գործել է մինչև 1921 թվականը, ունեցել է շատ նշանավոր տեսուչներ, որոնք սրտով և հոգով նվիրված էին հայ մանկավարժության զարգացմանը, պատանիների և աղջիկների ուսման և դաստիարակության գործին: Նրանցից էր նաև Նիկողայոս Ավետիսի Երամիշյանը: Մեզ հասած կցկտուր տվյալների համաձայն նա ծնվել է Շուշիից երկու կիլոմետր դեպի Ստեփանակերտ գտնվող Շոշ գյուղում: Սկզբնական կրթությունը ստանալով հայրենի գյուղում, նա միշտ ձգտել է գիտելիքներ ձեռք բերել անվանի կրթօջախներում: Կարճ ժամանակամիջոցում աչքի է ընկնում իբրև մանկավարժ: 1910 թ. հուլիսի 30-ին Թեմականի հոգաբարձությունը հատուկ նիստով դպրոցի տեսուչ է ընտրում Նիկողայոս Երամիշյանին, որը մինչև այդ դասավանդում էր Շուշիի հայկական դպրոցներում:

Թեմականի նոր ընտրված տեսուչի վրա էր դրվել Մարիամյան օրիորդաց դպրոցի ղեկավարությունը:

Երեք տարվա ղեկավարության ընթացքում Ն. Երամիշյանը բավականին բարեփոխություններ է կատարում ուսումնա-



կան կյանքում, որոշակի փոփոխություններ են կատարվում ուսումնական ծրագրերի մեջ, մեծ տեղ է հատկացվում մայրենի լեզվի և գրականության, հայ ժողովրդի պատմության և այլ առարկաների ուսուցմանը, ավելացվում են լեզուների դասավանդման ժամերը, առավել ուշադրություն է դարձվում աղքատ երեխաների նյութական ապահովման գործին:

Կեն իր «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի» աշխատության մեջ նշում է, որ տեսուչ Ն. Երամիշյանը 1912—1913 ուսումնական տարում դպրոցի բակում բացում է մարդկան դահլիճ իր անհրաժեշտ գործիքներով, որոնք և բավականին օգուտ են տվել դպրոցի սաների առողջության ամրապնդմանը: «Աշակերտների շ/Յ-ը, — վկայում է բժիշկ տեսուչը, — թուլակաղմ, վատառողջ և կանոնավոր սնունդ ու տաք կերակուր չունենալով ենթակա են զանազան հիվանդությունների, որոնց մեջ գլխավոր դեր են խաղում կոկոսի և շնչառության հիվանդությունները»: Եվ մենք ստիպված էինք կարգավորել դպրոցականների նյութական և ֆիզիկական բարեկեցությունը, — շարունակում է թեմականի ղեկավարը:

Սակայն բոլոր գործոնների մեջ որոշիչը ուսումնական է, ուսուցչականը, ընդգծում է դպրոցի տեսուչը: «Արտաքին բարենորոգությունն ավելի կարևորը ներքին ուսուցչական բարեփոխությունն է, քանի որ դպրոցը ուսուցմամբ է իր արժեքները որոշում, ուսուցիչն է դպրոցին կյանք և ուղղություն տրվողը», — գրում է Ն. Երամիշյանը: Դրա համար էլ նա հավաքագրում էր երկրամասում առավել աչքի ընկած մանկավարժների, նրանց վրա դնելով ոչ միայն ուսումնական, այլև այլ պարտականություններ, այն հաշվով, որ թեմականը օրինակ ծառայի Արցախի բոլոր դպրոցների համար: Առանձին թույլ աշակերտներին նա կցում էր ուսուցիչներին, նրանց հետ լրացուցիչ պարապելու համար:

Ն. Երամիշյանի տեսուչության երեք տարիներին թեմական դպրոցը բավականին առաջադիմում է ուսման մեջ:

Դպրոցի տեսուչը սերտ կապերի մեջ էր աշխատավորների հետ: Թեև նա բժիշկ էր (ամենուրեք նա ստորագրում էր «Բժ-բժիշկ Ն. Երամիշյան» — Ս. Ա.), բայց հակված էր այն բանին, որ գյուղական բնակչության մեջ լայնորեն տարածվեն

գյուղատնտեսական գիտելիքները: Ահա թե ինչու Ն. Երամիշյանը մեծ հեղինակություն ուներ ոչ միայն թեմական և Մարիամյան դպրոցներում, այլև ամենուր՝ գյուղական վայրերում:

Հետագայում էլ նա շարունակում է իր ժողովրդագրուս գործունեությունը Արցախում՝ դպրոցական և եկեղեցական ուղղությամբ: Դեռևս 1903 թվականի մայիսի 12-ին նամակահայտարարություն էր արել ի վիճակային հայոց կոնսիստորիային Ղարաբաղի այն մասին, որ իր «եղբայրը՝ ճանապարհային հաղորդակցության ճարտարապետ Խաչատուր Երամիշյանը հանգուցյալ հոր՝ Ավետիս Երամիշյանի հիշատակը հարգելով նվիրել է երկու հազար ռուբլի՝ մի հազար ռուբլին հանձնելու Շուշիի քաղաքային վարչության՝ Շուշվա ռեալական դպրոցում մի հայազավան աղքատ որդեգիր պահելու և նրա ուսման պետքերը հոգալու, իսկ մյուս հազարը հատկացնել Ղաղանչեցոց եկեղեցուն» (Հայաստանի Հանրապետության կենտրոնական արխիվ, ֆ. 57, գ. 1153, թ. 1196):

Ժամանակի պարբերական մամուլը վկայում է, որ Ն. Երամիշյանը հրապարակային իր շնորհակալությունն էր հայտնում նրանց, ովքեր հօգուտ թեմական և Մարիամյան դպրոցների նախաձեռնություններ էին անում: «Ղարաբաղ» թերթի 1912 թ. ապրիլի 26-ի համարում տպագրված է թեմական դպրոցի տեսուչ Ն. Երամիշյանի հետևյալ նամակը. «Հրապարակով իմ շնորհակալությունն եմ հայտնում տեղիս սիրող դերասանուհիներ օր. օր. Ս. Դեմուրյանին և ուրիշներին, որոնք ամսույս 22-ին մի ներկայացում կազմակերպեցին հօգուտ թեմական և Մարիամյան դպրոցների չբավոր աշակերտ-աշակերտուհիներին:

Շնորհակալություն եմ հայտնում նաև հասարակությանը, որ ակտիվություն ցուցաբերեց...»:

Նիկողայոս Երամիշյանը հայտնի է նաև իբրև հրատարակիչ, լրագրող: Ղարաբաղի պարբերական մամուլի պատմությանը հայտնի է, որ 1896 թվականից մինչև 1911-ը լույս չի տեսել ոչ մի պարբերական: Ինչ խոսք, դա իր վատ ազդեցությունն էր ունենում Արցախի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտների վրա: Մարդիկ մի տեսակ կրտրված էին ներքին և արտաքին կյանքից: Եվ ահա, Ն. Երա-



միշտանն առաջինն էր, որ դիմումներ, բողոքներ ներկայացրեց Կովկասի փոխարքայության մամուլի գործերի Թիֆլիսի կոմիտեին: Եվ նրան հաջողվեց 1911 թ. սեպտեմբերի 13-ին թույլտվություն ստանալ «Ղարաբաղ» անունով թերթ հրատարակելու մասին: Ն. Երամիշյանը, թեև առանձին փորձ չունեի թերթ կամ ամսագիր հրատարակելու ուղղութիւնում, բայց նա այնպես էր կազմել նոր ստեղծվելիք թերթի ծրագիրը, որ արժանացել էր վերադաս մարմինների ուշադրութիւնը:

Ծրագիրը բաղկացած էր 16 կետից, որոնց մեջ կարևոր էին հատկապես հոդվածների և թղթակցութիւնների միջոցով երկրամասի կարիքների լուսաբանումը (4-րդ կետ), բազմաժանր նյութեր պատմութիւնից, աշխարհագրութիւնից, քաղաքատնտեսութիւնից և այլ բնագավառներից (5-րդ կետ), կովկասյան և արտասահմանյան կյանքի լուսաբանում, մամուլի տեսություն (6—7-րդ կետեր) և այլն:

Ն. Երամիշյանը իբրև հրատարակիչ մեծ տեղ էր հատկացնում թերթի առաջնորդողներին և խմբագրականներին: Զկար թերթի մի համար, որ չունենա խմբագրության խոսքը, որի հեղինակը մեր համոզմամբ հենց ինքն էր՝ Ն. Երամիշյանը: Ահա անդրանիկ համարի «Մեր կոչումը» խմբագրականը, ուր ասվում է. «Յուր շուրջը խմբելով բոլոր սրտացավ հարազատ ժողովրդական տարրերին, «Ղարաբաղը» լինելու է անաչառ յուր մտրակումների մեջ, հեռու թայֆայական նեղսրտութիւնից: Ծշմարտութիւնն ու արդարութիւնն են լինելու նրան առաջնորդողը և սկզբունք ունենալով «Ամեն ինչ ժողովրդի համար» լայն նշանաբանը, լինելու է աղատ մտածող, առաջադիմական, բոլոր մղումներով շահագրգռված և լայն ժողովրդական գաղափարներով տոգորված գավառական օրգան»:

Ինչ խոսք, Ն. Երամիշյանի սրտին ամենից առաջ մոտ է հարազատ էին մշակութային, դպրոցական հարցերը: Պատահական չէր, որ այն տարիներին, երբ նա իրավունք էր ձեռք բերել տպագրի թերթ ունենալու և ղեկավարում էր Շուշիի թեմական և Մարիամյան դպրոցները, ձգտում էր դպրոցական գործին ուշադրութիւն դարձնել ոչ միայն անմիջապես դպրոցում, այլև իրեն վստահված «Ղարաբաղ» թերթում: Եվ

ահա թերթի առաջին համարում զետեղվում է երկու, երեք նյութ («Թերթը և կրթական գործը», «Թերթը և հայ ուսուցչութիւնը» և այլն), որոնք զուտ դպրոցական են և արժարժում են Արցախի դպրոցների համակարգի ամենացավոտ խնդիրները:

«Ղարաբաղը» իր հայրենակից ուսուցիչներից պահանջում էր խոր մտահոգութիւն մոտենալ երիտասարդ սերնդի ուսման և դաստիարակութիւն գործին, ուսումը դարձնել պատանիների և աղջիկների համար կենսական պահանջ:

Իր նորաստեղծ թերթը գավառի հայելին, արցախցիների մտքերի և իղձերի արտահայտիչը դարձնելու համար Ն. Երամիշյանը խմբագրութիւն շուրջն է համախմբում առաջին հերթին մտավորականութիւնը, լայն ճանաչում գտած ուսուցիչներին: Թերթին պարբերաբար աշխատակցում են Առաքել Առաքելյանը, Լևոն Աթաբեկյանը, Միրզա Տեր-Սարգսյանը (Միտասը), Կոնստանդին Մելիք Շահնազարյանը (Տըմբլաչի Խաչանը), Շուշի քաղաքի տարբեր դպրոցների ուսուցիչներ Տ. Տեր-Գրիգորյանը, Ս. Տեր-Գասպարյանը, Ի. Զոհրաբյանը և ուրիշներ:

Մարիամյան դպրոցի հայոց լեզվի և գրականութիւն ուսուցիչ Հ. Ստեփանյանը, հայտնի մտավորական Ա. Գլանջեցյանը և ուրիշներ «Ղարաբաղի» էջերում հանդես էին գալիս այնպիսի նյութերով, որոնք նպատակաուղղված էին սովորողների մեջ պատվաստել ջերմ հայրենասիրութիւն, անհագուրդ սեր դեպի մայրենի լեզուն, գրականութիւնը, դեպի մայր ժողովրդի պատմութիւնը: Մի խոսքով, Ն. Երամիշյանը հմտորեն էր զուգակցում տեսուչի և հրատարակչի գործունեութիւնը, երկուսի աշխատանքն էլ նվիրաբերելով իր հայրենի Արցախի ժողովրդի բարօրութիւնը:

«Ղարաբաղ» թերթը 1912 թ. օգոստոսի 19-ին փակվում է՝ մի կողմից տեղական գրաքննչութիւն արքայազններում գտնուվելու, մյուս կողմից նյութական անկանխելի վիճակում լինելու պատճառով: Ն. Երամիշյանը իր ամբողջ եռանդը նվիրաբերում է թեմական դպրոցին, բայց անհերքելի փաստեր կան, որ նա չի դադարում տարբեր պարբերականներին աշխատակցելուց (հատկապես Շուշիում 1913—1914 թթ. լույս



տեսնող «Շուշինսկի լիստոկ» և «Շուշինսկայա ժիզն» թերթերին):

Նա գործին նվիրաբերում էր իր ամբողջ եռանդն ու ընդհունակությունները, դրա մեջ տեսնելով երջանկությունն ու հանգստությունը:

### Ա.Թ.Ա.ԲԵԿՅԱՆՆԵՐ

Լեոնային Ղարաբաղի Կուսապատ գյուղը տվել է մեր հայրենիքի սքաշտպանության, հեղափոխական պայքարի, գիտության, գրականության և արվեստի մեծանուն շատ մարդիկ: Այդ գյուղը նշանավոր գործիչներ Ալեքսանդր Բեկզադյանի, նրա քույր Ելենա Բեկզադյանի, Նիկոլայ Կոստանդյանի, Նիկոլայ Գասպարյանի, Սամսոն Անաստասյանի, Միքայել Զալյանի, Հակոբ Նրիցյանի, Ալեքսանդր Ավագիմյանի, ակադեմիկոս Նիկոլայ Ենիկոպոլյանի, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Սուրեն Անաստասյանի, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Գուրգեն Անտոնյանի և այլոց ծննդավայրն է:

Կուսապատի դպրոցում են սովորել Թևադորոս Միրզաբեկյանը, Հակոբ Կամարին (Բեջանյան), Պատվական Վարդանյանը, Վաղարշակ Գրիգորյանը, Մուշեղ Դանիելյանը, Ասատուր Առուշանյանը, Բեյբուտ Խուրշուդյանը, Սամսոն Նդիազարյանը, Իսահակ Բաղդասարյանը, Ներսես Թունյանը, Ներսես Պատաշյանը, Զալալ Դանիելյանը, գիտության ականավոր դեմքեր, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ Լևոն Մայիլյանը, Ավագիմ Խոնդկարյանը, տեխնիկական գիտությունների թեկնածուներ Պապանին Դանիելյանը, Ռուբիկ Նրիցյանը և շատ ուրիշներ:

Այս տեղեկությունները տալուց հետո մեր խնդիրն է համառոտակի ընթերցողներին ներկայացնել այդ գյուղից սերված Աթաբեկյանների բազմասերունդ գերդաստանի պատմությունը:

Ղարաբաղի շատ գյուղերում ապրում են Աթաբեկյան ազգանունով բազմաթիվ ընտանիքներ: Նրանցից ոմանք տարբեր ժամանակներում՝ ուսում ստանալու բուռն ցանկությամբ, անցել են արտասահմանյան խոշոր կենտրոններ՝ Հոռոմ, Փարիզ, Բեռլին, Յյուրիխ, Ռեշտ, Ինչպես նաև՝ Ռուսաստան՝ Մոսկվա, Պետերբուրգ, Անդրկովկաս՝ Բաքու, Թիֆլիս, Երևան, էջմիածին:

Աթաբեկյան ընտանիքը ծագումով հայկական հնագույն Մելիք-Իսրայելյանների տոհմից է: Ամեն անգամ, երբ Ղարաբաղին որևէ վտանգ էր սպառնում, Մելիք-Իսրայելյանները անձնուրաց կերպով ոտքի էին ելնում և գլխավորում երկրի պարտիզանական զինված ջոկատների պայքարը նվաճողների դեմ:

Նրանց մասին խոսենք հերթով:

Աթաբեկ 2-րդ յուզբաշին թողել է երկու որդի՝ Վանի և Գուլիա: Վանին, թողնելով հայրենի Կուսապատ գյուղը, ընդմիշտ անցնում է Ռուսաստան: Մեզ հայտնի չէ, թե ինչով է վերջանում նրա կյանքը: Նրա եղբայր Գուլիան մնացել է գյուղում, որի թոռը՝ Հարություն յուզբաշին, նույնպես ունենում է երկու որդի՝ Հովհաննես (Վանի) և Հակոբ անուններով: Վանին ամուսնանում է հայրենի գյուղի հոգևորականի դուստրը Վարդուհու հետ, որոնք ունենում են չորս զավակ՝ Հովսեփ, Սարգիս, Աթաբեկ և Միքայել:

Պատմության մեջ հայտնի կուսապատցի պարտիզան Վանին Ղարաբաղի աշխատավորության բախտն ու ապագան կապում էր ուս մեծ ժողովրդից սպասվող օգնության հետ, որի համար էլ նա մեծ ջանք էր գործադրում՝ հայրենիքում տարածելու ռուսական տրամադրություններ: Նա, քաջածանոթ լինելով հայրենի երկրի տեղանքին, 1805 թ. հունիսի 24-ին կործանման վտանգից փրկում է ռուսական զորքին, որի հրամանատարն էր գնդապետ Կարյազինը: Այս անցքերը տեղի են ունեցել Ասկերանում, Կարա-Հաջի Բաբայում, Շահ-բուլաղում և Գյուլաթաղում, որտեղ Վանին իր փոքրաթիվ



պարտիզանական ջոկատով փայլուն հաղթանակներ տարավ պարսկական թագաժառանգ Աբբաս Միրզայի մեծ բանակի դեմ:

Քաջ Վանին իր ջոկատով Աբբաս Միրզայի բանակին կըրկին անգամ հանդիպեց 1826 թվականին, այս անգամ Շահ-բուլաղի ամրոցում, Փառուխ ու Խոջալու գյուղերում, Մազի կամրջի մոտ, Շուշի քաղաքում և թշնամուն հետնապնդեց մինչև Արաքսի այն կողմը: Ասլան-Գուզի ճակատամարտի և Կենքորանի բերդի գրավման հերոսներից մեկն էլ դարձավ այս կուսապատյոցին, որին ցարը շնորհեց պրապորշչիկի աստիճան և Գեորգիեյան ժապավենով ոսկե մեդալ:

Վանու զավակներից Աթաբեկը (Ադամը) սովորել է կադետական ուսումնարանում և դարձել սպա: Մասնակցել է 1853—1856 թվականների Ղրիմի պատերազմին: Նա տասնմեկ ամիս շարունակ մասնակցել է Սևաստոպոլի հերոսական պաշտպանությանը: Մահացել է զնդապետի աստիճանով:

Ադամի տղան՝ Անդրեյը, 1870 թվականին ավարտել է 3-րդ Ալեքսանդրյան ռազմական ուսումնարանը, այնուհետև՝ Միխայլևյան հրետանային ակադեմիան և արժանացել առաջին աստիճանի դիպլոմի: Եղել է Օդեսայի ռազմական օկրուգի հրետանու պետը, 1900-ական թվականներին՝ գեներալ-մայորի աստիճանով, Մոսկվայում Առաջին գրենադերյան հրետանային բրիգադի հրամանատարը:

Վանու մյուս որդին՝ Միքայելը՝ մահացավ անզավակ: Մյուս տղաները՝ Հովսեփը և Սարգիսը, ապրում էին Կուսապատ գյուղում:

Հովսեփի երկու տղաները՝ Հարությունը, Իսաջանը և Սարգրսի երեք տղաները՝ Նիկողայը, Ալեքսանդրը և Զումշուբը, ապրելով գյուղում, կատարում էին բարեգործական մեծ աշխատանքներ:

Վանու եղբայրը՝ Հակոբ-բեկը, ամուսնացած էր Սեյդիշենցի Սարուվյանների սերնդից սերած Զավահրի հետ: Նրանք ունեցել են երեք տղա՝ Ասլան, Զալալ և Հարություն: Վերջին երկուսը մահացել են առանց ժառանգի: Մյուս զավակը՝ Ասլանը, ունեցել է երեք տղա՝ Ներսես, Մովսես, Նիկողայ: Վերջինս մահացել է՝ դբաղեցրած լինելով Ելիզավետպոլի (Կիրովաբադ) օկրուգային դատարանի կարեորագույն

գործերի դատական քննիչի պաշտոնը, լինելով նաև պետական խորհրդատու: Մովսեսն ապրում էր Շուշի քաղաքում: Բժշկասանիտարական մեծ գործունեություն ծավալելուց բացի՝ նա Շուշիում վարում էր պետական խորհրդականի պաշտոն: Մովսեսն ունեցել է հինգ զավակ՝ Ասլան, Ալեքսանդր, Նիկողայ, Աբրահամ և Աննա: Ավագ որդին՝ Ասլան Աթաբեկյանը, չնայած ուներ բեկական ծագում, սակայն ցարական կառավարության հալածանքները ծայրաստիճան աղքատացրել էին նրան: Հաղթահարելով ռոմանովյան դինաստիայի կամայականությունները, նա կարողացավ իր զավակներին տալ կրթություն: Զավակներից ավագը՝ Ներսեսը, ավարտեց Թիֆլիսի պետական գիմնազիան և դարձավ իրավաբան: Նա երկար տարիներ աշխատել է այդ մասնագիտությամբ, պաշտպանել քաղաքական բանտարկյալներին: Եղել է բարձր կուլտուրայի տեր, վճռական, համարձակ և սկզբունքային անձնավորություն:

Ներսես Աթաբեկյանը ամուսնացել էր վաղ տարիքում և ունեցել վեց զավակ՝ Մաշա, Օսինկա, Տիգրան, Միշա, Դավիթ և Ասլան: Սակայն շուտով մահանում է նրա կինը և զավակների հոգսերը մնում են միայն Ներսեսի վրա: Չնայած զրգվարություններին, հայրը կարողանում է կրթություն տալ իր զավակներին: Նրանցից Միքայելը և Տիգրանը ավարտում են Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, Ասլանը՝ ինժեներական ֆակուլտետը: Բոլորն էլ մեծ ծառայություն են մատուցել հայրենական գիտության զարգացման և մասնագետ կադրեր պատրաստելու գործին:

Ուշագրավ դեր է խաղում նաև Հովսեփ Աթաբեկյանը: Սակայն կցկտուր տեղեկություններ կան նրա մասին: Հայտնի է, որ Հովսեփ Աթաբեկյանի դուստրը՝ Անահիտը, 1927 թվականից ապրում էր Մոսկվայում, աշխատում սերմնաբուծական ինստիտուտում, ապա՝ Տեմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայում, Լոմոնոսովի անվան պետական համալսարանում, գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման համամիութենական ինստիտուտում: 1953 թ. նա պաշտպանել է դոկտորական դիսերտացիա և բուսաբանության ամբիոնի պրոֆեսորի կոչումով աշխատանքի անցել Տեմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայում:



նին ուսանողներին մի մասին բանակի շարքերը զորակոչելու կապակցությամբ Ալեքսանդրը ընդունվում է Ն. է. Ժուկովսկու կազմակերպած տեխնիկական ուսումնարանի ավիացիայի տեսական դասընթացները: Ավարտելով այն, 1916 թ. նրան ուղարկում են Սիմֆերոպոլ, իսկ այնտեղից՝ Պետրոգրադի ծովային ավիացիայի դպրոց:

1917 թ. ցարական բանակից զորացրվելուց հետո Ալեքսանդր Աթաբեկյանը գործուղվում է Տոմսկ՝ ուսումը շարունակելու: Այստեղ նա հակացարական ակտիվ գործունեություն է ծավալում, որի համար ձերբակալվում և ուղարկվում է Պետրոպոլսկի, այնուհետև՝ Կուրդան: Բանտարկությունից ազատվելուց հետո նա կրկին անցնում է Տոմսկ՝ կիսատ թողած բարձրագույն ուսումը շարունակելու համար:

Կարմիր բանակի զորամասերի կողմից Տոմսկը զբաղվելուց հետո խորհրդային իշխանությունները նրան գործուղում են լեհական ռազմաճակատ: Հետո նա վերադառնում է Մոսկվա և շարունակում ուսումը բարձրագույն տեխնիկական ուսումնարանում: Ավարտելուց հետո իր մասնագիտությամբ աշխատում է Մոսկվայի տարբեր ձեռնարկություններում: 1927—1929 թթ. Մոսկվայի «Շարիկոպոզիվնիկ» գործարանում աշխատել է որպես արտադրամասի պետի տեղակալ, նախագծող: Հետագայում տեխնիկական լայն ծավալի աշխատանք է տարել Ստալինգրադում, Չելյաբինսկում, Հայաստանի և Միություն այլ քաղաքների գործարաններում ու տեխնիկական ուսումնական հաստատություններում: Նա մի շարք հայտնագործությունների հեղինակ է, որոնք ունեցել են ժողովրդատնտեսական ու ռազմական խոշոր նշանակություն: Ստալինգրադի մեխանիկական ինստիտուտի դոցենտ աշխատելու ժամանակ նա պատրաստել է տասնյակ որակյալ կազրեր:

Ալեքսանդր Ալեքսանդրովիչի մյուս եղբայրը՝ Արսենը (1902—1960), սկզբնական կրթությունը ստացել է Ֆրանսիայում: Նա 1913 թվականին եղբոր՝ Ալեքսանդրի հետ վերադարձել է հայրենի Շուշի քաղաքը և ստացել միջնակարգ կրթություն: 1918 թ., երբ նրա ծնողները արտասահմանից վերադարձան Մոսկվա, Արսենը նույնպես տեղափոխվեց Մոսկվա և սկսեց աշխատել տպարաններում:

1922 թ. վերադաս մարմինների գործուղմամբ Արսեն Աթա-

բեկյանը ընդունվեց Մոսկվայի պետական համալսարանի բունագիտական բաժինը, սակայն ելնելով տնտեսական պայմաններից, երրորդ կուրսից նա թողեց ուսումը և աշխատանքի անցավ համամիութենական գյուղատնտեսական ինստիտուտի շինարարական բաժնում: 1925 թ. մինչև 1929 թ. նա աշխատել է «Ռաբոչայա Մոսկվա», «Օգոնյոկ», «Մոսկովսկի կոմսոմոնեց» թերթերի և ամսագրերի խմբագրություններում:

1929 թ. Արսենին հաջողվում է նորից վերականգնվել Մոսկվայի պետական համալսարանում, այս անգամ բժշկական ֆակուլտետում, որը և ավարտում է 1932 թ. և սկսում աշխատել որպես ներքին հիվանդությունների բժիշկ: 1933 թ. նրան տեսնում ենք էնդոկրինոլոգիայի համամիութենական ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտելուց հետո թողնում են աշխատելու ինստիտուտում: 1939 թ. նա պաշտպանում է դիսերտացիա, արժանանում բժշկական գիտությունների թեկնածուի դիտական աստիճանի և աշխատանքի անցնում Գորկի քաղաքի մարզային հիվանդանոցում:

Սկսվում է հայրենական մեծ պատերազմը: Արսեն Ալեքսանդրովիչը 65-րդ բանակի կազմում, որպես հոսպիտալի բժիշկ, մասնակցում է Ստալինգրադի, Կուրսկի աղեղի ճակատամարտերին, ցուցաբերած սխրագործությունների համար արժանանալով Կարմիր աստղի շքանշանի և մի շարք մեդալների: Բանակից զորացրվելուց հետո Արսեն Աթաբեկյանը աշխատում է Մոսկվայի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

1959 թ. նա հաջողությամբ պաշտպանում է դոկտորական դիսերտացիան: Տաղանդավոր էնդոկրինոլոգի գրչին են պատկանում մի շարք դիտական աշխատություններ, որոնց թվում՝ երեք ծավալուն մենագրություններ: Նրա գործը շարունակում է գոլտարը՝ Եկատերինա Արսենի Աթաբեկյանը, որն աշխատում է Մոսկվայի էնդոկրինոլոգիական բուժարանում որպես վարիչ:

Երկար տարիներ Արցախի Մարտիկների շքանշանի Մեծ մանա բարձրագույն գյուղում ապրել է Աթաբեկյանների սերունդի մեկ այլ ներկայացուցիչ՝ հարեգիտ Իսախան Աթա-



բեկյանը (պարտիզան Վանու թոռը), որի, ի դեպ, «ադամանդե» հարսանիքը գյուղում մեծ հանդիսավորությամբ նշվել և որի մասին գրել են «Պրավդա», «Վիշկա», «Կոմունիստ» և այլ թերթեր: «Ադամանդե» հարսանիքի հետ միաժամանակ նշվել է Գարեգին Աթաբեկյանի ծննդյան 100-ամյակը, որով նա կրկնել է հոր երկարակեցությունը: Գ. Աթաբեկյանը հայրենի գյուղի կուտնտեսության կազմակերպիչներից էր, մի աղնիվ հողագործ՝ օժտված մարդկային լավագույն հատկություններով: Մահացել է 108 տարեկանում, բարի հետք թողնելով սերունդների սրտերում:

Գյուղի բնակիչների մեծ մասը Աթաբեկյան ամուսինների ազգականներն են:

Աթաբեկյանների տոհմի նահապետները ունեն 95 թոռ ու ծոռ, որոնց կեսն ունի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն:

\*\*\*

Երևանի Մատենադարանում պահպանվում են այս սերնդի մի կարկառուն դեմքի՝ բանադնաց, հետախույզ, թարգմանիչ և ապա հնագետ Ասլան Հարությունի Աթաբեկյանի մասին ընդարձակ տվյալներ: Ասլանի հայրը՝ Հարությունը, զինվորական-պալատական գործիչ էր: 1756 թ. Ղարաբաղի մելիքության ազդեցության թուլացման այդ շրջանում Հարությունը, ըստ երևույթին, գործունեության լայն ասպարեզ ընտրելու նպատակով, իր իշխանությունն ու կալվածքները (Կուսապատում — Ս. Ն.) թողնում է ազգականներին և հեռանում հայրենի գյուղից: Երկար թափառումներից հետո, նա մըշտական բնակություն է հաստատում Թիֆլիսում: Այստեղ Հարությունը ծառայում է վրաց արքունիքում: Թեյմուրազ արքան նրան կարգում է պալատական զորքերի դրոշակակիր: Հերակլ թագավորի օրոք Հարությունը նշանակվում է Թիֆլիս քաղաքի հսկիչ: («Գրական թերթ», 9 օգոստոսի, 1968 թ.):

Հարությունի տղաներից Ասլանը 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին կեսին հայ քաղաքական և մշակութային շարժման տարեգրության մեջ թողել է արժեքավոր շատ

գործեր: «Նա մեծ ավանդ ունի թուրք-պարսկական բռնագրավիչների դեմ մղած կովկասյան ժողովուրդների պատմության մեջ: Անձամբ ակտիվ մասնակցություն ունեցավ Աղա Մահմեդ Խանի հրոսակախմբերի 1795 թվականի արշավանքների դեմ կովկասյան ժողովուրդների պայքարին»: (Նույն տեղը):

Ռուս-պարսկական 1804—1813 թվականների, ռուս-թուրքական 1806—1812 թվականների, այնուհետև 1828—1829 թվականների ռուս-պարսկական պատերազմների ժամանակ Ասլան Աթաբեկյանը վարում էր բարձրաստիճան պետական պաշտոններ:

Ասլան Աթաբեկյանի գործունեությունը չի սահմանափակվում դրանով: Նրան պատասխանատու աշխատանքի են ուղարկում Աստրախան: Ռուսական Լիսանեիշի բանակի կազմում նա մասնակցել է Աղդաշի, Շուշիի, Թալիշի, Բարդաշի ազատագրման համար վարած մարտերին:

Այդ տարիներին Ասլան Աթաբեկյանին շատ էր հետաքրքրում հայրենի գյուղում ապրող ազգականների բախտը: Նրան հաջողվում է անցնել Կուսապատ և տեսակցություն ունենալ վանի Յուզբաշու հետ: Կարճ ժամանակով նա մնալով գյուղում, անցնում է Թալիշ և պաշտոնավորվում Ղարաբաղի Մեհհտի Ղուլի Խանի պալատում որպես թարգմանիչ:

Լիսանեիշի բանակի կազմում Ասլան Աթաբեկյանը անցնում է Մոսկվա: Ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Կոմս Բեկենդորֆի պահանջով 1828 թ. Ասլան Աթաբեկյանին, պատասխանատու առաջադրանք կատարելու համար ուղարկում են Թուրքիա, որտեղ, մնալով մի ամբողջ տարի, սրբություններ է կատարում տրված հանձնարարությունները և վերադառնում նորից Պետերբուրգ: Իր կատարած ճանապարհորդությունների ընթացքում (եղել է Քիշինևում, Օդեսայում, Բուլղարիայում, Տրանսիլվանիայում, Հարավսլավիայում) նա կատարել է նաև գիտական, հնագիտական, մշակութային ուսումնասիրություններ և թողել բազմակողմանի հետաքրքրություն ներկայացնող գրական-պատմական շատ գործեր, որոնք այսօրվա ու գալիք սերունդների համար ունեն դաստիարակչական մեծ նշանակություն:



Ասլան Աթաբեկյանը տարել է ռազմական, պետական բազմաբեղուն գործունեություն:

\*\*\*

Եվ, վերջապես, հայտնի բանաստեղծ-երգիծաբան Լևոն Նիկողայի Աթաբեկյանը՝ Հակոբ բեկի ծուրը, ուսումն ստացել է Շուշիում, Բաքվում, Պետերբուրգում, Բազելում, Յյուրիխում, Լայպցիգում, Բեռլինում և բժշկական խորը պատրաստակամությամբ վերադարձել է հայրենիք և իրեն նվիրել առողջապահական գործին: 1913 թվականին հրատարակվել է նրա բանաստեղծությունների ժողովածուն, որտեղ Ղարաբաղյան բարբառով մերկացնում է ժամանակի անկարգությունները, գովերգում ազատությունը, հայրենիքի սերը:

Նրա դուստրը՝ Մարգոն, ճանաչված գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու է, աշխատում է Երևանի Բրյուսովի անվան ուսսաց և օտար լեզուների ինստիտուտում:

\*\*\*

«Ահա և ժամանակի հայտնի եղբայրներ Վանի և Հակոբ Աթաբեկյանների բոլոր նախնիների համառոտ պատմությունը: Նրանց հիշատակը ջերմեռանդությամբ է հիշվում նաև ուսմարդկանց մեջ, որոնք ընդունակ են զնահատելու Կովկասի ծայրամասում ուսական գործին նրանց ներդրած վաստակը: Կուսապատի հին գերեզմանոցը, որտեղ հանգստանում են Վանու և Հակոբի ոսկորները, պահպանվել է մինչև այժմ: Թող կորսվեն նրանց գերեզմանաքարերը, սակայն նրանց հիշատակը չի կորչի ժողովրդի մեջ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Վ. Պոտտո, «Ղարաբաղի առաջին կամավորները», Թիֆլիս, ռուս. հրատ., 1902 թ.:

## ԲՈՎԱՆԳԱԿՈՒՅՈՒՆ

- Առաջաբանի փոխարեն— 3—7  
Անվանի մարդիկ Արցախի և արցախցիների մասին— 8—20  
Տպագրության սկզբնավորումն ու առաջին քայլերը Արցախում— 21—28  
Տիգրան Նազարյանի հրատարակչական գրասենյակը Շուշիում— 28—32  
Արցախի դպրոցները— 32—45  
Դպրության գործը առաջին պլանի վրա— 45—49  
Արցախի պարբերական մամուլը— 49—58  
Աշակերտական թերթերը— 58—63  
Թատրոնը Արցախում— 63—73  
Արցախի գրական կյանքի էջերից— 73—83  
Արցախի կուլտուր-լուսավորական օաջիսները— 83—89  
Արցախի ժողովրդական բանահյուսությունը— 90—94  
Արցախը հուշարձաններում— 95—98

## ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՐՅԱԽՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

- Հովսեփ Արցախեցի— 99—102  
Բաղդասար Հասան-Ջալալյանը հրատարակիչ— 102—106  
Ով է Միրզա Ֆարուխը— 106—108  
Հայ տպագրության երախտավորը— 109—111  
Լեոնային երկրամասի հայրենանվեր գեղանկարիչը— 111—114  
«Տալ ժողովրդին յուր աշխատանքը, յուր անձը, յուր կյանքը...»— 115—119  
Անխոջ հրատարակիչն ու խմբագիրը— 119—123  
Ականավոր երգիծաբանն ու հրատարակատուրը— 123—126  
Ականավոր պատմաբանը, գրողը, հրատարակատուրը— 126—132  
Վահան (Խաչիկ) Դադյան— 132—136  
Բազմավաստակ գիտնականն ու մանկավարժը— 137—140  
Հրապարակատուն ու պետական գործիչը— 140—142  
աԲնաստեղծը, ուսուցիչը— 142—145  
Գրողը, խմբագիր-հրատարակիչը— 145—148  
Մեծ գիտնականն ու հմայիչ դասախոսը— 148—153  
Հայրենի երկրամասի սիրով— 153—157



Ականավոր գիտականը, քաղաքական ու մշակութային գործիչը— 157—  
160

Լուսավորական գործի երախտավորը— 160—163

Լևոն Վարդունի— 163—165

Ժուռնալիստ հրատարակախոսը, հմուտ մանկավարժը— 165—168

Տիրգա Տեր-Սարգսյան— 168—173

Զավադ Իշխանյան— 173—177

Հրատարակախոսը, խմբագիրը, քաղաքական գործիչը— 177—181

Ռպրոցի տեսուչը, թերթի խմբագիրը— 181—186

Աթաբեկյաններ— 186—196

ՄՐԲԱՏ ԱՎԱԳՅԱՆ

ԱՐՅԱՆԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՕԶԱԽ

Հրատ. խմբագիր՝ **Ռ. Մարտիրոսյան**  
Գեղ. խմբագիր՝ **Տ. Ստոյան**  
Տեխ. խմբագիր՝ **Ա. Թումանյան**  
Վերստ. սրբագրիչ՝ **Ի. Մինասյան**



Հանձնված է շարվածքի 1. 10. 1991 թ.: Ֆորմատ՝ 84×108<sup>1/32</sup>: Թուղթ՝  
№ 2: Տառատեսակ «Գրքի տվորական»: Տպագրությունը՝ «Բարձր»:  
Տպագր. 12,5 մամուլ, հրատարակչ. 9,0 մամուլ: Տպաքանակ՝ 2000:  
Պատվեր՝ 575: Գինը՝ 4 ռ.:

---

«ԳԻՏԵԼԻՔ» հրատարակչություն, Երևան 10, Արուլյան 8:  
Երևանի պետհամալսարանի տպարան, Արուլյան փ. № 52



Գինը՝ պայմանագրային.